

ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ  
Ժ Ո Ղ Ո Վ Ա Ծ Ո Ւ

№ 2

96507

Տ. ՂԱԶԱՆՉՅԱՆ

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՊԱՐԱՏՈՒՐԱՆ ԵՎ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՏԵԽՆԻԿԱՆ ԸՍՏ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ՝

Սովետական մարզիկ դասում են, որ յուրաքանչյուր ազգ — միևնույն է՝ մեծ թե փոքր, ունի իր սրակտական առանձնահատկությունները, իր սպեցիֆիկումը, որը պատկանում է միայն նրան և որը մյուս ազգերը չունեն։ Այդ առանձնահատկությունները հանդիսանում են այն մեծ ավանդը, որ յուրաքանչյուր ազգ մտցնում է համաշխարհային կուլտուրայի ընդհանուր գանձարանը և այն լրացնում, այն հարստացնում է։

Ս ա ա լ ի ն

Քիմիայի պատմությունից հայտնի է, որ լաբորատորական ապարատուրան շատ անգամ պայմանավորում է քիմիայի զարգացման այս կամ այն աստիճանը։ Այսպես օրինակ՝ քանի դեռ քիմիկոսները չունեին և չգիտեին քիմիական ապարատուրայի մեջ, այսօրվա տեսակետից, պարզագույն ապարատներից մեկը — պնեմատիկ վաննան, մարդկանց անձանոթ էին բազմաթիվ դադային մարմիններ՝ ու նրանց հատկությունները։ Հարկավոր էր նաեւ պնեմատիկ վաննան, որ քիմիայի պատմության մեջ առաջանար մի ամբողջ դարաշրջան. պնեմատիկ քիմիայի դարաշրջանը։

Ինչ խոսք, որպեսզի նախդիր պնեմատիկ վաննան, և առհասարակ որևէ քիմիական ապարատ, պետք է առաջանար այդ ապարատի պահանջը, այսինքն՝ քիմիական գիտությունը պետք է հասունանար մինչև ինչ որ մի որոշակի աստիճան, մի բան, որ իր հերթին որոշակի կերպով, կապված է հասարակական սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետ։ Այդ կապակցությունը խորն է և բազմակողմանի։ Մենք այդ կապակցություններով այստեղ չենք զբաղվելու։

Սակայն, անհրաժեշտ է նշել, որ դեռևս

ուրարտական իշխանություն շրջանում Հայաստանի տերիտորիայի վրա գոյություն են ունեցել քիմիական սրտ թիպի ապարատուրաներ, և հետագայում, Հայաստանի տնտեսական-քաղաքական զարգացման ընթացքում ալքիմիան կատարելագործվել է, կապված Հայաստանի տնտեսության պահանջներով, մանավանդ Հայաստանի տրնտեսական-քաղաքական ուժեղացման շրջաններում՝ թե մեր թվագրությունից առաջ և թե մանավանդ Հայաստանի քաղաքների աճման շրջանում։

Այդ մասին են վկայում բազմաթիվ արհեստների աճը ոչ միայն 5—6-րդ, այլ և 9—12-րդ դարերում։ Այդ մասին վկայում և ներկերի արտադրումը, որ Հայաստանում տարածվում է դեռ նախաքրիստոնեական շրջանում և որի հետքերը մնացել են 6—9-րդ դարերի հայկական սքանչելի մանրանկարների մեջ։

Մենք ցանկանում ենք միայն պարզել, թե միջին դարերում Հայաստանի ալքիմիկոսները ինչպիսի լաբորատոր տեխնիկա և ինչ լաբորատոր ապարատներ ունեին։ Դա

<sup>1</sup> Ձեկուցված է Հայկ. ՍՍՌ Մինիստրների Առկտին կից Պատկան Ձեռագրատան (Մատենադարանի) 1943 թվի գիտական սեփականում։

իր հերթին կպարզի այն աստիճանը, որին հասել էր քիմիան Հայաստանում՝ հիշածս միջին դարերում:

Մեր ձեռքի տակ եղած հայկական ձեռագրերը առայժմ հնարավորություն չեն տալիս՝ հայ ալքիմիկոսների գործադրած ապարատներն ու գործիքներն ընդգրկել լիովին և սպառիչ մանրամասնությամբ. դրա համար էլ մենք այստեղ կանգ կառնենք առանձնապես այն ապարատների վրա, որոնք սկետք է պատրաստվելին հատկապես քիմիական փորձարարության համար: Այս աշխատության մեջ մեզ պետք է օանձանափակենք ոչ միայն ապարատների և անոթների ընտրությամբ, այլ և ժամանակաշրջանով. վերցնելով գլխավորապես այն գործիքները, որոնք նկարագրված են 16—18-րդ դարերի ալքիմիական դրականության մեջ, ամեն անգամ առանձին հիշատակելով այն դեպքերը, երբ գործիքի նկարագրությունը և գործադրության հիշատակումը մենք վերցնում ենք ավելի վաղ շրջանի ձեռագրերից:

Պետք է, սակայն, նշենք, որ առասարակ ալքիմիական ձեռագրերը մեծ մասամբ արտագրություններ են և նրանց ընագրերը շատ անգամ պատկանում են ալքիմիայի սկզբնավորման շրջաններին: Նույնը պետք է ասել և մեր ձեռագրերի մասին. նրանց 16—18-րդ դարերում արտագրված լինելը դեռևս չի նշանակում, թե նրանք հորինված են այդ դարերում. հետևաբար՝ այդ ձեռագրերում նկարագրված գործիքները միայն ձեռագրի արտագրության դարում չէ, որ գործադրվում էին՝ այլև շատ դարեր առաջ:

Մենք չենք աշխատելու տալ այս կամ այն ապարատի ծաղման և դարգացման պատմությունը. այդ համարյա անհնարին է, քանի որ հայկական քիմիական ձեռագրերը տարբեր ժամանակներից մնացած լոկ պատառիկներն են այն հարուստ ժառանգության, որ մեզ չմնաց հայ ժողովրդի քաղաքական անցյալ կյանքի բաղմաթիվ դժբախտ բերումների հետևանքով:

Հրաժարվելով կոնկրետ դատաների վրնտրրաութից, այնուամենայնիվ պիտի նշենք, որ չի կարելի համաձայնել այն կարծիքի

հետ, թե «Քիմիական էքսպերիմենտի մեթոդներն առաջին անգամ լրջորեն մշակել են արաբական ալքիմիկոսները: Հատկապես նրանք են ալքիմիկոսի պրակտիկայի մեջ մտցրել թորման անոթը, ջրային բաղնիքը, քիմիական վառարանները, գլխախլումը, ֆիլտրումը, նստեցումը, բյուրեղացումը, սուբլիմումը, որոնք իրենց նշանակությունը պահպանել են և ներկա ժամանակներում»<sup>1</sup> Ընդհակառակն, մեզ հայտնի է, որ քիմիական լաբորատոր գործիքները մոտավորապես առաջին դարում, հիմնականում ստացել էին իրենց ձևավորումը և դրանից հետո, մինչև 18-րդ դարը, շատ քիչ փոփոխություն են կրել ոչ միայն տեսակների թվի, այլ և ձևի տեսակետից: Շատ բան, որ վերագրվում է արաբներին, ավելի շուտ պատկանում է նրանց անմիջական հարևաններին, ինչպես այդ մենք կտեսնենք կոնկրետ գործիքները քննելիս:

16—18-րդ դարերի հայկական ալքիմիական ձեռագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ժամանակաշրջանում հայկական ալքիմիան համարյա զերծ է եղել թանձրամիտ միստիկականությունից և հիմնականում գրված է եղել առողջ հողի վրա: Չտեղ նյութերը և այդ գտված նյութերից պատրաստել այս կամ այն դեղորայքը, ներկերը, քիմիկատներն ու միահալույթները՝ ահա ամբողջ նպատակադրումը: Հատկապես իսկական ոսկի պատրաստելու մարմաջ մենք չենք նկատում այդ դրականության մեջ, բայց ոսկեդույն մետաղներ ու ներկեր ստանալը եղել է բավական տարածված մի արհեստ:

Չենց այս առողջ նպատակադրումն էլ պայմանավորել է մեր ալքիմիկոսների ունեցած ապարատուրայի տեսակները: Ապարատուրայի այդ տեսակները մեզ համար ավելի հասկանալի կլինեն, եթե նախապես պարզենք, թե իրենց նպատակներին հասնելու համար ինչ պրոցեսների էին ծանոթ հայ վարպետները:

Ճիշտ չէ, երբ ընդհանրացնում են այն կարծիքը, թե ալքիմիկոսները իրար էին խառնում ամեն պատահական ինչ, ամեն

<sup>1</sup> БСЭ, т. 2 «Алхимия».

պատահական վիճակում և ամեն պատահական քանակով: Եթե խոսքը վերաբերում է ոչ շատ լատաններին, այլ բուն ալքիմիկոսներին, ապա նրանք առաջնորդվում էին շատ որոշակի արիտոտեկյան այն թեզով, թե՛ «... բնականից հատկանշական չէ խառնվել ինչ որ պատահի ինչի հետ որ պատահի»<sup>1</sup> և աշխատում էին սեակցիայի մեջ մտցված ամեն մի սեակցիայի մասնակցությունը պատճառաբանել: Այդ տեսություններից էլ ելնելով՝ նրանք նյութերը ամեն մի վիճակում չէ, որ դնում էին սեակցիայի մեջ, այլ նախ և առաջ բերում էին այն վիճակին, ինչ պահանջում էր նրանց թեորիան:

Այսպես՝ մեր մատենագրանի № 2527 ալքիմիական ձեռագրում կարդում ենք. «Որպես ասէ Արիտոտեկ իյիւր քանական գիրքն, եթե գիտասցեն քիմիականքն զի իրվոյն բնութիւնքն ոչ փոխին եթէ ոչ նախ յառաջին նիւթն և կամ ի բնութիւնն փոխին»<sup>2</sup>: Այս կնշանակե՛ մարմիններն իրենց հատկությունները քիմիական սեակցիաներում կարող են փոխել՝ նախ և առաջ վերածվելով առաջնային նյութի կամ «բնության»: Մաշատ խորը միտք է, որի կիրառումը պատիվ է բերում հայ ալքիմիկոսներին: Չէ՞ որ պրինցիպիալ առումով մենք էլ հիմա նույնն ենք ասում, երբ պնդում ենք՝ թե սեակցիաների մեջ մտնելիս տարբեր մոլեկուլներ նախ և առաջ քայքայվում են էլեմենտների, իոնների, կամ ատոմների և ապա միայն նոր ձևով կոմբինացվում: Վերոգրյալ պրինցիպից ելնելով՝ հայ ալքիմիկոսներն աշխատում էին ամեն մի սեակցիան նախ և առաջ բերել առաջնային մարքուր վիճակի և ապա միայն գործի մեջ դնել: Իսկ այդ նրանք անում էին նախ և առաջ նյութերը մաքրելով: Նույն № 2527 ձեռագրում կարդում ենք մի ամբողջ հատված այդ մասին. «Եթե ո՞րպէս պատրաստես նախաքան և այլ ի նոյն նման իրս, որ են աղեր և թանքնի, զի իսկ ոչինչ ի սոցանէ ի գործ ածի որպէս գտանի»<sup>3</sup>: Նույն ձեռագրի

մի այլ էջում կարդում ենք. «Չի այնօֆիկ, որ գտանին հասարակաց, ոչինչ ածեն գործոյս, եթէ ոչ նախ պատրաստին: Յիշեմ զի ասացի, եթէ դայն, որ պիտոյ են վասն լուացմանն շնչերոյն և ներկելոյն և հայելոյն և պնդեցնելոյն և վասն մարմնեցոյն գեղապետիլոյ զի սրբեացին: Ոչինչ այսպէս գոր պիտոյ է առուի որպէս գտանի հասարակաց»<sup>1</sup>: Այս նույն բովանդակութեամբ բայց սեակցիան լեզվով գրված մի պարբերություն մենք գտնում ենք մեր մատենագրանի № 3000 ձեռագրում. «Արդ աստ ուսուցման մէջ թէ որ որպէս պարս է դամենայն իրս որ պետկ են վասն արուեստիս... ամեն պետկ է որ թապտիրն անես, յիստակես, քոյ բանին պետկ ածես. անհարինայ, որ ես վերոյ դեղերս ինչպէս որ գտնվի ես գործիս պետկն լինի»<sup>2</sup>: (Ամեն տեղ ընդգծումներն իմն են. Տ. Ղ.):

Մի այլ ձեռագրում ոչ միայն խրատ է արվում, որ պետք է նյութերը մաքրել, այլև բացատրվում է, թե ինչու պետք է այդ նյութերը մաքրվեն. «... զի ամենայն, որ ինչ ելանէ ի քանէ ամենայն խամ է. ոչ կարէ մտանել ի գործ. բայց որպէս գրեալ են վարդապետն, քի այնպէս ոչ գործեն, անհնար է լինել. առեալ պատրաստել պիտի գամենայն մարմինսն. գտել և գմաքել աղալով և պարզել վալուտելիս՝ զի բաժանեցին ի նոցանէ հողաին բնութիւն և ելցէ և ցամաքեցէ ի նոցանէ ապականոյ և այրեցոյ ձեթն, գոր ունին ընդ ինքեանս ի ստեղծմանէ իւրոց: Եւ իբրև բաժանին յասպականացս նիւթիցն կրացուցանելով, թասաղով և պարզելով, յայնժամ լինի հայելի ջօհար, յայնժամ հարկ է սոցա ջուր դառնալ ի պարզ և հոտակ և թէ բազում գեղուղիղջեր և մարմինք և շունչք իցեն, պիտի ամենայնք մի ջուր լիցին առանց սղտորութեան»<sup>3</sup>:

Այսպես ուրեմն՝ ալքիմիկոսները նյութերը չէին գործածում այն վիճակում, ինչ վիճակում որ նրանք գտնվում էին բնութեան մեջ կամ վաճառվում էին շուկայում, այլ նախ և առաջ՝ «թապտիր էին անում»,

<sup>1</sup> Аристотель: Метафизика, 1935, стр. 32.

<sup>2</sup> Ձեռագիր № 2527, էջ 40 բ.

<sup>3</sup> Նույնը, էջ 23 բ.

<sup>1</sup> Ձեռագիր № 2527, էջ 32ա.

<sup>2</sup> Ձեռագիր № 3000, էջ 35:

<sup>3</sup> Ձեռագիր № 3204, 15—15:

մաքրում էին, քոտորաստում էին»։ Եվ ալքիմիական դրականության կեսից ալեկին նվիրված է այն հարցին, թե գործադրելուց առաջ ինչպես պետք է նյութերը, ռեագենտները նախապատրաստել։

Այժմ տեսնենք, թե նյութերը նախապատրաստելու ինչ եղանակներ էին հայտնի մեր ալքիմիկոսներին։

Բավական շատ ընդհանրացումներ պարունակող № 2527 ձեռագրում մենք հատուկ գլուխներ ենք գտնում՝ այն գլխավոր պրոցեսների և եղանակների մասին, որոնց հետ գործ է ունեցել ամեն մի ալքիմիկոս։ «Բանալիսն արուեստիս այս են» վերնագրոված գլխում թվարկվում են հետևյալ պրոցեսները։ «Սպանանելն, պարզելն և վերացուցանելն, շնչահանելն, լոյսելն, հանելն, պաղեցուցանելն, բայց յայս որ դադարեցուցանելն, կրացուցանելն և կարմրացուցանելն»։<sup>1</sup> Եւ այնուհետև արված է, թե ինչու համար են այդ պրոցեսները կիրառվում, ինչ նպատակ են նրանք հետապնդում։

Ե՞տե՞ղ շունչան դադարեցուցանին վասն յոյժ խառնմանն ընդ կրոյն, այսինքն է՝ ընդ մարմնոյն։ Իսկ վասն այսր սպանանին շունչան, զի կարիցէ ի նոցանէ այրողական գորութիւնն, զի մի այրեսցեն զմարմինսն և վասն զի պատրաստ լիցեն վասն վերացուցանելոյ և պարզելոյ։ Վասն այսր պարզեն շունչան և վերացուցանին, զի մաքրեսցին և մի սևացուցանեն զմարմինսն և հալին ի ջուր պարզ, զի հնար իցէ դադարիլ և խառնիլ և վասնզի ի բազմաց մի իր գոյացի։

«Եւ պարզեցուցանին վասն նույն պատճառիւ. և վասնզի այլ գործ յառաջ ելցէ, այսինքն է՝ զի սակի և արծաթ լիցի։ Վասն նոյն խառնեալ դեղոյս՝ այսպես է պատրաստելն շնչերոյն։ Իսկ մարմինքն այրին, այսինքն է՝ զի հալին և կրանան, այսինքն է՝ սպիտակին, և մաքրին, լոյսին այնչափ իրրև զծարոյր և կամ զմոմ, որ հալի ի վերա հրոյ, վասն զի հնար իցէ՝ ցրուիլ գիջուրյանն, որ մտեալ է ի մարմինն։ Կարմրեցուցանին հալին և պաղին վասն որոյ յիշեալ պատճառիս, զի վերոյիշեալս գործեսցին։

«Հարկ է զանազան և ազգի ազգի ձև ամանս աննել փոանս հրս կաւէ. և զիտասջիբ, զի վերոյիշեալ մարմներոյն գործն չորս պէս է. այսինքն է՝ կրացնել աղիվ, լոյսելն, հանելն և դարձյալ պաղեցուցանելն։

«Կրացուցանելն է մարմներոյն այրելն հոյժ բարկ հրով և աղիւ, զի գատեսցին ի նոցանէ ապակաճող կկուրդի և մնացեն մաքուր իրրև զկիր։ Զոսկին և դարծաթն ոչ է հարկ կրացուցանել քան թէ վասն հանգստության, և պատրաստելոյ իւրեանց մասներոյն։ Եւ վասն զի չորացին իւրեանց գիճութիւնն, զի հեշտաւ ընկալեցին օտար գիճութիւն և առ հալիլ՝ այլ ճարտարագոյն իցեն։ Իսկ գարնինն, զպղինձն և գերկաթն հարկ է կրացուցանել, զի գատեսցին իւրեանց ապականելի կկուրդսն և վասնզի քաւեսցի օճն այրողական, իսկ աղն, որ խառնի ընդ խարտուքն մարմնոյն, ի հուրն պահէ զնոյն մարմինն, զի մի հալեսցի կամ այրի։

«Եւ եթէ մարմինն անմաքուր է, մաքրէ զնա ի կկրդէ և ի սևութենեն, վասն զի չորացուցանէ և ուտէ և կլանէ զկկրդութիւնն, վասն իւր չորութեանն և մաքրութեանն։ Եւ եթէ մարմինն մաքուր իցէ, այլ առաւել մաքրէ և հորդորէ զկարմրութիւնն ի կարմիրն և զսպիտակութիւնն ի սպիտակն։ Եւ յորժամ բաժանելի լիցի նոյն մարմինն ի յաղէն, զի կամեսցիս բաժանել, լուա ջերմն ջրով, յայնժամ աղն ի ջուրն հալի և մարմինն մնա։ Այլ վասն զի ոչ ամենայն աղ և ոչ ամենայն պաղլիղ հալին և բաժանին ի շնչերոյն և ի մարմներոյն լուանալով ի ջուր ջերմն, վասն այսորիկ այնքան լուա, մինչև աղութիւնն ի ջրէն ամենևին պակասէ»։<sup>1</sup> (Բոլոր ընդգծումներն իմն են, Տ. Ղ.)։

Ես դիտմամբ այսքան երկար մեջբերում արի, որպեսզի ցույց տամ նախ՝ թե նյութերի նախապատրաստման ինչ եղանակներ էին կիրառում մեր ալքիմիկոսները, հետո այն, որ այդ եղանակների ընտրությունը միանգամայն զիտակցված է, պատճառաբանված ու նպատակասլաց (ինչպես այդ երևում է հատկապես իմ ընդգծած տողերից)։ Մենք տեսանք, որ ամեն ինչ արվում

<sup>1</sup> Ձեռագիր № 2527, էջ 38 բ.։

<sup>1</sup> Ձեռագիր № 2527, էջ 38 բ. — 40ա.

է մեծ մասամբ նյութերը մաքրելու և  
սեղանի ճիշտ ընթացքի համար նախա-  
պատրաստելու նպատակով:


Բայց այստեղ բերված գործողություն-  
ների ցուցակը լրիվ չէ և մասամբ լրացվում  
է մի այլ գլխով, որ վերնագրված է՝ «Յա-  
ղագս գործելոյն» խորագրով: Այս բաժնում  
կարդում ենք. «... Արդ պարտ է ասել յա-  
ղագս գործելոյն, եթէ զո՞ր կերպ գործելո  
հարկ է վարդասպետին առնուլ: Իսկ ասեմք՝  
եթէ գործս յեաւթն մասն բաժանի: Որոց  
առաջինն է մաքրելն շնչերոյն: Վերացուցա-  
նելն մարմներոյն և քարացն և աղերոյն,  
կեղևանցն, այսինքն է՝ ձուերոյն, արճոյն  
պղնձեղենին և սուտրիային և կաւն քիա-  
յին: Երկու քեանքս այս խալիղոնք են, ծո-  
վայինք և ի լաղինն այսպէս կոչին, որպէս,  
վերոյիշեալ եմ՝ վասն բազում անգարո: Եւ  
բեռնքն կենդանեաց, այսինքն է՝ այն իրսն,  
որ ի կենդանեաց առնումք և պիտոնն ար-  
ուեստիս: Որպէս արիւն, մաղ և աղջուր և  
այլ ամենայն իրս, որ բազում անգամ  
յիշեալ եմ յառաջագոյն: Երկրորդ մասն և  
կերպն սրբելն և մաքրելն և մամացուցանելն  
շնչերոյն և ծաղկնոյն, աղերոյն և այլ իր-  
վոյն: Երրորդն է հալելն շնչերոյն ծաղկ-  
նոյն որ մարմնացեալ են և բուրակնոյն:  
Չորրորդն է՝ խառնումն և միաւորումն հա-  
լեալ իրւոյն: Հինգերորդ է՝ կալումն և պա-  
ղումն յորումն կատարի գործն: Վեցերորդն  
է՝ քարերոյն այրեցումն: Եաւթներորդն է՝  
կարմիր ջրերոյն բաժանումն:»<sup>1</sup>

Ամփոփելով վերոգրյալը, կարող ենք  
ասել, թե մեր ալքիմիկոսների համար նյութ-  
երը գտելու հիմնական եղանակներն են  
հանդիսանում ֆիլտրումը, սուբլիմումը,  
դեստիլումը, գոլորշացումը, նստեցումը, և  
բյուրեղացումը: Այժմ տեսնենք, թե ինչ  
գործիքներ ունեին նրանք՝ նյութի զտման  
այդ եղանակներն իրագործելու համար:

Դեստիլացիա. — Սկսենք դեստիլման ա-  
նոթներից: Հայտնի է, որ դեստիլման ար-  
վեստը սկսեց զարգանալ դեռ ալեքսանդրիա-  
կան շրջանում, ստեղծվեցին համապատաս-  
խան ապարատներ և կաթսաներ, որոնք  
հետագայում հարստացան առանձին ըն-  
դունիչներով: Մեր ձեռքի տակ համապա-

տասխան փաստական տվյալներ չունենա-  
լու պատճառով, դժբախտաբար, այստեղ  
չենք կարող տալ դեստիլման անոթների  
աստիճանական զարգացումը Հայաստա-  
նում, սակայն հայկական ձեռագրերում  
մնացած իլյուստրացիաները և այդ անոթ-  
ների նկարագրությունները մեզ հնարավո-  
րություն են տալիս ծանոթանալու դեստիլ-  
ման անոթների կրեք տեսակի հետ:

Մեր մատենագրանի № 3204 ձեռա-  
գրում՝ մենք գտնում ենք այստեղ բերված  
№ 1 նկարը: Այդ նկարից երևում է, որ  
մենք գործ ունենք դեստիլման անոթի հետ:



Նկ. 1

ճիշտ է, այդ նույն ձեռագրում չկա այդ  
գործիքի նկարագրությունը, բայց նկարն  
այնքան պարզ է, որ դժվար չի տեսնելը,  
որ այստեղ բերված դեստիլման անոթը  
ունի չորս գլխավոր մաս. հիմնական կաթ-  
սան, որի մեջ լցնում են զտման ենթակա

<sup>1</sup> Ձեռագիր № 2527, էջ 53 ք-54:

<sup>1</sup> Ձեռագիր № 3204, էջ 202:

նյութը. իրենց խոսքով առած՝ դժբեթաձև մի կափարիչ, որը իր վերևի մասում ունի բաց անցք, մի կլոր գունդ, որը հազցվում է կափարիչի վերի բաց անցքի վրա և որն իր ցածի մասում ունի հատուկ խողովակ՝ կոնդենսացված գոլորշիները դեպի ընդունիչը տանելու համար և վերջապես՝ մի շարժական ընդունիչ, որն ամրացվում է վերոհիշյալ խողովակին: Ինչպես նկարից երևում է, դետաիլման անոթը տաքացվելիս է եղել բաց կրակի բոցով, իսկ ցրտարանը (դնդաձև ծածկոցը) սառեցվելիս է եղել օդով:

Մի այլ ձեռագրում մենք գտնում ենք դետաիլման անոթի մի ավելի պարզ ձևի միայն նկարագրությունը՝ առանց իլյուստրացիայի. Ե... Աման մի, որ պարզարան կոչի և շոքի հան: Ունի նոյն պարզարան և շնչահանս պնակ այնպես, որպես յառաջագոյն յիշեալ է, որ վերացուցիչ և պարզիչ կոչի: Ունի խուփն իսկ գումբեթաձև և նոյն խփանն ներքի դեհն է բոլոր, ըստ չափու շրթանցն ներքո ամանին: Եւ շուրթն խփանս լիցի այսպէս պատրաստեալ, զի հեշտաւ մտցէ ի մէջ երկու շրթանցն ներքո ամանին որպէս նախյիշեալ եմ յաղագս վերացուցանողին և պարզարանին, որով պարզեցի և վերացուցի զշունչսն: Բայց ամանս այս ոչ կոչի վերացուցանող, այլ



Նկ. 2

շնչահան պարզիչ կոչի, զարդ, որ շրթունս շնչահանիս խփանն ծռեալ ընդ ներքսէ հայի, վասն զի առցէ և արդելցէ զջուրն, որ ընձայի ի շոքոյն, որ ելանէ առաստաղքն

շնչահանիս. Եւ ի յայնմ ծռեալ շուրթն կաքիթ, որ ի վայր հայի, ընդ որ ջուր իջանէ (և զջուրն այն, որ ելաներ ընդ քթին, ժողովէի յաման յապիկի): Ամենևին ամանն այս այնպէս, որպէս ամանն որ վարդէ ջուր շինուի:՝ Այս նոյն տեքստը մենք հանդիպում ենք և ուրիշ ձեռագրերում, այդ տեքստերից մեկն արդեն հրատարակված է:՝ Թվում է, թե դետաիլման գործիքի այս նկարագրությունը լիովին բավական է, պատկերացնելու համար այդ անոթը. ձեռագիրը կամենաարիաների կարիք չունի: Այստեղ օրիգինալն այն է, որ կափարիչը իր ներքևի մասում գոգավորություն ունի և այդ գոգում հավաքվում է դետաիլատը, նախքան խողովակով դեպի ընդունիչ հոսելը: Այս ապարատում գոյություն ունի ընդունիչ, որոնցից մեկը ժամանակավոր ռեզերվուարի դեր է կատարում:


Դետաիլման այս անոթը կոնկրետ պատկերացնելու գործին խիստ օգնում է այդ անոթի իլյուստրացիան, որ մենք գտնում ենք մատենագրարանի № 493 թարգմանական ձեռագրում: Այդ իլյուստրացիան տպագիր մի թերթ է, որ կպցված է ձեռագրի 218 և 219 թերթերի միջև (Տես նկ. 2.): Ձեռագրի հեղինակն այդ անոթի մասին շատ ժլատ տեղեկություն է տալիս. նա ասում է. «Բազումք են գործիք քիմիաճութեան: Առաջինն է ըսլըխն (Alambix en. y.), որոյ ըստորին մասն ասի դդումաճև և վերին մասն ասի դարախա»:՝

Նույն ձեռագրում մենք գտնում ենք դետաիլման անոթի մի այլ ձև ևս. Ե...ծռեալ կամ եղջիւրավոր ամանն, որ ի կիր առնանի վասն ընդունելոյ զմեծագոյն զօրութիւն հրոյ: Շատ անգամ այս եղջիւրավորս եթէ ապակեղէնն, եթե խեցեղէնն, ձեփի տղմով. կամ այլով պինդ բռնող նիւթով, զի կարասցի լաւ դիմանալ կրակին»:՝

Ինչպես տեսնում ենք, այս եղջյուրավոր կոչեցյալը ոչ այլ ինչ է, քան մեր սո-

1 Ձեռագիր № 2527, էջ 32:  
 2 Կ. Ղ ա Ք ա դ ա բ յ ա ն, Ալքիմիան պատմական շայաստանում, էջ 150—151: Ձեռագիրն այժմ գտնվում է մատենագրարանում 8446 համարի տակ:  
 3 Ձեռագիր № 493, էջ 14 բ.:  
 4 Նույնը:

փորական լաբորատոր սետորտան (տես նկ. 3), որը հրակայուն դարձնելու համար շատ անգամ ձեփելիս են եղել աղմուկ կամ այլ փակչուն և հրակայուն նյութով, ճիշտ այնպես, ինչպես հիմա մենք շատ հաճախ ապակե անոթները տաքացնելուց առաջ ասրեստապատում ենք: Ինչպես հեղինակն է ասում՝ սետորտաները պատրաստելիս են եղել թե ապակուց և թե կավից: Հետաքրքիր է այս սետորտաների տաքացման եղանակը արտացոլիչ վառարաններում, որոնցից մեկի նկարագրությունը տրված է ձեռագրում: Հատուկ վառարանի մեջ երկաթեղեն լծակների վրա դրվելիս է եղել սետորտան, իսկ այս վերջինը վերի կողմից ամփոփվելիս է եղել մի ընդարձակ գմբեթով, որի առաստաղը արտացոլելիս է եղել հնոցից եկող ջերմությունը և սետորտան տաքացնելիս և վերելից. «... գմբեթն, որ ծածկէ զեղջիւրաւորն, զի հուրն անդրադարձ լիցի և ի վերա եղջիւրաւորին»: Հետաքրքիր է, որ արտացոլիչ վառարանները եղել են տարրեր մեծության, քանի որ պատրաստելիս են եղել երբեմն երկու, երբեմն վեց և նույնիսկ քսան սետորտայի համար. «Փուռն սմանք մեծագոյն են, սմանք փոքրագոյն, զի երբեմն երկուք, երբեմն վեց, երբեմն երկուտասան եղջիւրաւոր ի կիր արկանեն»: Ձեռագրում այս բազմասետորտ վառարանների նկարագրությունը չկա, սակայն գրականությունից հայտնի է, որ նման վառարանի քիչ թե շատ լրիվ նկարագրությունը տվել է Դամասկոսցի Շեմզեդդին Աբու Արզըլլահ Մահամմեդը դեռ 13-րդ դարում. 25—60 հատ սետորտաներ աստղաձև դասավորվելիս են եղել իրար վրա, շախտային վառարանում, որի պատերում եղած անցքերից դուրս են գալիս եղել սետորտաների խողովակները և միանալիս ընդունիչներին: Վառարանը տաքացվելիս է եղել բաց կրակի վրա: Հարց կարող է լինել—թորման գործիքները եղել են միայն լաբորատոր փորձարարությունից, թե նրանք ունեցել են և պրակտիկ կիրառություն: Այս հարցի պատասխանը մենք գտնում ենք



Նկ. 3

մի շարք ձեռագրերում, որոնք դետալիման անոթները համեմատում են վարդաջուր թորելու գործիքի հետ. «Որպէս ամանն այն, որ վարդէ ջուր շինուի»: Այս կնշանակի, որ պրակտիկ կյանքում դետալիման գործիքները կիրառվելիս են եղել որպես վարդաջուր թորելու գործիքներ. իսկ վարդաջուրը պատրաստվելիս է եղել որպես վաճառքի արտահանություն նյութ:

Սուրբիմացիա.— Ինչպես հայտնի է, այն նյութերը, որոնց վիճակի դիադրամայում եռյակ կետը, այսինքն պինդ հեղուկ և գոլորշի վիճակների հավասարակշռական կետը գտնվում է մեկ մթնոլորտից ավելի բարձր ճնշումներում, սովորական պայմաններում պինդ վիճակից գոլորշի վիճակին են անցնում՝ առանց նախապես հալելու՝ հեղուկանալու, ուրիշ խոսքով՝ սուբլիմվում են: Նյութերի այդ հատկությունը վաղուց ի վեր օգտագործվում է քիմիական պրակտիկայում՝ նյութերը գտելու համար: Սուբլիմվող նյութի գոլորշիները հավաքվում են և սառեցվում դանազան եղանակներով: Այդ եղանակներից մեկը, որ վաղուց արդեն պատմական նշանակություն ունի, նկարագրված է մեր ձեռագրերում: Ամբողջ պրոցեսը տարվում է երկու տիգլերի օգնությամբ. տիգլերից մեկում լցվում է սուբլիմացման ենթակա նյութը, երկրորդ տիգլը, որի հատակին կան հատուկ անցքեր, հագցվում է առաջին տիգլի վրա, և երկու տիգլերի միացման տեղը ձեփվում օփիլի-


1 Ձեռագիր № 493, էջ 14 բ.



օտիայական կավով՝, տիգլերի այդ սիս-  
տեմը տեղափոխվում է հատուկ փռի մեջ,  
ծեփվում է նաև վերի տիգլի բերանը ու  
սկսվում է շիկացումը: Սուրլիմվող նյութի  
գույքը շինները վերի տիգլի հատակին եղած  
անցքերով բարձրանում են այդ երկրորդ  
տիգլի մեջ և սառչում նրա պատերին: Պրո-  
ցեսը վերջանալուց հետո վերի տիգլից  
հանում են խառնուրդներից արդեն դուրս  
նյութը: Այս սարքավորումը յատկեներեն  
կոչվում էր But-eber-But կամ Botus Bar-  
batus, իսկ հայերեն ձևազրեբից մեկում  
կոչվում է «Պաւթ և ալբոթ», «Պօտիկայ»<sup>1</sup>,  
իսկ մի ուրիշ ձևազրում կոչվում է նաև  
«Պաւթ պարպատ»: <sup>2</sup> Բացի պօթ և ալպօթ  
անոթներից, սուրլիմացիան պրոցեսները  
մեր ալքիմիկոսները իրազործում էին նաև  
այլ անոթներով, որոնցից մեկն էլ կոչվում  
է պարզիչ: Պարզիչով աշխատելու մանրա-  
մասն նկարագրությունը մենք գտնում ենք  
№ 3000 ձևազրում: Այդ նկարագրությունն  
այնքան պարզ է ու որոշակի, որ ավելորդ  
չենք համարում առանց կոմենտարիաների  
այստեղ մեջբերել: «... Մին աման առի, որ  
պետկայ որ էս արվեստիս անօղն ունենայ,  
որ պարզիչ կանեն. էսպէս լինի էս ամանս.  
Բ կտորայ, կաւէ ամանայ, մինն պնակ,  
միունն խուփն. սորա ձևն ինչպես սունի  
նման քիչ խոր, ոտքն լին, խուփն մեծայ,  
քանս տակի ամանն. խուփն դումբեթի ձև  
էր. խուփի շրթներն պատիկ էր քանս տակի  
ամանինըն. տակի ամանին Բ շուրթ ունէր,  
ապայ շրթներին արալղըն նավի պէս էր,  
որ վերի ամանին շուրթն մտաւ ներքին  
ամանին մէջն, որ է Բ շրթան մէջն ներ-  
քին ամանին, որ Բ շուրթն ունէր, ներսի  
ղեհի շուրթն պատիկ էր, դրսի շուրթն մեծ  
էր. Բ շրթան արալղըն, խոր էր, խփան  
շուրթն մտաւ էն արալղըն, որ լաւ դայիմ  
խտրտայ շուրթն, որ էլ ավել պակաս չու-  
նենայ. ... Ծեփեցի շուրթն հասցրած կա-  
ւով, որ բրտի կաւ էր, պինտ կոկեցի խամ  
կրով, հացի աղով և ճպսով. նայսպատարակի  
բրդով մին ցեխ շինեցի, ամանի շրթներն,  
որ ծեփել էի բրտի կաւով, էն ծեփի վերին

էս ցեխօջի սվաղեցի, ցեխն ձվի սպիտակու-  
ցով շաղախեցի, չորացրի ծեփն կրակով,  
երբ որ լավ չորացաւ էլ, ճաքածներն էլ  
սուաղեցի, կրկին չորացրի, ապայ պարզա-  
րանն դրի փռան գլխին ծակին վրայ և  
տակն կրակն վառեցի... յետոյ վերկալայ  
պարզարանն, քողի պաղեց են չափ, որ կա-  
րէի մին ձեռով բռնել. Բանդեցի կաւն կա-  
մաց, որ սկի չշարժի պարզարանն, վերկալի  
խուփն ուսուլով, որ չշարժի և տեսի շունչն  
բռել էր, խփիցն էր կպել, սպիտակ էր ինչ-  
պես քահուր. քանս քահուր էլ սպիտակ  
էր, կիտեցի փետուրով... ունի Էս պաղած  
շունչն կատարելություն, որ պղինձն ար-  
ծաթ շինելոյ ապա պետկայ»<sup>1</sup>

Պարզիչ կոչված անոթի նկարագրու-  
թյունը այս ձևազրում այնքան պարզ,  
որոշ ու մանրամասն է արված, որ մենք  
նույնիսկ հնարավորություն ունենք գծելու  
այդ անոթի հատանքների պատկերները  
(տես նկ. 4.):



Նկ. 4

Ակնհայտ է, որ այստեղ մենք գործ  
ուսնենք սուրլիմացիան պրոցեսի հետ. սա-  
կայն այս նկարագրված եղանակը և գոր-  
ծիքներն այնքան անկատար են, որ ինչ-

<sup>1</sup> Ձեռագիր № 2527, էջ 50ա:  
<sup>2</sup> Ձեռագիր № 8119, էջ 55 բ:

<sup>1</sup> Ձեռագիր № 3000, էջ 27—30:

պես գրիչն է ասում, այդ պրոցեսը կրկրնվում է մի շարք անգամներ, մինչև որ կափարիչը նորից «ուսուլով բանալուց» այլևս ոչինչ չի գտնում «փետուրով կիտելու»:

Ընկ. Կ. Ղաֆաղարյանի բառարանում պարզիչ կոչված այս գործիքի բացատրությունը ճիշտ չի տրված: Այնտեղ ասված է. «Պարզիչ—կոչվում է նաև՝ պարզարան վերացուցիչ: Փիլոսոֆիայի համար գործածվող աման, (ընդգծումս իմն է. Տ. Ղ.), որի ձևի մասին գրված է...» Եվ ապա բերում է ցիտատա № 8446 ձեռագրից (նախկին № 1291): Այդ ցիտատն ունի նույն բովանդակությունը, ինչ որ № 3000-ից բերված մեր ցիտատը. ահա այն. «Եւ կայայ աման մի, որ հարկ է ունենալ ամենայն առն, որ կամի պարզել և վերացուցանել և կոչի պարզիչ: Այսպէս լինի ամանս այս, զի է Բ կտոր կաւէ աման՝ մինն սնակ կոչի և մյուսն այլ խուփ պարզարանի: Եւ ձեն է սնակին այսպես իրրև սիւնայ ձև բոլոր, այնպէս, որպէս տուփ, որ քաղցրէք դնենս այլ ոչ այնչափ խորու, այլ ծաւալ և այլ մեծ քան զտուփ. և խուփն այսպէս լիցի որպէս դումփէթ, բայց մեծագոյն լիցի քան զներքի ամանին, զի շուրթն խփանն միայն ի ներքեվ ամանն մտցէ և ներքի ամանին Բ շրթուն լիցի մինն դրուցէ և բարձրագոյն և միւսն ընդ ներքսէ ցածագոյն, զի շուրթն խփանն ի վերայ հաստատեցի, զի յորժամ զխուփն ի վերա զիպցես նայ՝ շուրթն խփանն հագնի: Բ շրթունսն ներքի ամանին յոյժ լաւ, զի ոչինչ փորսք իցէ և կամ ձերպ» (Գ 2—իբ, 23 ա):<sup>1</sup> Բառարան կազմողը սրանից հետո էլ չի շարունակում մեջբերումը: Մինչդեռ տեքստի հենց շարունակությունն է ցույց տալիս այս ապարատի աշխատանքի ձևը և դրանով իսկ բացատրում նրա ֆունկցիան: Ահա շարունակությունը. «Եւ հարկ է ունենալ երրորդ աման, որ է փուռն և շինի ի կաւէ բրտի և ձև փուռն, բայց ըստ իւր չափուն բարձրագուն լիցի քան զփուռն և կատարքն լիցի ծակ մի վերոյիշեալ ամանիս և պարզարանիս չափովն և հարկէ, զի կաւս այս, որով


զփուռս շինես, անուցած լիցի և լաւ յոյժ և յորժամ շինես զփուռն, թրծէ յոյժ, զի լիցի թրծեալ այնչափ, որպէս կճիճ ոսկերչի, որով զարծաթն հալէ, զի զիմասցի հրոյ. և յորժամ ցամաքեցուցի զաղն, որ սալճիմա կոչի, առիտեր և մի մագաղաղ և կամ թուխտ և կարեացի բոլոր այն չափովն, որ չափ ամանին ատակն է, այսինքն է, պարզարանին չափովն և դրի յատակն ամանին և ի վերա սփռեցի դնոյն աղս: Եւ ի վերա այնմ աղին սփռեցի զփոշին և վերոսացեալ Գ իրվուս, այսինքն է, զլվացած զանկին զճիպսն և զծագիկն արծիճն և զկլայեկն. և յորժամ զայս արարի, ի վերա եզի զխուրն այսպէս, զի մտաւ շուրթն ի շրթունսն ներքո՞ւմանին, և զձերքն կալայ, ձեփելով կաւով բրտի, շուրջ բոլոր յոյժ կոկելով, լոկնեցի լուկնով, որ շինեալ է խամ կրով և հացի աղով և ճրփսով և լաբատրակի բուրդով շաղախեալ ամենայնսն ընդ իրար հակթի ձերմկուցով. և յորժամ լուկնեցի զամանն, շուրջածի զամանն կամաց կամաց մերձ հրուն կճաւն և լուկինն, և յորժամ ցամաքեցաւ, առի զպարզիչն և վերացուցիչս զայս և եզի ի վերա փուռն և վառեցի ի ներքո հուր նժվաղ Գ սահաթ: Եւ ապա աջողուցի զհուրն ի եօթն պահ, ի ամենն կես պահ տալելով զհուրն այնպես, զի յորժամ կատարեցաւ ի է սահաթ եզև հուրն բարկ յոյժ: Եւ յայնժամ վերուցի զպարզարանն ի հրուն, մինչև պաղեց այնչափ, որ կարէի շօշափել ու ձեռամբս և քակտեցի սլուկինն և զկաւն և հանի կամաց յոյժ թէպէտ և յուժ հալած է և լեղութիւն այնպէս կամաց առնել, զի մի շարժեցի ամանն. և վերուցի իսկ զխուրն և թռեալ շունչն յառատաղքն խփանն և մնացեալ էր քափշայն և աղն ընդ այլ իրվոյն, ի յատակն ամանին և էր այն, որ թռեալ էր նման ի մանրուսն քաֆուրի, բայց սակաւ մի պայծառագոյն քանդ քաֆուրն: Եւ ժողովեցի զայն սպունդառով և կամ փետրով...»:<sup>2</sup>

Այս ապարատի և փուռն ամբողջ սիստեմի նկարը մենք գտնում ենք № 6928 ձեռագրում (տես նկ. 5 է):

Մենք տեսնում ենք, որ № 3000 ձե-

<sup>1</sup> Կ. Ղաֆաղարյան—Ալքիմիկան պատմական Հայաստանում, 1940 թ. էջ 152—153:

<sup>2</sup> Ձեռագիր № 8446, էջ 23 բ—24 բ:



Նկ. 5

աագրից իմ մեջքերածր և № 8446 ձեռագրից այստեղ բերված տեքստերը նույն բովանդակությունն ունեն՝ միայն թե զըրված են տարբեր լեզուներով: Նկարագրված ապարատով աշխատելու ձևերը բացարձակորեն ցույց են տալիս, որ մենք գործ ունենք սուրլիմացիոն ապարատի հետ և ոչ թէ ֆիլտրի հետ: Բայց եթե նույնիսկ գործողության նկարագրությունները չլինեին, այլ լինեիր միայն ապարատի նկարագրությունն ու անունը՝ դարձյալ բավական էր՝ եզրակացնելու համար, որ պարզիչը սուրլիմացիոն գործիք է: Եվ իսկապես՝ տեքստն ասում է, թե այս ապարատը «վերացուցանելու», ինչ որ մի բան բարձրացնելու, համար է գործադրվում: Բոլորին հայտնի է, որ ֆիլտրումի էությունը կայանում է նրանում, որ պղտոր հեղուկը անց է կացվում ծակոտիկեն ամանների միջով՝ զուլալ ֆիլտրատ ստանալու համար, ըստ սրում, ֆիլտրատը նույնպես հեղուկ ազրեզատային փիճակ ունի և հետևաբար, առանց նստանների վեր բարձրանալ չի կարող, այլ

միայն կիջնի ցած: Իսկ նկարագրված անոթում ոչինչ ցած իջնելու տեղ և հնարավորություն չունի: Բացի այդ, անոթի նկարագրության մեջ մենք նկատում ենք, թե ինչ մեծ խնամքով անոթի ներքևի մասը ծածկվում է հատուկ կափարիչով և այնպես, որ նրանց միացման տեղը օդ չանցկացնի: Ինչի համար է սա հարկավոր, միթե ֆիլտրումի. ի հարկե ոչ: Այսպիսի հերմետիկություն հարկավոր է միայն նրա համար, որ անոթը տաքացնելիս, նրա մեջ եղած նյութի գոլորշիները չփախչեն, այլ հավաքվեն պատին: Բայց դուցե այդ դեպքում մենք գործ ունենք դեատիլման գործիքի հետ: Այդ էլ չի կարող լինել, քանի որ այդ դեպքում մեր անոթից գոլորշիները պետք է դուրս բերվեին և սառնցվելուց հետո հավաքվեին հատուկ ընդունիչի մեջ, այլապես՝ վերը նկարագրված անոթի պատերին կոնդենսված գոլորշիները նորից կհոսեն ներքև, թորվող նյութի մեջ: Պարզ է, որ վերացուցիչ կոչվող անոթում առաջանում են այնպիսի գոլորշիներ, որոնք անմիջապես կոնդենսվում են որպես բյուրեղային կամ ամորֆ փոշի, առանց նախապես հեղուկ վիճակ ունենալու, ուրիշ խոսքով, որոնք սուրլիմվում են:

Էլ չխոսենք այն մասին, որ հենց տեքստում ասվում է, թե պարզիչը կրակի վրայից պետք է վերցնել զգուշությամբ, թողնել, որ սառչի, ապա զգուշությամբ պետք է վերցնել պարզիչի կափարիչը, «որ չշարժի, և տես շունչն թռել էր խփիցն էր կպել, սպիտակ իճչպես փռեար... կիտեցի փետուրով...» և այլն. պարզ է, որ հեղուկը և կամ գոլորշիները փետուրով կիտել չի կարելի, և որ մենք այստեղ գործ ունենք սուրլիմացման հետևանքով անոթի կափարիչի վրա հավաքված մաքուր նյութի փոշու հետ, որը փորձարարը հավաքելիս է եղել փետուրով:

Պետք է նկատել, որ սուրլիմացման պրոցեսները խիստ հաճախակի են ալքիմիկոսների պրակտիկայում:


Սուրլիմացիոն գործիքներից մեկն էլ ալուրդել կոչվածն է: Այս գործիքի նկարագրությունը և իլուստրացիաները մեր ձեռքի տակ եղած ձեռագրերում չկան, բայց № 8119 ձեռագրում կա մի խրատ՝ այդ գործիքի

գործադրման մասին: Այնտեղ ասված է. «...Եւ ցամաքեցո ընդ արեգական և կամ նժաղ հուր և լոսեա և դիր յալուղելն խցելով զծերպսն վարդապետական Մուրադովաւ և ապա վառեա հուր... Այլ տես զի մի երոյն ուժեմ վերին կողմն ալուղելին կարմրացի, այլի գործն որ նմայ. և յորժամ պարզեցի բաց և գտցես ի վերի կողմն ալուղելին զառեկն պարզեալ սպիտակ...»<sup>1</sup>

Այսպես ուրեմն, ալուղելը երկու մասից կազմված մի փակ անոթ է, որի երկու մասերի միացման տեղը հերմետիկորեն փակվում և ծեփվում է: Ալուղելի վերին մասը չպետք է տաքանա. այդ վերին մասումն է հավաքվում մաքուր զառիկը, որը հավաքում են փետրով. «... և յորժամ պարզեցի, բաց զամանն ի վերէ և գտցես զառեկն ըսպիտակ, ժողովեա զնա փետրով...»<sup>2</sup> Ալուղելը իր ժամանակի խիստ տարածված և հանրածանոթ գործիք է, գուցէ այդ է պատճառը, որ մեր ձեռագրերը չեն տալիս նրա նկարագրութունն ու իլյուստրացիան: Ժամանակակից ընթերցողի պատկերացումը ալուղելի մասին ճշտելու համար՝ այստեղ բերում ենք ալուղելի իլյուստրացիան քիմիայի ընդհանուր պատմության՝ Մենշուտկինի գրքից (տես նկ. 6 ա). այս նկարից երևում է, որ ալուղելը ոչ այլ ինչ է, քան երկու բաժակ, սրունք իրար են հաղցվում, ըստ որում ներքևի բաժակում դրնվում է ելանյութը, որը տաքացվում է, իսկ վերևի բաժակում հավաքվում է սեպտիայի սրուղուկը և այդ վերևի բաժակը չպետք է տաքանա, համաձայն վերոգրյալ խրատի. «... զի մի հրոյն ուժէն վերին կողմն ալուղելին կարմրացի»<sup>3</sup>. վերի բաժակի պատերին փակչում է սուրլիմացված նյութը, որը հետո հավաքում են փետուրի օգնությամբ:

Այն մասին, թե ինչից և ինչպես էր պատրաստվում ալուղելը, ավելի մանրամասն տեղեկություններ է տվել Հեբերը իր «Summa perfectionis» գրքում: Այնտեղ ասված է. «Սուրլիմացիոն անոթը՝ ալուղելը, պետք է պատրաստվի հաստ ապա-

կուց: Ուրիշ մատերյալ պետքական չէ: Համենայնդեպս նա պետք է լինի ապակուն բոլորովին նման նյութ: Միայն ապակին է պետքական [ալուղել պատրաստելու համար] այն պատճառով, որ նա ծակոտիներ չունի, ընդունակ է ցնդող նյութերը պահել այնպես, որ նրանք չհեռանան: Այլ նյութերը նրա համար են անպետք, որ ցնդող նյութերը նրանց ծակոտիկներով հեռանում են: Մետաղներն այդ նպատակի համար նույնպես անպետք են, քանի որ ցնդող նյութերը շնորհիվ իրենց խնամակցության, նրանց հետ միանում են և վերջապես թափանցում են և այդպիսով հեռանում: Այդ ակնհայտ է դառնում փորձի միջոցով: Այսպիսով, ալուղել պատրաստելու համար ապակին անփոխարինելի է:



ա  
ԿԼՈՒՏԵԼ  
բ  
ԿԹՄԿ

նկ. 6

«Պատրաստում են ապակե կլոր անոթ, որի հատակը մի փոքր ուռուցիկ է: Անոթի բարձրության կեսից, նրան շրջապատող ապակե մի օղ են դնում: Այս օղի պատերը ապակե անոթի պատերից այնքան է հեռու, որքան անոթի կափարիչի հաստությունն է: Այս արանքում անոթի կափարիչը պետք է հաղցվի հարմար, այնպես, որ ազատ տարածություն մնա և ճնշում չլինի: Սարքը պետք է լինի այնպիսին, որ շարժական կափարիչը անոթի հետ վարպետորեն, հանգիստ միացած լինի, որ ցնդող նյութը սուրլիմացիայի ժամանակ չհեռանա, թեպես և շաղախով փակված չէ: Սարքը պետք է լինի հասկապես այնպես, որ նրանց միջի անոթը, մինչև

<sup>1</sup> Ձեռագիր № 8119, էջ 83:

<sup>2</sup> Նույնը. էջ 85:

իր պատերի կեսը, մտնի կափարիչի մեջ... Յուրաքանչյուր սուբլիմացման ժամանակ շատ կարևոր է, որ ալուղելի կափարիչը հաճախակի դատարկվի (փետուրի օգնությամբ), այլապես սուբլիմվող նյութից այնտեղ չափազանց շատ կկուտակվի, վերստին կնկնի ալուղելի հատակին և պետք է նորից սուբլիմացվի, որի շնորհիվ շատ ժամանակ կվատանվի»:

Այժմ եթե այս ամենը համեմատենք վերացուցիչի նկարագրության հետ, ապա միանգամայն ակնհայտ կլինի, որ վերացուցիչը սուբլիմացիոն գործիք է և միայն արտաքին ձևով է տարբերվում ալուտելից: Տարբերություն կա՝ և կափարիչի և «պնակի» միացման միջև, այն ժամանակ, երբ ալուտելում նրանք միանում են հատուկ օղակի միջոցով, վերացուցիչի մոտ նրանք իրար միանում են նավակաձև փորվածքի օգնությամբ, ինչպես այդ ցույց է տրված մեր սխեմայում:

Իր ֆունկցիայով ալուտելից չի տարբերվում № 3204 ձեռագրում նկարագրված կքխամ.<sup>1</sup> նա շատ քիչ է տարբերվում և իր արտաքին ձևով: Հիշյալ ձեռագրում մենք գտնում ենք կքխայի թե նկարագրությունը և թե իլուստրացիան: Այնտեղ ասված է. «Այսպես լինի կքխայն (և բերված է նկարը, տես նկ. ԾԲ). ձեռքով կառավ ծածկել կքխայն և դիր զԲ մօա ի յիրար, որ կցի, և ձեռիկ զմէջն որ ի մեկայն մտնէ. և դիր զինքն ի վերա թուռցն և թեթև կրակի, որ գործելի լինի...» Այստեղից պարզ է, որ կքխան կազմված է երկու բաժակից,<sup>2</sup> որոնք իրար միացվում են հատուկ խնամքով (իլուստրացիայում տրված է արդեն միացված վիճակում). իսկ այդ կքխայի ֆունկցիայի մասին խոսում է մի ամբողջ պարբերություն, որը վերնագրված է «Այլ միևս ես դուս՝ վասն արձակման սնդիկի» խորագրով, և որից երևում է, որ խոսքը վերաբերում է սնդիկի գամանը: Ի դեպ պետք է ասեմ, որ ձեռագրի իլուստրացիայում կքխան դրված և, ոչ բանվորական դիրքով: Բանվորական դիրքով նա սխի

ունենա ուղղահայաց դիրք, ինչպես այդ երևում է մի շարք ձեռագրերից, որոնց մեջ խորհուրդ է տրվում կքխաներն այնպես տաքացնել, որ ներքեինը շիկանա, իսկ վերեինը, ընդհակառակն շշիկանա, այլապես գործը կխափանվի:

Ինչպես տեսնում ենք «կքխան» տարբերվում է ալուտելից, երկու բաժակները իրար միացնելու եղանակով: Այստեղ չկան ոչ ալուտելի լրացուցիչ օղակը, ոչ էլ վերացուցիչի ներքին անոթի նավակաձև շերթերը:

Ձեյգերացում.— Սուբլիմացման համար գործադրվող «Պաւթ և ալբօթ» կամ «Պաւթ պարպատ» կոչված գործիքը գործադրվելիս է եղել նաև ձուլույթներից այս կամ այն կոմպոնենտը արտահանելու համար. ուրիշ խոսքով՝ այս կամ այն նյութը դառնու համար՝ նրան խառնված այլ նյութերից: Պրոցեսի էսթյունը կայանում է հետևյալում: Կան միանալույթներ և խառնուրդներ, որոնց, երբ տաքացնում ենք, տեմպերատուրայի որոշ աստիճանում՝ նախ՝ հալում է մի կոմպոնենտը և կամ մի սարուկաուրային բաղադրիչը, ասենք էվտեկտիկան, և ապա միայն տեմպերատուրան բարձրանում է և հալում են նաև մյուս կոմպոնենտներն ու սարուկաուրային բաղադրիչները: Հետևաբար՝ սխեմայից մի սրկէ կոմպոնենտ անջատելու համար՝ կարելի է սխեմայի տաքացնել մինչև այդ կոմպոնենտի արտահանման տեմպերատուրան և այդ տեմպերատուրան պահել կայուն այնքան ժամանակ, մինչև որ ուղածղ կոմպոնենտը կամ սարուկաուր բաղադրիչը կանջատես լրիվ չափով: Այս երևույթից են օգտվում օրինակ արծաթ-կապար սխեմայից արծաթը համեմատաբար ավելի մաքուր վիճակում արտահանելու համար. մետաղների դաման այս եղանակը կոչվում է գեյդերացում: Ձեյգերացման այս պրոցեսը տարբեր ժամանակներում կատարել են տարբեր միջոցներով: Մեր ձեռագրերում նկարագրված է գեյգերացման եղանակը վերը նկարագրած պոթ և ալպոթի օգնությամբ. միայն թե, դավող կանյութը այս անգամ լցվում է ծակոտակն հատակով վերի անո-

<sup>1</sup> Ձեռագիր № 3204, էջ 59:

<sup>2</sup> կքխա՝ օբաժակ:

թում, իսկ արդեն զտված նյութը ծակոտ-  
կեններով հոսում է ցած և հավաքվում  
տոաջին տիգլում:

Ձեռագրերից մեկում այդ մասին կար-  
դում ենք. «... պարտ է գիտել զի զանա-  
զան կերպեն ամանոյն յաղազս հալելոյ  
մարմնոց և վասն շնչերոյն պատրաստելոյն.  
ամանք, որով մարմինքն հալին, այսօքիկ  
են... Փօտիկայն՝ աման է՝ ի վերա ամանի  
եղեալ, որոյ վերին պարտ է անել երիս կամ  
Դ ծագս և ինքն քուրայ մէջ լիցի, որպէս  
զկոկսահ, զի զինչ ի հալեսցի, ի նմայ, իջցի  
ընդ ծագս ի ներքի աման. և զամանքս  
պարտ է պատել կայծիւք և Բ փեղքի փքոք  
այնչափ փշել՝ որպէս թէ ոք պղինձ հալէ...»<sup>1</sup>

Ձեյգերացման այս անոթները չափա-  
զանց հին պատմություն ունեն: Կովկասում  
նրանք գտնված են չափազանց հին հան-  
քավայրերի պեղումների ժամանակ. այսպես  
„Известия ГАИМК“-ում նկարագրում է  
պօթ և ալպօթ անոթներին հար և նման  
անոթներ, որոնք պեղված են Շխիրարում:

Այդ անոթի մասին գրված է. —

«Պեաք է ասել, որ կերամիկական մուս-  
ցորդների հարստությունը, մանավանդ  
Շխիրարի (Վերին Սվանեթիա, Վ. Մարես  
գյուղում. Տ. Ղ.) վերի հարթակում, չնայած  
բազմաթիվ պեղումներին, բերում են այն  
մտքին, թե՛ նրանց զգալի մասը գործա-  
դրվելիս է եղել նաև արտադրական պրո-  
ցեսում: Այդ մասի մոտիկ ուսումնասիրու-  
թյան հետևանքով հնարավոր է դառնում  
առանձնացնել որոշ ձևեր, որոնք մեզ հայտնի  
լեռնային կենցաղում չեն կիրառվում.  
այստեղ ամենից հետաքրքիրն է՝ անոթով, կո-  
պիտ ձևավորած, բավական մեծ ամտնի հա-  
տակի մի կտորը, որի կենտրոնում որոշակի  
կերպով կա մի անցքի հետք. այդ անցքը  
սարքված է եղել դեռևս չորսված կավում.  
այս ձևվր մեզ հիշեցնում է ժամանակակից  
կավե ծաղկամանների հատակը: Քանի որ  
սվանական միջավայրում այդպիսինի գոր-  
ծադրումը անիմաստ է, և նման ձևի անոթ-  
ներ լեռնական կենցաղը չգիտե, մնում է  
ենթադրել, որ նա ունեցել է արտադրական  
կիրառություն. այդ դեպքում, բնականորեն,

միտք է ծագում ոչ այնքան՝ անցքի մի-  
ջով ինչ որ բան մաղելու մասին, ինչքան՝  
հեղուկ դուրս թողնելու մասին. այսպիսի  
սարքը կարող է հարմար լինել մանրած  
նյութը հոսող ջրով լվանալու համար: Հե-  
ղեղաջրերի հետ բոլոր լանջերով վայր իջ-  
նող կերամիկայի հարստությունը ենթա-  
դրել է տալիս, որ, ըստ երևույթին, հենց  
այստեղ, Շխիրարում է ձևավորվել ու  
թրծվել այս կերամիկան. այս փաստի հաս-  
տատումը խիստ կարևոր կլիներ» (ընդ-  
գծումներն իմն են: Տ. Ղ.):<sup>1</sup>

Այս մեջբերումից երևում է, որ հողվածի  
հեղինակի համար վերջնականապես պարզ  
չէ իր պեղած «ծաղկամանի» նման կավե  
անոթների կիրառական ֆունկցիան: Նա  
միայն ենթադրում է, թե այդ անոթները  
կարող էին գործադրվել հանքաքարը լվա-  
նալու համար: Հանքաքարի լվացումը  
միայն մի իմաստ կարող է ունենալ. դա  
նրա հարստացումն է, իսկ նկարագրված  
անոթով հանքաքարի հարստացում չի կա-  
րող կատարվել: Ոչ մի կասկած չի մնում,  
որ Վերը նկարագրված հնագույն անոթներն  
ուներին ճիշտ նույն ֆունկցիան, ինչ որ  
պոտալպոտ անոթները մեր ալքիմիական  
ձեռագրերում. այսինքն նրանք հանդիսա-  
նում էին մետաղները արտահալելու անոթ-  
ներ: Մեր ձեռագրերից մեկում ավելի որո-  
շակի է նկարագրված այդ անոթն ու նրա  
ֆունկցիան. այնտեղ ասված է. «... Բայց  
Բ կճիճ շինէ. մեծ և փոքր. և դիր գիտքն  
ի ներքեն և դմեծն ի վերեն. և հագոյ Ա  
ի Բ և մեծն լից զղեղերն և դերկաթն ձգէ  
ի ներսն և վերի կճիճն ծակ ուճենա՝ ի  
յոսքն, ասես, անչաք, որ իջնու ի փոքրն»:<sup>2</sup>

Այս էլ մի փաստ է, որ հիմք է տալիս  
ալքիմիական ապարատուրայի հարստու-  
թյունը մեզ մոտ արարների երախտիքը  
չհամարելու: Մետալուրգիական նպատակ-  
ներով պօթ և ալպօթ կոչված կրկնատիղ-  
լերը Անդրկովկասում գործադրվելիս են  
եղել շատ հնուց և շատ երկար ժամանակ:

<sup>1</sup> „Известия ГАИМК“ вып. 120, 1935 г. стр. 273—274.

<sup>2</sup> Ձեռագիր № 3204, էջ 36բ:

<sup>1</sup> Ձեռագիր № 8119, էջ 55ա. 55բ.:

Դիգեստում. — Քիմիական գործողության այս անունը մեր ժամանակներում այլևս չենք հանդիպում, ուստի, հասկանալի լինելու համար, բերում եմ այդ բառի բացատրությունը Քիմիական բառարանից. „Digestion. — գործողությունը կայանում է նրանում, որ երկար ժամանակ մեղմ կրակի ազդեցությունն են հանձնում նյութերը... Դրա նպատակն է փափկացնել մարմինը, կամ նրանից անջատել այնպիսի սկզբունք, որը զիջում է միայն երկարատև ազդեցությանը՝ մեղմ ջերմության տակ...»<sup>1</sup>

Իր ժամանակին դիգեստման ապարատները եղել են շափազանց բազմատեսակ, ես այստեղ կանգ կառնեմ միայն այն տեսակների վրա, որոնց նկարագրությունը կամ սխեմատիկ նկարները գտնում ենք մեր հայկական ձեռագրերում, ըստ որում, առաջուց ասենք, որ նրանք այնքան օրիգինալ են, որ արժեն առանձին ուշադրության: Խոսքս վերաբերում է իջուցանող կոշիկի գործիքին:

Մեր ձեռքի տակ եղած ձեռագրերից չորսի մեջ (№ 2527, 3000, 4846, 9625) մենք գտնում ենք այդ գործիքի նկարագրությունն ու իլուստրացիաները: Ձեռագրերից երկուսը (2527 և 8446) գործիքների նկարագրության բոլորովին նույն տեքստն ունեն, իսկ երրորդը (3000) ունի նույն տեքստի ազատ շարադրությունը սամկական լեզվով: Բերենք № 2527 ձեռագրում եղած նկարագրությունը. «... յաման մի, որ իջուցանող կոշի, որում ձեն և կերպն բոլոր է և արձակ և սակաւիկ մի խորու: Եւ մէջն կա քիթ, որ իջնէ ի վայր. այնչափ յերկայն, որչափ երկայնութիւն մատին մի. և քթին այն վերին դիհն, որ յամանն է, արձակ է և ներքինն նեղ յոյժ: Եւ ըստ ներքսէ ամանն այն, որ իջուցանող կոշի կոկ յոյժ, վասնզի մի արգելիցի ինչ ամէնեկն ի յամանն, զի՝ մի իջիցի յատակն ամանին: Եւ շինի ամանս այս ի կաւէ բրտի և հարկէ, զի յոյժ կատարյալ թրձյալ լիցի, որպէս ասացի, յաղաղս պարզարանին: Եւ եղիցի աման մի այլ, զի

դիցի ի ներքն ամանիս այս ի կաւէ բրտի և յոյժ թրձեալ լիցի, որում կերպն սիւնածն է, որպէս տուփ քաղցրուց, բոլոր և ուժն տապակ: Եւ այս երկու ամանս հանդերձ իջուցանող կոշին, որ կերպարանն այս է: (Այստեղ ձեռագրում արված է իլուստրացիան, որից հետո անմիջապես շարունակում է. Տ. Ղ.) Այս ամանովս իջուցի զնոյն փոշիսն, այսինքնէ՝ զպղնձի և զառկիւն: Առի կայծք հրացեալ և շարեցի երես մի ընդ ներքսէ վերո ամանին: Եւ դարձեալ ցանեցի զնոյն փոշայն իբրև զկէսն և դարձեալ երես մի այլ ի վերա կայծեր շարեցի և ապա՝ զմնաց կէս այլ փոշոյն ի վերա ցանեցի: Եւ զներքի ամանն ընդ դրուցէ կայծեալք պատեցի և փշեցի կամաց կամաց փքօք: Եւ իջան փոշիքն ընդ քիթն ի ներքին ամանին և վերուցի իսկ զամանն վերին և հայեցայ յամանն ներքինի և տեսայ զպղնձն մաքուր և սպրկիկ պարզ և սպիտակ՝ որպէս արծաթ: (Բոլոր ընդգծումները իմն են. Տ. Ղ.):

Այս նկարագրությունից ակնհայտ է, որ մենք այստեղ պրինցիպալ առումով գործ ունենք Կերոտակիսի մի նոր ձևի հետ. խառնուրդի միջից նյութերից մեկը՝ գաւիկը, որ արտենի սուլֆիդն է, սեղուցվում է, միանում է պղնձի հետ. այս միահալույթը հալվում է և իջնում (այստեղից է իջուցանող անունը) երկրորդ անոթի մեջ: Կերոտակիսի քաղմաթիվ ձևերի իլուստրացիաներ մենք գտնում ենք հունական ձեռագրերում, բայց մեր ձեռագրերում եղածը նրանցից ոչ մեկին նման չէ: Մի փոքր հիշեցնում է նրանցից միայն Սեն-Մարկի ձեռագրում արված Կերոտակիսը: Ապացուցելու համար, որ մեր ձեռագրերում հիշված իջուցանողը ոչ այլ ինչ է, քան Կերոտակիս, մի փոքր կանգ առնենք հունական կերոտակիսների և նրանց ֆունկցիայի վրա:


Հայտնի է, որ շատ հնում, Եգիպտոսում և Հունաստանում տարածված է եղել մոմանկարչությունը. սրա էությունը կայանում է նրանում, որ ներկերը փոխանակ յուղով քրայելու՞, բանում էին մոմով, իսկ որպէսզի հնարավոր լինի մոմանկրկով նկարել, պալիտրան, որի վրա բացում էին

<sup>1</sup> Шарль Луи Кадет: Словарь химический.

մոմաներից, շարունակ պահում էին թույլ կրակի վրա: Ահա այս պալիտրան հենց կերտակիսն է: Սրա նմանությամբ մետաղյա այն թիթեղը, որի վրա ալքիմիկոսները տաքացնում էին պղինձը և փափկացնելով այն, նրա մեջ ներթափանցում էին զառիկը, սնդիկը կամ ծծումբը, և դրա հետևանքով փոխում պղնձի դույնը, ուրիշ խոսքով ներկում էին պղինձը, կոչվեց կերտակիս: Սա, ուրեմն, ալքիմիկոսների պալիտրան է, որի օգնությամբ փոխում են մետաղների դույները: Սկզբում այս գործիքը եղել է շատ պարզ. երկու կողմից բաց, թրձած կավից պատրաստած գլանը զրվելիս է եղել թույլ կրակի վրա, իսկ գլանի վերևի բացվածքի վրա զրվելիս է եղել բուն կերտակիսը, որը ունեցել է քառակուսի մի նեղ շերտի ձև, այնպես որ ամբողջովին չի ծածկել գլանի բերանը. կերտակիսը երբեմն եղել է նաև եռանկյունաձև: Նրա վրա լցնելիս են եղել պղնձի փոշին, զառիկը կամ ծծումբը և կամ թե սնդիկը, նայած թե ինչ դույնի են ուզեցնել ներկել պղինձը, և ներքևից տաքացրել են: Հետագայում այս պարզ գործիքը կատարելագործվել է. ցնդող արսենը, ծծումբն ու սնդիկը չկորցնելու նպատակով, կերտակիսի վրա գնում են զմրեթաձև կափարիչ, որի վրա սառչում է սուբլիմվող նյութը: Բայց այդ սառած փոշին երբեմն կափարիչի վրայից թափվում է ցած, կրակի վրա: Որպեսզի այդ էլ տեղի չունենա, կերտակիսի և կրակի միջև՝ գլանի մեջ, սարքավորում են ափսեյակեքս մի ընդունիչ: Այս անգամ արդեն ընդունիչի վրա թափված փոշիները նորից սուբլիմվում են, քանի որ կրակին մոտ են և նորից բարձրանում վեր: Շատ հաճախ, այն մետաղը, որն ուզում էին ներկել, պատրաստում էին կերտակիսի ձևով, վրան գնում «ներկող» նյութը և այդպիսով կերտակիսը շրջապատում ներկող նյութի գոլորշիներով, որոնք դիֆուզվում ու ներկում էին կերտակիսը:

Հետագայում ավելի է բարդանում այս գործիքը: Բուն կերտակիսից գլանի մեջ կախվում է ծակոտակեն մի բալոն, որի մեջ լցվում է սուբլիմվող նյութը, որի ծակոտակեններից դուրս է թափվում կրակի վրա

զանվող ընդունիչի մեջ և, սուբլիմվելով, բարձրանում, շրջապատում է կերտակիսը ու ներկում այն: Մեր իջուցանողն արդեն կերտակիսի դարգացման հաջորդ էտապն է: Այստեղ բուն կերտակիսը կորցրել է իր նշանակությունը. քանի որ հենց ինքը, ներկվելիք մետաղը, փոշու ձևով, ներկող զառիկի փոշու հետ միասին, լցվում է «քիթ» ունեցող բալոնի մեջ շերտ առ շերտ, հենց այդ բալոնումն էլ պղինձը ներկվում է, հալվում և իջնում ցած, «քաղցրուց տուփի»



Նկ. 7

ձևն ունեցող (գլանաձև) ընդունիչի հատակը: Իջուցանողի և այստեղ բերված կերտակիսի շերտացման եղանակի մեջ էլ կա մի տարբերություն: Այն ժամանակ, երբ կերտակիսը տաքացվում է միայն ներքևից, հատուկ փոխ օգնությամբ, իջուցանողը տաքացվում է, նրան ամեն կողմից շրջապատող կրակով: Մենք այստեղ ավինք կերտակիսների նկարագիրը, որպեսզի ավելի պարզ լինի մեր իջուցանողի ֆունկցիան: Այստեղ կարևոր է ընդգծել մի հանգամանք, Բերալոն ասում է. «Նշենք այստեղ, որ կերտակիս ունեցող գլանաձև ապարատները բանեցվում էին միայն շատ հին ալքիմիկոսների կողմից: Նրանք նկարագրված են միայն Սուրբ Մարկոսի ձեռագրում և նրանցից արված արտադրություններում»: Մինչդեռ հենց մեր իջուցանողն ունի գլանաձև մի մաս, որը նմանեցված է «տուփ քաղցրուց»-ին. սա դուցե բավական

<sup>1</sup> M. Berthelot: Collection des anciens Alchimistes Grecs, Paris, 1888, էջ 146:



է՛ մեր իջուցանողը 11-րդ դարի կամ նրանից էլ առաջիկա ապարատ համարելու համար:

Մեր ձեռագրերում բերված նկարազրության մեջ ուշադրության արժանի է մի մանրամասնություն՝ շիխթան կազմելու մասին: Ինչպես տեսանք, իջուցանողի մեջ նյութերը լցվում են շերտ առ շերտ, որոշ հաջորդականությամբ՝ ելանյութեր և ածուխ և այսպես, իրար հաջորդող շերտերով, մինչև որ լցվում է անոթը: Սա մեզ խիստ հիշեցնում է դոմնայի վառարանում կազմվող շիխթայի կարգը և ցոյց է տալիս լարորատոր գործիքի և արդյունաբերական ազրեգատի օրգանական կապն ու փոխադարձ ազդեցությունը: Հունական ձեռագրերում կերտակիսի բեռնման կարգի մասին հիշատակություն չկա: Այդ տեսակետից մեր ձեռագրերը ավելի լրիվ և ամբողջական պատկեր են տալիս:

Ուշադրության արժանի է նաև այն տարբերությունը, որ ունեն հիշյալ ձեռագրերում բերված իջուցանողի իլուստրացիաները: Ընդամենը մենք ունենք նույն գործիքի վեց նկար, մեկական նկար № 2527 և 8446 ձեռագրերում և չորս նկար № 3000 ձեռագրում: Բոլոր նկարներն էլ իրարից այս կամ այն չափով տարբերվում են, բայց № 3000 ձեռագրի երկու նկարը ներկայացնում են նույն անոթի զգալիորեն փոփոխված տարբերակը: Այն ժամանակ, երբ 2527 և 8446 ձեռագրերի իլուստրացիաներում ներքին անոթը (մենք կասեինք բուն իջուցանողը) կախյալ վիճակումն է և վերջանում է սուր ծայրով, 3000 ձեռագրի բուն իջուցանողը ոչ թե կախված է զլանաձև տուփի մեջ, այլ դրված է նրա հատակին և ունի տափակ վերջավորություն: Այս տարբերությունը սակայն գործիքի ֆունկցիայի մեջ սկզբունքային փոփոխություն չի մտցնում, քանի որ բոլոր դեպքերում բուն իջուցանողը իր ցածի մասում ունի մի քանի դուրս ցցվածքներ՝ քթեր, որոնցից դուրս է հոսում հալված նյութը:

Բերտլոն իր «Ալքիմիան միջին դարերում» գրքում հին կերտակիսի մասին ասում է, թե հետագայում «երկվել է և

հանդիսացել է երկու տեսակի գործիքների նախորդը, հատկապես թրծած կավից սաղավարտի, որը գործադրվում էր սուբլիմման և ծծմբական միացությունների այրման համար՝ բարձր տեմպերատուրների տակ և ինքնահոսություն հալույթներ ստանալու անոթի (digestion), որը տաքացվում էր ջրային բաղնիքի վրա և գործադրվում սնդիկի և այլ հեղուկների (լուծույթներ) հետ աշխատելու համար»<sup>1</sup> Այս տեսակետից մեր «Իջուցանողը» հարստացնում է կերտակիսի զարգացման պատմությունը. պարզվում է, որ կերտակիսը ճյուղավորվում է ոչ թե երկու խմբի, այլ երեք խմբի, որոնցից երրորդն արդեն բուն միահալույթներ (մեր դեպքում պղնձի և արսենի) ստանալու համար է օգտագործվում:

Ասացինք, որ դիզեստման ապարատները եղել են բազմատեսակ: Բացի վերը նկարագրված իջուցանողից, որի նմանը մենք չենք հանդիպել օտար գրականություն մեջ. հայկական ձեռագրերից մեկում մենք հանդիպում ենք մի բոլորովին այլ ձևի դիզեստիոն ապարատի: Այս ապարատը կազմված է երկու շերտից, որոնք իրար են հագցված բերանների կողմից և որոնք փոխ մեջ են դրվում ուղղահայաց դիրքով, այնպես, որ մեկ շիշն ունենում է նորմալ դիրք, իսկ մյուսը ամբացված է լինում առաջինի բերանին զլխիվայր. ընդ որում՝ որպեսզի նյութերը չթափվեն՝ զլխիվայր դրված շիշ բերանը խցում են շտամբուրի լարով: Այս վերի շշում տեղափոխվում է դիզեստիվոլ նյութը, վերի շիշը շրջապատվում է մարմանդ կրակով, որի ջերմությունից դիզեստիվոլ նյութը արտահալվում է և իջնում ցածի շիշը՝ ընդունարանը (նկ. 8): Երբեմն նույնատիպ երկու շերտի փոխարեն վերցնում են մեկ շիշ և մեկ բաժակ (ընդունիչ): Այս տիպի ապարատների մենք հանդիպում ենք նաև այլ ալքիմիական գրականություն մեջ, միայն թե նրանք տարբերվում են ջնուցման աղբյուրի (վառարանի) դիրքով: Այսպես՝ սիրիական մի ձեռագրում եղած դիզեստիոն

<sup>1</sup> M. Berthelot: La chimie au moyen âge; p. 109.

ապարատի երկու շերտից մեկը, հատկապես ներքևինը, տաքացվում է հենց ներքևից, իսկ մի ուրիշ տեղ մենք գտնում ենք նույնպիսի մի ապարատ, որը տաքացվում է թե վերևից և թե ներքևից:<sup>1</sup>

Ծեփեր.— Թորման, սուբլիմման և դիզեստման ապարատուրայով կարելի է սահմանափակել այն ապարատուրայի տեսակները, որոնք կազմված էին երկու կամ ավել մասերից: Այդ մասերը համարյա

Այս պարատի հարցը լաբորատոր տեխնիկայի  
որ հարցում է տեղի ունի իջարկելու և իջարկելու  
մասին լաբորատոր տեխնիկայի մասին հարցը  
իսկ ինչպե՞ս պարզացնել

Սա է ինչպիսիք է  
պարատի մասին  
հարցը լաբորատոր  
տեխնիկայի մասին



Այս է ինչպիսիք է  
պարատի մասին  
հարցը լաբորատոր  
տեխնիկայի մասին  
հարցը լաբորատոր  
տեխնիկայի մասին

Նկ. 8

միշտ իրար միացվում էին գանազան ձեփերով: Թորման ինչպես և սուբլիմման ժամանակ անհրաժեշտ է լինում որոշ հերմետիկություն ստեղծել՝ գոլորշիները չփախցնելու համար: Այդ հերմետիկությանը նրանք հասնում են ապարատուրայի գանազան անցքերը հատուկ շաղախներով՝ ձեփելով: Ծեփերի տեսակները եղել են բազմազան:<sup>2</sup> Այդ շաղախների պատրաստելն էլ մի վարպետություն է, որ սովորեցնում էին մեր ձեռագրերը: Ահա այդ շաղախների ուսուցանանքից մեկը.— «Այսպէս պատրաստի յառաջ կաւ իմաստասիրացն: Առ կաւ կարմիր կամ սպիտակ և գէճ մաքուր և անդ շաղախեա ջրով և թող որ ցամաքի և ապա լոսէ և մաղէ մանտր և նեղակ մաղիւ և շաղախէ ջրով և քան զիւր չորեքական թեփ խառնեա ընդ նմայ և թող օր զիշեր մի, ապա առ թրիք չորացած և մանրէ և մաղէ

և լոսէ լաւ և խառնեալ շաղախեա ընդ կաւին և խառնեա ընդ ժ մասին մաս մի աղ և որչափ էրեկն նոցա կղմինտը լոսեալ և մաղեալ ընդ մաղձարէ և այս է լաւագոյն կաւն»: Երբեմն այս կամ այն նման կափերը կոչվում են իմաստասիրաց կաւ. «... Երբև գայն ամանն պղնձէ որ վարդէ ջուր հանեն և յոյժ ձեփեն իմաստասիրաց կաւով...»: Այս կամ նման կափերով դեստիլման անոթի գանազան անցքերը ձեփելուց հետո, խորհուրդ էր տրվում ձեփած մասերը կրակով շիկացնել և եթե այդ դեպքում կափը ճեղքվածքներ տա, ապա նույն կափով այս անգամ արդեն ձեփել ճեղքվածքները և նորից շիկացնել: Անհրաժեշտ է նկատել, որ այս կափով ձեփվում էին ոչ միայն դեստիլման անոթները, այլև քիմիական լաբորատորիայի այն բոլոր անոթները, որոնց աշխատանքի ժամանակ անհրաժեշտ է լինում պահպանել որոշ հերմետիկություն:

<sup>1</sup> Ձեռագիր № 5617, էջ 78բ, 79ա, Ձեռ. № 6928, էջ 39բ. և այլն:  
<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>1</sup> Ձեռագիր № 8119, էջ 28 բ:  
<sup>2</sup> Նույնը, էջ 34 ա:

Բացի զանազան «կավերից», որոշ նպատակներով՝ օգտագործում էին նաև զանազան սոսինձներ:<sup>1</sup>

Քամում.—Ֆիլտրման պրոցեսը հավանաբար ավելի շուտ է ծանոթ եղել ավրամիկոսներին, քան զեստիլումն ու սուբլիմումը: Այդ բանին պետք է նպաստեին բնական պայմաններում տեղի ունեցող մի շարք երևույթներ, ինչպես նաև կենցաղային մի քանի պայմաններ: Այսպես օրինակ՝ մարդկութունը վաղուց ի վեր պետք է դիտած լինի, որ պղտոր ջուրը, անցնելով ավաղի միջից, դառնում է դուլալ, ինչպես նաև, երբ պղտոր ջուրն անցնում է բրդի կամ թաղիքի միջից, դառնում է պարզ և թափանցիկ: Այս դիտողությունն է պատճառը, որ ավրամիական լարսրատորիաներում մինչև վերջն էլ գործադրություն մեջ են եղել, որպես ֆիլտրման միջոցներ, ավազը, բուրդը, թաղիքը և այլ ծակոտկեն բնական ու կենցաղային նյութեր: Այսպես օրինակ՝ լուծույթը պարզելու համար, ձեռագրերից մեկում խորհուրդ է տրվում «յավաղն քամել» մի այլ տեղ հանձնարարվում է. «և քամէ ի բրդեղէն լաթի մէջ». երբ ավելի դուլալ հեղուկ է հարկավոր լինում ստանալ՝ հանձնարարվում է քամել մետաքսի միջով: Իսկ երբեմն էլ առանձին խտրություն չի դրվում այդ միջոցների մեջ, այսպես՝ ձեռագրերից մեկում կարդում ենք. «հալեսցի սալնետրն ի ջուր և քամեսցի թաղեաւ և կամ բրդաւ և սպա կալուսցի: Եւ այս աղս կոչի բուրակ կատարեալ»:<sup>2</sup>

Թաղիքով, ինչպես նաև այլ կտորեղենով քամելու մի քանի եղանակ է գոյություն ունեցել: Մի եղանակն այն է, որ մենք գործադրում ենք մինչև այսօր, երբ մածուն ենք քամում, այսինքն՝ քամվող նյութը առանձին անոթից լցնում ենք քամիչի վրա կամ քամիչի մեջ և քամուցքը հավաքում ընդունիչում. երկրորդ եղանակն այն է, որ վաղուց արդեն գործադրությունից դուրս է եկել, շնորհիվ այն բանի, որ այդ ձևը պահանջում է երկար ժամանակ:

Այդ եղանակի էությունը կայանում է հետևյալում. քամվող նյութը պարունակող անոթն ու քամուցքն ընդունող անոթը հաղորդակից են անում թաղիքի կամ այլ գործվածքի միջոցով. թաղիքը ծծում է միայն դուլալ լուծույթը և կաթիլ առ կաթիլ փոխադրում ընդունիչի մեջ: Այս եղանակի նկարագրությունը մենք գտնում ենք մատենագրարանի № 8716 ձեռագրում, որտեղ ասված է «...սպա դիր կթխա մի այլ ի մտն և թաղքիկդ, որ մի ծայրն կենայ ի ջրով կթխայն և մյուս ծայրն դատարկի մյուս կթխայն ու քաշէ այդպէսդ դիտտակ ջուրն և այդպէս արձակի առաջասպն և զնշատիրն, դառեկն և դասատուխն. բաւ է»:<sup>1</sup>

Քամման եղանակներից մեկ էլ ճնշումի տակ քամելն է: Կտորեղենի կամ կաշվի մեջ լցրած ֆիլտրվող նյութը ամփոփվում է քամիչի (կտորի կամ կաշվի), մեջ այնպես, որ նա ազատ ելք չունենա և մի ձեռքով բռնելով քամիչը (կապոցի նման) մյուս ձեռքով քամիչը ճնշելով՝ փոքրացնում են նրա ծավալը. այս ճնշման հետևանքով քամուցքն անցնում է ֆիլտրի ծակոտիկներից. այսպես օրինակ՝ կաշվի միջից քամում են ամալգամները, որպես քամուցք, ստանալով սնդիկը:

Ծակոտկեն քարն ու տուֆը նույնպես վաղուց գործադրվելիս են եղել Հայաստանում որպես քամիչներ, որոնք դեռ մինչև վերջերս էլ խուլ անկյուններում պահպանում էին իրենց գոյությունը:

Թուղթը, որպես քամիչ, հրապարակ է գալիս շատ ուշ և նրա մասին մենք հանդիպել ենք առայժմ միայն թարգմանական մի ձեռագրում,<sup>2</sup> որը հավանաբար 18-րդ դարի գործ է:

Որպես քամիչի մի ձև կարող ենք դիտել նաև Կարմիր Բլուրում հայտարարված գարեջրի պատրաստման անոթները (մեր թվականությունից 7 դար առաջ): Ինչպես Բ. Բ. Պիատրովսկին է նկարագրում,<sup>3</sup> այդ գործիքները մոտ 30 սմ բարձրություն ունեցող անոթներ են, որոնց հատակին կա

<sup>1</sup> Տես «Պալիգոնի սոսինձ»-ը ձեռագիր № 5617, 81ա:

<sup>2</sup> Ձեռագիր № 8716, էջ 90ա:

<sup>1</sup> Ձեռագիր № 8716, էջ 90ա:

<sup>2</sup> Տես ձեռագիր № 493:

<sup>3</sup> Տես՝ Բ. Բ. Пиатровский: «Урарту», Ереван, 1944, էջ 180:


անցք: Այդ անցքը ներսից ծածկվում է ծղնոտի մի շերտով, որն արգելակում է դարու հատիկների դուրս թափվելը, մինչդեռ անց է կացնում դարեջուրը: Ի դեպ, այս անոթը խիստ հիշեցնում է պոթ-ալպոթի վերի տիզը, փոքր ինչ ձևափոխված և այլ ֆունկցիայով:

Գեկանում. — Մեր ալքիմիկոսներին հայտնի է եղել նաև լուծույթներից լուծված նյութը նստեցնելու և այդ սուղակի վրայից մաքուր հեղուկը հեռացնելու եղանակը՝ դեկանումը: Բացի մեզ հայտնի դեկանացման սովորական հեղանակից, այն է՝ նստվածքի վրայից հեղուկը զգուշութամբ հեռ թափելուց, մեր ալքիմիկոսներին հայտնի է եղել և մի օրիգինալ եղանակ: Նրանք՝ փոխանակ սուղակի վրա եղած հեղուկը զգուշութամբ հեռ թափելու, այդ հեղուկը ներծծելիս են եղել թաղիքի կամ բամբակի մեջ և ապա՝ թաղիքից քամել քամուցքը: Ձեռագրերից մեկում սուղակներ առաջացնելու եղանակների մասին խոսելիս՝ մի տեղ ասվում է. «... յայնժամ կալ զինքն բրդով և երբ հիւթ բռնէ բուրդն դու զայն առ և զիր զցամաքն, որ քաշէ զգիճութիւն ի դեղերոյն մինչ որ այլ չի բացվի բուրդն, ապա գիտացիր, որ ցամաքեալ է»<sup>1</sup> Մի այլ ձեռագրում՝ ձեթ շինելու եղանակների մասին խոսելիս՝ ասված է. «... և քաշէ բամպակով երեսիցն ձեթն և լից ի շիշն...»<sup>2</sup>

Տիզներ. — Լաբորատոր տեխնիկայում խիստ մեծ գործադրություն են ունեցել զանազան մեծության տիզներ, որոնք պատրաստվելիս են եղել հրակայուն կավից և որոնց մեջ հալելիս են եղել մետաղներ ու միահալույթներ: Տիզները գործադրություն են ունեցել ոչ միայն քրիստոսի լաբորատորիաներում, այլև ոսկերիչների արհեստանոցներում: Այդպիսի Տիզներից մեկը պեղված է Կ. Ղաֆաղարյանի կողմից Դվինի միջնաբերդում. Կ. Ղաֆաղարյանի բարենաճ թույլտվութամբ այստեղ բերում ենք նրա պեղած տիզի նկարը (նկ. 9):

Այլ և այլ անոթներ. — Բացի այն գործիքներից և անոթներից, որ մինչև հիմա

նկարագրել և բացատրել ենք, և որոնց մեծ մասը գործադրության մեջ է մեր լաբորատորիաներում, ալքիմիկոսները բանեցրել են և այնպիսի անոթներ ու հարմարանքներ, որոնք շատ վաղուց և խստա վերացել են պրակտիկայից: Այդպիսիք են, պայմանականորեն ասենք, հերմետիկ անոթները:



Նկ. 9

Գնդաձև կավե անոթ-կաղապար. — Գնդաձև անոթներ պատրաստելու տեխնիկայի մեջ մենք հանդիպում ենք մի եղանակի, որը գալիս է շատ հեուց և Հայաստանում կիրառություն է ունեցել դեռ ուրարտական շրջանից՝ մեր թվականությունից առաջ 7-րդ դարի և 6-րդ դարի սկզբի ժամանակամիջոցից: Այդ եղանակի էությունը կայանում է նրանում, որ ձուլելիք իրի մողելը պատրաստում էին մոմից, ապա այդ մողելը ամեն կողմից հավասարապես ձեփում էին կավով. այդ ձեփի մեջ թողնում էին երկու անցք—մեկը հալոցքը լցնելու համար, իսկ մյուսը թողնում էին որպես օդի ելանցք: Ապա՝ կավը շորացնելուց հե-

<sup>1</sup> Ձեռագիր № 3204, էջ 17բ:

<sup>2</sup> Ձեռագիր № 3000, էջ 16 բ:

տո՛ւ այն տաքացնում էին կրակի վրա, որի հետեանքով կավի ներսում եղած մոմը հալչում էր և դուրս գալիս անցքերից կավի մեջը մնում էր ճիշտ այն ձևի դատարկ տարածություն, ինչ ձև որ ուներ մոմի մողելը. կաղապարը պատրաստ էր: Այնուհետև բրոնզի կամ ալյ մետաղի հալոցքը թողնված անցքերից մեկով լցնում էին կաղապարի մեջ, սառելուց հետո կավե կաղապարը ջարդում էին և հանում պատրաստի ձուլածո իրը՝ արձանիկը, քանդակը և այլն: Այսպիսով ամեն մի կաղապար իր նպատակին ծառայում էր միայն մի անգամ: Այդպիսի՝ կաղապարներիով պատրաստած գեղարվեստական բազմաթիվ ձուլվածքներ պեղված են Հայաստանի տարբեր վայրերում և սրահվում են աշխարհի զանազան թանգարաններում:<sup>1</sup> Կաղապար պատրաստելու այս հնագույն եղանակներից մեկը գտնում ենք մեր ալքիմիական ձեռագրում, որպես գնդաձև, դուցե և հերմեաիկ փակվող, անոթներ պատրաստելու համար: Այդ անոթները պատրաստվում էին, գանազան ամալգամներ ձուլելու համար: Այսպես՝ ձեռագրերից մեկում մենք կարդում ենք. «Առ մոմ, արա ընկուզ և արա իւրն կապայ իմաստնոց կավովն և արայ իւրն մախաթ, որ գնայ ծայրն մէջն. յորժամ ցամաքի, հան ըզմախաթն իւրմէն, որ մնայ տեղն ծակ. զիբ ի վերա ներս կրակ. մոմն հալի, մնայ դատարկ և լից ի ծակն ներս սնդիկն և ամբացու զծակն...»<sup>2</sup> Այս անոթի լցնելու պրոցեսը պետք է որ շատ դժվար լիներ և պետք է խլեր երկար ժամանակ երկու պատճառով. նախ՝ մախաթի տրամագիծը ունեցող անցքը շատ է նեղ՝ սնդիկ լցնելու համար և ապա՝ այդ պրոցեսն էլ ավելի դժվարացնում է հատուկ օդի ելանցքի բացակայության հանգամանքով: Այս դժվարությունը չկա ուրարտական կաղապարներիով աշխատելիս, քանի որ այնտեղ կաղապարների վրա թողնում էին հատուկ օդի ելանցք: Վերը նկարագրված գնդաձև անոթ-կաղապարը նույնպես միայն մի անգամ է ծառայում իր նպատակին,

բայց այդ հանգամանքը ըստ երևույթին մեր ալքիմիկոսներին չէր անհանգստացնում. կավը՝ շատ, խակ մոմը կարող էր մնալ գործադրության մեջ մշտապես:

**Ձվի կեղև-անոթ.**—Մնդիկի սուլֆիդ պատրաստելու եղանակներից մեկում ձվի կեղևը գործադրվում էր որպես անոթ.<sup>3</sup> ձուռն ծակում էին, միջինը՝ սպիտակուցն ու դեղնուցը դատարկում. մնում էր ձվի կեղևը, մեջը լցնում էին սնդիկով և անցքը ծեփում: Թրջում էին որևէ փալաս, վրան ցանում էին ծծումբի փոշի, այդ փալասով փաթաթում էին ձուռն և ամբողջը ծեփում կավով ու տաքացնում: Ստացվում էր սընդիկի սուլֆիդ:

**Ընկույզի կեղև-անոթ.**—Նման գանազան նպատակներով օգտագործվում էր նաև ընկույզի կեղևը, ընկույզը ձեղքում էին երկու մասի, միջուկը դատարկում և ապա օգտագործում էին որպես փակ անոթ:<sup>2</sup>

**Փռգածև կարա.**—Մեր ձեռագրերից մեկում հիշատակվում է մի անոթ, «որ նման է փողի զլուխ»<sup>3</sup>: Այս անոթը ոչ այլ ինչ է. եթե ոչ շատ լայն և տափակ հատակ ունեցող, առանց ուռուցքի մի սրվակ՝ երկար վզիկով, որի նկարները մենք գտնում ենք Լեմերիի գրքի իլուստրացիաներում:

**Վառարաններ, հնացներ, քսիքներ.**—Ինչպես մենք գիտենք ալքիմիական տեսություններից, ալքիմիկոսները մեծ նշանակություն էին տալիս ջերմությանը, բացի անալիտիկ դերից, որ ըստ նրանց ուներ կրակը, այս վերջինը խիստ անհրաժեշտ էր՝ նաև նյութերն իրար հետ սեղցիայի մեջ դնելու համար, քանի որ, ինչպես նրանք ճիշտ էին կարծում, սեղցիաներն ավելի արագ գնում էին կամ լուծույթներում և կամ հալոցքներում. այս երկու դեպքումն էլ սխտեմի ջեռուցումը անհրաժեշտ էր լինում. մանավանդ հալոցքների դեպքում: Այս է պատճառը, որ ալքիմիական արվեստում և լաբորատորիաներում խոշոր տեղ է տրված ջեռուցման գանազան միջոցներին:

<sup>1</sup> Տես ձեռագիր № 2850, էջ 140ր, ինչպես նաև ձեռագիր № 7322, էջ 30:

<sup>2</sup> Տես ձեռագիր № 5617, էջ 42ր:

<sup>3</sup> Տես ձեռագիր № 6924, էջ 64ա:

<sup>1</sup> Б. Б. Пиотровский: Урарту; էջ 221:

<sup>2</sup> Ձեռագիր № 2850, էջ 157ա: Նույն եղանակը տես՝ Ձեռագիր № 6928, էջ 38ա:

Այդ միջոցները մենք կարող ենք բաժանել երեք դիվիզիայի խմբի.

1. Աղբի փթման ջերմությամբ տաքացվող փոսեր.

2. Ածխի կամ փայտի այրմամբ ջեռուցվող հնոցներ.

3. Ճրագի բոցով ջեռուցվող թոնիրներ.

Փթման ջերմությամբ տաքացվող փոսերը ունեցել են զանազան ձևեր և տաքացվել են տարբեր կենդանիների աղբով, ըստ որում, աղբի տեսակի նկատմամբ ալքիմիկոսները անտարբեր չեն եղել: Աղբի մեջ տեղավորելիս են եղել սեփականորեն պատուկները կամ կուրբերը: Հաճախ, երկարատև ջեռուցման պահանջի դեպքում, մի փոսան կողքին նույն պատուկի չափսով պատրաստելիս են եղել երկրորդ փոսը. առաջին փոսը վերանորոգելու համար պատուկը այնտեղից փոխադրելիս են եղել նախապես տաքացրած երկրորդ փոսը, որպեսզի պատուկը չսառչի: Հետաքրքիր է, որ փթման պրոցեսը արագացնելու համար՝ երբեմն աղբի վրա լցնում էին նախապես տաքացրած ու մանրած աղյուս. փոսան մեջ երեք չորս տեղ դնում էին եղեգ, հետո ամենը վերից ձեփում էին ցեխով կամ կավով, այնպես, որ եղեգի մեկ ծայրը դուրսը մնար. ապա, այդ ծայրից տաք աղյուսի վրա ջուր էին լցնում. եղեգները հանում էին և նրանց թողած անցքը ձեփում. աղյուսի տաք մանրուքի վրա լցրած ջուրը գոլորշիանում էր, ներթափանցում աղբի մեջ և բորբոքում փթումը:

Ածուխով կամ փայտով ջեռուցվող հնոցները չափազանց բազմազան են. նրանք լինում էին փուքսով և առանց փուքսի. փուքսերը երբեմն լինում էին երկուական: Ալքիմիկոսները շատ քիչ դեպքում են նկարագրում այս հնոցները. նրանց համար բավական էր լինում ասել՝ «Ոսկերչի օջախ», «Դարբնոցի հնոց», «Ապակեգործի փուռ», որ իրար հասկանան: Հատուկ դեպքում միայն ջեռուցման եղանակի նկարագրությունը մանրամասնանում է. դա արդեն զուտ լաբորատոր եղանակի դեպքում է լինում: Այս տեսակետից հետաքրքիր է մի եղանակ, որով վարդաջուր էին քամում:<sup>1</sup>

Կասում էին լայնաբերան կճուճի բերանին կտավի մի կտոր, այնպես որ կտավը ազատ լինի և ծանրությունից գոգ կազմի, այդ գոգի մեջ մեծ քանակութեամբ վարդի թերթիկներ էին լցնում և թերթիկների այդ կույտը ծածկում էին պղնձե կամ երկաթե այնպիսի խփով, որը վերևից իր վրա ամսե կրակ կարող էր պահել: Կրակի այդ ջերմության տակ վարդի տերևները թառամում էին և նրանցից կճուճի մեջն էր քամվում վարդաջուրը: Հաճախ հարկավոր էր լինում խուփի վրայի կրակը նորոգել մինչև որ բոլոր վարդատերևները թառամեն և վարդաջուրը լրիվ քամվի: Բազմաթիվ են կրակով ջեռուցելու այն եղանակները, երբ սեփականորեն տաքացվում է ոչ թե ներքևից, այլ վերևից և կամ բոլոր կողմերից, այդպես է, օրինակ՝ իջուցանողի դեպքում:

Ճրագի բոցով ջեռուցվող թոնիրները շատ դեպքում չեն, որ գործադրվում են, բայց նրանք հետաքրքիր են նրանով, որ նրանց ջերմության չափը կարգավորվում է պատրույգների լայնությամբ և թվով. այստեղ վարիացիաների մեծ հնարավորություն կա: Պատրաստում էին հատուկ թոնիրներ, որոնց ներքևի մասում թողնում էին այնպիսի անցք, որ հնարավոր լիներ ձեռքը ներս տանել: Թոնիրի վրա տեղավորում էին սեփականորեն, սեփականորեն և թոնիրի մեջ եղած անցքերը ձեփում էին, թոնիրի մեջ դնում էին պղնձե կամ երկաթե ճրագ, ճրագը ունենում էր սովորաբար երեք պատրույգ, բայց եթե հարկավոր էր լինում՝ ժամանակի ընթացքում կրակն ուժեղացնել, աստիճանաբար ավելացնում էին պատրույգների թիվը: Պրոցեսի երկարատև լինելու դեպքում, երբեմն առ երբեմն ավելացնում էին նաև ձեթը: Երբեմն վարպետը զգուշացնում է, թե պատրույգի բոցը սեփականորեն չպետք է կպչի (այրման լրիվության համար, այլապես մեծ քանակությամբ մուր կստացվի):

Ջեռուցման չափը որոշվում էր, եթե կարելի է այսպես ասել, զանազան էտալոններով: Այդպիսիք են օրինակ՝ թխական հավի ջերմությունը, պախրայի մսի կամ բակլայի եփման համար հարկավոր ժամա-

<sup>1</sup> Տես՝ ձեռագիր № 5617, էջ 46ա-48ա.

նակը և ջերմութիւնը, ծխի դուրը և այլն. բերննք մի խրատ. «Առ կճուճ մի և լից ի մեջ եղան միս կամ բակլայ և ած ի վերա ջուր և կճուճ մի այլ դիր ի վերա բերանին մինչև կեսն անցանի, բաց վերի կճուճի սուն, ծակ արա և պուակի բոլորն ձեփէ և դիր ի վերա թեօցն և դեղերով շիւշէն դիր ի մեջ վերին պուտուկիս և վառէ կրակ մինչև միս հալի և այն նիշատիրն դառնայ ջուր»<sup>1</sup>:

Ռեակցիայի վերջն իմանալու եղանակները հետաքրքիր են նրանով, որ նրանցից մի մասը դեռ մինչև այսօր ապրում է մեր գործարաններում և լաբորատորիաներում: Այդպես է, օրինակ, անջատվող գազերի դուրսով ռեակցիայի վերջը որոշելու միջոցը. «... և դիր տափակ երկաթ մի ի բերան շուշին և տես զգոյն մուխըն, որ ելանե. յորժամ հաճիս ի դոյն, դու խփէ և ձեփե գոնդիկն և զկրակն սերտէ»<sup>2</sup> կամ. «Փաթաթէ քիչ մի բանրակ օճիղի մի զլուխ և մտոյ ի ծակն պակին և բռնե պահ մի և ապա հան օճիղն և տես զբանրակն. թե սեացել է, կրկնէ և վառե զկրակն և թե չէ սեացել, նա թող պաղի պտույն, ապա, բաց բերանը և առ ջուհարն կարմիր եղեալ»<sup>3</sup> Կան և ուրիշ շատ եղանակներ, որոնց վրա այստեղ կանգ չենք առնի:

Բաղնիքներ. — Ջեռուցման աստիճար կարգավորելու եղանակները մեկն էլ զանազան բաղնիքներ՝ ջրային, մոխրային, ավազային, թեփային և այլն, գործադրելն է:

Ջրային բաղնիքը, որ սկզբունքորեն ոչընչով չի տարբերվում այսօրվա մեր լաբորատորիաներում գործադրվող ջրային բաղնիքներից, ալքիմիական լաբորատորիաներում վաղուց ի վեր մեծ գործադրութիւն է ունեցել: Նրա մասին առաջին անգամ տեղեկութիւն է տալիս մեր թվականութիւնից առաջ 184 թվին Moreus Porcius Cato ավազը: Սակայն ջրային բաղնիքի առաջին գործադրութիւնը վերագրվում է Պարացելսին (1526 թվին):<sup>4</sup> Այս

վերջին կարծիքը պետք է անընդունելի համարվի և ահա թե ինչու: Պարացելսից շատ առաջ արտագրված հունական ձեռագրերում մենք հանդիպում ենք ամբողջ փիլիսոփայական տրակտատների, որոնք վերագրվում են «իմաստնագույն Մարիամին»<sup>1</sup> Վենետիկի ձեռագիրը Մարիամին վերագրում է մի ամբողջ աշխատութիւն՝ քիմիական ապարատների և վառարանների մասին: Առհասարակ պետք է ասել, որ Մարիամի անունը ալքիմիական գրականութիւն մեջ պատահական չէ:

Հունական հին շրջանի ալքիմիայի պատմութիւնը կապված է բիրլիական անունների հետ, Մովսեսը և Սողոմոն իմաստունը սովորական պերսոնաժներ են ալքիմիական հին հունական գրականութիւն մեջ. նրանց կողքին երկրորդական տեղ չի գրավում Մարիամը: Բիրլիական այս անունները ալքիմիական գրականութիւն մեջ մտել են հավանաբար քրիստոնեութիւն տարածման առաջին դարերում, հատկապես Ալեքսանդրիայի ծաղկման շրջանում, երբ իրար հանդիպեցին և փնջվեցին հունական, եգիպտական և հրեական կուլտուրաները: Սեփական զրվածքները ավելի հեղինակավոր ազդեցութիւն վերագրելու նպատակով, շատ շատերը իրենց գործը վերագրում էին Մովսեսին, Սողոմոնին, Մարիամին, եգիպտական թագուհի Կլեոպատրային: Եվ եթե ջրային բաղնիքը կոչվում է Մարիամի անունով (ֆրանսիական գրականութիւն մեջ այդ բաղնիքը դեռ այսօր էլ կոչվում է bein Marie), ապա նա գործադրութիւն մեջ պետք է մտած լինի համենայն դեպս Պարացելսից շատ առաջ, մանավանդ, որ հունական հին ձեռագրերում կան իլուստրացիաներ, որոնք ջրային բաղնիք են հիշեցնում կամ հենց այդպիսիք են: Մեր ձեռագիրը ջրային բաղնիքը այսպես է նկարագրում.

«Մարիամայ բաղանիսի արհեստն այս է.

Առ մեկ աման և ջուր լից ի մէջն, և մեկ աման էլ, որ ոռքն ծակծակ լինի, դիր

<sup>1</sup> Ձեռագիր № 6928, էջ 45ա.

<sup>2</sup> Ձեռագիր № 8655, էջ 129բ.

<sup>3</sup> Ձեռագիր № 2850, էջ 146բ.

<sup>4</sup> М. Блох: Хронология важнейших событий в области химии и смежных областей; Л.-М 1949 г. էջ 8 և 17:

<sup>1</sup> Փարիզի Ազգային Գրադարանի № 2827 ձեռագիրը, որ գրված է 1478 թվականին, այսինքն Պարացելսից առաջ տես՝ M. Berthelot: des origines de l'Alchimie; Paris, 1895, էջ 335:

ի վերա այն ջրով ամանի բերանին, և լից զղեղն ի մէջ շուշին և զիւր ի մէջ ծակծակ ամանին և զբերանն կալ խփով. և արա կրակ, թէ լաւ է՝ շուտ հալի, թէ միջակ՝ հալի. թէ վատ՝ յուշ հալի»:<sup>1</sup>

Կոմենտարիաների կարիք չկա:

Այլ բազանիքներ.— Բացի ջրային բաղանիքից, մեր ալքիմիկոսները, ինչպես և մենք այսօր մեր լաբորատորիաներում, բանեցնում էին նաև ավազի բաղանիքներ, ինչպես նաև մոխրի ու թեփի բաղանիքներ, բայց սրանց վրա մենք մանրամասնորեն կանգ չենք առնելու՝ հանրահայտ լինելու և առանձին հետաքրքրութուն չներկայացնելու պատճառով: Միայն ասենք, որ մեր ձեռագրերից մեկում մենք հանդիպում ենք «Ձիոյ բաղանիքին». կոնտեկստից հասկանում ենք, որ այստեղ խոսքը գոմաղբի բաղանիքի մասին է: Պետք է ասել, որ մոխրի և գոմաղբի բաղանիքները վաղուց են գործադրութունից դուրս եկել:

Ջրային բաղանիքի տարրերակը պիտի համարվի, երբ ուսակտորը պահվում է ոչ թե ջրային բաղանիքի գոլորշիների մեջ, այլ հենց ջրի մեջ: Այդպիսի ջեռուցման մի վարիանտ է նկարագրված մեր ձեռագրերից մեկում. «Առնշատիւր և լից ի շիշ մի և կախէ ի պուտուկ մի, որ ջուր լինի ի ներս, որ թաղուի շիշն ի մէջն ջրին մինչև ի վիզն և վառէ կակուղ կրակ, որ կտմնայ ջուրն և ոչ եռայ և պահ նայ արձակի և լինի ջուր»:<sup>2</sup>

Լաբորատոր տեխնիկայի այլ հարցեր.— Մենք կարող ենք լավ պատկերացնել, թե ինչ ծանր մթնոլորտ էր տիրում ալքիմիական լաբորատորիայում, մի տեղ, որտեղ տաքացնում, գոլորշիացնում կամ եռացնում էին հազար ու մի տեսակ գազեր անջատող նյութեր: Այդ գազերը ոչ միայն անդուրեկան էին լինում իրենց հոտով, այլև վտանգավոր՝ մարդու կյանքի համար: Բնականորեն՝ պետք է առաջ դար ինքնապաշտպանության միջոցների պահանջը. և ահա՛ բացի այն, որ ալքիմիկոսները իրենց հնոցների վրա կառուցում

էին «քարշեր», որպիսիք դեռ մինչև այսօր էլ կան մեր դարընոցներում, նրանք գտել էին նաև անհատական ինքնապաշտպանության մի եղանակ, որ մենք կանվանեցինք ամենանախնական «հակագաղը». դա քացախով թրջված շոր է, որ բռնում էին քթի մոտ. ձեռագրի հեղինակը մի գազի նկատմամբ (ընցեպտից երևում է, որ այնտեղ խոսքը ծծմբաջրածնի մասին է, որն առաջանում է ձվի դեղնուցը նեխելիս) զգուշացնում է փորձարարին. «... Բայց պատրաստ կաց, որ հոտն չառնուս, զի հոտն դորա ըզմարզն պատուէ. շոր մի թրջէ քացախով, քթին բռնէ և յետև բաց ըզշուշին բերանն...»<sup>1</sup>: Այսպիսով կարելի է ասել, թե «հակագաղի» առաջին գործադրութունը եթե ոչ ավելի վաղ շրջանում, ապա պետք է վերագրել ամենաուշը 16—17-րդ դարին, և որ նրա առաջին գործադրութունը եղել է խաղաղ նպատակներով:

Նախազգուշական միջոցներից պետք է հիշատակենք և հետևյալը. լաբորատոր պրակտիկայում հաճախ են պատահում գերջեռուցման դեպքեր, այսինքն դեպքեր, երբ պետք է հեղուկը եռա, բայց եռումը տեղի չի ունենում հանգիստ «խլթխլթոցով», այլ գոլորշիները հանկարծ են հավաքվում մեկ կամ երկու կենտրոնում ու մեծ բշտիկով ու եռանդով հանկարծ դուրս են թռչում հեղուկի խորքից. այսպիսի դեպքերում կարող է սրվակը շրջվել ու հեղուկը թափվել: Այս երևույթի և վտանգի դեմն առնելու համար, մեր ալքիմիկոսները եռացող հեղուկի մեջ դրում էին կապարի գընդիկներ. «Եթէ կամիս որ պուտուկ մի կրակի վրա ոչ եռայ ձգէ գնդակ մի արճըճոյ, ի մէջ պակի»:<sup>2</sup> Այսինքն 16—17-րդ դարերում անում էին այն, ինչ մենք անում ենք մեր լաբորատորիաներում նաև այսօր, միայն թե մեր ժամանակներում եղանակը կատարելագործված է նրանով, որ մենք կապարի գնդիկների փոխարեն կոլբի մեջ դրում ենք ասլակե հուլունքներ կամ կապիլյար խողովակի ջարդվածքներ:

Ճլյուս՝ ծածկոցներ. — Նախազգուշաց-

<sup>1</sup> Ձեռագիր № 5617, էջ 96 բ.

<sup>2</sup> Ձեռագիր № 7322, էջ 8.

<sup>1</sup> Ձեռագիր № 6924, էջ 74 բ.

<sup>2</sup> Ձեռագիր № 7486, էջ 171.



ման եղանակներից մեկն էլ զանազան միահալույթները հալելիս նրանց երեսը ֆլյուս—ծածկոցներով պատելն էր: Այդ ֆլյուսները հալոցքի մակերեսը ծածկում էին չեզոք ատմոսֆերայով կամ երբեմն էլ՝ օդի համար անթափանց շերտով և կանխում էին հալոցքի մեջ եղած նյութերի ցնդող օքսիդների առաջացումը, իսկ այդ անհրաժեշտ և (ինչպես և հիմա են անում) հալոցքի միջից նյութեր չկորցնելու կամ նրանց կշռային հարաբերությունները չփոխելու համար: Այդ է պատճառը, որ ձեռագրերից մեկը նախազգուշացնում է. «...Առանց բռայ չհալես, թե չէ կուպակասի շատ»...<sup>1</sup>

Գործողություններ տաք վիճակում.— Նստվածքների վլացումը ֆիլտրի վրա տաք ջրով, ըստ երևույթին, եղել է շատ հնուց հայտնի գործողություն. այսպես՝ ձեռագրերում եղած խրատներից մեկը խորհուրդ է տալիս քամել նստվածքը քաթանի միջոցով և ապա նստվածքի վրա բազում անգամ տաք ջուր լցնել, մինչև որ նրստվածքը վլացվի և սպիտակի, որից հետո նստվածքը պետք է առանձնացնել, չորացնել և պահել:<sup>2</sup>

Մի ուրիշ ձեռագրում ներկ պատրաստելու տաք եղանակ է ցույց տալիս հավանդի մեջ սղկելու միջոցով: «Առ Ե կլայեկ և Ա սնդիկ. դիր զկլայեկն, որ հալի և լից զփայակն ի վերա և թող պահ մի, և լից ի հաւանն, որ տաք լինի և փութ ընդ փութ լոսէ խիստ քաջ...»:<sup>3</sup>

Այսպիսով մենք ծանոթացանք հայկական ձեռագրերում նկարագրված քիմիական այն ապարատներային և եղանակների, որոնք կապված են գեղանյութի ֆիլտրումի, սուբլիմումի, գեյզերումի և դիստիլումի միջոցով նյութերը զտելու հետ: Այս միջոցներով չեն վերջանում, ի հարկե, հայ ալքիմիկոսների գիտելիքներն ու կարողությունները, նյութը զտելու բնագավառում: Նրանց հայտնի են եղել նաև, օրինակ, էքստրազիբումը, վերաբյուրեղացումը

և նյութի զաման այլ եղանակներ, որոնց համար, սակայն, նրանք հատուկ ապարատներ չեն ունեցել:

Սակայն հայ ալքիմիկոսները, ինչպես և առհասարակ բոլոր ալքիմիկոսներն, իրենց լաբորատոր գործունեությունը չեն սահմանափակել միայն նյութերը զտելով: Նյութերի զտումը միջոց է եղել հիմնական նպատակին հասնելու՝ դեղորայք, ներկեր, թանաքներ, միահալույթներ և այլ կենսական նյութեր պատրաստելու համար. ալքիմիական լաբորատորիաներում գործադրվել են և այլ ապարատներ ու գործիքներ: Նրանց մասին մի ձեռագրում կարդում ենք. «Եւ ասեմ քեզ զամաններն, որ պիտի այս արուեստիս. աման, որ աղեր ի մեջն շինվեն և աման՝ բան ի մեջն տաքացվի, և կթխաներ, և շուշաներ, և ապակի, սալ, որ ի մեջն սղկվի, տամսելու ամաններ, որ ի մեջն տամս լինի, և փուռ. և անխափան և հաստատ կու լինի այս արուեստս: Եւ լինի եարազներուն չորս-չորս և հինգ-հինգ և այլ բազում. և կանթեղներ. և միտք արայ, զինչ որ պիտոյ է արուեստիս»: Բացի այս ամենը, նույն ձեռագրերը անհրաժեշտ գործիքների և պարագաների շարքում թվարկում են նաև փութսը և օջախը, կճուճն ու խարտոցը, մկրատն ու հալիչը: Մի այլ ձեռագրում, որպես ալքիմիական անհրաժեշտ պարագաների՝ կարդում ենք զնդանի, սալի, մուրճի, կուանի, հնոցի, խարտոցի և այլ դարբնական անհրաժեշտ միջոցների մասին:<sup>2</sup>

Այս գործիքները, սակայն, այնքան պարզ են ու հանրածանոթ, որ առանձին բացատրություն կարիք չունեն: Այստեղ, գուցե, արժեք հատկապես կանգ առնել միայն վառարանների և փուռերի մասին, որոնց ձևերը եղել են խիստ բազմազան, բայց այդ արդեն մի առանձին հարց է, որը չի տեղավորվում մեր վերցրած թեմայի սահմանների մեջ, և խիստ սաղական է մի այլ թեմայի մեջ, որի մշակումը մենք արդեն սկսել ենք:

Վերջացնենք. ինչ կըրակացություններ

<sup>1</sup> Ձեռագիր № 6324, էջ 89 ա.

<sup>2</sup> Ձեռագիր № 2527, էջ 66 բ.

<sup>3</sup> Ձեռագիր № 5617, էջ 62 ա.

<sup>1</sup> Ձեռագիր № 3000.

<sup>2</sup> Ձեռագիր № 8314, էջ 134:

մենք կարող ենք անել ամբողջ վերագրյալից: Եզրակացությունները սրանք են:

1. Միջնադարյան Հայաստանում եղել են հարուստ ալքիմիական լաբորատորիաներ, այդ լաբորատորիաները հազեցված են եղել առաջնակարգ քիմիական ապարատությամբ: միևնույն քիմիական պրոցեսի համար գոյություն են ունեցել մի քանի տեսակ ապարատներ, ապարատի յուրաքանչյուր տեսակից միևնույն լաբորատորիայում եղել է 4—5 և ավելի թվով:

2. Ապարատների մեծ մասը եղել է թրծած կավից, ապակուց կամ երկաթից: Համարյա բոլոր ապարատները տեղական արտադրության արդասիք են. նրանց մի մասն էլ պատրաստվելիս է եղել հենց իր ալքիմիկոսի ձեռքով:

3. Ապարատների ծագումը զանազան է: Նրանցից մի մասը տեղում գտնվելիս է եղել դեռ մինչև արարները. պարզիչը (վարդաջուր հանելու ապարատ), պոթ և ալպոթը, որ չնայած իր օտարահնչուն անվանը, դեռ մինչև արարները գործադրվելիս է եղել կովկասում և այլն: Մի մասը եղել է նորամուտ: Ապարատների այս բազմաբղետ ծագումը ցույց է տալիս այն փոխադարձ ազդեցությունը և կապը, որ ունեցել են հայ ալքիմիկոսները հարևան և նույնիսկ հեռավոր ազդեցությունների հետ: Փոխադարձ եմ ասում այն հանրահայտ փաստի հիման վրա, որ շատ տիրակալ իշխանություններ՝ մեր երկրից հետ նահանջելիս՝ իրենց հետ են տարել բազմաթիվ հայ ոսկերիչներ, որոնք անշուշտ Հայաստանից տարել են և ներմուծել այլ վայրեր

իրենց վարպետության սքանչելի հնարքներն ու գործիքները: Իսկ այդ ոսկերիչների մեջ քիչ թիվ չեն կազմել և ալքիմիկոսները:

4. 16—18-րդ դարերի հայկական ձեռագրերում նկարագրված ալքիմիական լաբորատոր գործիքները բավական զգալի մասով մնում են իրենց ուժի մեջ մինչև մեր օրերը՝ պրինցիպիալ առումով անփոփոխ, բայց ձևական կատարելագործություններ, մի բան, որ ցույց է տալիս, թե այդ դարերում քիմիական նախազիտելիքը պատմական Հայաստանում դերձ է եղել թանձրամիտ միտիկականությունից ու նրան համապատասխան նյութական ատրիբուտներից և մեծ մասամբ կանգնած է եղել պրակտիկ ու շահավետ աշխատանքի հողի վրա. մի բան, որ հայ ալքիմիկոսին մի գլխով բարձրացնում է եվրոպական ալքիմիկոսների համեմատությամբ:

5. Ալքիմիական ձեռագրերում նկարագրված ապարատները առհասարակ քիչ հնարավորություն են տալիս նրանց միջոցով նրանց ժամանակվա քիմիական արտադրության տեխնոլոգիայի մասին կուսումներ անելու. բայց հայկական ձեռագրերը որոշ ակնարկային նյութեր են տալիս՝ դադափար կազմելու այնպիսի արհեստներում կիրառվող տեխնոլոգիայի մասին, ինչպիսիք են, օրինակ՝ կոսմետիկական արդյունաբերությունը, ոսկերչությունը, դարբնությունը և մանավանդ հայկական զարմանալի մանրանկարչության համար դեռևս 6-9-րդ դարերից պատրաստվող սքանչելի ներկագործությունը:

## ЛАБОРАТОРНАЯ ТЕХНИКА И АППАРАТУРА В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ ПО ДРЕВНИМ АРМЯНСКИМ АЛХИМИЧЕСКИМ РУКОПИСЯМ

### (Выводы)

В исторической Армении существовали алхимические лаборатории, богато оснащенные химической аппаратурой. Для одного и того же химического процесса существовали аппараты различных видов, по 4—5 и больше экземпляров по каждому виду.

Большинство аппаратов готовилось из обожженной глины, стекла и нередко также и из железа и меди. Аппараты, почти все, были продукцией местного производства. Часть из них изготовлялась самими алхимиками.

Аппараты эти различного происхож-

дения. Большой частью они были введены в лабораторную практику местными алхимиками еще задолго до появления арабов: таковы, например, перегонный куб, аппараты для выплавки металлов, иджуцанох („спускающий“ — армянский вид керотакиса), сосуды для пивоварения, своеобразные колбы (сосуды для сохранения ртути) и т. д.

Этим самым отвергается легенда о том, будто „методы химических экспериментов впервые серьезно разработали арабские алхимики“.

Алхимические лабораторные аппараты, описанные в армянских рукописях XVI—XVII веков, в подавляющей своей части остаются в лабораторной практике еще до наших дней принци-

пиально неизменными (но, конечно, усовершенствованными). Это обстоятельство указывает на то, что химия в средневековой Армении была свободна от мистицизма и соответствующих ему атрибутов, чем выгодно отличается от алхимии латинского мира, где мистицизм и кабалистика сопровождалась соответствующей вещественной мишурой.

Аппараты, описанные в армянских алхимических рукописях, дают некоторую возможность судить также о химической технологии в Армении того времени, как-то: о технологии ювелирного дела, стекловарения, солеварения, дубильного дела, пивоварения, приготовления и беления воска, производства красок и т. д.


Проф. Б. Н. Мелик-Мусьян

(Зав. кафедрой и Клиникой глазных болезней Медицинского института в Ереване)

## ГЛАЗ И ЗРИТЕЛЬНЫЙ НЕРВ ПО МАНУСКРИПТАМ ВРАЧЕЙ АРМЯН XII—XV ВЕКОВ

О строении и функции глаза врачи средних веков знали главным образом по данным Галена. Гален жил и работал в 131—201 г. нашего летоисчисления. Не владея соответствующими методами вскрытия глазного яблока, установленное только в дальнейшем патологией, не имея представления о гистологическом строении глаза, изучая зрительный аппарат на глазах телят и овец, Гален не мог иметь точного представления о строении человеческого глаза. Труды его, как и вообще труды ученых средних веков, распространялись лишь в виде рукописей. Каждый переписчик по своему усмотрению и уразумению делал изменения, сокращения, добавления. Благодаря этому мысли одного и того же автора иной раз у разных переписчиков истолковывались по-разному.

Получив такое наследство, арабские ученые в условиях средних веков к этому многого добавить не могли бы, т. к. по арабским государственным религиозным законам, вскрытие трупов запрещалось и каралось. Вот почему, такой крупный ученый, как Ибн Эл Гайдзом (Алхасан), живший и работавший в 915—1038 г. г., написавший работу об оптике (в 7 томах), давая в этой работе сагитальный разрез схематического рисунка глаза (см. рис. № 1), почти ничего нового не прибавляет к известному до него описанию зрительного аппарата.



(Рис. № 1. Сагитальный разрез глаза по Алхасану).

В начале XV века (1410—1490) жил и работал один из крупных врачей Армении—Амирдовлат Амасиаци. Его перу принадлежат три крупные работы—общей сложностью до 3000 страниц. В труде, озаглавленном им „Польза Медицины“, страниц сорок посвящены глазным болезням, а в начале

книги несколько страниц—анатомии и физиологии глаза. При изучении этой работы мы наткнулись на некоторые вопросы, которые послужили поводом изучать главы, касающиеся зрительного аппарата также в манускриптах врачей XII века—Абусинда и Мхитара Гераци.

Все эти три рукописи хранятся в Матенадаране—(Гос. Хранилище древних рукописей при Сов. министров Арм. ССР) за №№ 8797, 8493 и 8104. Работы эти написаны на „средне-армянском“ языке.

Мы хотим в данной работе выяснить: как и в каком аспекте представляли Абу-саид, Мхитар Гераци и Амирдовлат зрительный аппарат, функцию хрусталика, сетчатки и зрительного нерва?

Все три врача начинают описание зрительного аппарата с топографии орбиты. Говоря о значении надбровной дуги, переносицы, бровей, век и ресниц, подчеркивают, что все они защищают орган зрения от внешних вредностей. Затем следует у них анатомическое описание глаза. Сокращенно об этом пишет Абу-саид, более подробно Мхитар Гераци и Амирдовлат. Причем, Мхитар Гераци останавливается подробно на функции хрусталика, Амирдовлат же, после анатомического описания глазного яблока, приводит схематический рисунок глаза, зрительных нервов, нервных путей и центральной нервной системы.

Мхитар Гераци пишет: „Нужно знать, что прежние ученые писали о строении глаза разноречиво. Одни описывают 7 оболочек, другие 6, третьи 5, 4, 3 и даже 2. Но я опишу по Галену, который описывает четыре оболочки, три влаги и четыре мышцы“ (стр. 11а).

После предварительного пояснения Мхитар Гераци переходит к описанию оболочек, влаги, и мышц глаза. Останавливаясь более подробно на функции отдельных отделов глаза, на стр. 13а пишет: „Под третьей оболочкой глаза су-

ществует влага, называемая рутгубат сугатц (стекловидное тело), которое походит на стекло. А за ним следует другая влага, которая называется рутгубат куалите (хрусталик), круглый, прозрачный, чистый, похожий на леденец. Он (хрусталик) наиболее благороднейший элемент в глазу, потому что зрение совершается хрусталиком. Он воспринимает цвет, форму и изображение предмета“.


Начиная от Галена, кончая арабскими врачами до времен Мхитара Гераци, в медицине считали, что самым важным элементом в зрительном аппарате является хрусталик. В те времена врачи никакого представления не имели о функции сетчатки. Потеря глаза считалось синонимом потери хрусталика. О помутнении хрусталика, т. е. о катаракте думали, что это затек слизи с мозга в область зрачка. Поэтому при лечении этой болезни мысли врачей направлялись на то, чтобы каким-нибудь способом отвести этот затек с области зрачка. Эл Рази (Абу-Бекр Мухаммед Ибн Захар), работы которого до трудов Авиценны (Ибн Сина) являлись настольными книгами и руководством для врачей того времени, предлагал при „затекке“ надрезы за ухом соответствующей стороны, жевание жвачки, дабы тем самым отвлечь „затек“ с области зрачка.

Весьма интересным является, как Мхитар Гераци представлял функцию хрусталика. Он пишет: „Он (т. е. хрусталик) круглый, воспринимает лучи света и передает изображение предмета в обратном виде. Хрусталик в глазу походит на точку в кругу, или на круг в центре гумне. Все влаги, оболочки глаза служат ему, защищают и оберегают его“.

Гален отождествляет функцию хрусталика с функцией всего глаза. Вопросу получения изображения предмета он посвящал непонятные геометрические изображения (см. рис. № 2 и 3).

Мхитар же Гераци, как видно из описанного, хотя и не отказывается от первенствующего значения функции хрусталика в глазу, но уже представляет, что хрусталик в глазу играет роль линзы, в которой лучи преломляются, благодаря чему за хрусталиком получается изображение предмета. Т. о. оптическая функция хрусталика у Мхи-

тара Гераци, хотя и в элементарном виде, но принимает уже правильное истолкование. Исторически это представляет интерес, так как известно, что о взаимоотношении хрусталика и сетчатки впервые высказался Кеплер (XVII в.), а за ним Шейнер, на основании опыта доказал функциональное значение хрусталика и сетчатки.



(Рис. № 2. Зрение по представлению Галена. Сфотогр. из книги С. Ковнера „История медицины“, ст. 906).

Теория о затеке из мозга в область зрачка еще долго после Мхитара Гераци продолжала господствовать, но она постепенно становилась беспочвенной.

Еще в XV веке, Амирдовлат в книге „Польза медицины“, в отделе глазных болезней, на странице, посвященной катаракте (см. рис. 4), перечисляет множество лекарственных средств, предложенных прошлыми врачами при катаракте, методы, предложенные Эл Рази и предпочитает всему этому реклинацию, описывает подробно эту операцию, послеоперационный уход, при чем подчеркивает, что это уже не лечение в обычном смысле понимания, а „рукоделие“, т. е. искусство, которое не дело рук каждого врача. Это показывает, что реклинация в период Амирдовлата уже как метод завоевало право гражданства. Врачи постепенно отказывались от медикаментозного и всякого иного лечения и тем самым на де-

ле отвергли теорию о затеке с мозга в область зрачка.

Страницу 186 книги „Польза Медицины“ Амирдовлат кончает следующими словами: „Для того, чтобы учащиеся ясно представляли направление лучей в глазу, оболочки и влаги глаза, направление изображения предмета в центральную нервную систему, приведу следующий рисунок“. За этими словами следует соответствующий рисунок (см. рис. № 5).

Рисунок этот изображен тремя кругами. Два из них одинакового размера, стоящие рядом на определенном расстоянии друг от друга, а один большей, на одинаковом расстоянии от первых двух.

В этих кругах концентрически нарисованы еще круги: в большом два, а в малых — по четыре. Они соответствуют послойно оболочкам глаза и головы, представляя т. о. топографию го-






Рис. № 5. Сфотографирован с экземпляра рукописи „Польза Медицины“—Амирдовлата.



ловы—большой круг и топографию глаза малые круги. Их соединяют нервные пути. В большом кругу предполагаются: 1) содержание черепа (центральная часть), 2) мягкая оболочка мозга—первый круг, 3) твердая оболочка мозга—второй круг, и наконец, 4) черепная крышка или кости черепа—третий круг. Пять же малых кругов соответствуют оболочкам глаза, из коих последний соответствует сетчатке. Внутри от сетчатки хрусталик. В середине центральной части малых кругов проведена горизонтальная линия, разделяющая хрусталик на передний и задний отрезки. Лучи света, падающие спереди на хрусталик, после преломления меняют свое направление и дают изображение предмета на сетчатке, граничащей с задней поверхностью хрусталика.

Рисунок о этой части интересен в том отношении, что по представлению автора изображение предмета представлено на сетчатке.

Как известно, о функции сетчатки впервые высказался Леонардо да Винчи в XVI веке. До него в литературе ничего не известно было об этом. Поэтому и рисунок Амирдовлата представляет интерес, т. к. наглядно показывает место изображения предмета в глазу, т. е.—сетчатку.

После описания анатомии и физиологии глаза у Амирдовлата следует описание зрительного нерва и нервных путей. Он пишет, что зрительный нерв (насапи мутцавал) начинается из „первого желудочка и входит в глаз“. Мхитар же Гераци пишет: „Известно, что в мозгу три желудочка. Один в задней, затылочной части, другой впереди под лбом, а третий в середине. Задний заведует памятью, средний—умом, передний—чувственностью“.

„Этот передний желудочек отдает пару нервов. Они называются первой парой черепных нервов. Идут они в

начале рядом, справа к правому глазу, слева к левому, под лобной костью они сливаются и вновь раздваиваются. Правый направляется влево, а левый—вправо“.

Речь идет, конечно, о хиазме. О хиазме знал и Гален, однако о том, совершается ли в хиазме полный или частичный перекрест, об этом до XIX века не знали. Еще в XIX веке этот вопрос долго дебатировался между неврологами и офтальмологами.

Врачи средневековья, не зная гистологического строения зрительных нервов и хиазмы, предполагали полный перекрест в хиазме и этому перекресту придавали определенное физиологическое значение. По Галену хиазма существовала для того, чтобы в случае „засорения“ одного из нервов „чувственное пневмо“ из задних частей этого „засоренного нерва“ сообщался с „пневмой“ другого, здорового нерва (из Galenus de usu part, 1, X, С. 12—14).

По этому вопросу Мхитар Гераци пишет: „Природа потому создала хиазму, что в случае, если один глаз ослепнет, зрение направилось бы в зрячий глаз благодаря слиянию нервов наверху (т. е. в хиазме). Это доказывается тем, что, закрывая один глаз, свет из обоих нервов собирается в другой глаз, почему и сила зрения зрячего глаза увеличивается“.

Передача изображения предмета по зрительным нервам и нервным путям в центральную нервную систему по представлению древних врачей и у арабов совершалось посредством воздействия „чувственного пневмо“.

„Чувственное пневмо“ считалось физиологическим основанием психической деятельности, признанной перипатетиками. Основателем этой теории был Теофраст: школа перипатетиков занималась комментарием сочинений Аристотеля, а Гален был последователем этой теории. Учение это перешло и к

арабам. Арабские врачи при объяснении многих патологических процессов прибегали к теории „чувственного пневмо“, называя это по арабски „бухар“.

Представляя себе зрительные нервы в виде полых труб, оканчивающихся на периферии радужной оболочкой, они полагали, что изображение предмета благодаря воздействию „чувственного пневмо“, т. е. „бухар“ передается в центральную нервную систему.

Врачи армяне при описании многих внутренних заболеваний тоже прибегают к термину „бухар“, однако ни Мхитар Гераци и ни Амирдовлат при объяснении восприятий изображения предмета к этому термину не прибегают.

Они скорее всего предполагают механическую передачу изображения предмета в центральную нервную систему „по полым трубам“, какими они представляют зрительные нервы.

Вслед за описанием зрительных нервов и восприятия изображения предмета, Амирдовлат останавливается на заболевании „интизар“ зрительного нерва. Слово интизар означает расширение, уплощение, ослабление. Амирдовлат подчеркивает, что при этом заболевании зрачек расширяется, зрение постепенно понижается и наконец наступает полная слепота.

Доканчивая этим главу об анатомии глаза, на стр. 55а автор останавливается на том же заболевании интизар (см. рис. № 6). Приводит мнение многих других авторов, а затем отмечает, что заболевание интизар сопровождается сильными головными болями, расширением зрачка, понижением зрения. И если при лечении зрачек не суживается, то в конце концов больной слепнет.

Разумеется, что тут речь идет о простой глаухоме (Glauvmtk Jimplex), симптомы которой так правильно отмечены Амирдовлатом.

До изобретения офтальмоскопа нор-

мальное и патологическое дно глаза было для окулистов неизведанной областью. Врачи прошлых веков о внутриглазных заболеваниях могли бы судить лишь по наглядным признакам болезни. Однако и по этим скудным данным, без иного теоретического обоснования, они умели правильно определить и некоторые внутриглазные заболевания.

Лишенные прикладных методов исследования, без абстрактного обоснования, медицинские работы прошлых веков не являлись научными трудами в современном понимании этого слова. Однако они содержали большое количество веками установленных фактов, описанных ими априори, порой в смеси с бесчисленными небылицами, мистификацией и фантазией, ибо социальные и экономические условия прошлых веков клали свою неумолимую печать на науку и не давали ей развиваться.

Вот почему в тогдашних трудах часто попадались нелепые представления не только рядовых врачей, но и крупнейших представителей медицины.

Однако, „в науке нет широкой столбовой дороги и только тот может достигнуть ее сияющих вершин, кто, не страшась усталости, карабкается по ее каменистым тропам“ (Маркс и Энгельс, соч. т. XVIII, стр. 23, изд. 1876 г.).

На этих каменистых тропках мы встречаемся с выдающимися представителями медицины и в Армении—Абусаидом, Мхитаром Гераци и Амирдовлатом. Разбирая их труды, мы приходим к резюме:

1. В период от Абусаида, Мхитара Гераци (XII в.) до Амирдовлата (XV в.) в учении об анатомии и физиологии глаза произошли некоторые сдвиги.

II. Хотя в XII—XV в. в. не существовало ясного представления о функции хрусталика, однако физиологиче-

<p>Ինչպէս որ սեպիտի միջին սեպիտը մեծ և արեւելի լինելի գլխաւորապէս</p>	
<p>պատճառն որ գլխիկն ցատկն</p>	<p>Նշանն գլխաւորապէս =</p>
<p>Գրեմարիսի սեպիտը լինելի այս          իրարա գլխաւորիցն. և երան ի          պիտակներն որն այն դեպի իրան          և երան ի ցարմաւնէ և ի ցարմաւն          և արեւմտի լինան =</p>	<p>Նշանն որ այս ցատկն տրե          իրան և տեւան նա պատկառ և          զայն ուժ տեւան. և տեւան          ու լինի արեւմտի լինելի այս հատկ          որ ի ցարմաւն և արեւմտի իրան =</p>

Գրեմարիսի սեպիտը լինելի այս գլխաւորապէս ու լինելի լինելի  
 տեւան որ ի իրան արեւմտի և արեւելի և ի իրան արեւմտի որ ի ցարմաւն  
 պատկառն լինելի ցարմաւնէ և ի ցարմաւնէ և արեւմտի և արեւելի  
 պատկառն լինելի ցարմաւնէ և ի ցարմաւնէ և արեւմտի և արեւելի լինելի  
 դեպի լինելի սեպիտը լինելի արեւմտի և ի իրան և արեւմտի և արեւելի  
 ի ցարմաւնէ որ այն լինելի որ ցարմաւն ի արեւմտի և արեւելի և արեւմտի  
 տեւան լինելի արեւմտի և արեւելի և արեւմտի և արեւելի լինելի  
 որ արեւմտի ի արեւմտի և արեւելի և արեւմտի և արեւելի լինելի  
 արեւմտի արեւմտի և արեւելի և արեւմտի և արեւելի լինելի  
 ի ցարմաւնէ և ի արեւմտի և արեւելի և արեւմտի և արեւելի լինելի  
 և արեւմտի և արեւելի և արեւմտի և արեւելի լինելի  
 որ արեւմտի և արեւելի և արեւմտի և արեւելի լինելի  
 և արեւմտի և արեւելի և արեւմտի և արեւելի լինելի  
 որ արեւմտի և արեւելի և արեւմտի և արեւելի լինելի  
 և արեւմտի և արեւելի և արեւմտի և արեւելի լինելի  
 որ արեւմտի և արեւելի և արեւմտի և արեւելի լինելի  
 և արեւմտի և արեւելի և արեւմտի և արեւելի լինելի

Рис. № 6. Фотоснимок сд. 56а рукописи Амирдовлата книги „Польза Медицины“.

ское значение ее по данным Мхитара Гераци принимает уже более реальную форму.

III. По данным Амирдовлата зарож-

дается значение функции сетчатки. IV. Работы Мхитара Гераци, Абу-саида и Амирдовлата представляют исторический интерес.

ԻՌՌԵՆՏ ԱԹԱՅԱՆ

ԽԱԶԵՐԻ ՍԻՍՏԵՄԻ ԾԱԳՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Միջին դարերում մի շարք ժողովուրդներ, ինչպես օրինակ՝ բյուզանդացիները, ռուսները, հայերը, վրացիները, լատինական ժողովուրդները և ուրիշները ունեցել են երաժշտական գրության իրենց հատուկ սխտեմները: Միջնադարյան երաժշտական գրության զանազան այդ սխտեմներում մեղեդիի ընթացքը գրի է առնվել հատուկ նշանների՝ նեվմերի միջոցով, ուստի ընդհանուր անունով դրանք կոչվում են նեվմային նոտագրության սխտեմներ:

Զանազան ժողովուրդների մոտ, նրանց պատմական զարգացման տարրեր սլայմաններից կախված՝ երաժշտական գրության նեվմային սխտեմներն էլ զարգացման իրենց յուրահատուկ պատմությունն են ունեցել:

Մի դեպքում նեվմային գրության սխտեմը ժամանակի ընթացքում մեծ փոփոխություններ է կրել՝ կապված հենց երաժշտության, տվյալ դեպքում հոգևոր երաժշտության մեջ կատարված փոփոխության հետ՝ պարզ սեփականության դեպի բարդ, արտահայտիչ մեղեդիական կատարված նրա զարգացման հետ: Այդպես է, օրինակ՝ ռուսական երաժշտության մեջ:<sup>1</sup> Մի այլ դեպքում՝ նշանների սխտեմում կատարված փոփոխության հետ մեկտեղ՝ ժամանակի ընթացքում զգալի կերպով լայնացել է այդ սխտեմի կիրառության շրջանը, հատկապես ի հաշիվ աշխարհիկ երաժշտության:

Այդպես է հայկական երաժշտության մեջ<sup>2</sup> և այլն: Ընդհանուրը, սակայն, բոլոր ժողովուրդների նեվմային սխտեմների էվոլյուցիայի մեջ այն է, որ ժամանակի ընթացքում, աստիճանաբար զարգանալով, բարդանալով, նշանների քանակը և նրանց պայմանական նշանակությունները ավելացնելով՝ երաժշտական գրության այդ սխտեմները ուռճացել են, կորցրել նախկինում ունեցած իրենց հարաբերական մասսայականությունը և խոչընդոտ են դառել երաժշտական արվեստի ու տեսության հետագա զարգացման համար: Ուստի՝ բոլոր ժողովուրդներն էլ տարրեր ժամանակներ դեն են ձգել այդ դժվարին նոտագրությունը և ստեղծել են նոր, ավելի պարզ նոտագրություն, կամ անցել են՝ այժմ արդեն ընդհանրացած, դժային նոտագրության սխտեմին:

Մինչդեռ՝ անվիճելի է, որ նեվմերով ձայնագրված մեծաքանակ ձեռագրերը զանազան ժողովուրդների միջնադարյան հոգևոր և հաճախ նաև աշխարհիկ երաժշտության խոշոր գանձերի կրողներն են հանդիսանում: Այդ ձեռագրերի ուսումնասիրությունը և նրանց մեջ ընդգրկված նեվմային սխտեմների վերծանությունը պետք է երեվան հանի միջնադարյան, դեռևս անձանոթ երաժշտությունը, ինչպես նաև լուսաբանի տարրեր ժողովուրդների երաժշտական-տեսական մտքի զարգացման պատմությունը:

<sup>1</sup> Ռուսական երաժշտության մեջ նեվմերը կոչվում են կրյուկներ կամ դնամեններ, իսկ նեվմերով երգեցողության գլխավոր տեսակը կոչվել է դնամենի ուսպելի:

<sup>2</sup> Հայկական երաժշտության մեջ նեվմերը կոչվում են խաղեր, իսկ նեվմերով երաժշտությունը և նրանց վերաբերյալ տեսությունը կոչվել է մանրուսուսում:

Նեովմային գրության երբեմնի զարգացած տեսությունը տարրեր ժողովուրդների մոտ տարրեր չափով է պահպանվել: Եթե բյուզանդական երաժշտության մեջ պահպանվել են այսպես կոչված պապադիկները, որոնք այժմ հնարավորութուն են տալիս կարդալու, ավելի ճիշտ, վերծանելու հին դարերում գրի առնված եղանակները, եթե սուսական հոգևոր երաժշտության պրակտիկայում պահպանված «ազբուկաները» զգալի չափով օգնում են՝ վերականգնելու երաժշտական նշանների՝ ժամանակի ընթացքում մոռացության տված՝ նշանակությունները, ապա վրացական երաժշտության մեջ, բացի գրի առնված բուն երաժշտությունից, նշանները կարդալու սկզբունքի մասին գրավոր սրեկ հիշատակություն չի մնացել. իսկ հայկական երաժշտության պատմության մեջ պահպանված մանր մունր շատ տեղեկությունները, սրոնց մեծ մասը, նորագույն շրջանին են վերաբերում, առայժմ համարյա ոչնչով չեն օգնում՝ վերականգնելու խաղերի սիստեմի նշանակությունը:

Նեովմային երաժշտության վերականգնումը սովետական երաժշտագիտության կարևոր հարցերից մեկն է հանդիսանում: Ռուսական երաժշտագիտության մեջ այժմ այդ հարցով են զբաղված Մոսկվայի և Լենինգրադի մի շարք անվանի մասնագետներ: Այդ ասպարեզում հատկապես մեծ նորություն է հանդիսանում, սուսական երաժշտական պալեոգրաֆիայի և միջնադարյան սուսական երաժշտության խոշոր մասնագետ Բրաժնիկովի վերջերս հրատարակված աշխատությունը:<sup>1</sup> Վրաստանում նեովմերի սուսականության աշխատանքը տարվում է Վրացական ՍՍԻ Գիտ. Ակադեմիայի պատմության ինստիտուտում, պրոֆ. Ասլանիշվիլու ղեկավարությամբ, իսկ մեզ մոտ՝ Գիտ. Ակադեմիայի Արվեստի սեկտորում:

Խաղերի սուսականությանը թեև պատկանելի պատմություն էլ ունի, սա-

կայն մինչև այժմ շոշափելի արդյունքներ չի տվել: Քիչ թե շատ արժեքավոր է այս ասպարեզում Եղիա Տնտեսյանի (1834—1881) աշխատությունը, որ մի քանի անգամ հրատարակվել է արդեն:<sup>2</sup> Մեծ հաջողությունների է հասել այդ հարցում Կոմիտասը, որի հիմնական աշխատությունները, ինչպես հայտնի է, չեն պահպանվել:

Այս հոդվածի նպատակը խաղարանության վերլուծությունը չէ, որ հաճախ է կատարվել, նպատակը չէ նաև՝ ապացուցել խաղերի սիստեմի վերծանության կարևորությունը, որ ինքնըստինքյան ակնհայտ է, քանի որ խաղերի վերծանությունն է, որ պետք է հնարավորութուն տա մեզ ըմբռնելու գեղարվեստական այն կերպարները, որ ստեղծել է ժողովրդի հանձարը պատմական երկար ժամանակաշրջանի ընթացքում՝ հոգևոր և աշխարհիկ երաժշտության ասպարեզում:

Այս հոդվածի նպատակը մի մասնավոր խնդիր է՝ խաղավոր ձևադրերի սուսականության ասպարեզում վերջերս հայտնաբերված նորությունների հիման վրա նշտել խաղերի կիրառության ժամանակը, մասամբ էլ պարզաբանել սրանց ծագման ու զարգացման հանգամանքները:



Հայկական խաղարանությանը նվիրված թե հայ և թե օտարադղի մեծաքանակ աշխատություններում խաղերի ծագումը աներկրայորեն վերագրվել է 12-րդ դարի վերջին: Այս բանի համար հիմք է ծառայել մեր պատմագրության մեջ պահպանված միակ հիշատակությունը, Կիրակոս Գանձակեցու հիշատակությունն, այն մասին, թե՛ Հաղարծնի վանահայր Խաչատուր Տարոնացին էր, որ խաղերը բերեց Արևելք («ի կողմանս արևելից»), «անմարմին եղանակները մարմնավորելու», թե՛ մինչև այդ ժամանակ խաղերը գեոևս տարածված չէին աշխարհում, և որ նա՝ գալով, դրեց ու սովորեցրեց շատերին:<sup>2</sup>

<sup>1</sup> Ե. Տնտեսյան «Նկարագիր Երզոց», 1874 թ. ր. տղազբություն, Պոլիս:  
<sup>2</sup> Տես Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց, էջ 106 (1865 թ.):

<sup>1</sup> М. В. Бражникoв, Пути развития и задачи расшифровки знаменного роспева XII—XVIII веков. Госмузиздат, 1949 г., Москва—Ленинград.

Այս հիշատակութիւնն ըստ ամենայնի օգտագործելով և խաղերի ծագման-զարգացման, նրանց էութեան ու վերձանութեան վերաբերյալ դրանից զանազան եզրակացութիւններէ հանգելով, խաղադեմները սովորաբար քիչ են հետաքրքրել պահպանված խաղավոր հնագույն ձեռագրերով: Նրանց չի զբաղեցրել, օրինակ՝ այն փաստը, որ 12-րդ դարի ձեռագրերում եղած խաղերը իրենցից ներկայացնում են բարձր զարգացման հասած բարդ մի սիստեմ, որ համարյա ոչ մի բանով ցած չի խաղերի սիստեմի զարգացման ամենաբարձր աստիճանից: Այլ կերպ ասած, աչքաթող է արվել այն հանգամանքը, որ խաղերի սիստեմը չէր կարող ստեղծվել միանգամից, իր ամենազարգացած ձևով և դարերի ընթացքում այլևս ոչ մի փոփոխութիւն չկրել:

Լուրջ մտեցում չի ցուցաբերվել նաև հենց Գանձակեցու հիշատակութեանը: Այսպես, օրինակ՝ այն հարցին, թե Տարոնացին որտեղից բերեց խաղերը (Գանձակեցին այս մասին ոչինչ չի ասում), շատերը, առանց վարանելու, պատասխանել են՝ Բյուզանդիայից: Իսկ թե ուր բերեց, պարզ է, Հայաստան:

Այսպիսով, խաղադեմների մեծագույն մասի կարծիքն այն է, թե 12-րդ դարի վերջին Խաչատուր Տարոնացին բյուզանդական նեվմերը բերեց Հայաստան և նրանցով ձայնագրեց մեր եղանակները:<sup>2</sup>

Իրենց սխալ դրույթից ելնելով՝ այդ խաղադեմները ստիպված են եղել, նմանութիւններ փնտրել հայկական և բյուզանդական նեվմերի գրութեան ձևի և

<sup>1</sup> Խաղադեմութեան մեջ մինչև այժմ հիշատակված հնագույն ձեռագիրը 1216 թվին գրված մի շարական է:

<sup>2</sup> Խաղերի ծագման այս «բյուզանդական» տեսակետի ցայտուն պաշտպանը և պրոպագանդիստը մեզանում եղել է երաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանը: Ժամանակի հարցում անհրաժեշտ զգուշութիւն և զիտական բարեխղճութիւն է ցուցաբերել Կոմիտասը միայն, որ գրում է, թե «մանրուսման դարգացման սկզբնադարը մոտավորապես (ընդգծումը մերն է Ռ. Ա.) — ժԱ. դարի վերջին կեսն է»: (Կոմիտաս. Հոգիածներ և ուսումնասիրութիւններ. 1941 թ. Պետհրատ, Երևան, էջ 113):

անունների մեջ, խաղերի տակ փորձել են դնել բյուզանդական նեվմերի նշանակութիւնը և, բնականաբար, դրական որևէ արդյունքի չեն հասել:

Ուսումնասիրութիւնները ցույց են տալիս, որ իրականում հայկական և բյուզանդական նեվմային սիստեմները նմանութիւն չունեն ոչ նշանների արտաքին կողմով, ոչ էլ նրանց սիստեմների սկզբունքով: Խոսքն, ի հարկե՝ երաժշտական գրութեան բոլոր սիստեմների մեջ բնականորեն հնարավոր և անհրաժեշտ ընդհանուր մտեցումների մասին չէ, այլ հիշյալ երկու սիստեմների հարցան, երաժշտութիւնը դրի առնելու նրանց եղանակի, սկզբունքի մասին է:

Նեվմային նոտագրութեան հիմնական առանձնատկութիւնը հենց այն է, որ նեվմերը եղանակի յուրատեսակ գրաֆիկական արտահայտութիւն են ներկայացնում իրենցից, և, հետևաբար, ամեն մի ժողովրդի երաժշտական գրութեան նեվմային սիստեմը այս կամ այն չափով կապված է տվյալ ժողովրդի սոցիալական կեցութեան հիման վրա ստեղծված երաժշտական ըմբռնումների առանձնատկութիւնների հետ: Այս տեսակետից խաղերի սիստեմը, թե իր գրութեամբ և թե բովանդակութեամբ, նույնքան ինքնուրույն է, ինչքան ինքնուրույն, ինքնատիպ է հայկական, թեկուզ և հոգևոր երաժշտութիւնը, ինչքան ինքնուրույն են ռուսական, վրացական, լատինական, բյուզանդական և այլ ժողովուրդների նեվմային սիստեմներն ու նրանց երաժշտութիւնը: Ուստի և՛ խաղերի ինքնուրույն, այլ ոչ թե բյուզանդացիներից բերված այդ սիստեմը՝ 12-րդ դարի վերջին ծագելով, չէր կարող հասնել զարգացման այնպիսի բարդ աստիճանի, ինչպիսին մենք տեսնում ենք 13-րդ դարում գրված խաղգրքերում: Ինչպես այլ ժողովուրդների նեվմային սիստեմները, հայկական խաղերն էլ՝ պատմական մեծ ուղի պետք է անցած լինեն, խոշոր փոփոխութիւններ պետք է կրած լինեն, մինչև իրենց զարգացման 13—14-րդ դարերի աստիճանին հասնելը:

Այս հարցն է ահա, որ 13-րդ դարից առաջ գրված հայկական ձեռագրերը ուսումնասիրելու արդարացի պահանջ է առա-

ջացնում, մի քան, որ ոչ ոք չի ձեռնարկել մինչև այժմ: Այդ պահանջը առավել ևս արդարացի է այն պատճառով նաև, որ հայ ժողովրդի հետ միջին դարերում կուլտուրապես կապված այլ ժողովուրդների մոտ (վրացիներ, բյուզանդացիներ և այլն) նեվմային գրության սիստեմները 9—10-րդ դարերում արդեն դոյություն ունեին և հայերը չէին կարող դերձ մնալ հարևան ժողովուրդների ընդհանուր կուլտուրական այդ նվաճումից ու չստեղծել երաժշտությունը գրի առնելու իրենց սիստեմը:



Հայկական երաժշտական պալիոգրաֆիայի ասպարեզում Հայկական ՄՄՌ Պետական Մատենադարանում վերջերս կատարած հետազոտությունների ընթացքում մեզ հաջողվեց՝ հայտնաբերել Յաշատուր Տարոնացու ժամանակից առաջ գրված և խազավարված մի շարք ձեռագրերի պատասխիններ: Այդ պատասխինները անթվակիր են, ուստի դրանց գրության ժամանակը որոշվում է պալիոգրաֆիկ տվյալների համաձայն: Այս տվյալները վերաբերում են ձեռագրերի մատերիալին, գրերի ձևին, գրության դանազան կանոններին, ընազրի ուղղագրական արխայիզմներին, դարդագրերին, մանրանկարներին և այլն: Պալիոգրաֆիայում ընդունված այդ տվյալներին այժմ ավելանում են նաև հին ձեռագրերում ընդգրկված խազերի ձևն ու նրանց գրության կանոնները:

Մեր հայտնաբերած պատասխինների վերոհիշյալ տվյալները համեմատելով ճշգրիտ թվական ունեցող հնագույն այլ ձեռագրերի համապատասխան տվյալների հետ՝ հնարավոր է դառնում՝ ապացուցել, որ այդ պատասխինները գրվել են Յաշատուր Տարոնացու ժամանակից շատ ավելի վաղ:<sup>1</sup>

<sup>1</sup> Համեմատությունը կատարելիս օգտվել ենք Պետ. Մատենադարանի գիտական աշխատակիցների ցուցմունքներից, ինչպես և ձեռքի տակ ենք ունեցել Հայկական պալիոգրաֆիայի մասին առկա ուսումնասիրությունները և «Քարտեզ հայ հնագրության» մեջ հրատարակված նյութերը:

Մտորե բերում ենք այդ հնագույն խազավոր պատասխիններից մի քանի լուսանկար նմուշներ:



1. ՊԱՏԱՍԽԻՆ Խ 512 (Նկ. 1)

Մագաղաթյա մեծադիր թերթ է (մեծությունը 11,5×16,5) երկու երեսը գրված բուն մետրոպյան երկաթագրով: Այս պատասխին ունի հայկական պալիոգրաֆիայում ընդունված բոլոր այն տվյալները, որոնք յուրահատուկ են հնագույն երկաթագիր ձեռագրերին: Դրանք հետևյալն են.

- ա) Պատասխիլը գրված է բուրբաձև երկաթագրով:
- բ) Առաջին գլխատառերը քիչ դուրս են մյուս տողերի սկզբնազծից:
- գ) Դրությունը առանց բառանջատումի է:
- դ) Կետերը (միջակետը) քառակուսի են և գրված են տողից վեր:
- ե) Ձեռագրում եղած բոլոր տառաձևերը բնորոշ են հին երկաթագրերին, ինչպես օրինակ.
- «Թ» տառի երկրորդ գիծն իջնում է մինչև տողը,
- «Վ»-ի առաջին գիծը հավասարվում է երկրորդին,
- «Կ»-ի առաջին գիծը մեկ տառաչափ է, իսկ երկրորդը կարճ է և սեպաձև վերջավորություն ունի,
- «Ք» տառի ուրբուն գլուխը շատ փոքր է, իսկ գիծը իջնում է տողից շատ ցած, վերջանալով սեպաձև, թեք պոչով և այլն:

զ) Այդ բոլորի վրա մենք ավելացնում ենք պատասխիլի խազերը, որոնց ձևն ու գրության կանոնները՝ համեմատած 12—13-րդ դարերում գրված նույն երգի այլ ձեռագրերի խազերի հետ, ցույց են տալիս նրանց զգալի չափով հին լինելը:

№ 512 պատասխիլը համեմատելով 887 թվին գրված «Լազարյան» ավետարանի հետ (№ 6200) տեսնում ենք, որ երկու ձեռագրերի վերը բերված բոլոր տվյալները, և հատկապես տառաձևերը լիովին համընկնում են միմյանց: Առանձնապես ուշագրավ է Ջ, Մ, Թ, Ք, Ն, Յ, Ձ, Կ, Շ, Պ, տառերի նմանությունը, կետագրության նմանությունը և այլն:



Նկ. 1

Ուստի այս և մի շարք այլ երկրորդական տվյալների հիման վրա կարող ենք հաստատապես պնդել որ № 512 պատառիկի գրության ժամանակը 9-րդ դարն է:

Պատառիկում եղած խաղերը կարմիր են և գրված են տեքստից վեր: Մի բան, որ նույնպես հատուկ է միայն հին ձեռագրերին և չի կրկնվում 13-րդ և հետագա դարերում գրված ձեռագրերում: Բերված երգը, որ հանդիպում է ճաշոցներում, գտնվել է 12-րդ դարի առաջին կիսում գրված ձեռագրից ընդօրինակված մի այլ ձեռագրում ևս (պահպանակ № 6844 ձեռագրի), կա նաև Հեթումի ճաշոցում (Չեռ. № 979, 1288թ. էջ 200 ա):

Վերջին երկուսի համեմատությամբ էլ պատառիկի խաղերի տարբերությունը շատ մեծ է:

№ 512 պատառիկը թե պալեոգրաֆիկ տվյալներով և թե խաղերի արխայիկ, անկատար ձևով մինչև այժմ հայտնաբերված խաղերով ձեռագրերից հնագույնն է: Նա

մասամբ սեպած է հնությունից և տեղ-տեղ խաղերը չեն նշմարվում, սակայն քանի որ այնտեղ երգի մի քանի տուն է ընդգրկված, հնարավոր է վերականգնել անընթեռնելի տեղերի խաղերը:

Ստորև բերում ենք (նկ. 2) պատառիկը վերականգնված վիճակում, ապա և նույն երգը՝ վերցված 12-րդ դարում գրված ձեռագրից (պահպանակ № 6844), որոնց համեմատությունից ակնհայտ կերպով երևում է նրանց խաղերի տարբերությունը. այն է՝ № 512-ում տարբեր խաղերը ընդամենը 6—7 հատ են, մինչդեռ № 6844-ում 14—15 հատ են: Պատառիկում որպես ինքնուրույն նշան գործածված երեք և հինգ կետերը հետագայում վերացել են, տեղի տալով առանձնատրոսյ և լերկ կոչվող նշաններին (տես նկ. 11): Երգի մեջ «իմ» վանկի վրա եղած վերջին երկու նշանները հետագայի մեկկործ կոչվող նշանի մի նախատիպն են ներկայացնում և այլն:



Պատառիկ № 512 (սխեմա)

Պահպանակ № 6844 ձեռագրի (սխեմա)


[օ] շեքն  
 եւ հողմով Բորթա  
 շտուրեանք բոզ  
 շմանեցան ջուրք  
 պաշեցան իրրեւ  
 պարիսպ ջուրք  
 պաշեցան ալիքն  
 3 մէջ ծողուն  
 Ասաց թշնամին  
 հալանեցից եւ  
 հասից քաւա  
 Նեցից զաւարն  
 եւ լցուցից ի նո՞  
 ցանէ զանչե իմն  
 Աստակեցից  
 սրով իմով տի  
 թիցէ նոցա շեան իմն  
 Առաքեցեր զհողմն

պաշեցաւ և իրրեւ  
 պարիսպ ջուրքն : պաշեցա[ն]  
 ալիքալիքն ի մէջ ծողուն  
 Ասաց թշնամին հալան  
 [ծ] ծառ : զթ շաղ Եւ հա  
 ից : քաւանեցի ց զաւարն  
 [եւ] լրցուցից ի նոցանէ զանչե  
 և ի լցուցից :  
 Ասաց կեռա ջր ց սր  
 [ո] շաղ զի մով : տիրիցէ և  
 [օ] շաղ ցեւ ձի լաւ լաւ [։]

Նկ. 2

2. ՊԱՏԱՌԻԿ № 1378 (Նկ. 3)

Մագաղաթյա երկու փոքրադիր թերթ է (մեծ. 9×12), չորս երեսը զբլված մանր



Նկ. 3

ուղղադիծ երկաթագրով: Խաղերը զբլված են տեքստից վեր, նույն թանաքով: Բովանդակութունը Շարակնոցից է («Լեբինք ցնծասցեն», «Ուրախացիր պսակ» և այլ երգերը):

Հնագրական տվյալների համաձայն № 1378 պատառիկի գրության ժամանակը 11—12-րդ դարն է, սակայն քանի որ այստեղ ընդգրկված խաղերի ձևը նախորդ № 512 պատառիկի խաղերի նման շատ հին և անկատար է, ապա և պատառիկում եղած «Ուրախացիր» երգը, որ այդ կաղձության երգ է, և 13—14-րդ դարի ձեռագրերում խաղերի խիտ ֆակտուրա ունի (18 տարբեր նշաններով), իսկ այստեղ անհամեմատ պարզ է (ընդամենը 4 տարբեր նշան). դրանից հետևում է, որ № 1378 պատառիկը նույնությամբ արտագրված է մի ավելի հին օրինակից: Անհրաժեշտ է ավելացնել, որ «Ուրախացիր» երգի մեղեդիական հարաբերական բարդութունը № 1378 պատառիկում իսկ պարզ արտահայտված է: Այդ երևում է նրա և պատառիկի մյուս երգերի խաղերի համեմատութունից և լուսանցքում եղած «ստեղի» նմուշից: Ավելի նոր ձեռագրերի հետ համեմատելը ցույց

է տալիս, որ № 1378 պատառիկը բնօրինակված պետք է լինի ամենաուշը 10-րդ դարի հնություն ունեցող մի ձեռագրից: Տարրեր նշանների քանակությամբ և նրանց դրության ձևով նախորդ № 512 պատառի-


կից քիչ է տարբերվում (ավելանում է բենկորն կոչվող նշանը միայն), իսկ 13—14-րդ դարի ձեռագրերի համեմատությամբ տարբերությունը շատ մեծ է, կա և տեքստի տարբերություն: Բերում ենք (նկ. 4) Ռերա-

Պատառիկ № 1378 (սխեմա)

Ձեռագիր № 1590 էջ 180

Ռերաչի պսակ կուսից տիրամայր  
նյաւր հրդին բն վնայրենին փայլնայ  
պիտաս, նմա յաւերս յաւելն արն վանչին  
նմ մեր

տ  
ն  
ն



նկ. 4

խացիր» երգը № 1378 պատառիկից և 1308 թվին գրված Շարակնոցից (ձեռ. № 1590):

3. ՊԱՏԱՌԻԿ № 461 ( նկ. 5)

Մագաղաթյա մեծագիր թերթ է (մեծ. 14,5×21) երկու երեսը գրված բուն մեսրոպյան երկաթագրով: Պալեոգրաֆիկ տվյալներով № 461 պատառիկը լիովին համապատասխանում է 989 թվին գրված «Փղոսկրյա ավետարանին» (ձեռ. № 2374), ուստի սրա գրության ժամանակը նույնպես 10-րդ դարն է: Խաղերը կարմիր են ինչպես զլխատառերը և

գրված են տեքստից վեր: Այս պատառիկում առաջին անգամ հանդես է գալիս խաղերի վերևից գրված մեկ կեսը (առայծմ միայն փուշ կոչվող խաղի վրա): Այս երգը նույնպես ճաշոցներում է հանդիպում, Հեթումի ճաշոցուի (1288 թ.) 200ա էջում, որը մենք բերում ենք ստորև: (նկ. 6):

Ձեռագիր № 979 էջ 200 ա



նկ. 5



նկ. 6


№ 461 պատասխիկը թեև խաղերի ավելի հարուստ ֆակտուրա ունի, քան նախորդները (№ 512 և № 1378), սակայն, Հեթումի ճաշոցից վերը բերված հատվածի հետ համեմատելիս՝ պարզ երևում է, որ այս պատասխիկի խաղերը նույնպես արխայիկ են: Այսպես, օրինակ՝ «թողին» վանկի վրա պատասխիկում եղած հետևյալ խաղերը հետազայի վերնախաղ կոչվող խաղն է՝ ներկայացված դեռևս անկազմակերպ, «սաղմնային» վիճակում (նկ. 7):

Վանկի խաղերի օրինակ (№ 461)

Վանկի խաղերի օրինակ (№ 979)

նկ. 7

4. ՊԱՀՊԱՆԱԿ № 8909 ՉԵՌԱԳՐԻ (նկ. 8)



նկ. 8

Մագաղաթյա երկու մեծադիր թերթ է (մեծությունը 13×18), չորս երեսը գրված ուղղադիր երկաթագրով: Ժամանակը 11-րդ դարն է: Խաղերը կարմիր են և № 8909 պատասխիկում առաջին անգամն են հանդիպում՝ տողի վրա, տեքստի մեջ գրված: Խաղերի վերելից գրված կեան այստեղ լայն կիրառություն ունի, հանդես են գալիս խաղերի տակից գրվող տառերը («ս» տառը 4-րդ և 6-րդ տողերում): Երգը հավանաբար ժամագրքից է, բայց եղած հնագույն խաղադրքերում (օր. № 759, 1278 թ. էջ 108) հաջողվել է դանել նրա մի մասը միայն (վերը բերվածը): № 759 խաղադրքի համեմատությամբ № 8909 պահպանակի խաղերի տարբերությունը չափազանց մեծ է: Տեքստը նույնպես փոքր տարբերություն ունի:

մատուցյամբ № 8909 պահպանակի խաղերի տարբերությունը չափազանց մեծ է: Տեքստը նույնպես փոքր տարբերություն ունի:

5. ՊԱՏԱՌԻԿ № 495 (նկ. 9)


Վանկի խաղերի օրինակ

նկ. 9

Բերում ենք խաղերի սխեման առանց տեքստի: Հորիզոնական գծիկները ցույց են տալիս անխաղ վանկերը: Աջ կողմում բերվածը նույն երգերն են՝ վերցված 1308 թվի Շարակնոցից: Պատասխիկ № 495-ը բաղկացած է մագաղաթյա երեք փոքրադիր թերթից (մեծ. 9×12), վեց երեսը գրված մանր ուղղաձիգ երկաթագրով, սակավ բուրբազրի խառնուրդով: Ժամանակը 12րդ դարի սկիզբը: Խաղերը կարմիր են, գրված տեքստի մեջ (եթե բարդ խաղեր են), և տեքստից վեր (եթե պարզ են): Չեռադրի որոշ տեղերը անընթեռնելի են: Բովանդակությունը Շարակնոցից է (կարգ հարություն օրհնությունների, աձ, աի, բձ, բի): Վերը բերված է երկրորդ ձայնի և ավագ կողմի երգերից մեկական տուն: Սրանց համեմատությունը № 1590 Շարակնոցից վերցված (աջ կողմում) նույն երգերի հետ ցույց է տալիս, որ պատասխիկի խաղերի տարբերությունը այդ հնագույն Շարակնոցի համեմատությամբ դեռևս մեծ է, չնայած ուղղակի համապատասխանությունը այստեղ ավելի զգալի է, ինչպես օրինակ՝ երկու ձեռագրում էլ զարկ կոչվող նշանը առաջին քառատողի 2-րդ, 3-րդ և 4-րդ տողում, երկարը և փաթութը երկրորդ քառատողի 2-րդ տողում ընդհանուր են, և այլն:

6. ՊԱՀՊԱՆԱԿ № 8600 ՉԵՌԱԳՐԻ (նկ. 10)

Մագաղաթյա երկու թերթ է, (մեծությունը 10×14,5) չորս երեսը գրված բուր-



Նկ. 10

բաձև երկաթագրով: Ժամանակը 12-րդ դարի երկրորդ կեսն է: Խաղերը կարմիր են, գրված տեքստի մեջ և տեքստից վեր: Գրությունը շատ խնամքով է: Բովանդակությունը պատարադի երգերից է: Քանի որ այս ձևագրի մեջ ընդգրկված երգերից մեկի վերնագրում նշված է՝ «դոր ասացեալ ի տնէ Ներսիսի Հայոց Կաթողիկոսի», իսկ հնագրական տվյալներով ձևագրի գրություն ժամանակը 12-րդ դարից այս կողմը չի կարող անցնել, ուստի դրանով էլ որոշվում է 12-րդ դարի երկրորդ կեսը:

№ 8600 պահպանակում տարրեր խաղերի թիվը արդեն երկու տասնյակից ավելի է (մոտ 25 նշան), հանդիպում են խաղերի վրայից դրվող գծիկները, ինչպես և միացյալ գրված խաղերը, որ առաջին անգամ հանդես էին եկել № 8644 ձևագրի պահպանակում (ընդօրինակված 12-րդ դարի առաջին կեսի ձևագրից):

Թեև խաղերի սիստեմը իր զարգացման ամենաբարձր աստիճանին է հասնում 13—14-րդ դարերում միայն, սակայն 12-րդ դարի այս ձևագրում ևս (նկ. 10) ներկայացված է որպես կատարելագործված բարդ

սիստեմ: 1278 թվին գրված խաղաքի համեմատությունում ալտուր եղած երգերի խաղերի տարրերությունը արդեն բավականին փոքր է, չնայած կարևոր է (նոր վարիանտում ընդգրկված մի քանի խաղերը դեռևս չկան այդ ձևագրում, իսկ մի քանիսի գրությունն ձևը դեռևս հինն է):

Խաղերի հնագույն ձևագրերի օրինակներ էլի կարելի է բերել (Հայկական ՄՍՌ պետ. մատենադարանի № 58 պատասիկը, № 8620 ձևագրի երկրորդ պահպանակը), սակայն վերը բերված վեց պատասիկներն էլ բավական են՝ հերքելու մինչև այժմ եղած կարծիքն այն մասին, թե խաղերը Հայաստան մուտք գործեցին 12-րդ դարի վերջին միայն: Այդ պատասիկները հաստատում են, որ հայկական հոգևոր երաժշտության մեջ խաղերը ոչ քե 12—13-րդ դարերում կիրառվել սկսեցին, այլ 9-րդ դարում արդեն կիրառվում էին:

Խաղերի կիրառությունը 9—12-րդ դարերում ապացուցվում է ոչ միայն հիշյալ պատասիկների խրոնոլոգիական տվյալներով, այլև պատմական, աստիճանական զարգացման այն ուղիով, որով անցել է հայկական նեովմային նոտագրության սիստեմը իր ծագման օրից մինչև 12—13-րդ դարերի աստիճանին հասնելը:

Հիրավի, երբ համեմատում էինք վերը բերված պատասիկները միմյանց հետ, կամ այդ բոլորը՝ 13—14-րդ դարերի ձևագրերի հետ, տեսանք, թե ինչպես.

1. Տարրեր նշանների քանակությունը՝ սկսելով խաղերից ավելի վաղ կիրառված առաջնություն 3—4 նշանից, աստիճանաբար ավելացել և 12—13-րդ դարերում արդեն հասել է մի քանի տասնյակ նշանի: Օրինակ՝ եթե № 512 պատասիկում ընդգրկված տարրեր նշանների թիվը 6—7 էր, ապա նույն երգը № 6844 ձևագրի պահպանակում 14—15 տարրեր նշաններ ուներ (նկ. 2): Եթե № 1378 պատասիկում «Ուրախացիր» երգը ընդամենը 4 տարրեր նշան ուներ, ապա նրան համապատասխանող № 1590 ձևագրում այդ երգը 18 տարրեր նշաններ ուներ (նկ. 4) և այլն:

Պետք է նշել, որ փաստարկությունն այն մասին, թե տարրեր քանակության նշան-

ներ ունեցող այդ ձեռագրերը նույն խոսքերով գրված, տարրեր երգերի, օրինակ՝ մի դեպքում պարզ, մյուս դեպքում բարդ մեղեդիների գրավոր արտահայտություն են, — բացառվում է, քանի որ մեզ հաջողվել է գտնել նույն երգերի զանազան ժամանակներում ձայնագրված վարիանտները (տես պատասիկ № 512 և 6844, № 1378 և 1590, № 461 և ձեռ. № 979), որոնց համեմատությունից ապացուցվում է, որ գրանք ոչ թե տարրեր եղանակներ, այլ տարրեր աստիճանի զարգացման սխեմներով գրի առնված միևնույն եղանակներն են:

Բերենք այս դրույթն ապացուցող մի շարք պարզ փաստեր:

Այսպես օրինակ՝ № 512 պատասիկում (9-րդ դար) և № 6844 ձեռագրի պահպանանակում (12-րդ դար) բերված երգի եղանակները նույնն են (նկ. 2), քանի որ մի մյուսն է հետ համեմատելիս՝

ա) Պաղերի և անխաղ վանկերի տեղերը համընկնում են:

բ) Մի ձեռագրի «պարզ» խաղերին համապատասխանում են մյուս ձեռագրի «պարզ», իսկ «բարդ» խաղերին՝ «բարդ» խաղեր:

գ) Պաղախմբերի տեղերը նույնպես համապատասխան են:

դ) Համապատասխան է նույնիսկ խաղախմբերի էլեմենտների թիվը (երկու գըլ-խավոր դեպքերում):

ե) Մի քանի անգամ կրկնվող միևնույն

IX<sub>դ</sub>

XII<sub>դ</sub>

« ամեն անգամ նշանակված է //


/	»	»	»	—
—	»	»	»	✓
•••	»	»	»	∞ ∞
••	»	»	»	∞

և այլն

նշանին մեկ ձեռագրում՝ համապատասխանում է մյուս ձեռագրի մի քանի անգամ կրկնվող միևնույն նշանը:

Օրինակ՝ հին ձեռագրում (№ 512) մի քանի անգամ հանդիպող հետևյալ նշանները, նոր ձեռագրում (№ 6844) ամեն անգամ նշանակված են մեր ցույց տված հետևյալ համապատասխան նշաններով (նկ. 11)

զ) Կան ի հարկե և անհամապատասխանության դեպքեր (և ոչ շատ): Օրինակ՝


 քննչքն

2. Աստիճանաբար փոխվել, կատարելագործվել են խաղերի ձևերը: Ինչպես օրինակ՝ 9-րդ դարի ձեռագրի պատասիկում եղած պայմանական կետերը հետադաժում տեղի են տվել լերկ և առանձնատրոպ նշաններին (նկ. 11) և այլն:

3. Եթե որոշ դեպքերում մեղեդիի մեջ եղած տարրեր խաղերը սկզբում մեկ, միևնույն պայմանական նշանով են նշանակվել, ապա, հետադաժում ամեն մի ինքնուրույն մեղեդիական դարձվածք ձեռք է բերել իր առանձին նշանը: Այսպես, օրինակ պատ. № 1378 և ձեռ. № 1590-ի համեմատությունից երևում է, որ հին ձեռագրի (10-րդ դար) մեղեդիական տարրեր խաղեր ցույց տվող մեկ նշանի փոխարեն նոր ձեռագրում (1308 թ.) հանդես են գալիս չորս տարրեր նշանախմբեր: Բերում ենք այդ նշանախմբերը. (նկ. 12)

X դար

1308 թ.



4. Խաղերի սիստեմում հաջորդաբար մուտք են գործել մի շարք այլ, հավանաբար, օժանդակ նշաններ, ինչպես օրինակ՝ խաղերի վերևից դրվող կետերը (պատասխիկ № 461), նրանց վրա և նրանց տակ դրվող զանազան գծիկները, խաղերի տակից դրվող տառերը (պահպանակ № 8709) և այլն, սրճնք երգի կատարման այս կամ այն առանձնահատկությունները, մանրամասնությունները նշելով, վերջին հաշիվով սիստեմի զարգացումն են ցույց տալիս:

5. Սկզբում խաղերը դրվել են տեքստից վեր միայն և անջատ-անջատ: Հետագայում (արդեն 11-րդ դարում) խաղային ֆորմուլաների բարդացման հետևանքով, բարդ նշանախմբերը սկսել են գրել տեքստի մեջ, տողի վրա (պահպանակ № 8709), իսկ տեղի խնայողության նպատակով այդպիսի խմբերում նշանները կպցրել են միմյանց:

6. Ավելի ուշ, խաղերի սիստեմի զարգացումն ընթացել է ըստ հայկական հոգեվոր երաժշտության առանձին տարատեսակների: Շարականների, տողերի և մեղեդիների, գանձերի և այլ երգերի խաղերը ձևաբ են բերել իրենց, այդ երգերին հատուկ, ուրույն օրինաչափությունները և այլն:

Խաղերի սիստեմում շարունակաբար տեղի ունեցած այդ փոփոխությունները շատ են և բազմապիսի: Դրանք ասում են այն մասին, որ մինչև 12-րդ դարի վերջը, այսինքն մինչև Խաչատուր Տարոնացու ժամանակը, խաղերի սիստեմը պատմական զարգացման շատ երկարատև մի ժամանակաշրջան էր ապրել:

Ինչ խոսք, որ խաղերում կատարված փոփոխությունները միայն ձայնագրության զարգացումը չեն արտացոլում: Դրերի ընթացքում երգն ինքը չէր կարող չփոփոխվել: Պատ. № 512 և պահպ. № 6844 ը համեմատելիս՝ ստացած անհամապատասխանությունները հենց իր՝ եղանակի փոփոխվելու արդյունքն են հանդիսանում:

Խոսելով խաղերի սիստեմի զարգացման հետագա ընթացքի մասին, պետք է նշել հետևյալը: Հայտնի է, որ մինչև այժմ խաղերը համարվել են սոսկ եկեղեցական երա-

ժշտության ատրիբուտ: Անցյալ դարի երկրորդ կեսից սկսած նույնիսկ առաջ է եկել «շարականի խաղեր» երաժշտադիտական տերմինը: Մինչդեռ՝ մեր հետազոտությունները այս ասպարեզում հնարավորություն են տալիս ասպացուցելու, որ միջնադարյան երաժշտական գրուքյան տրադիցիան իր մեջ բնոգրկել է նաև բուն աշխարհիկ երաժշտությունը, որ աշխարհիկ երաժշտության շատ տարատեսակներ, լիրիկական, երգիծական, սլանդխտի, սեղանի և այլ երգեր՝ դրի են առնվել խաղերով:

Մտորե բերում ենք խաղերով ձայնագրված աշխարհիկ բովանդակության երգերի մի քանի հատված օրինակ (նկ. 13, 14, 15, 16, 17):

Այսպիսով, մեկ կողմից նոր հայտնաբերված հնագույն խաղավոր ձևազրկերի խորնուրդիական տվյալները, մյուս կողմից նրանց մեջ ընդգրկված խաղերի սիստեմի շարունակական զարգացումը (ընդհուպ մինչև նրանց ժողովրդական երաժշտության ասպարեզը ընդգրկելը) շատ խոշոր չափով լայնացնում են խաղերի գործածության ժամանակաշրջանը և սրանով իսկ ճշտում են խաղերի ծագման ժամանակի վերաբերյալ մինչև այժմ եղած սխալ ըմբռնումները: Ուրեմն՝ խաղերը ոչ թե 12-րդ դարի վերջին, այլ առնվազն 9-րդ դարում արդեն կիրառվում էին Հայաստանում: Ինչ վերաբերում է Գանձակեցու տեղեկությանը՝ Խաչատուր Տարոնացու մասին, ապա դա պետք է հասկանալ այսպես:

Հայտնի է, որ խաղերն իրենց գործածության գոնե սկզբնական դարերում համեմատաբար քիչ չափով են մասսայական եղել: Կոմիտասն իր «Մանրուսումն» հոդվածում ձևազրկերից վերցրած մի հիշատակություն է բերում, որտեղ նշված է եղել «... զոր (զարուեստ մանրուսման) ի մանկանց եկեղեցույ սակաւք զնոյն զիտեն»: Գանձակեցին նշում է «... զարաբեալսն իմաստնոց առաջնոց (խոսքը խաղերի մասին է), որ ցայն ժամանակս չէր ցրուեալ ընդ աշխարհս...»:


Միաժամանակ հայտնի է, որ բուն Հայաստանում ծագելով՝ մանրուսումը բարձր զարգացման հասնել հատկապես Կիլիկիայում (Ներսես Շնորհալին մանրուսումը

Տաղ վասն ծիծաղելոյ  
Չեռագիր № 7717 (1695 թ.) էջ 133 ր



Նկ. 13


Տաղ սիրոյ զեղեցիկ  
(Գրիգոր Ազիսաւարցի) նույն տեղում, էջ 226



Նկ. 14


լրիվ տիրապետելը [մտցրեց քահանայութեան նախապատրաստութիւնների մեջ՝ որպէս գլխավոր պայմաններից մեկը]:  
Այս տվյալները հաշվի առնելով՝ պետք է ենթադրել, որ Սաշատուր Տարսնացին եղավ մանրուսման երգերի արդեն լրիվ խազավորված, կանոնական դարձած ժողո-

Տաղ վասն դարիպի ողորմիկ ձայնի  
ասացեալ Չանձ Բարեր  
Չեռագիր № 5306. (17-րդ դար) էջ 33



Նկ. 15

Տաղ կարուն  
(Միջնադարյան ժողովրդական երգ)  
նույն տեղում, էջ 35



Նկ. 16

վածուհների<sup>2</sup> կիլիկիայից Հայաստան բերողը, դրանց հիման վրա այստեղ եղած դեռ-

<sup>1</sup> Չնայած երկու ձեռագրերն էլ արտադրված են 17-րդ դարում, սակայն կասկածից վեր է, որ այս տաղերը ձայնագրված կարող են լինել ավելի վաղ:


<sup>2</sup> Որոնց մեջ էլ դեռ մանուս էին հենց Ծնորհալու հնարած և դեռևս չտարածված նոր երգերը:

ևս ոչ լրիվ խաղափորված եկեղեցական  
եղանակները խաղափորողը, սովորեցնողը և  
տարածողը:

Սակայն՝ խաղերի գործածության ժա-  
մանակաշրջանի պատմական սահմանների  
սոսկ լայնացման հարցը չի միայն, որ  
աշխատեց լուծվում է: Նրա ժշտական գրու-  
քյան կիրառության ժամանակը ճշտելով՝  
նորահայտ վերահիշյալ պատասխիկները օգ-  
նում են՝ որոշ չափով պարզարանելու նաև  
խաղերի ծագման հանգամանքները: Եվ  
իրոք, այդ ձևաղբերի մեջ ընդգրկված  
խաղերի գրություն արխայիկ ձևը, որ բնավ  
նման չէ բյուզանդական կամ լատինական  
նեվմերին, ինչպես և սիստեմի սկզբը-  
նական պարզությունը, անկատարություն  
ու նրա հեռադա առաիճանական զար-  
գացումը լիովին հերքում են թե հայ  
և թե արևմտաեվրոպական տեսարանների  
կողմից մինչև մեր օրերն իսկ ընդունված  
այն տեսակետը, թե խաղերը բերվել են  
Բյուզանդիայից, կամ վերցված են բյու-  
զանդական կամ լատինական նեվմերից:  
«Խաղերի ծագման այս լատինա-բյուզան-  
դական» տեսակետը գալիս է արևմտաեվ-  
րոպական բուրժուական գիտությունից և  
արևմտամտություն հայ բուրժուական ու  
կղերական շրջաններից, որոնք արհեստա-  
կանորեն ցանկանում են հայ անցյալ կուլ-  
տուրան ցույց տալ որպես բյուզանդական  
և լատինական եկեղեցիների ազդեցության  
հեռանք: Ուստի ցավում ենք, որ Վ. Սամ-  
վելյանը անքննադատ կերպով ընդունելով  
այդ տեսակետը, որոշ աուրք է տվել  
նրան իր հողվածում: (Տես Հայկական ՍՍՏ  
Գիտ. Ակադեմիայի տեղեկագիր № 6,  
1948 թ.):

Պետք է ասել, որ զանազան հեղինակ-  
ների աշխատություններում աեղ գաած  
հայկական խաղերի և բյուզանդական կամ  
լատինական նեվմերի համեմատական ազ-  
յուսակները, որոնց մեջ սովորաբար ցույց  
է արվում նշանների «ապշեցուցիչ» նմա-  
նությունը, միանգամայն բռնազրոսիկ են  
(տես օրինակ Հ. Պոսիեի հողվածը «Բաղ-  
մավեպում», 1900 թ. էջ 547): Այդ նմա-  
նությունն ապացուցելու համար այդպիսի

Տաղ վասն խաղողին և գինոյն.  
նույն տեղում, էջ 48



Նկ. 17


հեղինակները հաճախ, կամա թե ակամա՝  
փոխել են խաղերի ձևը, նույնիսկ գո-  
յություն չունեցող նշաններ են հնարել  
խաղերի սիստեմում:

Օրերս մենք հնարավորություն ունե-  
ցանք Թբիլիսիի Պետական թանգարանում  
ծանոթանալու վրացական նեվմազրության  
պահպանված հնագույն օրինակի հետ (Մի-  
քայել Մողրեկելու հայանի ժողովածուն,  
գրված 10-րդ դարի վերջին), և եթե խա-  
ղերի ու որևէ այլ ժողովրդի նեվմային  
նշանների գրություն ձևի նմանության  
հարց ընդհանրապես կարող է դրվել, ապա  
գա կվերաբերի ոչ երբևք բյուզանդական  
կամ լատինական նեվմերին ու խաղերին:  
Իրա հակառակ՝ հատկանշական է խաղերի,  
և հատկապես հին շրջանի խաղերի ու  
վրացական նեվմային նշանների գրու-  
թյան ձևի մինչև այժմ աչքաթող արված  
զգալի նմանությունը (տես նկ. 18), չնայած՝ այդ




երկու սխեմաների սկզբունքները սրտազակի-  
որեն այլ են:¹

Կրայական նեվմային նշանները



№ 512 պատասխի խաղերը



Նկ. 18

Հայկական ու վրացական միջնադարյան  
երաժշտական սխեմաներում գրութայան մի-  
մյանց նման ձև ունեցող նշանների գործա-  
ծուրյունը, որ հավանաբար այդ երկու ժո-  
ղովուրդների կուլտուրական փոխգործակ-  
ցության արդյունք է, իրոք ուշադրության  
արժանի երևույթ է:

Սազերի ծագման Վրաստան-բյուզանդական  
տեսակետը հերքելով՝ մենք նպա-  
տակ չենք դնում, բացասել հարևան ժողո-  
վուրդների կուլտուրաների փոխադրեցու-  
թյունն ընդհանրապես: Այդ հարցը, ինչպես  
և նեվմերի ծագման առաջնությունը (պրիս-  
րիտևաի) հարցը առանձին ուսումնասիրու-  
թյան ենթակա հարց է և դուրս է այս հոդ-  
վածի խնդիրներից: Իմիջի այլոց կարող  
ենք ասել հետևյալը.

Հայանի է, որ, դեռևս հնագույն ժամա-  
նակներում շատ ժողովուրդներ (չինացի-  
ները, հնդիկները, արաբները, հույները և  
այլն) երաժշտական գրության զանազան  
միջոցներ են կիրառել (գլխավորապես այբ-  
ուբենը): Ապա, միջնադարյան նեվմադրու-  
թյան զանազան սխեմաների սկզբնադ-  
րյուրը շատ տեսարաններ համարում են  
հունական լեզվի առողանություն այն նը-  
շանները, որ հնարել է Արիստոֆան Բյու-  
զանդացին մեր թվադրությունից եր-

կուսեկես զար առաջ: Այնուհետև՝ 5-րդ դա-  
րի սլաամիչ Դազար Փարպեցին Սահակ  
Պարթևի մասին գրում է, որ նա հմուտ էր  
«երգողական տառերին», և վերջապես, բյու-  
զանդական եկեղեցական արարողության  
մեջ ութձայնի (օկտոխիտոս) հիմնադիրը հա-  
մարվող Հովհաննես Դամասկացին (8-րդ  
դար) սրտ տեսարանների կողմից համար-  
վում է նաև նեվմային առաջին նոտագրու-  
թյան հիմնադիրը և այլն: Այս կարգի տե-  
ղեկություններ էլի կարելի է բերել,  
փաստը, սակայն, այն է, որ նախ, ոչ  
միայն 5-րդ, այլև 6-րդ, 7-րդ, 8-րդ դա-  
րերից առաջժմ, ոչ Հայաստանում, ոչ էլ  
մի այլ տեղ, որևէ «երգողական տառ»  
(նեվմերի իմաստով) չի հայտնաբերվել: Եվ  
այդ, դրա հետ մեկտեղ նորահայտ հնա-  
գույն ձևադրերը պարզ կերպով ցույց են  
տալիս (և այդ մենք օրինակներով էլ ապա-  
ցուցեցինք), որ խաղերը Հայաստանում  
առաջացել են ոչ թե սրպես որևէ տեղից  
պատրաստի վիճակում բերված, այլ որպես  
նոր ծագած ու շարունակաբար զարգացող,  
ինքնուրույն մի սխեմա, ինչքան էլ նրանց  
գործածությունը կատարված լինի նեվմա-  
դրության ժամանակակից որևէ սխեմաի,  
5-րդ դարի Սահակ Պարթևի «երգողական  
տառերի» կամ այլևի վաղ ժամանակվա  
որևէ մի այլ սխեմաի օրինակով:

Այս բոլորից նետևում է, որ խաղերի  
գործածությունը բյուզանդական (ևս առա-  
վել լատինական) կուլտուրայի ներմուծու-  
թյունն չէ հայկական իրականության մեջ, այլ  
հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման  
որոշակի աստիճանում ծագած ու զար-  
գացած կուլտուրական մի երևույթ է:

Այսպիսով, նորահայտ խաղավոր ձևա-  
դրերը զգալի չափով օժանդակում են խա-  
ղերի սխեմաի ծագման ու զարգացման  
հանգամանքները պարզելուն և ժխտում  
են այս հարցում էլ մինչև այժմ եղած  
սխալ տեսակետները:

Մնում է ավելացնել, որ խաղերի կի-  
րառություն ժամանակը, նրանց ծագման  
հանգամանքները և զարգացման ընթացքը  
պարզաբանելը միջնադարյան հայկական  
կուլտուրայի պատմության լուսարանու-  
թյան մեջ ունեցած իրենց ընդհանուր նը-

¹ Այդ նմանություն մասին իր հոդվածում նշել  
է Տիբոն (Տես Վր. ԵՐՏՈՒՄ, 1914, ԿՈՄ 4, ԵՄՈՒ 2)  
սակայն խաղերի հնագույն ձևադրերին տեղյակ  
չլինելով, նա վրացական նեվմերը համեմատել է  
նոր շրջանի խաղերի հետ և դժբախտաբար, նրա  
գտած նմանությունների մեծ մասը անհամոզիչ են:

շանակության հետ մեկտեղ, երաժշտական այդ սխեմի վերծանության առարկեզում գործնական նշանակություն ունեն:

Բանն այն է, որ խաղերի ծագման հարցի վերաբերյալ եղած սխալ տեսակետները և դրանց հիման վրա հայկական խաղերի նշանակությունը բյուզանդական եկեղեցական երաժշտության կանոններով միայն բացահայտելու ձգտումը շատ դեպքերում խանդարել և խոչընդոտ են հանդիսացել խաղերի վերծանության աշխատանքին: Մինչդեռ՝ Հայաստանում, հայկական երաժշտական հիմքի վրա ծագած ու զարգացած այդ սխեմում, խաղերի նշանակությունը բացահայտելիս՝ անհրաժեշտ է ելնել հենց հայ երաժշտության կանոններից ու առանձնահատկություններից:

Մրանից բացի, նորահայտ ձևադրերը օգնում են՝ ճշտելու 13—14 դարերից պահպանված խաղավոր ձևադրերի երաժշտական տեքստը, զանազան և մաքրելու նրանց պատահական, օտարամուտ նշաններից, (որոնք ավելի բարդացրել, խճողել են սխե-

մումբ), պարզարանելու դանազան նոր նրշանների և հին նշանների՝ նոր ալլաձեվությունների առաջացման ու զարգացման պրոցեսը և այլն: Խաղերի վերծանության աշխատանքում դա ևս, անշուշտ, կարևոր նշանակություն ունի:

Միջին դարերի երաժշտական հակայական դանձերը երևան հանելու և մատչելի դարձնելու առարկեզում, ինչպես և ժողովուրդների կուլտուրական զարգացման ու փոխազդեցության պատմության հարցերը այս կապակցությամբ լուսարանելու առարկեզում այժմ կատարվող աշխատանքը, հատկապես Սովետական Ռուսաստանում, նոր, մեծ հաջողություններ է ձևաք բերում: Պետք է հուսալ, որ սովետական երաժշտագիտությունը և նրա մի մասը կազմող հայկական սովետական երաժշտագիտությունը կլուծեն ժողովուրդների միջնադարյան երաժշտական կուլտուրայի ուսումնասիրության այդ դժվարին հարցը և մասնավորապես հայկական խաղերի վերծանման զործը:

## К ВОПРОСУ О ПРОИСХОЖДЕНИИ И РАЗВИТИИ СИСТЕМЫ ХАЗОВ

### (Резюме)

Начало употребления невменной нотации в армянской музыке датировалось концом XII века, а хазы (невменные знаки) считались привнесенными в Армению из Византии.

Отсюда естественно возникало ни к чему не приведшее стремление подставлять под хазы значения византийских невм. Изучение фрагментов №№ 512, 1378, 461, 494 и др. Госуд. Хранилища Древних Рукописей при Совете Министров АССР (Матенадарана) на основе палеографических данных достаточно убедительно доказывает, что в Армении хазы применялись уже в IX веке (найлены фрагменты рукописей IX, X, XI, XII веков, на которых имеются хазы).

Вместе с тем, архаичность знаков в древнейших фрагментах, не схожих

по начертанию с византийскими невмами, а равно и первоначальная несовершенство системы, и ее дальнейшее самостоятельное развитие указывают на то, что система хазов не была принесена в Армению из Византии или из другого места, а возникла и развилась на почве армянской музыкальной культуры.

Известно, что до сих пор хазы считались атрибутом лишь только церковного пения. Теперь же удается доказать, что армянское средневековое музыкальное письмо охватывало также и светскую музыку. Найденные многие разновидности светской песни (таги: лирические, сатирические, застольные, и пр.) записаны хазами.

Уточнение времени употребления нотации в армянской музыке, и выяс-

нение обстоятельств ее возникновения и развития имеют огромное значение в деле освещения истории средневековой армянской музыкальной культуры. Помимо этого, вновь открытые записи

значительно помогут осветить также ряд вопросов, имеющих конкретное отношение к изучению этой, пока не поддающейся к расшифровке древне-армянской нотной системы.

Խ. ԳԱԼՖԱՅԱՆ

ԺԵԼԱՏԻՆԱՅԻՆ ԱՄՐԱՑՆՈՂ ԼՈՒԾՈՒՅԹԸ ԵՎ ՆՐԱ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՅՔԱՅՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն

Հայտնի է, որ թղթի գյուտի ժամանակաշրջանից մինչև մեր օրերը, որպես թղթի մակերեսը ամրացնող նյութ, գլխավորապես կիրառվել են կենդանական սոսինձը, ապա օսլան և կամ այդ երկուսի խառնուրդը: Միայն վերոհիշյալ նյութերի թանգուլյան պատճառով 19-րդ դարի երկրորդ կեսից որպես սոսնձանյութ սկսում է օգտագործվել նաև կանիֆոլային լուծույթը, որն անմիջապես խառնվում է թղթի մասսայի մեջ:

Թղթի մակերեսը՝ սոսնձով կամ ժելատինային լուծույթով մշակելիս, ձևաք է բերում մեխանիկական ամրություն և ճկունություն. ստացվում է մաքուր ու հարթ մակերես: Սոսինձը թույլ չի տալիս, որ գրելիս թանաքը հոսի, սահի կամ ճապաղի թղթի վրա:

Թղթի ամրությունը բարձրացնելու նպատակով գիտնականների կատարած մի շարք փորձերը ցույց են տվել, որ թուղթը մաքուր կենդանական սոսնձով սոսնձապատելիս, նրա ամրությունն ավելանում է 48,6 տոկոսով, կենդանական սոսնձի ու օսլայի խառնուրդով սոսնձապատելիս՝ 30,2 տոկոսով, իսկ միայն օսլայով սոսնձապատելիս՝ 14,8 տոկոսով:

Միջնադարյան հայ գրիչները ևս թողել են թղթի ամրացնող մի քանի դեղատոմսեր: Մատենադարանի № 2191 ձեռագրի 155ր էջում կարդում ենք.

«Դարձեալ դեղ Մագաղաթի, որ լաւ գիր առնելու և գիրն ամրոզջ մնա.

Զսպիտակաղեղն (շիր) և զգազի խէժն և ձկան սոսինձն միասին թրջէ և արորէ և

սպիտակաղեղն ի ներս խառնէ և լաւ սերտ փափկէ, քսակ լից և զբերանն պինդ կապէ և սրպէս կիր ի մաղաղաթ քսէ մին-մին երես և թող ցամքի, գրէ»:

Մերոպ Աղաչարյանը իր «Համառոտ արվեստաբանություն և նորանոր հնարք» գրքում (1830 թ.) նկարագրելով թուղթը, չուխան, կտավը, բուրդը, բամբակը և կանեփը ջրից անթափանցելի դարձնելու պրոցեսը, ասում է. «Բայց ամեն տեսակ թղթու համար հալեցու 32 դրամ ճերմակ օճառ, ութ օխա անուշ ջրի մեջ և 190 դրամ պաղլեղ (շիր) և 64 դրամ սոսինձ (թուղթիս) 16 դրամ խեժ արարիոյ (զամխ արապի), որոնք հալած ըլլան բավական ջրով առաջուց. այս մասերը միացուր, խառնէ օճառին ջրին հետ, թաթխէ հին թղթերն՝ քիչ մը տաքացնելէն ետև»:

ՍՍՌՄ-ի Գիտությունների Ակադեմիային կից կոնսերվացիոն և պատմա-գիտական լաբորատորիայում 1939 թվին օգտագործվել է ժելատինային լուծույթը՝ հին թղթերը ամրացնելու համար: Ըստ գրականության<sup>1</sup> տվյալների այդ լուծույթը ունի հետևյալ բաղադրությունը: Ժելատին՝ 1—2 տոկոս, լավորակ օճառ (յաղրովոյ միլոն)՝ 1—2 տոկոս և ժելատինային լուծույթի՝ 1/3-ի չափով, 0,25 տոկոսանոց շիբի լուծույթ. միաժամանակ նշվում է, որ շիբի լուծույթը կարելի է ցանկալի է փոխարինել ֆորմալինով, որը կազմի չոր ժելատինի 0,1 տոկոսը:

Խոսելով վերոհիշյալ լուծույթի թղթի

<sup>1</sup> Труды лаборатории консервации и реставрации документов, т. 1, стр. 49.

վրա ունեցած դրական և բացասական ազդեցությունների մասին՝ մասնագետները նշում են, որ 55—60 տարեկան թղթերը այդ լուծույթով մշակելուց հետո՝ նրանց չջարդվողականությունը ավելացել է 18—20 անգամ, իսկ 36—40 տարի հասակ ունեցողներինը՝ 5—6 անգամ:

Այսպիսով՝ փորձերը ցույց են տվել, որ ավելանում է նաև պատուվելու դիմադրությունը՝ 4—5 անգամ: Իսկ բացասական կողմն այն է, որ թուղթը որոշ չափով փոխում է իր դույնը:

Հին ձեռագրերի թղթի սեռատվրացիայի ժամանակ՝ թղթի ամբայման զուգընթաց պետք է ուսումնասիրվի նաև փորձարկվող լուծույթների ազդեցությունը տեքստերի և մանրանկարների ներկերի վրա:

Ինչպես հին, այնպես էլ արդի դրականությունից հայտնի է, որ քայքայված արխիվային փաստաթղթերի ու թերթերի մեխանիկական ամրությունը բարձրացնելու նպատակով, զանազան մասնագետների կողմից փորձարկվել են կալցիումի սեզինատը (Резинат кальция), կապարի լինոլեատը (Пропитка линолеатом свинца), բիտամինոզային էմուլսիաներ (Пропитка битуминозными эмульсиями), մոմային էմուլսիաներ (Восковые эмульсии), զանազան յուղային լակեր, լատեքս և այլն:<sup>1</sup>

Ելնելով վերոհիշյալից, անհրաժեշտ համարեցինք հին տպագիր գրքերի քայքայված թերթերը փորձարկել բենզոլինով և բենզոլով պատրաստված 2—7 տոկոսանոց սինթետիկ, 1—4 տոկոսանոց բնական կաուչուկների լուծույթներով ու 2, 3 և 4 տոկոսանոց ժելատինային լուծույթներով:

Մեր կատարած փորձերը ցույց տվին, որ կաուչուկային լուծույթով մշակած թերթերի պատման ցուցադրած դիմադրությունը (сопротивление на разрыв) ավելանում է 2,5-ից մինչև 5,5 անգամ. բայց բացասական կողմն այն է, որ թղթի դույնը խիստ փոխվում է, ուլտրամանուշակագույն ճառագայթների կամ ջերմության ազդե-

ցություն տակ, նա ուժգնորեն հնանում է և կորցնելով իր էլաստիկությունը, սկսում է ջարդոտվել. մինչդեռ ժելատինային լուծույթով մշակած թերթերում վերոհիշյալ բացասական երևույթներն այնքան քիչ են, որ դժվարությամբ են նկատվում:

Փորձերը մեզ բերին այն եզրակացություն, որ նշված լուծույթներից ամենանպատակահարմարը վերոհիշյալ ժելատինային լուծույթն է, և այդ պատճառով մենք մեր ուշադրությունը կենտրոնացրինք հատկապես այդ լուծույթի վրա:

\* \* \*

Մեր կողմից փորձարկված ժելատինային լուծույթի բաղադրությունն է՝

1. ժելատին	2,0 տոկոս
2. Լավորակ օձառ	2,0 »
3. Գլիցերին	1,5 »
4. Ֆորմալին (40%)	1,0 »
5. Ջուր	93,5 »

3 և 4 տոկոս ժելատինի լուծույթների գեպքում, փոփոխություն են ենթարկվում միայն ժելատինի ու ջրի քանակները, իսկ մնացած բաղադրուցիչ մասերը մնում են նույնը:

Այս լուծույթում ժելատինն օգտագործվում է որպես սոսնձանյութ, որը միմյանց է միացնում քայքայված թղթերի մազիկներն ու այդպիսով ամբայնում այն: Օձառը՝ հանդիսանալով էմուլգատոր, թույլ չի տալիս, որ թերթերը լուծույթով մշակելուց հետո՝ մամլիչով մամլելիս, միմյանց կաշեն, լվանում ու մաքրում է թերթերի վրա եղած կեղտը, լինելով հիդրոսկոպիկ նյութ, թղթում պահում է որոշ քանակի խոնավություն, որի հետևանքով թերթերն ստանում են ճկունություն, առաձգականություն: Գլիցերինը նույնպես հիդրոսկոպիկ նյութ է և կիրառվում է մշակված թերթերը փափուկ ու ճկուն պահելու նպատակով, իսկ ֆորմալինը դարադող և միաժամանակ դեզինֆեկցիոն նյութ է, ուստի այդ նպատակով էլ կիրառվում է:

<sup>1</sup> Труды Лаборатории консервации и реставрации документов, т. I, стр. 49, 1939 г., Л.-Д.

ԺԵԼԱՏԻՆԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

ժելատինը 12—16 ժամ պահել ենք ջրի մեջ, այդ ժամանակամիջոցում ջուր ներծծելով՝ նա դարձել է հեշտ լուծելի: Ժելատինը վերջնականապես լուծելու համար տաքացրել ենք ջրային բաղնիսում 50—60°-ի տակ, ապա վրան ավելացնելով գլիցերին և խառնելուց հետո՝ պահել առանձին: Մի այլ անոթում լուծել ենք օձառը: Ժելատինի և օձառի լուծույթները մառլայով քամել ենք մի ընդհանուր վաննայի մեջ՝ ավելացնելով համապատասխան քանակի ֆորմալին՝ խառնել ու նրանով մշակել ենք թերթերը: Մշակումը սկսել ենք լուծույթի 45°-ում և վերջացրել 45—32° ինտերվալում:

Նկատի ունենալով, որ մեր փորձարկած թղթերը հին, չափազանց կեղտոտ են և վարակված զանազան բակտերիաներով ու բորբոսի սնկերով, նախ քան փորձի կատարումը՝ անհրաժեշտ համարեցինք մշակվող թերթերը նախօրոք ֆորմալինով դեզինֆեկցիայի ենթարկել և բամբակով մեխանիկորեն մաքրել:

Չնայած նշված միջոցառումներին, այնուամենայնիվ, թերթիկները բավականաչափ կեղտոտում ու գունափոխում էին լուծույթը: Հաշվի առնելով այս հանդամանքը և այն երևույթը, որ դարադող նյութերը զանազան սպորաներով ժելատինի վրա ու մակարդելով այն, դարձնում են ջրում անլուծելի (իսկ նման լուծույթը չի կարող պեպե հղած դրական ազդեցությունը թողնել թղթի վրա), մենք այդ լուծույթից պատրաստում ենք 500—600 միլիլիտր միայն, որի մեջ մշակում ենք 20—25 թերթ:

Լուծույթը տաք վիճակում կկարողանաներ թափանցել նաև թղթի խորքը և կգրավի նրա բջիջների քայքայումից առաջացած դատարկ տարածությունը ու միմյանց հետ կկապի թղթի ներսում սզջ մնացած մազիկները: Փորձի համար վերցրել ենք 19-րդ դարի առաջին կիսամյակում տպագրված մի տպագիր գիրք, որի թերթերը բավականաչափ քայքայված էին, և մակերեսը պատած էր մուգ բալի գույնի պիգմենտներով:

Փորձերը կատարելիս, մենք առաջնորդվել ենք թղթի արդյունաբերության մեջ գոյություն ունեցող փորձարկման ստանդարտներով, որի համաձայն փորձարկվող թերթիկները պեպե է ունենան 15 միլիմետր լայնություն և 180 միլիմետր երկարություն:<sup>1</sup>

Միջին դիմադրությունը և միջին ձգելիությունը (растяжимость), որոշելու համար օգտագործել ենք ութական թերթիկ, որոնցից չորսը ըստ լայնական կտրվածքի և չորսն ըստ երկայնական կտրվածքի:

Սոնավության քանակը փորձից առաջ և հետո որոշելու համար օգտագործվել է չորացնող պահարան, որի ջերմաստիճանը տատանվել է 105—110° Ց. էքսպոզիցիայի 4 ժամ տևողությամբ:

Փորձարկվող թերթիկները փորձից 5 ժամ առաջ բերվել են լարորատորիա և գտնվել են 20° Ց. ջերմության և 43—50 տոկոս հարաբերական խոնավության տակ լարորատոր պայմաններում:

\* \* \*

Մատենագրանի լարորատորիայում մեր կատարած փորձերը մեզ բերին հետևյալ արդյունքների՝

1. Փորձարկվող թուղթը պատրաստված էր բամբակից:
2. Մակերևույթային ռեակցիան չեղոք էր:
3. Միկրոբիոլոգիական և միկոլոգիական անալիզները ցույց տվին, որ գիրքը վարակված է եղել Penicillium բորբոսի սնկերով և բորբոսը դադարել էր դործելուց՝ համապատասխան պայմաններ չլինելու պատճառով:
4. ա) Սոնավության քանակը լուծույթով մշակելուց առաջ կազմում էր 2,8% (տես աղյուսակ № 1) իսկ լուծույթով մշակելուց հետո կազմում է 3.35, 3.6 ու 4,82 տոկոս՝ երբ վերցրած 2, 3 և 4 տոկոսանոց ժելատինի լուծույթների ջերմաստիճանը տատանվում է 45—32°-ի սահմանում և 2.46, 2.87 ու 4.24 տոկոս, երբ լուծույթների ջերմաստիճանը տատանվում է 32—22°-ի սահմանում:

<sup>1</sup> Иванов, Испытания бумаги.

Լուծույթով չմշակած թերթիկների պարունակած խոնավության քանակը

Աղյուսակ 1

Թ ե Ր Թ Ի Կ ն ե Ր Ի

№ № բառ կարգի.	Սկզբնական կշիռը գրամ.	Կշիռը չորացնելուց հետո գրամ.	Սոսնավության քանակը գրամ.	Սոսնավության %	Սոսնավության միջին %
1	2,051	1,982	0,069	3,37	2,8
2	2,203	2, 16	0,043	1,95	
3	2,220	2,155	0,065	2,93	
4	2,337	2,272	0,065	2,78	
5	2,301	2,233	0,068	2,96	

Համաձայն մի շարք հեղինակների փորձերի և թղթի արդյունաբերության մեջ գոյություն ունեցող ստանդարտների, 70 տոկոս հարաբերական խոնավության առկայության դեպքում թուղթը պետք է պարունակի 5—7 տոկոս խոնավություն: Բայց ինչպես վերը նշել ենք, մեզ մոտ օդի ջերմաստիճանը սահմանվածից բարձր է եղել (մինիմումը պետք է լինի 13, իսկ մաքսիմումը 18), իսկ հարաբերական խոնավությունը ցածր, ուստի բնական է, որ փորձարկվող թղթի պարունակած խոնավությունն էլ պետք է ցած լինի:


Տարբեր տոկոսանոց և տարբեր ջերմաստիճանում գտնվող լուծույթներում մշակվելուց հետո՝ թերթիկների պարունակած խոնավության քանակն արտահայտած միջին տոկոսներով, ցույց է արված № 1 դիագրամայում:

Ըստ այս տվյալների 32—22° ջ. ջերմություն ունեցող 2 տոկոսանոց լուծույթով մշակած թերթիկներն ավելի քիչ խոնավություն են պարունակում, քան չմշակված թերթիկները: Լուծույթի տակտի բարձրացման զուգընթաց բարձրանում է թերթիկների պարունակած խոնավության քանակը, և բարձր ջերմաստիճան ունեցող լուծույթով մշակված թերթիկների պարունակած խոնավությունն ավելի բարձր է, քան ցածր ջերմաստիճանի լուծույթով մշակած թերթիկների, չնայած այն հանգամանքին, որ երկու դեպքում էլ թերթիկները մշակ-

2—4 տոկոսանոց լուծույթով մշակված թերթիկների պարունակած խոնավության կորագիծ

խոնավության %-Ը

խոնավության %-Ը



Նկ. 1

վել են միաժամանակ և նույնանման պայմաններում:


Այս հանդամանքի վրա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, քանի որ չափավոր խոնավությունը հանդիսանում է թղթի ամրության գործոններից մեկը:

Փորձից ստացված արդյունքները, որոնք արտահայտվում են ստորև բերված № 2 կորագծով՝ ցույց տվեցին, որ երբ թերթիկները մշակված են 45—32° ջ. ջերմություն ունեցող 2, 3 և 4 տոկոսանոց լուծույթով, նրանց կշիռները համապատասխանորեն ավելանում է 5.41, 9.75 և 10.01 տոկոսով, իսկ 32—22°-ի դեպքում՝ 6,2—10,38 և 14,1 տոկոսով:

Հայտնի է, որ լուծույթները բարձր ջերմաստիճանում ավելի նոսր են լինում, քան ցածր ջերմաստիճանում, ուստի զարմանալի չէ, որ առաջին դեպքում թերթիկների կշիռն ավելի քիչ տոկոսով է բարձրանում՝ քան երկրորդ դեպքում:

Այսպիսով՝ մի կողմից լուծույթի համեմատական քիչ քանակը, մյուս կողմից բարձր ջերմաստիճանում նրա նոսր լինելը նպաստում են թղթի համեմատաբար նուրբ ու համաչափ թաղանթապատմանը, որի հետևանքով լուծույթի 45—32° ջ.-ի դեպքում տեքստն ավելի լավ ընթեռնելիություն է

2-4 տակսանոց լուծույթով մշակած թերթերի կշռի ավելացման կորագիծ



Նկ. 2

ունենում, քան լուծույթի 32—22° Ց.-ի դեպքում:

Թերթիկների ցուցադրած դիմադրութեան և ձգելիութեան աճի մասին պատկերացում ստանում ենք ստորև բերված աղյուսակի և նրանից որպես հետևանք ստացված կորագծերի միջոցով:

Այս աղյուսակը և կորագծերը ցույց են տալիս, որ եթե չմշակված թերթերի ցուցադրած միջին դիմադրութեանն ու ձգելիութեան ունակութեանը ընդունենք հավասար 100 տոկոսի, ապա մշակվածների ցուցադրած դիմադրութեանը հաջորդաբար կլինին՝ 257, 549 և 650 տոկոս, երբ լուծույթի ջերմաստիճանը տատանվում է 45—35° Ց. միջև և՛ 172, 522, 537 տոկոս, երբ լուծույթի ջերմաստիճանը տատանվում է 32—22° Ց. միջև:

Նա միաժամանակ ցույց է տալիս, որ նույն պայմաններում ձգելիութեան աճը կազմում է 165, 452 և 590 տոկոս առաջին դեպքում և 105, 378 և 492 տոկոս երկրորդ դեպքում:

Ինչպես տեսնում ենք, լուծույթի ջերմաստիճանի բարձրութեան դեպքում բարձր

են լինում նաև թերթիկների ցուցադրած դիմադրութեանը և ձգելիութեանը: Դա ավելի ցայտուն կերպով երևում է № 3 և № 4 կորագծերից:

Վերոհիշյալ ավյալներից և պրակտիկ հետևանքներից մենք կարող ենք հանդել հետևյալ եզրակացութեան:

ա) լուծույթի խտութեան մեծացման դեպքում մեծանում է նաև նրա մածուցիկութեանը և նա նուրբ ու միասպաղաղ թաղանթ չի կազմում, որի հետևանքով խամբում է ձեռագրի տեքստը և դժվար ընթեռնելի է դառնում, իսկ մյուս կողմից՝ լուծույթը հաստ շերտով է թաղանթապատում թուղթը, որը չորանալուց հետո ձկունութեան չի ունենում և հեշտութեամբ ջարդվում է:

բ) Լուծույթի մածուցիկութեանը փոքրացնելու նպատակով նրա ջերմաստիճանն ավելի բարձրացնել հնարավոր չէ, քանի որ 45°-ից բարձր ջերմաստիճանում քայքայված ձեռագրերի թերթիկները կարող են գլղղվել ու փշանալ: Մյուս կողմից այս պայմանում ևս կրկնվում է անհավասարաչափ թաղանթապատման և տեքստի խամբման երևույթը, որը որոշ չափով կապ ունի անհավասարաչափ մամլման և չորացման պրոցեսների հետ:

Հայտնի է, որ ուլտրամանուշակագույն ճառագայթները և ջերմութեանը թղթում առաջացնելով ֆիզիկո-քիմիական պրոցեսներ, աստիճանաբար քայքայում են նրան, որի հետևանքով թուղթը դեղնում, չորանում և սկսում է փշրվել: Այս տեսակետից մենք ցանկացանք պարզել, թե ինչպես կազդեն ուլտրամանուշակագույն ճառագայթները և ջերմութեանը չմշակված ու քայքայված և տարբեր տակսանոց լուծույթներով մշակված թղթերի վրա. քանի՞ տոկոսով կնվազեցնեն նրանց դիմադրողականութեանը և ձգելիութեանը, ո՞ր դեպքում անկման տակոսը մեծ կլինի: Վերոհիշյալ գործոնների ազդեցութեանից հետո մշակված թղթի դիմադրողականութեանը և ձգելիութեանը ինչպիսի՞ փոխարարներով թեյան մեջ կդանվեն անմշակ թղթի նախ-




2, 3 և 4 տողաանոց ժելատինային լուծույթով մշակած թերթերի ցուցադրած դիմադրության անը՝ դրամներով և ձգելիության անը՝ միլիմետրով, շմշակվածների համեմատությամբ:


Աղյուսակ 2

№ ըստ կարգի	Չմշակված		Մշակ. 20% լուծ.		Մշակ. 30% լուծ.		Մշակ. 40% լուծ.							
			Ջերմաստ. 45-32		Ջերմաստ. 32-22		Ջերմաստ. 45-32		Ջերմաստ. 32-22		Ջերմաստ. 45-32		Ջերմաստ. 32-22	
	Գիմ.	Չգել.	դիմ.	ձգել.	դիմ.	ձգել.	դիմ.	ձգել.	դիմ.	ձգել.	դիմ.	ձգել.	դիմ.	ձգել.
<b>Թղթի ընդերկայնական կտրվածքի դեպքում</b>														
1	700	0,6	1600	1,0	950	0,45	3400	2,2	3500	1,8	4400	2,3	3500	2,55
2	500	0,45	1300	0,7	1100	0,48	3220	1,95	3800	1,9	3020	2,0	2500	2,1
3	300	0,3	1600	1,1	700	0,25	3100	1,9	2800	1,2	3980	2,2	2850	2,6
4	500	0,6	1080	0,5	800	0,38	3500	1,95	3280	1,4	4300	3,1	2350	1,0
Գում.	2000	1,95	5580	3,3	3550	1,56	13220	8,0	13380	6,3	15700	9,6	11200	7,25
<b>Թղթի ընդլայնական կտրվածքի դեպքում</b>														
1	700	0,55	1300	0,5	670	0,35	2720	1,5	1970	1,7	2200	2,2	2600	2,1
2	450	0,36	1200	0,5	850	0,65	1560	1,1	1700	1,7	2300	2,2	2300	2,2
3	200	0,15	900	0,5	700	0,4	1820	1,9	2000	1,4	2420	2,6	2400	2,2
4	500	0,2	900	0,5	830	0,42	1800	2,0	1300	1,95	2380	2,25	2180	2,0
Գում.	1850	1,28	4300	2,0	3050	1,82	7900	6,5	6970	5,75	9300	9,25	9480	8,5
Ընդ.	3850	3,28	9880	5,3	6600	3,38	21120	14,5	20350	12,05	28000	13,85	20680	15,75
Միջ.	481	0,4	1235	0,66	825	0,42	2640	1,81	2546	1,51	3125	2,36	2585	1,97
Տոկ.	100	100	257	165	172	105	549	452	522	378	650	590	537	492

2, 3, և 4 տողաանոց ժելատինային լուծույթով մշակած թերթիկների ցուցադրած դիմադրության և ձգելիության անը կտրագիծ




Նկ. 3



Նկ. 4

նական դիմադրության և ձգելիության հետ: Այս հարցերի պատասխանը մեզ տալիս են ստորև բերված 5, 6 7 և 8-րդ կորագծերը:

Ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության տակ դիմադրության և ձգելիության անկման կորագիծ



Վերոհիշյալ կորագծերից երևում է, որ՝  
 ա) Ջերմության և ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության տակ ընկնում է թե լուծույթով մշակված և թե չմշակված թերթերի ցուցադրած դիմադրությունն ու ձգելիությունը:

բ) Չմշակված թերթերը ջերմության ազդեցության տակ ավելի մեծ տոկոսով են կորցնում իրենց դիմադրողականությունը և ձգելիությունը, քան մշակվածները:

գ) Որքան մեծանում է ջերմության ազդեցության տևողությունը, այնքան մեծանում է դիմադրողականության անկման տոկոսը և ընդհակառակն՝ որքան մեծանում է լուծույթի կոնցենտրացիան, այնքան փոքրանում է դիմադրողականության անկման տոկոսը:

դ) Որքան մեծանում է ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդման տևողությունը, այնքան մեծանում է դիմադրողականության անկումը:

ե) 20 ժամ ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության ենթարկելուց հետո լուծույթով մշակված թերթերի ցուցադրած դիմադրությունը 2—5 անգամ, իսկ ձգելիությունը 1,5—3,5 անգամ ավելի մեծ են, քան նախնական վիճակում եղած ժամանակ:

Ստորև բերում ենք հետազոտության ընդհանուր ավյալների ամփոփումները երկու աղյուսակներով. նրանցից № 3 ցույց է տալիս դիմադրության փոփոխությունը, իսկ № 4 ձգելիության փոփոխությունը:

Փորձարկված բամբակե թղթի ցուցադրած միջին զիմադրության անկումը ըստ Աղյուսակ 3  
 № 2 աղյուսակի և №№ 5, 6, 7 և 8 կորագծերի:

Ձև մաս կարգի	Ժելատինային լուծույթով մշակված և շմշակված հին թուղթը	Նախնական վիճակում	Թ զ թ ի վ ի ճ ա կ ր								
			Ենթարկված է ութորամանուշ. ճառ. աղղեցության				Ենթարկված է ջերմության աղղեցության				
			10 ժամ	20 ժամ	72 ժամ	144 ժամ	10 ժամ	20 ժամ	72 ժամ	144 ժամ	
			Ցուցադրած զիմադրությունը								
		զրամ	տոկոս	զրամ	տոկոս	զրամ	տոկոս	զրամ	տոկոս	զրամ	տոկոս

Չմշակված և մշակված թերթերի ցուցադրած զիմադրության պակասումը՝ իրենց նախնական զիմադրության համեմատությամբ


1	Չմշակ. հին թուղթ	481	100	462	96	440	92	302	63	276	57
2	Մշակ. 2 <sup>0</sup> / <sub>0</sub> լուծ.	1235	100	1100	89	1044	85	972	79	932	76
3	> 3 <sup>0</sup> / <sub>0</sub> >	2640	100	2297	87	2130	81	2504	95	2149	81
4	> 4 <sup>0</sup> / <sub>0</sub> >	3125	100	2767	89	2437	78	2930	94	2679	85

Ցուցադրած միջին զիմադրությունը՝ շմշակված հին թղթի համեմատությամբ

1	Չմշակ. հին թուղթ	481	100	462	96	440	92	302	63	276	57
2	Մշակ. 2 <sup>0</sup> / <sub>0</sub> թուղթ	1235	257	1100	230	1044	217	972	202	932	195
3	> 3 <sup>0</sup> / <sub>0</sub> >	2640	549	2297	478	2130	443	2504	522	2149	447
4	> 4 <sup>0</sup> / <sub>0</sub> >	3125	650	2767	575	2437	507	2930	609	2679	557

ՅԳԵՎՈՐԿԱՆ  
անկման  
%-Ը

ՅԳԵՎՈՐԿԱՆ  
անկման  
%-Ը



— չմշակված  
 - - - մշակված 3% ու լուծույթով  
 - . . . մշակված 4% լուծույթով  
 — — — մշակված 3% լուծույթով  
 . . . . . մշակված 4% լուծույթով

№ 6

Ճառագ. աղղեցության փոփոխությունը

Փորձարկված բամբակե թղթի ցուցադրած միջին ձգելիությունն ըստ № 2 աղյուսակի և №№ 5, 6, 7 և 8 կորագծերի.

Աղյուսակ 4

№№ ըստ կարգի	ժելատինային լուծույթով մշակված և շմշակված հին թուղթը	Նախնական վիճակում	Թ Ղ Թ Ի Վ Ի Տ Ա Կ Ը									
			Ենթարկված է ուլտրամանուշակույթի ազդեցության				Ենթարկված է ջերմության ազդեցության					
			10 ժամ	20 ժամ	72 ժամ	144 ժամ	10 ժամ	20 ժամ	72 ժամ	144 ժամ		
			Ձգելիության անկումը									
			մմ-ով	տոկոս	մմ-ով	տոկոս	մմ-ով	տոկոս	մմ-ով	տոկոս	մմ-ով	տոկոս

Չմշակված և մշակված թերթերի ցուցադրած ձգելիության անկումը՝ իրենց նախնական ձողողունակության համեմատությամբ

1	Չմշակ. հին թուղթ	0, 4	100	0,36	89	0, 32	98	0,275	69	0,28	70,0
2	Մշակ. 2 <sup>0</sup> / <sub>0</sub>	0,66	100	0,36	92,0	0,526	80,0	0, 49	74,0	0, 5	76,0
3	» 3 <sup>0</sup> / <sub>0</sub>	1,81	100	1,76	97,0	1, 56	86,0	1, 11	61,0	0,99	55,0
4	» 4 <sup>0</sup> / <sub>0</sub>	2,36	100	2,27	96,0	1, 75	74,0	1, 55	66,0	1,35	57,0

Միջին ձողողունակությունը՝ շմշակված հին թղթի համեմատությամբ

1	Չմշակ. հին թուղթ	0, 4	100	0,36	90	0,39	98	0,275	69	0,28	70
2	Մշակ. 2 <sup>0</sup> / <sub>0</sub>	0,66	165	0,67	152	0,52	130	0, 49	122	0, 5	125
3	» 3 <sup>0</sup> / <sub>0</sub>	1,81	452	0,76	440	1,56	390	1, 11	277	0,99	267
4	» 4 <sup>0</sup> / <sub>0</sub>	2,36	590	2,27	567	1,75	437	1, 55	337	1,35	337

Այս աղյուսակներից յուրաքանչյուրը բաժանվում է երկու մասի: Նրանցից վերի մասը ցույց է տալիս դիմադրության կամ ձգելիության անկումը ջերմության կամ ուլտրամանուշակազույն ճառագայթների ազդեցությանը ենթարկելուց առաջ, իսկ ցածր մասը ցույց է տալիս դիմադրության կամ ձգելիության աճը շմշակված թղթի նախնական վիճակի համեմատությամբ (չնայած ջերմության և ուլտրամանուշակազույն ճառագայթների ազդեցության):

Վերոհիշյալ փորձերը մեզ բերին հետևյալ կարևորագույնություններին.


ա) Որքան մեծ է լինում լուծույթի կոնցենտրացիան և ցածր է նրա ջերմաստիճանը, այնքան թերթերի դոնափոխումը մեծ է լինում: Նույնը կատարվում է ջերմության և ճառագայթների ազդեցության տևողության աճման պայմաններում:

բ) Մատենադարանի լաբորատորիայի կողմից կատարած միկրոբիոլոգիական և

միկոլոգիական անալիզները ցույց տվին, որ սրպես դարադող և գեղինֆեկցիոն նյութ ֆորմալինը կիրառելիս, բարբոսի սեկերն ու նրանց սերմիկները ոչնչանում են, իսկ կալիում ալյումինումի արճասուր՝  $(KAlSO_4)_2$  կիրառելիս լրիվ չեն ոչնչանում:

գ) Լուծույթի դրական կամ բացասական ազդեցությունը տեքստի և մանրանկարների վրա ստուգելու նպատակով, վերոհիշյալ բաղաձայնի փորձերից հետո՝ 1946 թ. փետրվարին, 2 տոկոսանոց ժելատինային լուծույթով մշակեցինք մի քանի առանձին արժեք չունեցող պատատիկներ և կիսաքայքայված վիճակում գտնվող № 264 ձեռագիր ավետարանը, որն ունի նաև մանրանկարներ: Մշակելուց հետո՝ ինչպես մանրանկարները, այնպես էլ տեքստը՝ լվացվելով դարավոր փոշուց ու կեղտից՝ թարմացան, պայծառացան և մինչև օրս էլ գտնվում են այդպիսի վիճակում, ուստի կարելի է ասել, որ այդ թարմությունն ու պայծառությունը ժամանակավոր բնույթ չեն կրում:

Ջերմության ազդեցության տակ դիմադրության հատկության անկման կորագիծ



— հնչակված  
 --- Տշակված 2% ուղ լուծույթով  
 -.-.- Տշակված 3% լուծույթ.  
 ..... Տշակված 4% լուծույթ.


դ) Մեզ մոտ եղած թղթերի որակի, հնության և քայքայվածության բազմազանության հետևանքով լուծույթում ժելատինի քանակը կարող է տատանվել 2—4 տոկոսի սահմաններում:

ե) Լուծույթը առայժմ տեսանելի հետքերով բացասականորեն չի ազդում տեքստի և մանրանկարների վրա: Նա, լվանալով, մաքրում է թերթերի վրա եղած փոշին, անձրևի ջրի հետ նրանց վրա թափված դանազան աղերը, բորբոսի սնկերի կամ բակտերիաների թողած հետքերը և այդպիսով՝ թարմացնելով տեքստն ու մանրանկարները, այն դարձնում է դյուրընթե-

նելի: Ինչ վերաբերում է թղթի գունափոխմանը, ապա դա ավելի սրոշակի նկատվում է նոր թղթերի դեպքում, իսկ ձեռագրերում այդ երևույթը նկատվում է շատ թույլ կերպով, հաճախ միանգամայն աննկատելի, քանի որ մշակված ձեռագրերն առանց այն էլ կորցրել են իրենց նախնական տեսքը:

զ) 2—4 տոկոսանոց լուծույթների ջերմության 45—32°-ի դեպքում լուծույթներն ավելի խոր են ներծծվում հին ու փշացած թղթերի խորքը և կապում անջատված մազիկները, քան նույն լուծույթների ջերմության 32—22°-ի դեպքում, որի հետևանքով բարձր լուծույթով մշակված թերթիկների

Ջերմության ազդեցության տակ ձգելիության անկման կորագիծ



N° 8

— չճշակված  
 --- ճշակված 2% ուղ  
 Լուծույթով

--- ճշակված 3% լուծույթ.  
 ..... ճշակված 4% լուծույթ.

ցուցադրած դիմադրության աճը կազմում է 257—650 տոկոս, իսկ ձգելիության աճը 165—590 տոկոս (աղ. № 2):

է) 1—2 տոկոս դիֆերին մացնելիս՝ թուղթն ավելի փափուկ, առաձգական և ճկուն է դառնում:

բ) 2—4 տոկոսանոց լուծույթների ջերմության 45—32°-ի դեպքում մշակված թերթիկների պարունակած խոնավությունը բարձրանում է 3,35-ից 4,82 տոկոսի, ի դիմաց չմշակված թերթիկների պարունակած 2,8 տոկոսի: (Տես դիագրամա № 1):

թ. Ուլտրամանուշակագույն ճառագայթների և ջերմության ազդեցության տակ

նվազում է ինչպես լուծույթով մշակված, այնպես էլ չմշակված թերթիկների ցուցադրած դիմադրությունն ու ձգելիությունը, դուրսափոխվում և հնանում է փորձարկվող թուղթը (աղ. № 2): Բայց, չնայած վերոհիշյալ հանգամանքներին, ամենավատագույն դեպքում՝ անգամ, լուծույթով մշակված թղթի ցուցադրած դիմադրությունը 2-ից 5,5 անգամ և ձգվելու ունակությունը 1,25—3,5 անգամ մեծ է սկզբնական վիճակում գտնվող թղթի ցուցադրած դիմադրությունից ու ձգվելու ունակությունից:

ժ) Շնորհիվ լուծույթի բաղադրության

մեջ եղած ֆորմալինի, թղթերը միաժամանակ ենթարկվում են դեզինֆեկցիայի և ամենատուր կերպով հիվանդացած ձեռագրերի վրայի բորբոսի սնկերն անգամ ոչնչանում են:

Ելնելով վերահիշյալից՝ մենք գտնում ենք, որ հնարավոր է և անհրաժեշտ ժելատինային ամրացնող լուծույթը կիրառել Մատենադարանի և առհասարակ քայքայված, ըզլաված ձեռագրերի ու սպաղիր գրականության թերթերն ու տեքստերը ամրացնելու և նրանց կյանքը ըստ հնարավորին կրկարացնելու համար:

ախնային ամրացնող լուծույթը կիրառել Մատենադարանի և առհասարակ քայքայված, ըզլաված ձեռագրերի ու սպաղիր գրականության թերթերն ու տեքստերը ամրացնելու և նրանց կյանքը ըստ հնարավորին կրկարացնելու համար:

## ЖЕЛАТИНОВЫЙ УКРЕПЛЯЮЩИЙ РАСТВОР И ЕГО НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ПРИ ОБРАБОТКЕ РАЗРУШЕННЫХ РУКОПИСЕЙ ДЛЯ ИХ КОНСЕРВАЦИИ

### (Резюме)

Для укрепления древних бумаг применяется желатиновый раствор следующего состава: 1) желатин 2%, 2) ядровое мыло 2%, 3) глицерин 1,5%, 4) формалин (40%) 0,5%, 5) вода 94%. (При 3% и 4%-ных растворах меняется количество желатина и воды).

У подвергнутой воздействию желатинового раствора бумаги поверхностная реакция была нейтральной. Микробиологический анализ показал зараженность бумаги плесенью. Влажность бумаги была 2,8% (нормальная влажность в среднем бывает 5—7%).

Исследования показали:

1) Формалин как дубильное так и дезинфицирующее вещество, уничтожает (убивает) плесневые грибки с поверхности бумаги.

2) При обработке 2%-ным желатиновым раствором полуразрушенная бумага укрепляется и очищается от пыли.

3) 2—4% желатиновый раствор не

производит отрицательного воздействия на текст и рисунки: наоборот, текст становится более ясным.

4) При 45—32° температуре 2—4% растворы впитываются в старые и разрушенные бумаги более глубоко: они крепче соединяют отдельные волоски бумаги. Сопротивляемость на разрыв повышается на 257—650%-ов, а растяжимость—на 165—590%.

5) 1—2% глицерина в желатиновом растворе придает бумаге мягкость и делает эластичной.

6) При обработке 2—4% раствором желатина при температуре от 45—32°, влажность, содержащаяся в бумаге, повышается от 2,8, до 3,35—4,32%.

Исходя из вышеизложенного, приходим к заключению, что вполне возможно желатиновый раствор применять для консервации бумаг и в частности для консервации бумаги древних рукописей.

Լ. ԽԱԶԻԿՅԱՆ պատմ. գիտ. քեկնածու

ԶԵՆՈՆԻ «ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒՅԵԱՆ» ԵՐԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐԳՄԱՆՈՒՅՅՈՒՆԸ

1. Զենոնի իմաստասերի հրատարակվող աշխատությունը հասել է մեզ երկու՝ ընդարձակ և համառոտ խմբագրությունների:

Ընդարձակ խմբագրության պատկանող միակ բնագիրը պահվել է Հայկ. ՍՍՐ Մինիստրների Սովետին կից Պետ. Զեռագրատան (Մատենադարան) № 5254 ձեռագրում, որն արտագրված է 1280 թվականին, Գեղձուտի վանքում, Գեորգ գրչի կողմից (Ա. ձեռագիր)<sup>1</sup>:

Համառոտ խմբագրության պատկանող ձեռագրերն են.

№ 627 (666)—B.

Թերթ՝ 275, մեծություն՝ 17×13, նյութ՝ թուղթ, կազմ՝ կաշեպատ տախտակ, գիր՝ բոլորագիր, ժամանակ՝ 24Գ.—1314 թ. գրիչ՝ Պաշխի:

Բ ո Վ ա ն դ ա կ ու թ յ ու ն.

1. էջ 25ա—152բ. Լուծմունք Գրիգոր Աստուածարանի ձաների («Յովհաննիսի Եղնկացո, որ և Մործարհցո արևգերալոյս վարդապետի ասացեալ»):

2. էջ 153ա—204բ. Լուծմունք Բարսեղ Կեսարացու ձաների.

3. էջ 205ա—213ա. Լուծմունք Արիստոտելի վանն Աշխարհաց գրոցն.

4. էջ 213ա—236բ. Լուծմունք Պորփիրի.

5. էջ 236բ—261բ. Մտորոգութեանցն Արիստոտելի լուծմունք.

6. էջ 262ա—269ա. Լուծմունք Մահմանաց գրոց.

7. էջ 269բ—275բ. Յաղագս գիտութեան պիտանացու սեռից (Զեմեմի իմաստասիրի):

№ 3487 (Ս և ա ն . 104)<sup>1</sup>—C

Թերթ՝ 144, մեծություն 14,5×12, նյութ՝ թուղթ. կազմ՝ կաշեպատ տախտակ, գիր՝ նոսրգիր, ժամանակ՝ ՊԼԸ—1389 թ. գրիչ՝ Հակոբ Ղրիմեցի, տեղի «Ի դաւտախ Եկեղեաց, ի հոշակաւոր վանքս, որ կոչի կապոսի»:

Բ ո Վ ա ն դ ա կ ու թ յ ու ն.

1. էջ 4—95. «Համառուտ հավաքումն յաղագս հոգոյ և դաւրութեանց նորին»:

2. էջ 97—165. «Յաղագս աւարինութեանց հոգոյն»:

3. էջ 166—276. «Յաղագս բնութեան հրեշտակաց»:

4. էջ 278—287. (Զեմեմի իմաստասիրի յաղագս բնութեան), անփերնագիր:

№ 1823 (1854)—D

Թերթ՝ 405, մեծություն՝ 20×15, նյութ՝ թուղթ, կազմ՝ կաշեպատ տախտակ, գիր՝ բոլորագիր, ժամանակ՝ 1731 թ. գրիչ՝ Մեթրոպ, տեղի՝ Էջմիածին.

Բ ո Վ ա ն դ ա կ ու թ յ ու ն.

1. էջ 13ա—231բ. «Միմէոնի Գառնեցոյ եպիսկոպոսի արարեալ մեկնութիւն գրոցն Պրովիզի»:

2. էջ 234ա—345բ. «Նուսաս Մաթէոս վարդապետի...աշխատասիրեալ առ ի հաւաքումն բանից, որ հայի առ վեց աւուր զործս Աստուծոյ, ի խնդրոյ Սարգիս կրօնաւարի»:

3. էջ 346ա—386բ. «Արիստոտելի վերլուծական» և այլն.

4. էջ 386բ—392բ. «Զեմեմի իմաստասիրի յաղագս պիտանացու սեռից»:

<sup>1</sup> Ն. Մառի կազմած «Յուցակ համառոտ ձեռագրաց վանուց Սևանայ» (Մոսկվա, 1892 թ.) աշխատության մեջ սույն ձեռագիրը նկարագրված է № 85-ի տակ: Զենոնի աշխատությունը, փերնագիր չուեննալով, չի նշվել Ն. Մառի կողմից:

<sup>1</sup> Սյու ձեռագրի մանրամասն նկարագրությունը տես առաջարանի փերջում:



Այսպիսով՝ ընդարձակ խմբագրությունից մեզ հասել է մեկ ձեռագիր (A), իսկ համառոտից՝ երեք (B, C, D):

Չենոնի աշխատության այլ արտադրություններ, ինչպես մեր, այնպես էլ այլ մատենագրարաններում, մեզ հայտնի չեն: Կարելի է ենթադրել միայն, որ համառոտ խմբագրության մի արտադրություն կա վենետիկյան Մխիթարյանների մատենադարանում, որովհետև «Հայկազյան լեզվի նոր բառագրքի» մեջ մուտք են գործել որոշ բառեր այդ խմբագրությունից:

Այսպես օրինակ՝ «Եռակարար» բառի օրինակների շարքում մեջ է բերված Չենոնի աշխատության «Յաղագս չափուց» ենթադրի՝ «Տեղին է եռակարար՝ վերին, ստորին, միջին» (բնագիր էջ 83ա, տող 13-14) և «Ձեռակարար ասի՝ եռանկիւնի, քառանկիւնի և բոլոր» (էջ 83ա, տող 20-21) հատվածները: «Անկրական» բառի կապակցությամբ՝ «Յանկրական լուսոյ և հրոյ» (բն. «Յաղագս դրից» ենթադրուի, էջ 81ա, տող 13-14) հատվածը և համապատասխան հատվածներ՝ «Համետական», «Պաղպաղմունք», «Մշատշաճական», «Պղնձոտ», «Սեռանայ» և մի շարք այլ բառերի օրինակները բաժնում:

Որպես աղբյուր մեջբերված հատվածների նրանք նշել են Տօնակաճ ժողովածուն<sup>1</sup> և ոչ մի հիշատակություն չունեն Չենոնի մասին:

2. Չենոնի բնագրի մասին տպադիր մատենագրական աշխատություններում համարյա ոչինչ չի ասված:

1930 թվականին պրոֆ. Մելիքսեթ-բեկովի իր «К истории точных наук в Армении и Грузии» աշխատության մեջ<sup>2</sup> հայտնել է, որ էջմիածնում գտնված է էլիպսի Չենոնի հունարեն բնագրով մեզ հասած «Περὶ φύσεως» («Բնության մասին») աշխատությունը:

Համառոտ խմբագրության բոլոր երեք ձեռագրերի հետ առաջին անգամ ծանոթա-

ցել է ակադ. Հ. Մանանդյանը և նրանց ուսումնասիրությամբ կազմել է համառոտ խմբագրության համահավաք բնագիր, նպատակ ունենալով հրատարակել այն<sup>1</sup>:

1942 թվականին, Մատենադարանի ձեռագրերի թեմատիկ բիրտագրաֆիայի մեզ հանձնարարված բաժինները կազմելու ժամանակ, № 5254 ձեռագրի հարուստ նյութերի շարքում մեր ուշագրությունը գրավեց անվերնագիր մի արժեքավոր փիլիսոփայական բնագիր, որն, ինչպես պարզվեց հետագայում, Չենոնի հրատարակվող աշխատության ընդարձակ խմբագրությունն էր (A բնագիր):

3. Ընդարձակ խմբագրության բնագիրը ծավալով կրկնակի մեծ է համառոտից: Այն քաղկացած է հետևյալ մասերից:

(Յաղագս չափի և բարոյ) — Չեռագիր № 5254, էջ 238բ. Յաղագս կատարեալ զխառնեան բանի, էջ 239ա. Յաղագս գործնականին, զոր ի վերա կատարելութեան բանի առադրեցին — 240ա. (Յաղագս անաւրինականին) — 240ա. Յաղագս բարոյականին — 240բ. Յաղագս քաղաքականին — 240բ. Յաղագս միմիտութեան — 241ա. Յաղագս ժամանակի, առանձին — 241ա. Յաղագս պիտանացու սեւից — 242ա. (Յաղագս դրից) — 242բ. Յաղագս կարգաց — 243ա. Յաղագս շրջանացն — 243բ. Յաղագս չափուց — 244ա. Յաղագս դուրսութեանց — 245ա. Յաղագս աղղմանց — 246բ. Յաղագս աստուածախառնութեան սկզբան և կատարածի, առանձին — 248բ. Յաղագս բնութեան, առանձին — 249ա. Յաղագս օտնմանաց և բաժանմանց, զոր ի վերա բնութեան առադրեցին — 249բ. Յաղագս սպայուցի և արամարանութեան — 251բ. Յաղագս իմաստակութեան և վերլուծութեան — 251բ. Յաղագս էականութեան, առանձին — 252ա. Յաղագս ի ձեռն խնդրականի, զոր ի տեսականն առադրեցին — 252բ. Յաղագս անմեկնելի որոշման ստորագրութեան էսկացո — 252բ. Յաղագս զանազանութեան — 254ա. Յաղագս գոյացուցիչ և մշտարուի բառակին, որ է աստուածարանական շարժման և նյութի, առանձին — 254բ. Յաղագս ունայնի, առանձին — 255ա. Յաղագս անբաւի — 255 ա. (Թարգմանչի կողմից խորհրդածություն) — 255բ.

4. Գլուխների և ենթադրուիների սույն դասավորությունը թվում է սարոզինակ:

<sup>1</sup> Չենոնի աշխատության այլ բնագրերի անվերնագիր գտնելու նպատակով՝ մեր ծանոթացանք Մատենադարանի № № 993, 996 ձեռագրեր Տօնակաճների հետ: Այդ աշխատանքը չափից ցանկալի արդյունք:

<sup>2</sup> См. Вопросы философии и социологии марксизма, изд. ЗКУ, кн. II, Тбилиси, 1930 г. стр. 192:

<sup>1</sup> Հարեանցի կերպով ծանոթանալով մեր կատարած աշխատանքին՝ ակադ. Հ. Մանանդյանն իր կազմած բնագիրը 1946 թվականին հանձնեց մեզ: Թնամքով կատարված այդ աշխատանքը, համահավաք բնագիրը կազմելու բնիացրում մեծապես օգնեց մեր աշխատանքին, որի համար և հայտնում ենք նրան խորին շնորհակալություն:

Նախ, այն հակասության մեջ է մտնում աշխատության «Յաղագս՝ ազգմանց» ենթագլխում շարադրված այն մտքի հետ, ըստ որի «մակաղցելին է արհեստ և բաժանի ի տեսակս չորս՝ ի գործնական և ի բանական, ի տեսական և յիմացական» (Բն. էջ 86բ, տող 21—23). և կամ. «(իմաստասիրութիւն) է արհեստ արհեստից և մակաղցութիւն մակաղցութեանց: Արդ՝ արհեստիցն է գործնականն իսկ արհեստ՝ բանականն և մակաղցութեանցն է տեսականն, իսկ մակաղցութիւն՝ իմացականն» (Բն. «Յաղագս սահմանաց և բաժանմանց» ենթագլխի, էջ 90ա, տող 40—90բ, տող 3):

Այդ սոցասելի էր տեսնել աշխատության կառուցվածքը վերոհիշյալ սկզբունքով. այսինքն, Յաղագս պիտանացու սեռից գլխից հետո (որի վերջին ենթագլուխն է «Յաղագս ազգմանց»-ը), պետք է շարադրվեին գործնական, և ապա՝ բանական, տեսական ու իմացական «մակաղցությունները» ենթագլուխները: Սակայն մեզ հասած բնագիրը սկսվում է «Յաղագս չարի և բարւոյ» ենթագլխով, որը, ինչպես պարզվում է նույն «Յաղագս ազգմանց» ենթագլխից, իմացականի մասը պետք է կազմեր:

Ըստ այդ ենթագլխի «իմացականին (մասունք են)՝ չար և բարի (ա), ժամանակ (բ), կատարելութիւն բանի (գ), սկիզբն և կատարած (դ), բնութիւն՝ սահմանական և արարչական (ե), էականութիւն (զ), նիւթ և շարժումն (է), ունայն (ը), անբաւ (թ)» (Բն. էջ 87ա, տող 7—11):

Իսկ բնագրում «իմացական»-ի այս ենթագլուխները անջատված են միմյանցից ու գրված աշխատության այլ և այլ մասերում, որով և խախտված է բնագրի արամարանական շարադրանքը:

Երկրորդ՝ մի շարք գլուխների վերնագրերում հանդիպում ենք «առանձին» բառին («Յաղագս բնութեան, առանձին», «Յաղագս ժամանակի, առանձին» և այլն), և «գոր ի վերա (այս կամ այն ենթագլխի) առադրեցին» արտահայտությունը:

Ինչպէս համար են այս անդամ արտահայտությունները, հեղինակի դրչից են նրանք դուրս եկել, թե՛ խմբադրական հավելումներ

են, իսկ եթե խմբադրական հավելումներ են՝ ի՞նչ նպատակի են ծառայել:

5. Հայ իմաստասիրական գրականության մեջ տարածված է եղել էլիասին վերադրված «Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտելի» աշխատությունը: Նրա ազդեցութեամբ գրվել են մի շարք վիլիսոփայական երկեր ու մեկնություններ:

Այդ աշխատության մեջ, ի տարբերություն մեր բնագրի, իմաստասիրությունը բաժանված է ոչ թե չորս, այլ երեք բաղկացուցիչ մասերի:

Իմաստասիրութիւն, — ասված է այնտեղ, — յերիս բաժանի՝ ի տեսականն, ի գործնականն, ի բանականն<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, այստեղ բացակայում է իմաստասիրության գենսյան բաժանման չորրորդ բաղկացուցիչ մասը՝ իմացականը:

Առաջնորդվելով արիստոտելյան հեղինակավոր մեկնիչի այս դրույթով, Զենոնի բնագրի խմբագիրներից մեկը, ըստ երևույթին, ընկել է բնական տարակուսանքի մեջ, և այդ երկու աղբյուրների միջև գոյություն ունեցող ակնհայտ հակասությունն աշխատել է մեղմել լուծարքի ենթարկելով Զենոնի բնագրի «իմացական»-ին վերաբերող ենթագլուխները:

Իմացական մակաղցության «Յաղագս չարի և բարւոյ» առաջին ենթագլուխը նա տեղափոխել է աշխատության սկզբում. երկրորդ՝ «Յաղագս ժամանակի» ենթագլուխը՝ «Յաղագս գործնականի» գլխից հետո, և այսպես հերթականությամբ նաև մյուս ենթագլուխները:

Հարթելու համար իր խմբադրական աշխատանքի ակնառու թերությունները, նա դիմել է երկու միջոցի. որպես ամբողջություն լուծարքի ենթարկած և բնագրի տարբեր մասերում տեղափոխված իմացականի ենթագլուխների վերնագրում նա ավելացրել է «առանձին»<sup>2</sup> բառը, իսկ հաջորդ գլուխներ

<sup>1</sup> Մեկնութիւն ստորոգութեանցն Արիստոտելի, բնծայեալ էլիասի իմաստասիրի. ի լոյս էած Յ. Մանուկեան. Ս. Գ. Բ. 1911 թ. էջ 14:

<sup>2</sup> «Առանձին» բառը գտնվում է միայն իմացականի ենթագլուխներին կից: Այդ բառը բացակայում

րի հետ այդ տեղահանված ենթադրութիւնները շարկապելու նպատակով, ստեղծել է նաև «դոր ի վերա առադրեցին» այս կամ այն ենթադրութի անդեմ (սով առադրեց) դարձվածքը<sup>1</sup>:

Վերստիշյալից դատ, ըստ երևույթին, նույն խմբագիրը, «Յաղագս պիտանայու սեռից» գլխից հետո և բնագրի վերջում թողել է համառոտ ամփոփումներ՝ աշխատութեան բովանդակութեան մասին: Այդ հատվածները թողեցինք բնագրում, անջատելով բուն տեքստից աստղանիշերով (տես՝ էջ 87բ, տող 11—26 և էջ 97բ, տող 18—98բ, տող 7):

Եվ անա, այսպիսի խմբագրական աշխատանքի շնորհիվ ընդարձակ բնագիրը մեզ հասել է գլուխների անտրամաբանական շարանյութում:

6. Խմբագրի աչքից վրիպել է «Յաղագս ազգմանց» ենթադրութեմ գտնվող ուշադրով հատվածներից մեկը, որը հնարավորութեան է տալիս վերականգնելու Ջենոնի աշխատութեան բնագրի սկզբնական կառուցվածքը:

Ընդհանուրի բերելով, «Յաղագս պիտանայու սեռից» գլխում շարադրված մտքերը բնութեան մասին, հեղինակը համառոտակի հայանում է դրանից հետո շարադրվելիք նյութի ծրագիրը բաժիններով և ենթարածիններով:

«Մակացելին, — գրում է նա, — է արհեստ, և բաժանի ի տեսակս չորս՝ ի գործնական և ի բանական, ի տեսական և յիմացական: Եւ գործնականն՝ ի տնայրինական, ի բարոյական և ի քաղաքական: Եւ բանականն՝ յաղացուցական, ի տրամաբանական, յիմաստական, ի բաժանական, ի վերլուծական, ի սահմանական: Եւ տեսականն, ի ձեռն որոյ՝ ինդրականն, ի գիտաւորականն, յանմեկնելի որոնումն, ի ստորոգութիւնս էակացն, յանդէմ կացադրութիւնս, ի պատճառ մակադրութեան, ընդ որով՝ մասամբ վերարեբութիւն, յեղանակ վարդապետականին: Իմացականին (մասունք են)՝ շար և բարի, ժամանակ, կատարելութիւն, սկիզբն և կատարած, բնութիւն սահմանական և արարչական, էականութիւն, նիւթ և շարժումն, ունայն, անբաւ:» (Բն. էջ 86բ, տող 21—էջ 87ա, տող 11):

է միայն «Յաղագս շարի բարւոյ» և «Յդ. կատարելութեան բանի» ենթադրութիւններից, որոնցից առաջինը չունի նույնիսկ վերնագիր:

<sup>1</sup> Այս դարձվածքը գրված է միայն իմացականի ենթադրութիւններին հաջորդող գլուխների վերնագրերում:

Ինչպես դժվար չէ նկատել, մեջ բերված հատվածի և աշխատութեան գլխակարգութեան միջև, բացի վերջին՝ «իմացական» գլխի բաժիններից ցրիվ վիճակից, էական այլ տարբերութեան չկա:

Միակ ենթադրութիւնը, որի մասին մեջ բերված հատվածում հիշատակութեան չկա, «Յաղագս միմսութեան» ենթադրութիւն է: Այն հատված է ճարտասանական ինչ որ երկից, ոչ մի առնչութեան չունի Ջենոնի բնագրի հետ, և, ինչպես կտեսնենք, իրավամբ բացակայում է համառոտ խմբագրութեանից:

7. Այսպիսով, միջոց ենք ստանում՝ վերականգնելու Ջենոնի աշխատութեան սկզբնական կառուցվածքը: Վերականգնված բնագիրը բաղկացած է հինգ գլուխներից և 24 ենթադրութիւններից հետևյալ դասավորութեամբ:

1. ՅԱՂԱԳՍ ՊԻՏԱՆԱՅՈՒ ՍԵՌԻՑ

ա. (Յաղագս գրից), բ. Յաղագս կարգաց, գ. Յաղագս շրջանաց, դ. Յաղագս շափուց, է. Յաղագս պարութեանց, զ. Յաղագս ազգմանց.

2. ՅԱՂԱԳՍ ԳՈՐԾՆԱԿԱՆԻ

ա. (Յաղագս տնայրինականին), բ. Յդ. բարոյականին, գ. Յդ. քաղաքականին.

3. (ՅԱՂԱԳՍ ԲԱՆԱԿԱՆԻՆ)

ա. Յաղագս սահմանաց և բաժանմանց, բ. Յդ. աղացուցի և տրամաբանութեան, գ. Յդ. իմաստակութեան և վերլուծութեան.

4. (ՅԱՂԱԳՍ ՏԵՍԱԿԱՆԻՆ)

ա. Յաղագս ինդրականի և դիտաւորականի, բ. Յդ. անմեկնելի որոշման և ստորոգութեան էակացս, գ. Յդ. ընդգրմակայիցն.

5. ՅԱՂԱԳՍ ԻՄԱՅԱԿԱՆԻՆ

ա. Յաղագս շարի և բարւոյ, բ. Յդ. կատարել գիտութեան բանի, գ. Յդ. ժամանակի, դ. Յդ. սկզբբան և կատարածի, է. Յդ. բնութեան, զ. Յդ. էականութեան, է. Յդ. շարժման և նիւթի, բ. Յդ. ունայնի, բ. Յդ. անբաւի:

8. Համառոտ խմբագրութեան բնագրերը ժամանակով կրտսեր են ընդարձակից, սակայն, ծագել են ավելի հին ձեռագրերից, քան A. բնագրի նախադադափարը:

Համառոտ խմբագրություն կազմողը օգտագործել է մի բնագիր, որի մեջ գլուխների շարահարությունը խախտված չի եղել, այլ ունեցել է ճիշտ այն կառուցվածքը, որն աշխատեցինք վերականգնել «Յաղագս ազգմանց» ենթագլխի տվյալներով:

Համառոտ խմբագրության B և D բնագրերը պարունակում են ընդարձակի 1-ին և 2-րդ գլուխներն ամբողջապես, 4-րդ գլխից Բ. և 5-րդ գլխից Ը. և Թ. ենթագլուխները: Բացի այդ B և D բնագրերում մուտք է գործել «Յաղագս բովանդակութեան» վերնագրով մի ենթագլուխ (տես՝ բն. էջ 88ա, տողատակ), որն անտարակույս ոչ մի աննշություն չունի Զենոնի աշխատության հետ: Այդ մասին B բնագրի արտագրողը թողել է ուղղակի վկայություն. նա հետազայում մտած այդ ենթագլուխը վերնագրել է «Յաղագս բովանդակութեան, յայլ գրոց» խոսքերով, ցանկանալով ասել, որ այն բնագրի մեջ է մուծված հետազայում այլ գրքից:<sup>1</sup>

Այսպիսով, համառոտ խմբագրությունը կազմված է հետևյալ գլուխներից ու ենթագլուխներից:

1. ՅԱՂԱԳՍ ՊԻՏԱՆԱՅՈՒ ՍԵՌԻՏ

ա. (Յաղագս գրից), բ. Յդ. կարգաց, գ. Յդ. շքեջանաց, դ. Յդ. շափուց, ե. Յդ. դաւրութեանց, զ. Յդ. ազգմանց.

2. (ՅԱՂԱԳՍ ԳՈՐԾՆԱԿԱՆԻՆ)

ա. (Յաղագս անաւրինականին), բ. Յդ. բարոյականին, գ. Յդ. քաղաքականին.

3. (ՅԱՂԱԳՍ ՏԵՍԱԿԱՆԻՆ)

ա. Յաղագս անմեկնելի որոշման և ստորոգութեան էակացս.

4. (ՅԱՂԱԳՍ ԻՄԱՅԱԿԱՆԻՆ)

ա. Յաղագս անբաւի, բ. Յաղագս ունայնի: C բնագիրը (Հակոբ Արիմեցու) թերի է արտագրված, այն ավարտվում է «Յաղագս ազգմանց» ենթագլխի կեսին, «...ի ձեռն որոյ խնդրականն» բառերով (բն. էջ 87ա,

1. Ղ Ալիշանին ծանոթ է եղել այդ գլխի բովանդակությունը: Նա իր «Հին հաւատք...» աշխատության 64-րդ էջում մեջ է բերել Հրատափ, սարտափ, քարտափ, նազատ ծովային հողմերի անունները համապատասխան այդ գլխի:

տող 2), ուստի և պարունակում է միայն «Յաղագս պիտանացու սեռից» գլուխը:

9. Հրատարակվող բնագրի նախնական վերնագիրը մեզ չի հասել:

Ա ձեռագրի գրիչը, սահմանադատելու համար՝ աշխատությունը նախորդ հողվածից (գուշակություններ), սրպես վերնագիր գրել է «Այլ բան» բառերը: Ըստ երևույթին Գեվորդ գրչի նախագաղափար օրինակի սկզբից ընկած է եղել մի թերթ: Այդ թերթությունը նկատվում է նաև այն ենթագլխի բովանդակությունից, որն A բնագրում արտագրվել է սկզբում («Յաղագս չարի և բարւոյ»):

Ենթագլուխը հեղինակը կազմել է հինգ ենթաբաժիններից, որոնցից պահվել են միայն երրորդի վերջին մասը և չորրորդն ու հինգերորդը (տես բն. էջ 93ա, տող 13):

Անվերնագիր է նաև C բնագիրը, իսկ B և D բնագրերում առաջին գլխի վերնագիրը՝ «Յաղագս պիտանացու սեռից», ընդհանրացված և դարձված է ողջ աշխատության վերնագիր:

Աշխատության նախնական վերնագիրը որոշելու գործին այս անգամ էլ նպաստում է «Յաղագս ազգմանց» ենթագլուխը: Այդտեղ հեղինակը՝ «Մականություն արհեստ»-ը բաժանելով մեզ արդեն հայտնի չորս բնագավառների, տալիս է դրանցից յուրաքանչյուրի սահմանումն ու քննություն ենթակա հարցերը: Նա գրում է.

«Սահման գործնականին են՝ կամք, յուժարութիւն, ընտրողութիւն, բարկութիւն, ցանկութիւն: Եւ բանականին՝ անուն և բայ, բան և բացերեական բան, ստորասութիւն և բացասութիւն: Իսկ տեսականին՝ զգացութիւն, երեակայութիւն, կարծիք, տրամախորհութիւն, միտք: Եւ իմացականին՝ որոշմունք մտաց, իմաստք և խորհուրդք, գիտութիւն և յառաջտեսութիւն» (բն. էջ 87ա, տող 13—22):

Իսկ այս բոլորի ընդհանրությունը, հանրագումարը, ըստ հեղինակի՝ է բնութայունը, բնության ուսումնասիրությունը. «Իսկ կամմունք արհեստից է բնութիւն...» գրում է նա (էջ 87ա, տող 23):

Եվ քանի որ աշխատության մեջ քըննարկված են վերահիշյալ բոլոր հարցերը

նշված հերթականությամբ, ուստի, բնական է ենթադրել, որ աշխատությունը կրել է «Յաղագս բնութեան» վերնագիրը:

10. Հեղինակի մասին վկայություն պահպանած միակ բնագիրը D-ն է. այդ ձեռագրում աշխատությունը վերնագրված է այսպես՝ «Զենոնի իմաստասիրի Յաղագս պիտանացու սևոց»:

Գիտգենես Լաերտացու (3-րդ դար, մ. թ.) հեղինակավոր վկայությամբ հունական մատենագիրների շարքում գործել են Զենոն անվամբ ութ հեղինակներ, որոնցից չորսը եղել են իմաստասերներ: Դրանք են.

1. Զենոն Էլիացի (5-րդ դար, ն. մ. թ.).

2. Զենոն Մնագեսոսի որդի, ստոյիկյան դպրոցի հիմնադիր (320°—370°).

3. Զենոն Սիդոնացի, Էպիկուրյան փիլիսոփա (2-րդ դար, ն. մ. թ.).

4. Զենոն Տարսուցի, ստոյիկյան փիլիսոփա.

Արդ, վերոհիշյալ Զենոններից ո՞րն է հրատարակվող աշխատության հեղինակը:

11. Այս հարցի վերջնական պատասխանը հնարավոր կլինի առաջադրել վերոհիշյալ Զենոնների մասին եղած մասնագիտական աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությամբ և նրանց աշխատություններից մեզ հասած բեկորների քննությամբ, մի աշխատանք, որ վեր է մեր հնարավորություններից:

Ստորև մեր կողմից շարադրվող մի քանի հարևանցի գիտողությունների միակ նպատակն է՝ նպատակ հետազա ուսումնասիրողներին՝ հեղինակի որոշման ուղղությամբ կատարելիք իրենց աշխատանքներում:

Հայաստանում, իմաստասիրական դրույրոցի գործունեության շրջանում և հետագայում, Արիստոտելի ու Պլատոնի հետ մեկտեղ իմաստասիրական մտքի ուշադրության առարկա է եղել ստոյիկյան դպրոցի հիմնադիր Զենոնը: Եվ այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև 5—7-րդ դարերում Հայաստանում փիլիսոփայական գրականությունը ստեղծվեց ու զարգացավ նոր-սլլատոնական փիլիսոփայական դպրոցի այս կամ այն թևին հարած եկեղեցական գործիչների թարգմանչական ու ստեղծագործական գործունեության շնորհիվ:

Իսկ նոր-սլլատոնականությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ստոյիկյան, էպիկուրյան և սկեպտիկյան ուսմունքների ֆանտաստիկ դուզակցումը Պլատոնի և Արիստոտելի փիլիսոփայական բովանդակության հետ: <sup>1</sup>

Մարքոսի հանձարեղ այս գրույթը հիմնավորվում է նաև հայկական փիլիսոփաների մի շարք արտադրանքներով, որոնց նպատակն է եղել «Ֆանտաստիկ դուզակցմամբ» հաշտեցնել միմյանց սլլատոնական, արիստոտելյան և ստոյիկյան փիլիսոփայական ուղղությունները:

Հատվածարար ծանոթանանք նման գործունեության արդյունք հանդիսացող աշխատություններից մեկի հետ, որ կրում է «Սահմանք փիլիսոփայականք» վերնագիրը և արժանի է հատուկ ուսումնասիրության: <sup>2</sup>

«Սահման է ըստ Պլատոնի բան ի սեռէ և ի տարբերութենէ, և կամ տարբերութեանց մեկնողական էութեանց բանից իբաց: Իսկ ըստ Արիստոտելի բան, որ զինչէրն գոյ յայանեսցի զինչգոյոյն զինչէն հաւասար կարողութեամբ: Իսկ ըստ Զենոնի բան ըստ վերլուծութեան կատարողին յառաջ բերել...»

«Անուն է ձայն արարողի կամ կրողի կամ ձայն նշանական ըստ գուգադրութեան առանց ամանակի, որոյ ոչինչ է մասանցն նշանակ արտորոշեալ բայց ձայն նշանական ըստ գուգաւորութեան հանդերձ ամանակաւ: Իսկ որպես Պլատոն՝ ձայն գործոյ նշանակ, իսկ անուն է երկոքում(ք)ք հասարակ մասն նուառս բանի, յոր նախ յանջատի բան: Իսկ որպես ստոյիկեանքն՝ անուն է ձայն նշանական որպես մարդ...»

«Զայն է ըստ Պլատոնի վերաւորումն աւղոյ անպատկան և անմարմին, իսկ ըստ սոյիկեանց՝ աւղ վերաւորեալ՝ լսելիաց զգալի և մարմին: Իսկ ըստ Արիստոտելի՝ ձայնիւն և շարժութիւն աւղոյ...»

«Տրամութիւն է անբան ամփոփումն, շարժումն անբանի մասին անձին՝ որպես [ստէ] Զենոն...»: <sup>3</sup>

Այն դեպքում, երբ «Սահմանք փիլիսոփայականք»-ի հեղինակը որևէ իմաստասիրական տերմինի սահմանումը ձևակերպելիս ձեռի տակ չի ունեցել Զենոնի կարծիքը, նա ամենուրեք փոխարինել է այն ստո-

<sup>1</sup> Маркс и Энгельс, Собр. соч. I, V, стр. 122.

<sup>2</sup> Զեռագիր № 464, էջ 202ա—215ա: Սույն աշխատությունը պահվել է նաև № 5244 (A) ձեռագրում, թերի վիճակում. գրիչն այդ առթիվ գրում է. «Աւրինակս այս շափ էր, և բանս ոչ աւարտեցաւ, և (ի) գիշերի գրեցաւ, զի շտապ էր»:

<sup>3</sup> Զեռագիր № 464, էջ 202բ, 203ա և 211ա:

յիկյան դպրոցի կողմից այդ հարցի առթիվ մշակված կարծիքով: Որովհետև, ինչպես ասացինք, նրա նպատակն է եղել հուշանցնել միմյանց վերահիշյալ երեք փիլիսոփայական ուղղությունները:

Սույն փաստերը իրավունք են տալիս կարծելու, որ 5—7-րդ դարերում հայ իմաստասերների միջավայրում, ստոյիկյան դպրոցի հիմնադիր Զենոնի ուսմունքը ուշադրութան առարկա էր կենտրոնում, ուստի բնականորեն, հայ թարգմանիչները շահագրգռված պետք է լինեին հայերենի թարգմանելու նրա (և ոչ ուրիշ մի Զենոնի) որոշ աշխատությունները:

Ավելացնենք նաև այն, որ Դիոգենես Լաերտացին ստոյիկյան դպրոցի հիմնադիր Զենոնի աշխատությունների շարքում նըշում է նաև Սերս ֆոսեոս («Յադագս բնութեան») վերնագրով մի աշխատություն<sup>1</sup>, Իսկ ինչպես աշխատեցինք պարզել, հրատարակվող բնագրի վերնագիրը եղել է նույնը՝ «Յադագս բնության»:

Ուստի և, իմաստասեր Զենոնի ով լինելու հարցի վերջնական պարզաբանումը թողնելով փիլիսոփայություն պատմության մասնադեմերին, անհավանական չենք համարում, որ հրատարակվող բնագիրը ստոյիկյան դպրոցի հիմնադիր, Մնացեսուսի որդի

Զենոնի, հունարենով մեզ չհասած «Սերս ֆոսեոս» աշխատության թարգմանությունն է:

13. Թարգմանության ժամանակի որոշման համար հրատարակվող բնագիրը ուղղակի վկայություններ չի պահպանել: Բնագրի բառամթերքի ու լեզվի մանրակրկիտ քննության ճանապարհով հնարավոր է միայն մերձավորապես որոշել թարգմանության դարաշրջանը:

Զենոնի երկի թարգմանիչը ծանոթ է եղել 5—7-րդ դարերում կատարված թարգմանություններին: Նրա վրա հատկապես ակնհայտ է Դիոնիսիոս Թրակյացու քերականության թարգմանական բնագրի ազդեցությունը: Այդ երևում է ոչ միայն Թրակյացու քերականության թարգմանության միջոցով ժողովրդականություն ստացած բաղամթիվ տերմինների նույնիմաստ գործածությունից այդ երկու բնագրերում<sup>2</sup>, այլ և, համանման հատվածների առկայության դեպքում, ամբողջական հատվածների քառացի նույնությունից:

Երկու բնորոշ օրինակները համադրութամբ պարզ կլինի Զենոնի երկի թարգմանիչի ծանոթությունը Թրակյացու քերականության հայերեն բնագրին:

ԱՐՈՒԵՍՏ ԴԻՈՆԻՍԵԱՅ ՔԵՐԱԿԱՆԻՑ

Քերականութիւն է հմտութիւն, որք ի քերդողացն և ի շարագրաց իբրու բաղում անգամ ասացելոց:

Եւ մասունք են նորա վեց. նախ՝ վերծանութիւն, ներկուռ ըստ առողանութեան, երկեր՝ զբուցատրութիւն ըստ ներգոյս քերթողական յեղանակս, երկր՝ լեզուաց և հնագէտ պատմութեանց առ ձեռն բացատրութիւն, շորիւր՝ ստուգարանութեան գիւտ, հինգերկր՝ համեմատութեան տեղեկութիւն, վեցերկր՝ դատումն քերդածաց (էջ 1):

...Եւ բանի մասունք են ութ՝ անուն, բայ, ընդունելութիւն, յաւդ, դերանուն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ (էջ 12):

ԶԵՆՈՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ

Քաղաքականացն նախադրի քերականութիւն, և է քերականութեանն երէք տեսակք՝ հմտութիւն, քերթութիւն, քերթողութիւն: Եւ ասի՝ հմտութիւն մասնական իբրաց: Եւ մասունք են վեց՝ վերծանութիւն ներկուռ ըստ առողանութեան, զբուցատրութիւն ներգոյս ըստ քերթողական յեղանակս, լեզուաց և հնագէտ պատմութեանց առ ձեռն բացատրութիւն, ստուգարանութեան գիւտ, համեմատութեանց տեղեկութիւն, դատումն քերդացածն (էջ 88ա-բ):

Եւ են մասունք բանի ութ՝ անուն, բայ, ընդունելութիւն, յաւդ, դերանուն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ (էջ 88բ):

<sup>1</sup> Diog. Laert, VII, 4. Զենոնի ինչպես այս, այնպես էլ մյուս աշխատությունները մեզ չեն հասել:

<sup>2</sup> Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, СПб, 1915.

<sup>1</sup> Այդպիսի տերմիններից են. ածանց, ածանցական, առողանութիւն, բայ, բան, բառ, բացատրութիւն, քերականութիւն, դերանուն, երկրայ-ացեալ, զբուցատրութիւն, ընդունելութիւն, ինդրական,

14. Չնայած այս և բարգամթիվ այլ բնականությունների, որ գոյութուն ունեն Ջենոնի «Յաղագս բնության» աշխատության թարգմանական բնագրի և 5-րդ դարում կատարված թարգմանական երկերի միջև<sup>1</sup> հրատարակվող բնագիրը չի կարող համարվել այդ շրջանի արտադրանք:

Այս եզրակացութունը հիմնավորվում է հետևյալ փաստերով.

ա. Կան 5-րդ դարի թարգմանական գրականության մեջ ստեղծված ու գործածված 58 բառեր ու տերմիններ. որոնք՝ լայնորեն օգտագործվելով այդ շրջանի թարգմանական երկերում, հետադառնում դուրս են եկել գործածութունից:<sup>2</sup>

Այդ բառերից հրատարակվող բնագրում գտնում ենք միայն մեկը՝ «տեսլարան»:

բ. Վերոհիշյալ առաջին շրջանի թարգմանութուններում հունական αἴτι նախադրութունը, առանց բացառության, թարգմանված է «հակառակ» բառով, որ, հետագայում կրճատվելով, տվել է «հակ» նախադրութունը:<sup>3</sup>

Ջենոնի բնագրում բազմիցս հանդիպում ենք «հակ» նախադրությամբ կազմված բառերի («հակադարձարար» (էջ 90բ), «հակադրութեամբ» (էջ 90բ), «հակադարձին» (էջ 92բ) և այլն), իսկ «հակառակ» ոչ մի անգամ:

գ. Առաջին շրջանի թարգմանական երկերում ծա նախադրութունը ոչ մի անգամ չի թարգմանված «տար» նախադրությամբ: Այդ երկերում շարունակ գործ են անում «զարմազանութիւն», «զանազան», «ընտ-

րեմ» բառերը, փոխանակ հետադառնում գործածվող «տարբերութիւն», «տարբեր», «տարբորոշեմ» բառերի: Հրատարակվող բնագրում «տար» նախադրությամբ բառերի գործածութունը սովորական է. դրանցից են՝ «տարածմամբ» (էջ 82բ), «տարբերի» (էջ 93ա), «տարբերութիւն» (էջ 91բ), «տարբորոշ» (էջ 92ա) և այլն:

դ. «Շաղ» նախադրութունը, ի բաց առջալ «շաղկապ» բառի, թարգմանական դրույրոցի երկրորդ և երրորդ շրջանի թարգմանական երկերում, ամենուրեք, փոխարինված է «շար» նախադրությամբ: Ջենոնի երկի թարգմանության մեջ ևս «շաղ» նախադրությամբ կազմված բառի չենք հանդիպում:

ե. «Մակադութիւն» և «ներհակ» տերմինները ստեղծվել են թարգմանական դրույրոցի գործունեության երկրորդ շրջանում:<sup>4</sup>

Առաջին շրջանի թարգմանական երկերում այդ բառերի գործածության ոչ մի դեպք չկա: Ջենոնի երկի թարգմանության մեջ ոչ միայն գործածվել են այդ բառերը, այլև նրանցով ստեղծված մի շարք բառարարութուններ («Մակադելի», «ներհակարար» և այլն):

Թարգմանական-իմաստասիրական դրույրոցի ծագման ժամանակի հարցը, հայագիտության ամենակիսկողնու վիճելի հարցերից է: Հրապարակի վրա կան մի շարք իրարամերձ և հակառակ կարծիքներ: Գ. Տեր-Մկրտչյանի փաստական, ամուր կռիվներով հիմնավորված, կարծիքի համաձայն այդ դպրոցի առաջին շրջանի երկերից մեկի թարգմանութունը կատարված պետք է լինի 480—484 թառամյակում:<sup>5</sup>

Այսպիսով, պետք է եզրակացնել, որ Ջենոնի «Յաղագս բնութեան» աշխատության թարգմանութունը կատարվել է առաջին շրջանի թարգմանութուններից, ուստի, 480-ական թվականներից հետո:

հասարակարար, հմտութիւն, հնազէտ, հոմանուն մակրայ, յարաձգական, նախադրեալ—նախադրութիւն, ներգործութիւն, ներգոյ, ներկայ, ներկուս, շաղկապ, շարադրութիւն, պատահ, պարունակ, պարփակեալ, սևաք-սերք, ստորադաս, ստուգարանութիւն, վանդ, վերաբերութիւն, վերձանութիւն, տաղ, տառ, քերականութիւն, քերդողական, քերդած, արամադրութիւն, ցուցական, փազանուն, փազառութիւն և այլն:

<sup>1</sup> Հարյուրից ավելի տերմիններ կան հրատարակվող բնագրում, որոնք առաջին անգամ օգտագործվել են Փիլոն Երբայեցու երկերի և «Պիտոյից գրքի» թարգմանութեան մեջ:

<sup>2</sup> Հ. Մանանդյան, Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928, էջ 107—110,

<sup>3</sup> Նույն տեղ, էջ 112—113:

<sup>4</sup> Н. Адонц. Цит. соч. стр. СІХХХІХ. Հ. Մանանդյան, Հուն. դպր. էջ 132—133:

<sup>5</sup> Տես Գ. Տ. Մկրտչյան, Տիմոթեոս կուզի հակաձառության թարգ. թվականը («Արարատ» 1908, էջ 564—589) և նույն հեղինակի, Հայ մատենագրության հնագույն թվականները («Շողակաթ», էջ 154—163):

15. Զեկնոնի «Յաղագս բնութեան» երկի թարգմանությունը չի կարող կատարված լինել նաև վերսհիշյալ թարգմանչական դպրոցի գործունեությունը երկրորդ շրջանում<sup>1</sup>

Հօգուտ այս եղբակացությունը ունենք երկու կարգի փաստեր: Նախ՝ երկրորդ շրջանում ստեղծված իմաստասիրական տերմինները, համարյա առանց բացատրության, նույնությամբ օգտագործված են Զեկնոնի երկի թարգմանչի կողմից<sup>2</sup>. և երկրորդ՝ Զե-

կնոնի թարգմանիչը ամփոփոխ ձևով արտադրել է այդ շրջանի թարգմանչական երկերից այն հատվածներն ու նախադասությունները, որոնք առկա են եղել իր կողմից թարգմանվող բնագրում:

Այդպիսի հատվածներ ու նախադասություններ մեծ քանակությամբ գտնում ենք Արխատոսի «Ստորագություն» թարգմանական բնագրում:

Այդ երկու բնագրից բերենք զուգահեռ շարադասամբ մի քանի բնորոշ օրինակներ.

«ՍՏՈՐՈԳՈՒԹՅՈՒՆ» ԱՐԻՍՏՈՏԵԼԻՅ

ԶԵԿՆՈՆԻ ԻՄԱՍՏՈՍԻՐԻ «ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ»

Իսկ յայնցանէ՛ որ և ոչ ըստ միում շարմանութեան ասացեալ են, իւրաքանչիւր ոք կամ գոյացութիւն նշանակէ, կամ որակ, կամ քանակ, կամ առինչ, կամ ուր, կամ երբ, կամ կալ, կամ ունել, կամ առնել, կամ կրել (էջ 362):

Իսկ երկրորդ ստորագրութեանցն ի տասն բաժանի՛ ի սեռս, որ է գոյացութիւն, որակ, քանակ, առինչ, ուր, երբ, կալ, ունել, առնել, կրել (էջ 92ա):

Սև քանակին՝ է ինչ որ տարրորոշ է, և է ինչ որ շարունակ, և այնք՝ որ զիբն ունին առ միմեանս՝ յիքեանց մասանց բազկացան, և է որք ոչ յայնցանէ են, որ զզիբն ունին, և է տարրորոշեալն, որդոն՝ թիւ, բան, և շարունակն, որկէն՝ գիծ մակերևոյթ, մարմին և առ այսօրիւր ևս ամանակ և տեղի (էջ 372):

Սև քանակին՝ է որ տարրորոշ է և որ շարունակ, և այնք որ զիբն ունին:

Սև տարրորոշ է բան և թիւ, և շարունակ է գիծ, մակերևութիւն, մակարդակ, տեղի. իսկ ժամանակ՝ բան և թիւ յաւէտ զաս ինչ ունել (էջ 92ա):

Յ ա ղ ա գ ս հ ա կ ա կ ա յ ց

Յ ա ղ ա գ ս ը ն դ դ ի մ ա կ ա յ ի ց ն

Իսկ յաղագս հակակայց՝ ըստ քանի յեղանակս սովորեցաւ հակակայիլ՝ ճառելի է: Սև ասի այլում հակակայիլ քառակարար կամ իբր առինչք. կամ իբր ներհակք, կամ իբր պակասութիւն և ունակութիւն, կամ իբր ստորասութիւն և բացասութիւն (էջ 396):

Ընդգիծակայքն քառակարար առին: Զի է որ առինչունակապէս, և է որ ներհակարար, և է որ ունակաւրէն և պակասարար, և է որ ստորասութեամբ և բացասութեամբ (էջ 92բ):

Շարժութեան տեսակք են վեց՝ լինելութիւն, ապականութիւն, աճելութիւն, նուազութիւն, ըստ տեղւոյ փոփոխութիւն, այլայլութիւն (էջ 406):

... Ըստ շարժման բաժանի ի տեսակս վեց, որ է լինելութիւն, ապականութիւն, աճելութիւն, նուազութիւն, այլայլութիւն, ըստ տեղոյ փոփոխութիւն (էջ 92բ—93ա):

Մի օրինակ էլ բերենք Արխատոսի «Յաղագս մեկնութեան» աշխատության

յամբղիկյան մեկնության հայերեն բնագրից.

<sup>1</sup> Այս շրջանում կատարված թարգմանություններից են Արխատոսի աշխատությունները և նրանց յամբղիկյան մեկնությունները:

<sup>2</sup> Այդպիսի տերմիններից են՝ աճելութիւն, անհատ, անմասն, ապացոյց, առնել, բազկացելիք, բազկացուցիչ զանազանութիւն, բացասութիւն, բացառական բան, բացերևութիւն, գիւրաշարժելի, ևնթակայք, եռանդիւնի, երկակայութիւն, զանազանութիւն, ի զինչէումն, էակ, լինելութիւն, կալ,

կալմունք, հակադարձ, հակադրութիւն, հոմանուն, մակարդակ, մակացելի, նախադասութիւն, նախերգութիւն, ներհակարար, շարաքանութիւն, շարադրութիւն, շարմանութիւն, շարունակ, որակութիւն, ունակութիւն, ունել, ուր, պատանմունք, ստորասութիւն, ստորագրութիւն, վերլուծութիւն, տարրորոշ, տրամատեալ և այլն:

<sup>3</sup> Կորիւնի վարդապետի, Մամբրէի վերծանողի և Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք:



ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ «ՊԵՐԻ ԷՐՄԵՆԵԱՍ»  
ԳՐՈՑՆ ԱՐԻՍՏՈՏԵԼԻ

Իմացմունք... նշանակք են իրաց, իսկ ձայնքն՝ իմացմանցն նշանակք, այլ և գրեց-  
եալքն՝ ձայնիցն նշանակք (էջ 490):

Թարգմանական այս հատվածները կա-  
պր միմյանց հետ անկասկած է, սակայն  
նրանց մեջ կան նաև էական տարբերու-  
թյուններ: Այսպես, «Ստորոգութեանց»  
հայկական բնագրի «մարմին» տերմինի  
գիմաց Ջենոնի երկի թարգմանիչը գործ է  
ածել «մակարդակ» տերմինը:  
«Ընդհանրում»-ի գիմաց «Ընդհանրմանում»  
«Կացութիւն»-ի գիմաց «Ընդհանրութիւն»  
«Հակակայ» — «Ընդդիմակայ»  
«Իբր առինչ» — «առինչունակասէս»  
«Հարժութիւն» — «Հարժում»  
«գրեցեալք» — «գծածք» և այլն:

Այս տարբերությունները պատահական  
չեն, այլ արդյունք են այդ բնագրերի տար-  
բեր թարգմանական շրջանների արտադր-  
մանք լինելուն:

16. Սույն եզրակացությունը հիմնավոր-  
վում է հետևյալ նշանակալից փաստերով.

ա. Կան մի խումբ բառեր ու բառա-  
բարդություններ, որ հատուկ են, գրեթէ,  
առանց բացառության, իմաստասիրական  
ու թարգմանչական դպրոցի երկրորդ շրջա-  
նի թարգմանական երկերին:<sup>2</sup>

Հրատարակվող բնագրում բազմաթիվ  
այդ բառերից գործածվել է միայն մեկը  
(«Իմացում»):

բ. Թարգմանական այս երկրորդ շրջա-  
նում ստեղծվել ու լայնորեն օգտագործվել  
են «Փար» նախադրությամբ սկսվող բազ-  
մաթիվ բառեր («փարարարձեմ», «փարա-  
գրեմ», «փարադրութիւն» և այլն), որոնք  
հետագայում գործածությունից դուրս են

ՁԵՆՈՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ  
«ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ»

... եւ բանականին գծածք ձայնից են  
նշանակք և ձայնք իմացմանց (էջ 86բ):

եկել: Նրանք բացակայում են նաև հրա-  
տարակվող բնագրից:

գ. Թարգմանչական առաջին երկու շրջ-  
աններում հունական է) նախադրություներ  
հաճախ թարգմանվել է արհեստականորեն  
ստեղծված «ըն» և «ն» նախդիրներով:<sup>1</sup> Այս  
հունարանությունը երկար կյանք չի ունե-  
ցել և գործածությունից հանվել է երրորդ  
շրջանի թարգմանիչների կողմից: Հրատա-  
րակվող բնագրում այդ նախադրություներ  
թարգմանված է կամ «ընդ» («ընդհանր-  
մանում», «ընդհանրութիւն») և կամ «ի» «յ»  
(«յենթակայում», «ի գինչէում») նախա-  
դրություներով:

դ. Պորփյուրի «Ներածութեան» թարգ-  
մանությունը հատուկ են «ի ներում գին-  
չէն» և «ի ներում որպիսի ինչէն» հունա-  
բան արտահայտությունները:

Թարգմանչական դպրոցի գործունեու-  
թյան երրորդ շրջանում, Դավիթ Անհաղթին  
վերադրվող «Վերլուծութիւն ներածութեան  
Պորփյուրի» աշխատության մեջ, այդ ձևի  
գործածումը փոքր ինչ պարզեցվել է ու  
ստացել՝ «ի ներ գինչէում», «ի ներ որ-  
պիսի ինչէում» ձևերը.

Դավթի «Մահմանք իմաստասիրութեան»  
երկի մեջ այդ խրթնարանության պար-  
զեցման ուղղությամբ արվել է երկրորդ  
քայլը: Նշված երկում հանդիպում ենք «ի  
գինչէում» ձևին:<sup>2</sup> Նույն պարզ ու հայաց-  
ված ձևին հանդիպում ենք նաև Ջենոնի  
երկի թարգմանական բնագրում:

ե. Ուշագրավ է նաև այն հանգամանքը,

<sup>1</sup> Կորիւնի վարդապետի, Մամբրէի վերձանողի և  
Դաւթի Անյաղթի մատենադրութիւնք:

Հմմ. նաև Արիստոտելի «Ստորոգութեանց»  
բնագրի 378, 386, 404 էջերը. Ջենոնի բնագրի  
91—92, էջերի հետ և այլն:

<sup>2</sup> Հ. Մանանդյան, Հունարան դպրոցը, էջ 127—  
128:

<sup>1</sup> Որպես օրինակ բերում ենք մի հատված Արիս-  
տոտելի «ստորոգութեանց» մեկնությունից: «... եւ  
ոչ ըն միում յայլոցն ստորոգութեանցն, ոչ ըն գոյա-  
ցութեան և ոչ ըն քանակի և նայլսն նամե նեսեան  
զկիրս, բայց միայն նորակի և նորակութեան» (տես  
Կորիւնի, Մամբրէի, Դաւթի մատենադրութիւնք, էջ  
410):

<sup>2</sup> Հ. Մանանդյան, Հունարան դպրոց, էջ 188, 189:

որ հրատարակվող բնագրում կան մի շարք հունարան նորաստեղծ տերմիններ ու բառեր, որոնք բնավ չեն օգտագործվել նախորդ շրջանների թարգմանություններում, և սակավ բացառությամբ, նույնիսկ մուտք չեն գործել «Հայկադյան լեզվի նոր բառգրքի» մեջ: Դրանցից են գուռ<sup>1</sup> (էջ 84բ), եռակարար\* (էջ 83ա), երկմասնարար (էջ 87բ), Չանազանիչք (էջ 93ա), էազոյն (էջ 97բ), քնդկայութիւն (էջ 92բ), խոնաւումն (էջ 96բ), կարճարառութիւն (էջ 90բ), կացադրութիւն (էջ 87ա), համեստական\* (էջ 88ա), հասողական (էջ 96բ), հաստադիմակայ (էջ 82ա), հասարանական (էջ 90բ), հատուցական (էջ 90բ), հիմնական (էջ 95բ), միատար (էջ 85ա), մշտակադութիւն\* (էջ 82բ և ն), շարառնութիւն (էջ 84բ), շարասութիւն (էջ 90բ), ունակարէն (էջ 92բ), պաղպաղ-

մունք\* (էջ 83ա), պարփակող (էջ 81ա), պղբնձոտ\* (էջ 84ա), սեռանամ\* (էջ 91ա) և այլն: Այսպիսով, Զեկնոնի «Յադագս բնութեան» աշխատությունը թարգմանված պետք է լինի թարգմանչական դպրոցի երկրորդ շրջանում կատարված թարգմանություններից առնվազն մի քանի տասնամյակ հետո:

17. Երրորդ շրջանի կարևորագույն թարգմանական արդյունքներից է Դավիթ անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» մեծարժեք աշխատությունը:

Այդ և Զեկնոնի երկի համատեղ քննությունը ցույց է տալիս, որ թարգմանական սույն երկու բնագրերը սերտ ազդակցական կապերով մերձենում են միմյանց:

Մի քանի օրինակով ցույց տանք այդ մերձեցումների բնույթը:

**ԶԵԿՆՈՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ  
«ՅԱԿԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ»**

...Քան զի բնականն ի սեռէ և ի բազկացուցիչ զանազանութեանց:

...Իսկ դարձեալ է քնական, որ սահմանի ի սեռէ և ի բազկացուցիչ զանազանութեանց (էջ 96ա):

Ուստի՞ յայտ է սահման, յազարակայնոցն ցուցմանէ, ...Յորմէ՞ առնու՞ յինթակայէ և ի կատարմանէ (էջ 89բ):

Հուպ ենթակա... հուպ կատարումն... հեռի ենթակա... հեռի կատարումն (էջ 89բ):

Իսկ (սահման) տեսականին՝ զգայութիւն, երևակայութիւն, կարծիք, տրամախոհութիւն, միտք (էջ 87ա):

Քանզի են սահմանք իմաստասիրութեան՝ զիտութիւն էակացս, զիտութիւն աստուածայնոց և մարդկայնոց, խոկումն մահու, նմանութիւն աստուծոյ, արհեստ արհեստից և (մակացութիւն) մակացութեանց... սիրելիութիւն իմաստութեան, որք են վեց (էջ 89բ):

<sup>1</sup> Աստղանիշերով ցույց ենք տալիս այն բառերը, որոնք մտել են «Հայկ. բառգիրք», Զեկնոնի «Յդ. բնութեան» աշխատության համառոտ խմբագրության միջոցով:

**ԴԱՒԹԻ ԱՆՅԱԿԹԻ  
«ՍԱԿՄԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ»**

Ամենայն սահման բնաւորեցաւ ի սեռէ և ի բազկացուցիչ զանազանութեանց լինել (էջ 136):

Ուստի՞ ասի սահման. և պարտ է զիտել՝ եթէ սահման ասի ի փոխարեքութեանէ զիւղից և ազարակային սահմանաց:

...Ուստի՞ առնու սահման, և պարտ է զիտել՝ թէ սահմանք կամ յինթակայէ առնուն և կամ ի կատարմանէ (142—143):

Հուպ ենթակայ և հեռի ենթակայ, և հուպ կատարումն և հեռի կատարումն (էջ 151—152):

Քանզի պարտ է զիտել զհինգ զիտական գորութիւնս. զգայութիւն, զերևակայութիւն, զկարծիս, զտրամախոհութիւն, զմիտս (էջ 185):

Իմաստասիրութիւն է՝ զիտութիւն էակացն... զիտութիւն աստուածայնոց և մարդկայնոց իրողութեանց... խոկումն մահու... նմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան... արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեան... սիրելիութիւն իմաստութեան (էջ 154):

<sup>1</sup> Դավիթ Անյաղթի մատենագրութիւնը:

Յաղագս գործնականին. իր է անաւրինա-  
կան, բարոյական, քաղաքական (էջ 87բ):

Իսկ սահմանական բաժանի ի տեսակս շորս  
տրամարանութեամբ, այսպէս, թէ զինչ է, և  
ուտտի է, և որպիսի են, և վասն է՞ր է (էջ  
89բ):

Բացի այս օրինակներէից՝ համեմատովող  
բնադրերում կան նաև այլ բնորոշութիւն-  
ներ: Կան մի խումբ կարեւորագույն իմաս-  
տասիրական տերմիններ, որոնց մի մասը  
գործածված է միայն, իսկ մյուս մասը՝ առա-  
ջին անգամ, այդ բնադրերում:

Այդպիսի տերմիններէից են՝ անգոյ, ան-  
մասն, աննիւթ, առանձնական, ատենական,  
բաժանումն, բաղխոհական, բժշկականու-  
թիւն, բնաւորեցաւ, բնութիւն, գիտութիւն,  
գասաւորութիւն, գաւրութիւնք, բնորոշակի,  
բնորոշութիւն, թուականութիւն, իմանալի,  
իմաստասիրութիւն, խառնուածք, կատար-  
եալք, կատարելագոյն, հատումն, նիւթա-  
կանք, անաւրինական, քաղաքական և այլն:

Այս բնորոշութիւններէի հիման վրա  
գծվար չէ կըրակացնել, որ Զենոնի աշխա-  
տութեան թարգմանութիւնը նույնպէս  
պետք է կատարված լինի թարգմանչական  
դպրոցի գործունեութեան երրորդ շրջանում:

18. Դավթի «Սահմանք իմաստասիրու-  
թեան» աշխատութեան հայկական բնա-  
դրում կա մի ուշադրով հատված. «հոգիք  
մարդկան երկուս գորութիւնս բնաւորեցան  
ունել, տեսական և կենդանական: ... Կեն-  
դանականս ունի զայստտիկ՝ կամաւորու-  
թիւն, բնորոշութիւն, յօժարութիւն, բար-  
կութիւն, ցանկութիւն» (էջ 191):

Հունարեն բնագրի համապատասխան  
մասում կարդում ենք. «Ζωτικαί δε αἰτιαί  
βολλησις καὶ προαίρεσις, θομὸς καὶ ἱπιθο-  
μία»<sup>1</sup>

Ինչպէս տեսնում ենք՝ հունարեն բնա-  
գրում հոգու կենդանական գորութիւնները  
չորսն են, «յօժարութիւն»-ը չի նշված  
այնտեղ:

Հայ թարգմանիչը իրեն կարող էր թույլ  
տալ՝ բնագրից շեղվելով, ավելացնել այդ  
բառը, եթե ձեռքի տակ ունենար վերոնշի-  
յալ հավելումով մի հեղինակավոր աղբյուր:

Գործնականն բաժանի ի բարոյականն, ի  
անօրինականն, ի քաղաքականն (էջ 209):

... Ասեն թէ պարս է յամենայն իրողու-  
թիւնս զշորս զայստտիկ խնդրել զգլուխս՝ եթէ  
է՞, և զինչ է՞, և որպիսի ինչ է՞, և վասն էր  
է՞ (էջ 121):

Այդպիսի աղբյուր իրոք գոյութիւն ուներ  
հանձնիս Զենոնի հրատարակվող աշխա-  
տութեան, որտեղ կա նեղեցալ հատվածը.

«Քանզի սահմանք գործնականին են՝  
կամք, յաւժարութիւն, բնորոշութիւն, բար-  
կութիւն, ցանկութիւն» (էջ 87ա, տող 13—15):

Վերոնշեալնք նաև որ է՞ն շո՞ւ շո՞ւ է՞տւ արտա-  
հայտութեանը միայն Զենոնի և Դավթի  
քննարկվող երկու բնագրերումն է թարգ-  
մանված հայերենին հարադատ ու պարզ «ի  
զինչէումն» արտահայտութեամբ. (նախորդ  
շրջաններում այն թարգմանել են՝ «ի ներում  
զինչէն» կամ «ի ներ զինչէումն» ձևով):

Բերված փաստերը բավարար են՝ ցույց  
տալու համար, որ կամ վերոնշիյալ երկու  
բնագրերը թարգմանվել են նույն գործիչի  
կողմից և կամ նրանց թարգմանիչները  
եղել են ժամանակակիցներ ու թարգման-  
չական նույն դպրոցի համամիտ ներկայա-  
ցուցիչներ:

Այս կըրակացութիւնը, ցավոք, չի օգ-  
նում Զենոնի աշխատութեան թարգմանու-  
թեան ժամանակի ճշգրիտ որոշմանը, որով-  
հետև թարգմանչական դպրոցի երրորդ շրջա-  
նի ժամանակագրական սահմանները զուեւս  
մշուշապատ են ու անորոշ: Այնուամենայ-  
նիվ թարգմանական այդ դպրոցի գոր-  
ծունեութիւնն ավարտված պետք է լի-  
նի Անանիա Շիրակացուց տասնամյակներ  
առաջ, մերձավորապէս 7-րդ դարի սկզբ-  
րում:

19. Զենոնի աշխատութեան թարգմա-  
նիչը հայ եկեղեցու իդեոլոգներէից է. նա իր  
թարգմանութեանը կցած վերջարանում  
(բն. էջ 97բ, տող 18—36), որոշակի կերպով  
շարադրում է իր հավատո հանդանակը Նի-  
կիայի հավատո հանդանակի նմանողու-  
թեամբ:<sup>1</sup>

Վեցերորդ դարի ողջ ընթացքում հայ

<sup>1</sup> Davidis Prolegomena et in Porphyrii Ysago-  
gen commentarium, Berlini, 1904 թ., էջ 79, 8—9:

<sup>1</sup> Հմմ. «Կնիք հաւատոյ», էջ միածին, 1914, էջ  
18 («Սահմանք հաւատոյ Յժէ»-ից), էջ 51 («Եղնկայ  
Կողբացուց թարգմանչի ի Հայոս»):

եկեղեցին ստիպված էր մի շարք ճակատներով սլաքարի կնիկ իր ինքնության պաշտպանության և սոցիալ-անտեսական գիրքերի ամբաստնական համար:

Դեռևս Եզնիկ Կողբացին գրել էր. «Եկեղեցւոյ աստուծոյ դորձ այն է, զարտաքինսն իբօք ճշմարտութեան առանց գրոց յանդիմանել, և զկարծեցեալսն ներքինս և ոչ ճշմարտեալս՝ գրովք սրբովք յանդիմանել»:<sup>1</sup>

«Առանց գրոց» այսինքն առանց Աստվածաշնչի «հանդիմանվողները» գինված էին արտաքին դիտություններով, իրենց քաղաքական ու անտեսական պահանջները հիմնավորում էին հին հունական փիլիսոփաների ասույթներով և այլն:

Ահա նրանց դեմ պայքար մղելու նպատակով է, որ հայ եկեղեցին դիմում է հին հունական փիլիսոփայության—Արիստոտելի, Պլատոնի, Զեկոնի և այլ իմաստասերների աշխատությունների թարգմանությունը:

20. Զեկոնի «Յաղագս բնութեան» աշխատությունը հայ իմաստասիրական մտքի վրա, որքան մեղ հայտնի է, խորն ազդեցություն չի թողել:

Հետադայում, 13—14-րդ դարերում այդ աշխատությունը նորից գրավել է գիտական շրջանների ուշադրությունը: Մոռացված այդ բնագիրը նորից արտադրվել է մի քանի անգամ (1280, 1314, 1389 թվականներին), դարձել ֆունդիտան առարկա և, ըստ երևույթին, ծառայել է նաև ուսուցողական նպատակների:

Գլածորյան համալսարանի շրջանավարտներից մեկը իր ավարտական ատենախոսություն մեջ, որ գրված է «Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Աստուծոյ» (Մաղմոս ԽՆ, 5) բնաբանով, մեջ է բերել մի ընդարձակ հատված Զեկոնի աշխատության «Յաղագս դրից» ենթադրից (էջ 1ա, տող 16—1բ, տող 17):<sup>2</sup>

21. Հրատարակվող համահավաք բնագիրը կազմել ենք առկա բոլոր չորս ձևա-

<sup>1</sup> Եզնիկայ վարդապետի Կողբացւոյ Եզձ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 78:

<sup>2</sup> Մատենադարան, ձևագիր № 631, էջ 89բ—90ա:

գրերի տված ընթերցվածքների մանրակրկիտ ուսումնասիրությամբ:

Այդ ձևագրերն են.

- A—Մատենադարան № 5254
- B— » № 627
- C— » № 3487
- D— » № 1823

Տողատակերում նշել ենք նույնիսկ աննշան տարբերությունները, չհաշված մի քանի ակնհայտ գրչական սխալներ: Կատկածելի դեպքերում միշտ առաջնություն ենք տվել A (ընդարձակ խմբագրության) ձևագրի ընթերցվածքներին, ինչպես ունենալով նրա հնությունը, ամբողջականությունը և գրչի վարպետությունը:

Պետք է նշենք սակայն, որ չհայտնի մեր ջանքերին, մեղ չհաջողվեց բնագիրը ներկայացնել անթերի վիճակով: Հատկապես բնագրի այն մասերում, որոնք պահվել են միայն ընդարձակ խմբագրության մեջ, մնացին մի քանի չհասկացված ու մեկնություն կարող հատվածներ:

Բարերախտարար այդպիսի հատվածների թիվը շատ չէ.

22. Ստորև տալիս ենք A (5254) ձևագրի մանրամասն նկարագիրը:

Թերթ՝ 256+1, մեծություն՝ 17×12×5, կազմ՝ գրոշմագարդ կաշեպատ տախտակ, վիճակ՝ մնասված (սկզբից, միջից և վերջից ընկած են թերթեր, պրակներ), գրություն՝ միասյուն, տողեր՝ 24—26, բառանջատում՝ շունչ, գեր՝ բոլորակիր, գրիչ և սաացող՝ Գէորգ, ժամանակ՝ 21թ—1280 թ. տեղի՝ Դեղձուտի վանք, ի Մահկանաբերդ, հիշատակաբաններ՝ 54բ, 47բ, 6բ, 17բ, 44բ, 86ա, 91բ, 125ա, 130բ, 135ա, 180ա, 202բ, 205բ, 209բ, 222բ, 227ա, 132ա էջերում՝

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Սկզբից թերթ է, պահպանվել են 12 պատռված թերթերի լուսանցքները:

ա. 1ա—6բ. Սըրբոյն Ն ե բ ս ի ս ի Լ ա մ բ բ ո ն ա յ ո յ Տ ա բ ս ո ն ի Ե ա ի ս կ ա ս ո ս ի յ ա ա կ ա ց մ ե կ ն ու թ ե ն է: Ոչ է ս ա կ ա թ ո ղ ի կ ո ս ն Հ ա յ ո յ, ա յ լ ա ղ զ ա կ ա ն ն ո ղ ի ն: Եւ է բ թ իւ ն Հ ա յ ո յ ՈՅԶ (1197). և զ ա յ ս վ ա ս ն ա յ ն գրեցաք, զի հ ա կ ա ո ս կ է ի ն ո մ ա ն ք վ ա ս ն ա ն ու ա ն ց ն:

«Հանդերձ ավ. միեալ ի բնուի. գրոց առակաց Սողոմոնի...»

բ. 6բ—17բ. Մ ե կ ն ու թ իւ ն յ Ն ս ա յ ե ա յ մ ա ր դ ա ր է ի «Աներևոյթ են սրբոց մարգարէիցն բանք...»

գ. 17բ—20բ. Ն ա ի ե բ դ ա ն Ե բ կ ո ս ա ս ա ն

մարզաբէկից «Յարև մերձաւոր վկայ են գրոց բնաւորական բնութիւն մարդկան...»

դ. 20բ—31ա. Ներսիսի Հա(յ)ոց վերագրեալ ի խնդրոյ նորին եղբարն Գրիգորիսի առաջին վերագրեալ (մեկնութիւն երկոտասան մարզաբէկից): «Սիրոյ դարութիւն զերազանց է քան գրնութիւն...»

ե. 31բ—44բ. Պատճառ աւետարանին Յովհաննոս Նաթանասար շարահարկած են Ստեփանոսի, Բ(ա)բս(եղի), Եփր(եմի), Եւսեբ(իոսի) և Նանայի ասույթները՝ «Յոր արտաբն հանդիսիցն լինին տեսալոր...»

դ. 45ա—46բ. (Պատճառ աւետարանին Ղուկասոս) «Ղուկասու աւետարանս երրորդ է բոս կարգի...»

է. 46բ—54բ. Երանելոյն Վարդանայ հայոց լուսաւոր վարդապետի յաղագս խորանաց աւետարանին «Մատենաբանութեան» և հոգեբույժ վարդապետութիւնը...»

բ. 54բ—55բ. Վասն Յակոբա՛ հաւր Յովսիփոս (ե) վասն Աննայի՛ մաւր Աստուածածնին

թ. 56ա—65բ. (Քաղոսածոյ մեկնութիւն տեսնական Եղեղիելի մարզաբէկի). հատկապէս շարահարկած են Եփրեմի, Ստեփանոսի, Յովհաննոս, Գր. Նիւսայոս, Եւսեբի, Սարգիսաղի և այլոց ասույթները: «... (սկ. թերի) և յամին երեսներորդի...»

ժ. 65բ—71բ. Վասն թագաւորացն Իսրայէլի, զիտելի է թ Սողոմոնէ և այսբ, թէ որպէս են զկնի միմեանց... «Աստուածային իրադրութեամբն հրաշքէլծի թագաւորութիւնն Դաւթի...»

ձա. 72ա—76ա. (Գրք զատճառաց Դաւթի Բորայրեցուց): Սկզբբ թերի է, զանգումնի են Գր. Նիւսայոս հինգ զբերի «Պատճառները»:

ժբ. 76ա—89ա. Դաւթի վարդապետի զատճառ զարոցն Բարսղի. (արված են ա լԳ ճանրի «պատճառները»):

ժգ. 89ա—91բ. Սկզբն և զատճառ շարոց ողացն Բարսղի «Տեսցուք թէ ուտի է սկիզբն մեծաւոր կրանաւորութեան...»

ժդ. 91բ—93ա. Պատճառ և սկիզբն վերագրեալ գրոց սրբոյն Բարսղի «Տեսցուք վասն վարոց սքանչելի Բարսղի...»

ժե. 93բ—119ա. Սկիզբն և զատճառ գրոցն (Գրիգորի) Աստուածարանի (17 ճանրի «Պատճառները»):

ժզ. 119ա—125ա. Սկիզբն և զատճառ գրոց, զոր արարեալ է քաղամարտի սուրբ ամենիմաստ սբան շելիի Փրլոն (7 աշխատութիւններ «պատճառները»):

ժէ. 125ա Այս են անուանք խեցեմորթացն (11 անուն):

ժը. 125բ—131բ. (Աղբւսակք թուոց անկիւնաւորաց) (Վերջից թերի, 127 թերից

հետ կան բնկած թերթեր, 131 թերթը ներքինց պատուած է):

ժթ. 133ա—135ա. Ի բնութեան գրոց «Որպէս ոչ մարդոյ, կամ մարդ գոր ոչ է արժան գործել...»

ի. 135բ—136ա. Մայրաքաղի մնացորդացն մեկնութիւն (է). «Որ ստէ դժու թէ թագաւորութեանն...»

իա. 136ա—145բ. Սկիզբն և զատճառ Եւարթի... (15 ճանրի «պատճառները»):

իբ. 145բ—162բ. Եղիայի ասացեալ ասորոց վարդապետի, զատճառ վերլուծութեանի ի խաւսս սրբոյն Գրիգորի Աստուածարանի (14 ճանրի «պատճառները»): Չեռազրից բնկել է 3 տար՝ 2. Պ. 2. համարակալութիւնը:

իգ. 163ա—180բ. (Նոնոսի մեկնութիւն Գրիգորի Աստուածարանի հինգ ճառիցն) Սկզբն է մեկնութիւն այնոցիկ, որ և յառաջումն արձանականին եղեն...» զլսի Լ. (Յագագս Անախոթենի) հոգիածոյ: Ավարտում է լեմանայես պատմութիւն և այնոցիկ, որ յերկրորդում արձանականին զլսի Լ. հոգիածոյ: Չեռազրից բնկել է 2 տար՝ Վ. և Տ. համարակալութեանը:

իդ. 181ա—181բ. Յագագս արկնս որոցութեան «Եւ զարկնս որոցութեան ոմանք եղին ի կարգի կրթման...»

իե. 181բ. Այլուստ քան (մի քանի տող):

իզ. 181բ—182բ. Այլ քան ուստէք (Մանգարանութիւն և ամ նահապետաց հրէից) «Սիմէոն եղբայր Յոննաթանու...»

իէ. 182բ—190ա. Սակաւ մի քան ի քորուստեւն (30 հոգիած) Տարբեր է բարոյախօսի Ն. Մառի կատարած հրատարակութիւններից, և արժանի է հատուկ ուսումնասիրութիւն:

իթ. 190ա—202բ. Խոսք Փրլոնի (ժամանակագրութիւն Անանիայ Երևակունոյ): «Նախաստեղծն Ազամ կեցեալ ամս...»

A երկրորդ Գ. է տեսակս, B երկրորդ, չորրորդ է  
տեսակ, D երկրորդն է տեսակն 19 AB յոլովութեանն  
20-21 AB քառակին, D քառակի || քանակին  
(ուղղում ենք ըստ Արիստոտելի «ստորագութեանց»  
հայերէն բնագրի) 22 D տարոշ է 23 BD շարունակէ ||  
շարունակ, B այն, D զիծն 23-24 BD մակերևոյթ  
|| մակերևութիւն 24 B և մակարդակ, «տեղի» բա-  
ռից նեսս 22 ունել՝ «և ժամանակ և է որ զիբն» (B  
զիբ) ունին, զիծ, մակարդակ, տեղի (A տեղ), մա-  
կերևութիւնս, նախորդ տողերի ազգագրական կրկ-  
նութիւնն է 25 AD թիւն 26 D ամենայնի 27 A  
առաջինն, B ասին, D յառաջին ուղղում ենք՝ առնչ-  
չին, B չորք D Գ. [չորք] || չորք են, B տեսակ  
ունակութեան:

որ է՝ լինելութիւն, ապականութիւն, աճելութիւն, նուազութիւն, այլայլութիւն, ըստ տեղո փոփոխութիւն: Եւ ասի ըստ դիմակաութեան և ըստ մակադրութեան և ըստ մասնական վերաբերութեան: Արդ, են դանազանիչք սոքա առաջին և երկրորդ ստորագութեանցն՝ սեռի և տեսակի, տարբերութեան և յատկի, գոյացութեան և քանակի, առինչունակի 10 և սրակութեան:

ՅԱՂԱԳՍ ԻՄԱՅԱԿԱՆԻՆ

[Յաղագս չարի և բարոյ]

... Եւ դարձեալ դանազանի նախդասութեամբ ըստ սկզբանն բարին և ըստ 15 կատարածին չարն: Իսկ որ ընդ մէջ ի բաղկանաց [°] ըստ չորս իմն տեսակ տարբերի՝ ըստ ներածութեանց և ըստ ձայնից և ըստ ներդործութեանց, որ ասի մեղք կամ արդարութիւն:

20 Զորրորդ, վասն զի է, որ բնութեամբ է բարի և չար և է, որ պիտակարար: Բնութեամբ է, որ զբնակ[ան]ութիւնն անեղծանելի և զժուարափոփ[ոխ], զի թէև զփոփոխումն առնու, անդրէն ի նոյն՝ ի 25 բնական սահմանն հաստատի: Իսկ պիտակարար է, որ ոչ բաղկանա բնականութիւն սահմանի, և դարձեալ զիւրաշարժ ի պատահմունս ենթակաին:

Արդ՝ բնաւորեցաւ բարին բնութեամբ, 30 իսկ չարն առանց բնութեան և սահմանի: Զի բարին, թէ ի չարն յեղաւ, ոչ միայն չար կա[յ], այլ ի նոյն դարձեալ փոփոխի բնութեամբ: Իսկ չարին զփոփոխումն առնուլ բարի՝ միանդամայն բաղկացաւ 35 բնութեամբ:

Հինգերորդ, զի ըստ տեսակին բաժանման՝ բարին ի գոացութենէ և չարն ի

պատահմանէ ստորագեցաւ: Եւ դարձեալ ի չորս տրամատեալ լինի. զի է, որ բարի, և է, որ չար, և է, որ չար և բարի, և է, որ ոչ չար և ոչ բարի:

5 Արդ, զի են ի սոցանէ, որ կրին ի ներքուստ և վարին արտաքուստ: Քանզի բարոյն և չարին իմանալի է ի շարժմանէ և ի նիւթո առնուլ զբաղկացութիւն:

10 Եւ որոշեալ դանազանի նախկնութեամբ շարժումն ի նիւթոյ, որ բարոյն է գոյացուցիչ, իսկ նիւթ յետո քան զշարժումն՝ չարին է բաղկացուցիչ:

Իսկ գոյացութիւն ըստ շորից իմն է 15 իսանից՝ ի հրամանէ և ի վարմանէ և ի ստուերէ և յերևմանէ: Այսոքիկ սահմանեալ երկակի որոշմամբ. հրաման է պատճառ վարման՝ յորմէ բարի ասի, իսկ ստուերն պատճառ երևման՝ յորմէ

20 չար ասի: Եւ դարձեալ հրամանն հատուկ և անխառն ի միջի նոցայ և յանսահման մնալով, իսկ վարմանն տեղիանալ ի ստուերէն, և երևմանն ի ստուերէն զորոշումն առնուլ, ի նոյն սահման 25 էակին զբաղկացութիւնն առնուլ՝ սեռիք և տեսակաւք և կլիւք և ծնընդիւք և ձևաւք և գունովք:

Արդ, յայտնեցաւ չարն եղծանելի և որոշիչ բարոյն, իսկ բարին համայն 30 անապական և ընդունակ յեղման չարին:

Յաղագս կատարեալ գիտութեան բանի

Կատարեալ բան է ի մասանց և յանհատից և ի տեսակաց և ի սեռից և ի թուոց: Քանզի իւրաքանչիւր ոք սոցա 35 զկատարելութիւն առնուն, իսկ համանդամայն սոքա կատարելադոյն ասին: Իսկ որ ի միմեանց բաղկանան, անկատարք գոն և ոչ կատարեալ բան:

Առաջին, իսկ ըստ այլոցն խնդրոց, ի 40 ժամանակի ըստ շրջագաութեան մասանցն՝ Ա. Բ. Գ. Ե. Գ. ԺԲ. ԻԳ. Ե. Է. ԺԱ. ԴԱ. ՅԿԵ. Ծ[Բ]. ԺԲ. Գ. ԺԵ. ԺԹ.

10 «Որակութեան» բառից հետո ձեռագիրքն ունի ենտնայլ՝ «Այսք են տեսական արհեստին տեսակք, որ յէականութեանն կարգեցաւ: Կատարեցաւ Բ. որդ մասն արհեստիւս, որ ասի աստուածախաւսութիւն»: Կարծում ենք հավելված է բարգմանչի կողմից: 20 Սույն գլխից համառոտ խմբագրութեան մեջ պահպանվել են միայն վերջին՝ «Յաղագս ունայնի» և «Յաղագս անբաւի» ենթագլուխները, վերնագրել ենք ինքնենք: 12 վերնագրի փոխարենն ձեռագիրքն ունի՝ «այլ բան» 16 «չորս»-ի փոխարենն քերես պիտէ էլ ինքե «երիս» 20 բնագրում՝ Դ. կարգում ենք «Զորրորդ»:

30 Բնագրում՝ Ա. և առաջին. 30—40 զի ժամանակի և ի ժամանակի 41 Ծ [Բ]-ի միավոր քվադրանց հազիվ է նկատվում:

ԻԼ. Ժ.\* առնուն զկատարումն իւրաքանչիւր սահմանքս: Իսկ համանդամայն սոքա, ի վերագոյն հատածն կատարելագոյնք աս[ին և] զանդրէն զասութիւնն  
 5 առնուն, որ ՇԼԲ. Գ...ակ, որ ի միմեանցն գոյանան, ըստ հոլովման բանիցն և անւան հատիցն անկատարք ստորոգին:

Երկրորդ, զանազանի և ըստ սկզբան և կատարածի կատարելական բանն: Քան-  
 10 զի ըստ կատարածին կատարելալք ասին ամենայն լինելոցքս և եղեալքս: Եւ ոչ ըստ հոլովմանցն կատարելք, այլ յիւրաքանչիւր սահմանս, որ ինչ եղելոցն էր՝ կատարեցաւ, և որ ինչ լինել հարկի՝

15 զկատարումն առնու: Այլ է ընդ մէջ և ամանակ ըստ ներկաումն: Արդ, ըստ վերատեսութեան երկակի սոքա զկատարելագոյն բաղկացուցանեն բան: Իսկ ըստ սկզբանն ոչ է կատարելալ. զի սր ներա-  
 20 ծեն, կամ ասեն, կամ ներգործեն ի մէջս բաղկանաց և կամ ոչ է իսկ մարտուցեալ:

Երրորդ, արդ, ըստ բնութեան սահմանական ի յենթակաէ և ի կատարմանէ,  
 25 ըստ հուպ և ըստ զանազանութեան քառակին իւրաքանչիւրովքն կատարելալք ասին, իսկ ընթանուր հատածքն՝ իննակի սահմանացն գերակատարելով: Եւ ըստ արարչականին է, որ միայն գտե-

30 սակն գոյացուցանէ անկատար գոլով և ոչ կատարելալ բան: Քանզի ըստ էակին է ի նախադ[աս]ութիւնն յէականացն

բաժանումն ի ստորոգութիւն, իսկ յիւրաքանչիւրսն կատարելալ և յամենայնէն կատարելագոյնն:

Չորրորդ, իսկ ըստ բաժանման պատահանցն վասն ստոյգ պատահին և յենթակաումն գոլ, անկատար ելով և ոչ կատարելալ:

Հինգերորդ, իսկ ըստ վեհագոյն և ըստ ներարհեստիս է քառակն, յորմէ ամենայնքն զբաղկացութիւն առեալ սահմանեցան. յիւրաքանչիւրսն սոքա կատարելալք ասին: Իսկ ըստ անբաւին անխառնութիւն գերազանցեալ ասի: Եւ գարձեալ յերկցն ևս, որք ի քակտումն  
 15 և յեղծումն գիմեալ միշտ անկատար և ոչ կատարելալ բան:

Արդ, երևեցաւ կատարելութիւն բանի եռակի տեսութեամբ ըստ մասանց, որ յիւրաքանչիւրսն սահմանին. իսկ համանդամայնքն կատարելագոյնք, և որք ի միմեանց իմանին գոացութիւնքն, անկատար գոլ և ոչ կատարելալ բան: Քանզի գերազանցեալն ի կատարմանն բաղկանա և ոչ յանկատարէն, զի անկատարքն  
 25 կատարելականին են մասունք, որ շարագրինն:

Այսքան է կատարելալ գիտութեան բան:

Յաղագս ժամանակի

Ժամանակ է որորումն ըստ ամենայն  
 30 մասանց, եռակի և առընդդէմ խաղացումն տրամադրութեամբ, չափք բերմանց իւրաքանչիւրոցն և ըստ յեղման շրջագաիցն, յորս թիւքն բաղկացեալ յանդին, որ է ԵԼ. ԺԲ. ԻԴ. ԷԷ. ԺԲ.

35 ՂԱ. ՅԾԴ. ԺԱ. ԺԲ. Գ. Ե. Ը. ԺԵ. ԺԹ. ԻԸ. Ժ. ԺՂ. ՆԾԶ. ՇԼԲ. ԺԴ. ԶԴ. այսչափ են թիւք շրջագաիցն, որ կարգաւք ցուցեալ լինին՝ մասունք, ժամք, աւուրք, շարաթք, ամիսք, յեղանակք, ամք,  
 40 շրջանք, դարք, կատարմունք ժամանակաց: Իսկ ըստ նոցա և թիւք պատշաճին, քանզի են, որք ի միմեանց բաղկանան, և են, որք սկսանին, և այլք զկատարումն

\* Այս աղճատված թվաշարքի ընդհանուր իմաստը պարզ է: Այստեղ նշված են տոմարական այլև այլ միավորներ: Այսպես, առաջին թվանշանները (որ հավանորեն պետք է սրբադրվեն՝ Ա. Բ. Գ. [Դ] Ե. Զ. [Է] ձևով) շարաթվա օրերն են, ԺԲ.—օրվա «մասերը», ԻԲ.—օրվա ժամերը, Ե.—«նոսոս» (տես՝ Ան. Շիրակացի, Տիեզերագ. և տոմար, էջ 70), Է.—շարաթվա օրերի քանակը կամ «Նօթներեակ», ԺԱ.—արեղականային և լուսնային տարիների տարբերությունները, ՅԿԵ.—տարվա օրերի քանակը, ԾԲ.—տարվա շարաթիւների քանակը, ԺԲ.—ամիսների քանակը, Գ. (զուցէ՞ Գ.)—եղանակները, ԺԵ.—«ընդիքախոն», ԺԹ.—լիննկասաներեակ», ԻԸ.—«քսանութեակ»:

1 Առնուն || առնուն 4 «աս[ին և]» ջնջված է 5 «Գ. ... աղ» ջնջված է, 6 Բ. || երկրորդ, 11 ա || ամենայն 23 Գ. || երրորդ 31 Գ. քն.զի (երրորդ քանզի) || Քանզի:

4 Գ. || Չորրորդ 8 Ե. || Հինգերորդ 9--10 մեմ || ամենայնքն 28 վերնագրված է՝ «Յաղագս ժամանակի, առանձին» 20 «որորումն» բառի «ն» շահտ է նկատվում:

առնուն: Եւ դարձեալ որք կատարինն  
 աշխոյն մէջ բաղկանան կամ սլորաք:  
 Իսկ իննեւասաներեակն քսանութիւք  
 կատարեալ համանգամայն տեսակաւքն,  
 5 որք են շրջանակք. ԺԳ. և ՁԴ. ամք  
 եկամուտ, որ ոչ դասի ի զգալիս կեն-  
 ցաղական վարուց աշխարհիս: Այլ ըստ  
 կատարման երեքտասանիցն՝ լրումն և  
 քակտումն բաղկանա հոսանուտ և զա-  
 10 նագան տեսակի բոլորիս, և յանոսա-  
 նուտ և յանդանագան տեսակն չիինել  
 հարկի, որ է անժամանակ:

Առաջին. իսկ ըստ աշխոյն բաժանի ժա-  
 մանակ ի տեսակս հինգ, որ է սկիզբն  
 15 բոլորին և կատարած բնութեանց և  
 զ[աւրո]ւթիւնք յեղմանց և չափք մի-  
 ջոցացն և... մանցն հատածք: Արդ, որք  
 հեռեին այսմ՝ անժամանակ ասի:

Երկրորդ. իսկ ի բնութեան ըստ արար-  
 20 չին չորիւք զանագանի տեսակաւք, որ  
 են անանցականք յիւրաքանչիւրոցն են-  
 թակաիցն, որք ասին համանգամայնք:  
 Եւ ոչ նախկին կամ վերջին ժամանակ  
 ինչ բաղկանա: Այլ իւրաքանչիւր սահ-  
 25 մանքն զգաութեանցն ժամանակաւ  
 յայտնին ըստ զաւրութեանց խառնից  
 կամ կրից: Չի լուծումն զգաութեանցն  
 յերկոսին բաղկանա: Չի և որ ըստ աշ-  
 սոցիկ ոչ է՝ անժամանակ ասի:

Երրորդ. իսկ ըստ էականին ի բաժան-  
 մունս պատահից բնաւորեցաւ զոր, ըստ  
 շարունակութեան առկա դրից և դասա-  
 ւորութեան: Չի շարունակ է ըստ ինքեան,  
 ի վերա պատահիցն և գոացութեանցն:  
 35 Իսկ վերագոյնքն քան զսոսա անժամա-  
 նակ ասին:

Չորրորդ. իսկ բաղկացութիւն ժամա-  
 նակի ըստ քառակին է՝ ի նիւթից և [ի]  
 շարժմանէ ի սահմանս ունայնին վարիլ  
 40 կառուցմամբ, ի հրամանէ անեղին բնու-  
 թեան:

Արդ, երևեցաւ ժամանակ եռակի տեսու-

թեամբ ըստ բոլորին, զի է որ ըստ յեր-  
 կարման առեալ վասն ծնընդից անհա-  
 տիցն բազմութեանց և դատութեանց  
 վարման պատահիցն: Իսկ յառաջ քան  
 5 զբոլորն և զկնի՝ անժամանակք ասին և  
 ոչ այսք բաղկանան:

Յաղագս սկզբան և կատարածի

Քանզի է սկիզբն և կատարած՝ նիւթա-  
 կան, տեսական, հիմնական, գործական: Եւ  
 10 բաժանի ըստ արարչութեանն և ժամա-  
 նակի: Քանզի սկիզբն, ըստ արարչու-  
 թեանն և կատարած ըստ ժամանակի:  
 Չի է սկիզբն, որ կատարած է, և է կա-  
 տարած, որ սկիզբն, և է սկիզբն, որ [ոչ]  
 15 կատարած է, և է՝ որ ոչ կատարած և ոչ  
 սկիզբն: Իսկ ըստ աշխոյն է խնդրոց. զի  
 ի բնութեան ըստ քառակին զանագանի,  
 զի է, որ հուպ սկիզբն և հուպ կատա-  
 20 րածն, և է, որ հեռի սկիզբն և հեռի կա-  
 տարած: Եւ բաժանի սկիզբն ըստ առա-  
 ւելութեան և կատարած ըստ ստուգա-  
 բանութեան:

Առաջին. իսկ յէականութեանն զանա-  
 գանի սկիզբն ըստ գոյացութեան և կա-  
 25 տարածն ըստ պատահման:

[Երկրորդ]. և դարձեալ ընթանուք և  
 մասնական գորով, զի է, որ սկիզբն է և  
 է, որ կատարած յենթակառումն, և է, որ  
 սկիզբն և ի նմին կատարած, և է, որ ոչ  
 30 սկիզբն և ոչ կատարած:

Երրորդ. զանագանի և ըստ շարժման  
 և ըստ նիւթո: Քանզի սկիզբն ըստ շարժ-  
 ման նախ էին գորով, իսկ կատարած ըստ  
 նիւթի վերջին գոր:

Քանզի զոանա բոլորն ըստ քառակին  
 երկդիմի բաժանմամբ՝ ի նիւթոյ և ի  
 շարժմանէ և յունայնէ, որ է սկիզբն և  
 կատարած, և ընդ մէջսն՝ յեղումն ըստ  
 շարժման և ըստ նիւթի: Եւ ամանակ  
 40 եռակի տեսութեամբ՝ յարածղական, գե-  
 րակատար, անորիշ, որ է ըստ սւնայնի  
 հորովման չափուցն: Իսկ ըստ անբաւին  
 էակ անսկիզբն, անկատարած, անյեղլի,

7 Ձեռագրում վերնագրված է՝ «Յաղագս անթաւ-  
 սութե [ստուգածախաւսութեան] սկզբան և կատա-  
 րածի, առանձին» 23 Ա. || Առաջին 31 Գ. || Եր-  
 րորդ:

3-4 ԻԲ. իւք կատարեալ 8 ժԳ. իցն || երեքտա-  
 սանիցն 23 Ա. || Առաջին 17 «... մանցն» բառի  
 սկզբի 4 տառեր ջնջված են 19 Բ. || Երկրորդ 20 Գ-իւք  
 || չորիւք 25 «զգաութեանցն» բառից հետո գրված  
 և ջնջված է՝ «յերկոսին բաղկանա» 30 Գ. || Երրորդ  
 37 Գ. || Չորրորդ:

անամանակ, աններկա, անանցեալ, ան-  
ապառնի. և է դարձեալ գոյացուցիչ  
սկզբան և կատարածի և որ ընդ մէջն  
են բաղկացութիւնք:

5 Արդ, երեւցաւ սկիզբն և կատարած  
ևռակի իմացութեամբ՝ զի է, որ անսկիզբն  
է և է, որ անկատարած: Իսկ սկիզբն և  
կատարած ընդ մէջսն բաղկաց[ան] յոք-  
նակի հատուածիւք:

10 Յաղագս բնութեան

Բնութիւն է սահմանական և արարչա-  
կան: Սահմանական է բնական և հաս-  
տատուն, իսկ արարչականն է անբնա-  
կան և անհաստատ: Քանզի բնականն ի

15 սեռէ և ի բաղկացուցիչ զանազանու-  
թեանց, և անբնականն է շարժումն տե-  
սակացն և յեղումն նմանից և աննմա-  
նից: Եւ թիւքն հանդէտ ի պարզաբար  
անհատն բաղկանա: Իսկ դարձեալ է

20 բնական, որ սահմանի ի սեռէ և ի բաղ-  
կացուցիչ զանազանութեանց և է, որ  
սահմանադրի անուամբ, և է, որ առա-  
ւելու ըստ նուազութեան բառիցն և պա-  
կասի ըստ յորովման:

25 Իսկ ըստ էակին զանազանի սահմանա-  
կանն ըստ գոացութեան և արարչականն  
ըստ պատահման: Եւ դարձեալ է, որ  
սահմանական է, և է, որ արարչական, որ  
յենթակառու, և է, որ սահմանական և

30 ի նմին արարչական, և է դարձեալ, որ  
ոչ սահմանական և ոչ արարչական:

Իսկ բաղկացութիւն բնութեան է ըստ  
քառակին: Քանզի անբաւն է պարզ և  
անշարադրելի, և նիւթ և շարժումն՝

35 խառն և խուռն շարադրութեամբ, իսկ  
ունայնն՝ ընդ մէջսն, պատճառ որոշման  
գոլով:  
Արդ, է բնութիւն ևռակի բաժանմամբ,  
զի է, որ պարզ է ըստ սահմանականին,  
40 և է, որ շարադրելի ըստ արարչականին,  
դարձեալ, է, որ ընդ մէջսն կցորդին:  
Զի շարադրելին ի պարզէն բաղկանա,  
իսկ պարզն ի շարադրականէն զերևումն  
առնու:

Յաղագս էականութեան

էականութեան երկու [են] տեսակք՝  
զգալի և իմանալի: Զի ի զգալոյն ան-  
զգալին և յիմանալոյն անիմանալին:

5 Քանզի գոացութիւն յանզգալոյն ասի,  
իսկ պատահումն յանիմանալոյն գոլ: Եւ  
է գոյացութիւն ընթանուր և պատա-  
հումն մասնական: Եւ դարձեալ, պատա-  
հումն է ընթանուրն իսկ գոյացութիւն

10 մասնական:  
Առաջին. և զանազանի ըստ քառակին:  
Քանզի անբաւ ընթանուր ասի ըստ գոա-  
ցութեան, և ունայն՝ մասնական ըստ  
պատահման, իսկ նիւթ՝ մասնական ըստ

15 գոյացութեան, և շարժումն ընթանուր  
ասի ըստ պատահման:

Երկրորդ. իսկ գոյացութիւն էականու-  
թեան ըստ քառակի բաժանի: Քանզի  
անբաւն է ասի, առանց սկսման և դա-

20 դարման, և շարժումն և նիւթ՝ էակ, ի  
ձեռն սկսման և կատարման: Իսկ ունայն  
ոչ է ասի ոչ էակ, այլ հորովի ըստ պի-  
տանացուին անուամբ և բաբու:

Արդ, երեւցաւ էականութիւն ևռակա-  
25 բար:

Զի է, որ հասողական է ըստ զգալի և անի-  
մանալոյ և, դարձեալ, որ յերկոցունց՝  
ըստ գոյացութեան և ըստ պատահման:

Յաղագս շարժման և նիւթի

30 Արդ, ամենայն ինչ շարժումն, ի շարժ-  
մունս նիւթ և, դարձեալ, ամենայն ինչ  
նիւթ և ի նիւթսն շարժմունք: Այսոքիկ  
իրք և իմացեալք, արամարանեալք և  
ներգործեալք: Զի որ շարժումն է՝ և

35 նիւթ, և որ նիւթ է՝ և շարժումն: Քանզի  
գոացուցիչք են միմեանց: Զի նիւթին  
կիզումն և ցրտումն և խոնաւումն և ցա-  
մաքումն ի շարժմանէ բաղկանա, իսկ  
շարժմանն լինելն և ասպականելն, աճելն  
40 և նուազելն, այլայլելն և փոփոխելն ի  
նիւթս բաղկանա:

1 վերնագրված է՝ «Յաղագս էականութե, առան-  
ձին» 3 սգալոյն 11 Ա. || Առաջին 17 Բ. || Երկրորդ  
27 յերկոցունց 29 վերնագրված է՝ «Յաղագս գոյա-  
ցուցիչ և մշտաբուխ քառակին, որ է ամարանական  
[աստուածարանական] շարժման և նիւթի, առան-  
ձին» 30 ա || ամենայն 38 Դ. [չորրորդ] իսկ ||  
Իսկ:

10 վերնագրված է «Յաղագս բնութե, առանձին»  
12 բանական || բնական 25 Ա. [առաջին] Իսկ || Իսկ  
23 բնութիւն || բնութեան:

Առաջին. և զանազանի ի շարժումն  
 յենթականալն ըստ նաւարութեանն յու-  
 նայնի: Իսկ նիւթին յենթականալն՝ ըստ  
 թանձրութեանն շարժման, և յունայնէն  
 5 զերեսուն առնուր:

Երկրորդ. իսկ ըստ անբաւին է անշարժ  
 և աննիւթ, զի անխառն ասի: Քանզի  
 շարժումն և նիւթ յանշարժէն և յան-  
 նիւթէն բաղկանա, իսկ զազարումն և ի  
 10 նիւթէ և ի շարժմանէ, որ է սուակարար  
 ասացութեամբ:

Յաղագս ունայնի

Ունայն ասի անիր անխմացուածն՝ ան-  
 բան և աններդործեալ, և է որոշումն  
 15 մասնական և հանրական մտաց: Զի է ի  
 խառնս ընդ նիւթի և ընդ շարժման: Իսկ  
 արտաքոյ՝ անբաւ ասի ի բաւականէ բո-  
 լորին, իսկ ըստ անբաւին բաւականեալ,  
 այսպէս եռակարար ասի: Իսկ բաղկա-  
 20 ցութիւն ունայնի է ըստ այսոցիկ՝ զի  
 ի գոյէ և յիրէ անգոյ և անիր ասի. Եւ  
 ի մշտակացութենէ և ի յաւիտենականէ  
 անցական և անբնական: Այլ ոչ որպէս  
 սմանք կարծեցին թէ իցէ ինչ, այլ է  
 25 ոչինչ, քանզի և կարծելն իսկ ընդու-  
 նայն և անվայր ասի:

Յաղագս անբաւի

Անբաւ է, որ ամենայնիւ է անբաւ, որ  
 ասի բոլոր, անմասն և անտեսակ: Եւ է  
 30 միաք և խորհուրդք, իմաստք և զիտու-  
 թիւնք և տեսութիւնք ընդհանուր և  
 անշափ:

Իսկ ըստ այլոցն է ըստ վեցեկին և ըստ

1 Ա. || Առաջին 6 Բ. || Երկրորդ 12 A Յաղագս  
 ունայնի, առանձին, BD ունայնին 13 D Յունայն,  
 BD անխմացուած 14 B աններդործելի, D աններ-  
 դործել 17—18 B բոլումն իսկ ըստ անբաւականելով  
 || բոլորին—բաւականեալ 18 D չիք իսկ, A բաւին  
 || անբաւին 19 BD առաջին, A Ա. (առաջին) իսկ  
 || իսկ 20 D ունայնին 22 B մշտակացութենէ, D յա-  
 վիտենականութենէ 23 D առանցական || անցական,  
 A անբնակ, B անբանական 24 B իցեն ինչ այլ և է,  
 D չիք այլ է ոչինչ 25—26 D ունայն || ընդունայն  
 26 B ընդվայր || անվայր 27 B անբաւի 28 D Ան-  
 բաւին || Անբաւ է 29 B ասէ 30 B իմաստ 31 B  
 ընթհանուր 32 BD անշափք 33 B այլոցն || ըստ  
 այլոցն, BD չիք է, BD վեցեկի:

չորրեկին: Քանզի անբաւ է ոչ բարի և  
 ոչ չար, ոչ սկիզբն և ոչ կատարած, ոչ  
 շարժումն և ոչ նիւթ: Ըստ այսոցիկ անել  
 ասի. զի ոչ յայլմէ և ոչ յինքենէ ունել

5 զգոյութիւնս: Եւ զարձեալ, ըստ երկրոր-  
 դին է անբաւ՝ զերազանցազոյն, զերա-  
 զանցազունիցն, անժամանակազոյն ան-  
 ժամանակազունիցն, բնականազոյն բնա-  
 կանազունիցն, էազոյն էազունից, ու-  
 10 նայնազոյն ունայնազունից, անբաւա-  
 զոյն անբաւազունից:

Ըստ այսոցիկ անհասազոյն ասի յէա-  
 կացս, զի սահման քննութեանցս յան-  
 հունսն զանցեալ զտանի: Զի ըստ այ-  
 15 սոցիկ ոչ գոյ հասումն բնութեան երկ-  
 րորդ անբաւին:



Իսկ ըստ չորրեկին միայն ծանաթու-  
 թիւն արարածոցն զարարիչն, ի բանա-  
 20ւորութենէ Աստուծոյ առ ազգս հրշտա-  
 կաց և մարդկան: Եւ աստուածարանելն  
 երիս աստուածս իւրաքանչիւր առանձ-  
 նաւորութեամբ, զի է, որ ծնող ասի, և  
 է, որ ծնունդ, և է, որ ելող: Այլ այս ըստ  
 25 մարդկաին բնութեան երեկ, յաղագս  
 գթութեան հաւր և մարդասիրութեան  
 որդո և ողորմածութեան հոգոյն: Քանզի  
 երեք են՝ մի են բնութեամբ, կամաք  
 և արարչութեամբ: Նոյնպէս և ըստ  
 30 հրշտակաց փառաւորեալ երիս անձինս՝  
 զարարիչ և զհաստիչ և զկազմիչ, որում  
 ասեն սուրբ, սուրբ, սուրբ միանգամայն  
 տէր զաւրութեանց: Փառք և պաաիւ և  
 զսնութիւն անեղին և անհասին և  
 35 մշանջենաւորին այժմ և յաւիտենից  
 յաւ[իտեանս]:

1 B չորեկի, D չորսեկի || ըստ չորրեկին 3 D  
 աղեղ || անեղ 4 D ինքենէ, B ունի 5 B զգոյութ-  
 թիւնս, «զգոյութիւնս զարձեալ» բառով ավարտւում  
 է D ձեռագրի բնագիրը, B չիք եւ 5—6 A ըստ Բ.-ին  
 || ըստ երկրորդին 6—7 B զերազանցազունին 8 B  
 էականազոյն || էազոյն էազունից 10 A անունայ-  
 նազունից ուղղում եմի՝ ունայնազունից, B անու-  
 նայնազունին || ունայնազոյն ունայնազունից  
 11 «անբաւազոյն—անբաւին» հետվածի դիմաց B-ն  
 ունի «անբաւազուն անհաս ի յէակացս, զի ոչ քննի»,  
 որով և ավարտւում է B ձեռագրի բնագիրը:



Կատարեցան վեցեակքն, որ ի միմեանց  
սահմանին, և չորրեակքն որով ճառիցն  
մասնականք ասին, և գլբումն էառ եր-  
կոտասանեակն մասամբքն, և գերազան-  
5 ցեալ գտաւ յանհատիցն, ըստ իւրաքան-  
չիւր մասանցն տեսակաց և սեռից:  
Քանզի է խորհուրդ ամենայն եռակի և

իմացմունք ընթանուր արհեստ փիլի-  
սոփաական և սահմանք ուսմանց, և  
թողլով որ ըստ աշխարհիս են տուժիչք  
արհեստ անյաղթ փիլիսոփայից:  
5 Աստուած, Աստուած, Աստուած, փառք  
քեզ այժմ [և] յաւ[իտեան]:

ԱՍ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

«ՆԿԱՐԱԳՐՈՒՅԻՒՆՔ ԻՆՉ-ԻՆՉ ԳՈՐԾՈՑ...»  
ՊԻԵՍԻ ՄԱՍԻՆ

Ներսիսյան դպրոցի առաջին աշակերտների (Խաչ. Աբովյան, Ստ. Նազարյան, Պետրոս Մաղաթյան (Սեյեադ) և այլն) թվին է պատկանում նաև Գալուստ Շիրմազանյանը:

Նրա առաջին տպագիր ստեղծագործությունը՝ մի գրաբար բանաստեղծություն է՝ լույս տեսած «Նրախայրիք Ներսիսեան դպրոցի» ժողովածուի մեջ. սակայն նրա գրական առաջին ծավալուն գործը եղել է մի վեպ, գրված 1826 թվին՝ Պողոս Ղարազադցի վարդապետի առաջարկով, որի հիման վրա, հեղինակը 1860 թվին գրել է իր «Ասրի Բէկ և Գիքի» պիեսը: Պիեսից երևում է, որ այդ վեպը հիմք է ունեցել 1820 թվին Հին Նախիջևանում տեղի ունեցած մի դեպք: Դեպքի հերոսները պարսկական բռնությունից դժգոհ սպասամբներ են, որոնք անհուն հավատով կապված են սուլթանի օգնության փրկարար ուժի հետ: Այդ վեպն անտիպ է մնացել, և ձեռագիրն էլ առայժմ կորած է:

«Ասրի Բէկ և Գիքի» պիեսից բացի տըպագրված են նաև Շիրմազանյանի մի շարք ուրիշ և բազմաթանր ստեղծագործությունները: Հիշենք այդպիսիներից՝ «Բմ նշանածն Արազն ա» պիեսը՝ Թավրիզի հարսանիքի նկարագրությունը, նրա հիշատակարանից հանված «Ճանապարհորդություն Հայաստանումը», «Անեկդոտներ, զվարճալի գրույցներ... առակներ» երգիծական նյութերի ժողովածուն, «Նյութեր ազգային պատմության համար» աշխատությունը և այլն:

Նա ունեցել է նաև բազմաթիվ այլ աշ-

խատություններ, որոնք համարվում են կորած: Ափսոսանքի արժանի են հատկապես Ա. Ս. Գրիբոյեդովի մասին նրա հավաքած հարուստ տեղեկությունները, որոնց մի հնչին մասը նա գետեղել է «Նյութեր ազգային պատմության համար» աշխատության մեջ:

Գալուստ Շիրմազանյանի անտիպ ստեղծագործություններից փշրանքներ էլ կան, որ հասել են մեզ. այդպիսիներից են նրա երկու գրաբար երգերը՝ նվիրված գինուն և սերախությունը:

Երևում է, որ նա սեր է ունեցել նաև գեպի հնագույն մատենագրությունը. նրա անձնական գրադարանում գտնվելիս են եղել 200-ից ավելի ընտիր գրչագրեր:<sup>1</sup> Կարևոր աշխատանք է կատարել Գալուստ Շիրմազանյանը նաև բանահավաքության ասպարիզում. գրա վկան է Հայկական ՍՍՌ Մատենագրարանի № 6588 ձեռագիրը, ուր պահպանվում են հայտնի ու անհայտ հեղինակների 53 երգ և բանաստեղծություն: Դրանցից շատերը խոշոր նշանակություն ունեն մեր գրականության համար: Հիշենք «Ողբ դստերն մեծի Բշխանի» գրամատիկական պոեմը, Ալամդարյանին վերագրված «Ասիւծ և էշ» առակը, Ստեփաննոս քահանայի «Ափսոս քեզ Հայոց խղճուկ ժողովուրդ» ատղով սկսվող գողարիկ բանաստեղծությունը, Ազրար Աղամի,

<sup>1</sup> Մատենագրարանի արխիվի բաժնում պահպանվում է նրա ունեցած ձեռագրերի, գրքերի և հնագույն թանգարանային իրերի ցուցակը (տես Կաթողիկոսական Դիվան, Թղթապանակ 228, վավերագիր 17):

Շամշի Մելքոյի, Թուրինջի, Գյուրջի Նա-  
վիի, Միսկին Բուրջու, Հար. Ալամզարյանի,  
և այլոց ստեղծագործությունները:

Գ. Շիրմագանյանն առանձնատու-  
ներ է ունեցել գեպի թատերական արվես-  
տը. այդ են ապացուցում ոչ միայն նրա  
մեզ հասած մի քանի պիեսները, այլ և այն  
հանգամանքը, որ նա իր սեփական տան  
ընդարձակ դահլիճը, սրբը զրականության  
մեջ հայանի է Շիրմագանյանների դար-  
պաս կոչումով, երկար ժամանակ արամա-  
զրել է ինչպես հայ, նույնպես և վրաց նոր  
ստեղծվող թատրոններին:



Հայ զրականության պատմության մեջ  
հաճախ է հիշվում Գ. Շիրմագանյանի զը-  
րած մի կոմեդիան՝ սրպես անհետ կորած  
մի ստեղծագործություն:

Վերջերս մեզ հաջողվեց Մատենադարա-  
նի Ձեռագրատանը հայանաբերել այդ պիեսի  
2 ձեռագիրը: Ահա այդ ձեռագրերի ամփոփ  
նկարագիրը.

№. 3045. — Թերթաքանակ 70, նյութ-  
թը՝ թուղթ, գիր՝ նոտր, մեծություն 21,5 ×  
17,5, կազմ՝ սովորաթուղթ (ձաղկաթերթի-  
կով պատած, մեջքը և անկյունները՝ կա-  
նաչ կաշի). վիճակը՝ լավ, գրիչ՝ Մկրտիչ  
վարժապետ Եկենյան, գրչության վայրը՝  
հավանաբար Թիֆլիս, գրչության ժամա-  
նակը՝ 1852 թ. սեպտեմբեր:

№. 8810. — Թերթաքանակ 186, նյութ  
թուղթ, գիր՝ ուշ շրջանի շղագիր, մեծու-  
թյուն՝ 11,5 × 17,5, կազմ՝ սովորաթուղթ  
(ձաղկաթերթիկով պատած, մեջքը և ան-  
կյունները՝ կանաչ կաշի), գրչության պա-  
րագաները անհայտ (1855-ին արդեն գրան-  
վելիս է եղել Ավետիք Էնֆիաճյանի գրա-  
դարանում):

№. 8810 ձեռագիրը գուրկ է ոչ միայն  
զրչի և գրչության մասին լինելիք տեղե-  
կություններից, այլև չունի ոչ խորագիր  
և ոչ էլ հեղինակի անվան հիշատա-  
կում: № 3045 ձեռագիրն, ընդհակա-  
ռակն՝ ունի խորագիր, գրչության մասին  
ավյալներ, սակայն հեղինակի անունն այն-  
տեղ թաքցված է իբար հատող գալարուն

զծիկների տակ և դժվար է նկատում:  
Իսկ զրանից վերև գրված է. «Շարագրեալ  
յազգատիրէ յուսմեմէ ի Տիֆլիս. 1841»: Ընդ-  
օրինակողը չնայած գրել է իր անունը, սա-  
կայն գրել է շատ մանր տառերով:

Ինչնչի բացատրել այս հանգամանքը:

Ազ. Երեցյանը «...Կովկասի Հայք...»-ում,  
այդ պիեսի մասին խոսելիս, ասում է, որ  
այդ պիեսի ձեռագրերն այն ժամանակ  
գաղանի էին տարածվում, իսկ ստիկա-  
նությունը փնտռում էր նրա անհայտ հե-  
ղինակին: Այստեղից պարզ երևում է, թե  
ինչու № 8810 ձեռագիրը պիտի գուրկ լի-  
ներ և խորագրից, և այլ ավյալներից: Դա  
միաժամանակ ցույց է տալիս, որ այդ ձե-  
ռագիրն ընդօրինակված էր այն ժամանակ,  
երբ գեռ կային թե Հ. Կարբեցին, որ մե-  
ռով 1842 թվին և թե Կարապետ եպիսկո-  
պոսը, որը հեռացվեց պաշտոնից 1845 թվին.  
հատկապես վերջինս, որովհետև պիեսը ամե-  
նից շատ զրա դեմ էր ուղղված, և դա էր,  
որ դիմել էր ստիկանությանը՝ պիեսի հե-  
ղինակին գանկու և պատժելու:

№ 3045 ձեռագիրը ունի խորագիր և  
ընդօրինակված է 1852 թվին, երբ արդեն  
Ն. Աշտարակեցին էր կաթողիկոս: Եվ ար-  
տագրող Մկ. Եկենյանն էլ, թեև ուղ զծիկների  
տակ, բայց և այնպես հիշատակել է հեղի-  
նակի անունը, երբ այլևս չկային Կարապե-  
տի և Կարբեցու սարսափները:

Այս բոլորը հիմք է տալիս կարծելու, որ  
№ 8810 ձեռագիրն ընդօրինակված է  
1842—1843 թվերին: Եվ զրանից 12—13  
տարի հետո էր միայն, որ ժամանակի դոր-  
ծիչներից մեկը հնարավորություն ունեցավ  
այդ ձեռագրի վրա գրելու. «№ 71. ի ձե-  
ռագիր ի մատենից գրադարանի Աւետիքայ  
Մկրտչեան Էնֆիաճեանց ի 1855 ամի  
Տիֆլիս»:

№ 3045 ձեռագրի սկզբի թերթերի լու-  
սանցներում կան մատիտով արված մի  
շարք նշումներ: Նշումների հեղինակն ան-  
հայտ է, սակայն հենց այդ նշումներից  
երևում է, որ նա եղել է Կարապետ եպիս-  
կոպոսի մտերիմը, ծանոթ է եղել նրա ինչ-  
պես Թիֆլիսյան և Ախալցխայան առաջնոր-  
դության մանրամասնություններին, նույն-  
պես և Արզրումյան:

Այդ նշումները, կարելի է ասել, առաջին դրավոր քննադատական նշումներն են Գ. Շիրմազանյանի պիեսի մասին: Ափսոս, որ միատուփաւոր են և շոշափում են փաստական մանրութիւնք:

\* \* \*

Ընդունված է ասել, որ այդ պիեսը գրված է 1836 թվին: Դա սխալ է՝ որովհետև.

1. № 3045 ձեռագրի վրա պարզորեն գրված է, որ այն հորինվել է 1841 թվին:

2. Պիեսում կա մի նամակ (Սեփոյի կնոջ), որի տարեթիվն է ՌՄՁԹ. (1289 + 551 = 1840): Այդպիսի նամակ 1836 թվին պիես գրողը չէր կարող ոչ ներկայացնել և ոչ հորինել:

3. Գործող անձերից մեկը Կարապետ եպիսկոպոսին ասում է. «Դու ջեր չուրս տարի էլ չկա, վուր նրանցը (Թիֆլիսի հարուստներին) ձանչնում իս»: Կ. եպիսկոպոսը Թիֆլիս է գնացել 1837-ի սկզբներին, ավելացնելով դրան «չուրս տարի էլ չկայ», այսինքն 3 տարի և 8—10 ամիս, կստանանք մտավորապես 1840 թվի աշունը: Այսպիսի դեպք 1836 թվին ներկայացվել չէր կարող:

4. Պիեսի վերջում խոսվում է Հովհ. Կարբեցու մահվան մասին. իսկ նա մեռել է 1842 թվին...

Այսպիսով՝ հերքվում է պիեսը 1836 թվին վերագրող կարծիքը և պիեսի հորինման համար մտում է 2 տվյալ՝ 1841-ը և 1842-ը: Կարծում ենք, որ այն հորինված է հենց 1841—1842 թվերի ընթացքում: Դրանից ուշ չէր կարող լինել, որովհետև այդ մասին տվյալներ չկան, բացի դրանից 1843 թվին արդեն ներսես Աշտարակեցին էր նշանակված կաթողիկոս և այլևս Կարապետ եպիսկոպոսը հնարավորութուն չէր ունենա դիմելու ստիկանությանը:

Այս պիեսի մասին առաջին անգամ խոսող Մարկոս Աղաբեկյանն ասել է. «Այդ եղելութունք տեղի են ունենում 1836 թվերում»: (Այստեղ նույնիսկ խոսք չկա պիեսի հորինման մասին): Դրանից առաջ էլ նա հայտարարել է. «Կարելի է, որ թրվականի և անունների մասին շփոթվիմ...»: Սակայն հաջորդ խոսողներն, այլ տվյալներ

չունենալով, մի կողմ են դրել Աղաբեկյանի խոսքերի ստուգելիութունը և 1836 թվը ներկայացրել են որպես ճշգրիտ տարեթիվ:

Պիեսն ամփոփում է Կարապետ եպիսկոպոսի Թիֆլիսյան առաջնորդության պատմությունը (1836—1842):

Բոլոր գործող անձինք էլ իրական դեմքեր են, փաստերը նույնպես առնված են իրականից: Կառչած մնալով փաստերի և իրականության մանրամասն դրսևորումից, Շիրմազանյանը չի կարողացել բեմ հանել նաև շատ-շատերին, որոնց այնքան ցանկացել է: Ուստի և նրանց մասին խոսել է կամ դրույցի կամ փաստաթղթերի միջոցով. և երբեմն այդ «Նեոակա գործող» անձինք ավելի շատ են երևում, քան իսկական գործողները (օրինակ՝ Սիմ. Բզնունի, Հովհ. Կարբեցի, Գևորգ վարդապետ և այլն): Այս «Նեոակայող»-ներից հեղինակը համակրել է միայն Սիմ. Բզնունուն և Սեփոյի կնոջը, իսկ մյուսներին՝ հատկապես Հովհ. Կարբեցուն շատ ուժեղ ծաղրի է ենթարկել:

\* \* \*

Դալուստ Շիրմազանյանի այս կամեղիան ամբողջապես ուղղված է ժամանակի ձրիակերների և խավարամոլների բանակի դեմ: Հեղինակը խիզախորեն խարազանում է Հովհ. Կարբեցուն՝ ամենաանողոք փաստերի ու վկայությունների միջոցով: Առավել ևս ծաղրի ենթարկում Թիֆլիսի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսին, որը ցրեց Արովյանի «Նախաշավիղ»-ի տպագրվող մամուլները: Վարպետորեն ցույց է տալիս այդ շահամոլի և փառամոլի ամբողջ էությունը: Ծաղրում և պախարակում է էջմիածնի սիսողականներին, ինչպես նաև տասնյակ ուրիշ նշանավոր ու աննշան հոգևորականներ:

Հոգևորականներից բացի հեղինակն ըսկսում է մերկացնել պետական պաշտոնյաներին, պրոկուրոր Թովմա Ղորղանյանին, ատենադպիր Քարաաշտովին և այլն: Թեպետ զգույշ, բայց թունավոր սլաքներ է ուղղում նա ցարիզմի Կովկասյան ներկայացուցիչներ Բարոն Ռոզենի և այլոց դեմ՝ որպես

կաշառակերներին և արգարությունը ոտնահարողներին: Բ. Ռոզենի անունը հաճախ է հիշատակված 2-րդ դործողության մեջ, ուր ասված է Վե մինչդէռ սպասէաք արգարքնութեան, յայտնեցին մեզ թէ պարտիք յաքսոր գնալ՞. ահա Ռոզենի արգարադատությունը<sup>1</sup>:

Խարազանված և ծաղրված են նաև հայ հարուստներն ու իշխանները:

Գ. Շիրմազանյանի պիեսը առաջին դեղարվեստական ստեղծագործություններից մեկն է մեր նոր գրականության մեջ, որ խիզախորեն և բացահայտ կերպով դանախոծում ու ծաղրում է ժողովրդի թշնամիներին, բեմ հանելով նրանց՝ իրենց իսկական անուններով և մականուններով:

Պիեսում օգտագործված են Ս. Բզնունու մի քանի փաստաթղթերը: Հեղինակը ջերմորեն համակրում է Բզնունուն, ուստի և՛ նրա խոսքերը բերում է իր նպատակին ծառայեցնելու՝ որպես իր սեփական մտքերի դրսևորում: Բզնունին և իր կողմնակիցները գրել են ցարին իրենց աքսորվելու մասին. «Թէ ինչ էր պատճառն՝ չյայտնեցին մեզ, միայն կամեմ ասել, թէ մեք չՖավար և նա հարուստ, գիտէ սուրբ կայսրութիւնն Չեր, որ հարուստի խօսքն ընդունելի է, քան չՖավորինն»:

Այս սոցիալական մոմենտը նկատվում է նաև հողեորական հաշիֆներում. Կարապետ եպիսկոպոսն ասում է. «Տգեա, անմիտ, լիրբ, վատարարուց տեր քահանա ըլլա՛ ֆուսս չունի, բայց ատանկ աղքատ ըլլա նե՛ մենք չենք ուզեր. և չըլլա՛ ան ալիլի լավ է»:

Նույն Կարապետ եպիսկոպոսը պատասխանելով դերձակների շուտարաշունձ ասում է. «... ի հարկե, զանազանություն մը պետք է ըլլա ազնվականի և դերձակի մը ինչպես կենդանության, նույնպես մահվանից յետը, յան»:

Դերձակների համաքարապետը՝ Շիրմազանյանի միակ համակրած գործող անձնավորությունը, պատասխանում է.

<sup>1</sup> Բ. Ռոզենի կաշառակերության մասին խոսում է նաև պիեսի սկզբի մասում Կ. եպիսկոպոսին առաջնորդ նշանակելու համար նրան, Տայինովի ձեռքով հասցրված գումարի կապակցությամբ:

«... Ես, 40—50 տարի ալիլի կուլի, վուրքու էն մենձ-մենձ մարդկանց կու ճանաչեմ: Դիփունի հիդ կոճի էլ իմ խաղացի... Ասինք հիմի նրանք մէ-մէ շլապկա ին ծածկի ու մէ-մէ շինել ին զցի վրեններուն ու փքվում են, խաչը դիտենա, չէ թե Հայու աղգին, քու էն հողևոր տերին էլ մե կոպեկի լավություն նընգած տեղն հարկավոր չեն գա...»

Ինչպես դիտենք, պիեսի հորինման տարիներին դաժան պայքար էր գնում գրարարի դեմ: Այդ տարիներին էր, որ Արովյանը համառորեն լծվել էր աշխարհարարի կիրառմանը: Եվ ահա նրա հնչեցրած Քանաքեռի բարբառի կողքին հնչում էին նաև Թիֆլիսահայոց, ախալցխացիների բարբառները, և ժամանակի գրական (ոչ գրարար) լեզուն՝ միաժամանակ նաև Շիրմազանյանի կոմեդիայից:

Թիֆլիսահայոց բարբառը եթե չափածոյով մտել էր գրականության մեջ՝ Սայաթ—Նովայի, Շամշի Մելքոյի և այլոց կողմից, ապա արձակով դեռ չէր մտել: Այս կոմեդիայով էր, որ այն մուտք գործեց արձակի և գրամատուրգիայի բնագավառը:

Բարբառներից բացի, այստեղ ուշագրավ է նաև ժամանակի գրական լեզվի ներկայությունը, որով խոսում են Երեմիա Արծրունին և Եփրեմ վարդապետը:

Ասում են, որ այդ կոմեդիան մի երկու անգամ բեմադրվել է Շիրմազանյանների հայտնի Դարպասում, և եթե ընդհատվել է նրա ներկայացումը, դրա առաջին պատճառը պիտի փնտռել ստիկանության և կառավարության հարուցած արգելքի մեջ, ապա և՛ պիեսի գրամատիկական թերությունների մեջ:

Գ. Շիրմազանյանի կոմեդիայի պարունակած փաստերը հարուստ են: Դրանց հիման վրա մենք որոշ լրացուցիչ տեղեկություններ ենք ստանում այնտեղ նշված բաղմաթիվ անձնավորությունների վերաբերյալ: Տեղեկանում ենք նրանցից շատերի փոխհարաբերությունների մասին: Հիշատակենք, որ պիեսում, գործող անձերից բացի, մասնանշված են նաև 85—90 այլ իրական դեմքեր:

Թե որքան են ճիշտ այդ պիեսում հիշ-

ված փաստերն և փաստաթղթերը, մասամբ մենք կարողացանք ստուգել: Պիեսում, ինչպես ասացինք, տեղ են դառել Ս. Բզնունու երեք փաստաթղթերի պատճենները: Մենք այդ փաստաթղթերից երկուսի տառացիորեն համընկնող տարբերակները դառնք Սիմ. Բզնունու ձեռագիր վարքագրության մեջ, որը պահպանվում է Մասենադարանում: Ինչ վերաբերում է երկրորդ փաստաթղթին՝ դրա օրինակը չգտանք, սակայն դրա բովանդակությունը ցրիվ է տրված նույն ինքնակենսագրության մեջ: Եզրակացնում ենք, որ Ս. Բզնունին ունեցել է և առանձին պատրաստած մի փաստաթուղթ, որի մի օրինակն առայժմ հայտնի է դառնում Գ. Շիրմազանյանի պիեսից: Ինքը Շիրմազանյանն էլ պիեսի տողատակային մի ծանոթագրության մեջ մասնացույց է անում համապատասխան վավերագրեր: Վարդան Օձնեցու անտիպ պատմությունից տեղեկանում ենք, որ նա՝ իր պատմությունը գրելիս, մեծապես օգտվել է Մանվել Ալթունյան Կյումուշխանեցու մի ձեռագիր աշխատությունից՝ «Կշիռ գրութեանց» խորագրով: Այդ աշխատությունը պատկանել է Ն. Աշտարակեցուն, վերջինս դա թողել է Շիրմազանյանների մոտ աքսոր՝ մեկնելուց առաջ: Օձնեցին՝ այդ ձեռագրից օգտվելիս նշել է, որ այն գտնվում է Աղա Գալուստ Շիրմազանյանի տանը: Այս բոլորը հիմք են տալիս համոզվելու, որ մյուս փաստաթղթերն էլ իսկականից են ընդօրինակված: Բացառություն կարող է կազմել միմիայն Սեփոյի կնոջ նամակը, որը հավանաբար ստեղծագործված է:

Որքան էլ անողոք ու խիզախ է Գ. Շիրմազանյանն իր դարի մոռյալ ուժերի դեմ, բայց և այնպես նրա կոմեդիան չունի իր մեջ այն ժամանակ բարբոքված ազգային ազատագրության, լուսավորության, ուսուցողական հետ բարեկամական կապերն ամբողջապես և նման այլ վսեմ գաղափարները: Այդ գաղափարներով է տրոփում նույն տարիներին գրված «Վերք»-ի յուրաքանչյուր տողը, որի ամեն մի նախադասությունից երևում է հեղինակի քաղաքական-գաղափարական դավանանքը: Նույնը չի կարելի ասել «Նկարագրութիւնք...»-ի

մասին: Եվ դա իր պատճառներն ունի. Գ. Շիրմազանյանը փարված էր իր ժամանակակի աշխարհակրոն, որ կոչվում էր ներսիսյան, և Շիրմազանյանը գործում էր, կարծես, ավելի շատ սրպես այդ խմբակի և ոչ թե հասարակության ու հայ ժողովրդի առաջավոր ներկայացուցիչը: Հետագայում նա դարձավ Թիֆլիսի քաղաքապետի և սրոշ ժամանակից հետո արժանացավ իր երբեմնի սիրելի համքարների դաժան սպանալիքին ու հազիվ փրկվեց նրանց պատժիչ խռովությունից:

Դեռևս վերջնականապես պարզված չի Գ. Շիրմազանյանի գաղափարական ու հասարակական գործունեության բնույթը, բայց պարզ է միանգամայն, որ տվյալ գործի մեջ նա, 1841—1842 թվերին հանդես է գալիս սպողիցիոն տրամադրություններով և դիմակազերծ է անում եկեղեցու ղեկավարներին, կաշառակերությունը, շահամուլությունն ու անբարոյական բարքերը և քննադատաբար վեր է հանում իր ժամանակի մի շարք հասարակական հարաբերությունները:

Չնայած իր պրիմիտիվ կառուցվածքին, դրամատիկական թերություններին, պամֆլետային բնույթին, Շիրմազանյանի գործը հանդիսանում է 19-դ դարի սկզբի հայկական նոր ստեղծվող դրամատուրգիայի առաջին նմուշներից մեկը և անկասկած արժանի է մեր գրականության պատմության ուշադրությանը:

\* \* \*

Տեքստը կազմելիս հիմք ընդունեցինք № 8810 ձեռագիրն (A.) իր մի շարք առավելությունների պատճառով (վերջից ավելի ընդարձակ է, բաց թողումներ քիչ ունի և հավանաբար ավելի հին է): Այդ օրինակի համեմատությամբ № 3045 (B) օրինակի ունեցած տարբերությունները ցույց տվինք էջերի տողատակը: Այս հիմնական սկզբունքից երբեմն, ստիպված, շեղվեցինք՝ A օրինակի կոպիտ սխալներն ու բաց թողումները լրացնելով B օրինակի հիման վրա՝ A-ի մասին նշելով տողատակում:

Սուսափելով տեքստը ծանրաբեռնելուց, առատորեն և նույնությամբ կրկնվող սխալներին մասին նշումներ չկատարեցինք տեքստի մեջ. այսպես օրինակ.

ա) «է» և «ե», «Օ» և «Ո», «Յ» և «Հ», «Ի» և «Վ» տառերի սխալ գործածումներն ուղղելիս:

բ) Անունների սխալ գրելաձևերն ուղղելիս:

գ) Բ. Թ. ինիցիալները՝ Բ. Բ.-ով ուղղելիս, որ կնշանակի Բարոն Թոգեն և այլն:

Կատարել ենք նաև սակավաթիվ, բայց անհրաժեշտ, միջամտություններ.

ա. Պատվով գրված աստված («Աձ») բառը լրիվ գրելիս, երբ այն գտնվում էր թիֆլիսահայ բարբառով խոսող անձնավորության մոտ, գրել ենք աստուձ ձևով, չնայած՝ պատվագիրը նույնն էր («Աձ»):

բ. Ելնելով այդ նույն բարբառի պահանջից, երբ B օրինակը հիմք է տվել, փոխել ենք որոշ ձևեր, և A օրինակի մասին ցույց տվել տողատակում, («այսպես օրինակ ռոր»-ը՝ «փուր»-ով, «եմ»-ը՝ «իմ»-ով, «եկեղեցին»՝ «էգեղեցի»-ով և այլն):

գ. Անհրաժեշտ տեղերում գործ ենք ածել չափերաներ, որոնց գործածությունն իսպառ բացակայում է A-ում և մասամբ կա B-ում:

դ. Փակագծերը պատկանում են B օրինակին: A օրինակում փակագծվելիք բառերն ընդգծված են:

ե. Գործող անձանց ցանկը կազմել ենք AB ձևագրերում գտնվող համապատասխան ցանկերի հիման վրա, մտցնելով այնտեղ նաև մոռացված անունները (նշենք, որ այդ ցանկում ցույց տված «Հարություն Աղա Մութաֆյան»-ը որպես գործող անձն, հանդես չի դալիս, նրա մասին միայն հիշատակում կա՝ սկզբի մասում):

Իսկ հիմնականում հիմքային օրինակը թողել ենք անփոփոխ:

Ելնելով ընդունված օրենքից, տեքստի ուղղագրությունը փոխել ենք նորով, բացի գրաբար շարադրված մասերից (խորադիր, նամակներ, դիմումներ, առանձին պարբերություններ, հեղինակային միջամտություններ և այլն):


Տեքստին կցել ենք ծանոթագրություններ, հատուկ անունների ցանկ և բառարան:

✓ 1113  
3045

# Շնորհագրութիւն

Ինչ ինչ գործոց

Կարաստեալ եղանակով արձանագործութեամբ  
Եւրոպի խառն գաղթեցողի ինքնուրույն

Շնորհագրութեամբ յարգասիրէ յոստեմէն  
Ի սպիտակ. 1861.  


Կարաստեցող Կարաստեցող Կարաստեցող 1852 ԱՅԻԻ

Կարաստեցող Կարաստեցող Կարաստեցող  
ու. Կարաստեցող Կարաստեցող Կարաստեցող 1852  
1901 Կարաստեցող Կարաստեցող  
Կարաստեցող Կարաստեցող

№ 3045 ձեռագրի արխիւապահպան



ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԻՆՁ-ԻՆՁ ԳՈՐԾՈՑ ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԻՃԱԿԱԻՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԱՅՈՑ ԳԱՂԹԵԼՈՑ Ի ՏԱՅՍ

Խ Օ Ս Ա Կ Ի Յ Ա Ն Ձ Ի Ն Ք 1

- Կ. Եպս.—Կարապետ արքեպիսկոպոսն<sup>2</sup>, վիճակավոր առաջնորդն Հայոց Վրաստանի և<sup>3</sup> գաղթելոց ի Տայս: \*
- Գ. Վ.—Գևորգ վարդապետ, ծայրագույն փոքրավոր նորա:
- Հ. Ա.—Հարություն ադա Մութաֆյանց<sup>4</sup>, հարուստ վաճառական արզրուճցի<sup>5</sup> և այժմ բնակյալ Տ՝Ախլցխա<sup>6</sup>:
- Հ. Կ.—Տիրացու Հակոբ Կարենյան վարժապետ, ձեռնառն<sup>7</sup> փոքրավոր եպիսկոպոսին (զոր երբեմն գրեմք Հակո)<sup>8</sup>:
- Տ. Դ.<sup>9</sup>—Տիրացու Դավիթն<sup>10</sup>:
- Տ. Պ.<sup>11</sup>—Տիրացու Պետո:
- Մ.<sup>12</sup>—Մաթո:
- Տ.<sup>13</sup>—Տոնական:
- Ս.<sup>14</sup>—Սրբո<sup>15</sup>:
- Շ. Ա.<sup>16</sup>—Պարոն Շեկո<sup>17</sup>, ախոռապետ<sup>18</sup> նորա:
- Ա. Խ.—Պարոն Սեփո, խոհակիր նորա<sup>19</sup>:
- Հ. Տ.<sup>20</sup>—Պարոն Հարո, տնտես նորա:

- Թ. Վ.—Թադևոս վարդապետ, նորընծա արեղա նորա:
- Ե. Վ.—Եփրեմ վարդապետ՝ անդամ Կոնստանտնուպոլիսի<sup>1</sup> Թիֆլիզու:
- Տր. Մ.—Տեր Մարկոս քահանայն արզրուճցի<sup>2</sup>:
- Տր. Հ.—Տեր Հարություն ավագ քահանա մահաեսի:
- Տր. Ա.—Տեր Ավետիք, անդամ Կոնստանտնուպոլիսի:
- Մ. Չ.—Չղնապան Մելքոն<sup>3</sup>:
- Տր. Հ.—Տեր Հարություն<sup>4</sup>:
- Գ. Ու.<sup>5</sup>—Գերձկների ուստարաշին<sup>6</sup>:
- Գ. Տ. Հ.<sup>7</sup>—Գրիգոր Տեր Հովհաննեսյան<sup>8</sup>:
- Ե. Ա.—Երեմիա Արծրունի (որ երբեմն Ա. գրեմք)<sup>9</sup>:
- Ա. Ա.—Սոլոմոն Արեսայումով<sup>10</sup>:
- Գ. Կ.—Գրբաց կին<sup>11</sup>:
- Ե.—Երեցփոխան—Թիֆլիսի Մեծ Բերդի եկեղեցու<sup>12</sup>:

<sup>1</sup> A Խոսակից անձինք չիք: <sup>2</sup> B եպիսկոպոս: <sup>3</sup> A Վրաստանի չիք: B Վրաստանի և չիք: <sup>4</sup> B Մութատյան: <sup>5</sup> B արզրուճցի: <sup>6</sup> B և սա բնակիչ Ախալցխո: <sup>7</sup> A ձեռնառն: B ձեռնասուն: <sup>8</sup> A փակաղիծ չիք: <sup>9</sup> B Տ. Դ. չիք: <sup>10</sup> B Դավիթ նույնպես: <sup>11</sup> B Տ. Պ. չիք: <sup>12</sup> B Մ. չիք: <sup>13</sup> B Տ. չիք: <sup>14</sup> B Ս. չիք: <sup>15</sup> B Սրբո: <sup>16</sup> B Շ. Ա. չիք: <sup>17</sup> B Շեկո: <sup>18</sup> A ախոռապետ: <sup>19</sup> B ամբողջ սողը չիք: <sup>20</sup> B Հ. Տ. չիք: \* Կարծում ենք, որ պիեսի խորագիրը թերի է. պիտի լինի «Նկարագրարիւմի ինչ-ինչ գործոց Կարապետ եպիսկոպոսի վիճակաւոր առաջնորդի հայոց Վրաստանի և գաղթելոց ի տայս»:

<sup>1</sup> B Կոնստանտնուպոլիս: <sup>2</sup> B քահանա արզրուճցի: <sup>3</sup> B Մել. Չ.—Չղնապան Մելքո: <sup>4</sup> B սողը չիք: <sup>5</sup> B Գ. Ու. չիք: <sup>6</sup> B ուստարաշի: <sup>7</sup> B Գ. Տ. Հ.—չիք: <sup>8</sup> A Տողը չիք: <sup>9</sup> A Տողը չիք: <sup>10</sup> A Տողը չիք: <sup>11</sup> AB Տողը չիք: <sup>12</sup> AB Տողը չիք:

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն 1.

Կարապետ եպ.—(Ուրախ զիմօք և զըւարթ կերպարանօք հարցանէ).—Հնա, Գևորգ վարդապետ, տեսնո՞ւմի փոստայի Ղազարին:

Գևորգ վարդ.—Հրամէր ես, տեսնա՞, սրբազան:

Կարապետ եպ.—Քեզի՞ բան մը չասնով կամ ամենևին հետն<sup>2</sup> չխոսացի՞ր<sup>3</sup>:

Գևորգ վարդ.—Ո՛չ, սրբազան:

Կարապետ եպ.—Թեև խոսացեր էիր՝ ան ինչ պետք էր քեզի՞ բանի մը վերա՞ խորաթեր, երբ ամենևին ինքն ալ չզիտեր, սրովհետև աս<sup>6</sup> գրերս<sup>7</sup> կնքած բերով: Գիտե՞ս նոր համբալն՝ ինչ որ ինձ<sup>8</sup> գրեն կը աս գրերովս:

Գևորգ վարդ.—Ո՛չ, սրբազան, ես դեռևս ոչ թե միայն փոստային գիր չեմ ստացած, նաև<sup>9</sup>, ինչպես դուք ասեք, Ղազարին ինչ գիտեր, որ ինչ<sup>10</sup> ասեր ինձ:

Կարապետ եպ.—Աղեկ համբով մը ասեմ քեզի, Թիֆլիզու առաջնորդութիւնն մեզ են ավեր<sup>11</sup>, և Սիւնհոզոսն ալ շնորհավորութեան թուղթ մը գրե կը<sup>12</sup> ինձ. ամեն<sup>13</sup> անդամներն<sup>14</sup> ալ<sup>15</sup> ձեռք են քաշեր:

Գևորգ վարդ.—Ուրեմն աստված շնորհավոր անե, սրբազան. աչքերնիս լույս: Ախալցխու<sup>16</sup> առաջնորդութիւնն սիւն են ավեր<sup>17</sup>:

Կարապետ եպ.—Դեռ ևս հայտնի չէ, որդյակ, բայց ինչպես գրե կը Գևորգ վեհապետյանն, ան ալ մենք պետք է կառավարենք, և Թիֆլիզ<sup>18</sup> պետք է մեր աթոռանիստն ըլլա: Ա՛ռ, որդյակ, սա,<sup>19</sup> կարդա՛, որ ես ավելի լաւ հասկանամ, թեպետ հարեանցորեն կարգացի ասոնց<sup>20</sup> քանի մը<sup>21</sup> գրութիւններն, բայց ուշս վրաս չէր (ծիծաղելով): Ասա՛՛ զահվա մը<sup>22</sup> ալ շինեն. տիրացու Դավիթ, տիրացու Դավիթ, աղեկ, թանձր զահվա<sup>23</sup>, ասա՛, շինեն. շնու ըլլա, շնու: Գևորգ վարդապետ, նստե՛, նստե՛<sup>24</sup>,

որդյակ, սա, կարդա՛: (Գէորգ վարդապետն ի ձեռս<sup>1</sup> առեալ զմի՛ ի բարեազրոցն<sup>2</sup> սկսէ<sup>3</sup> ընթեռնուլ).

«Վիճակաւոր առաջնորդին հայոց  
Ախալցխոյ<sup>4</sup> տեառն Կարապետ  
արքեպիսկոպոսի<sup>5</sup> և ասպետի<sup>6</sup>  
խնդալ ի տէր.

Ըստ յառաջադրութեան մերում՝ տեառն նախարարին՝ եկեղեցական<sup>7</sup> գործոց, վասն նշանակելոյ զսրբազնութիւն Չեր վիճակաւոր առաջնորդ հայոց Վրաստանու, պատիւ վարկաք ստանալ ՚ի նոցանէ զպատասխան<sup>8</sup>, որով յայտ առնէ և զհամաձայնութիւն իւր. ուստի և Սիւնհոզոսն<sup>9</sup> Սրբոյ էջմիածնայ կամելով ծանուցանել Չեղ, այսու յայտարարական նամակաւ<sup>10</sup> հարկադրէ զՉեղ, զի որքան կարելին<sup>11</sup> է, փութով զնալ ի վիճակն Չեր՝ վասն շարունակելոյ զպարտաւստաշած կարգադրութիւնս<sup>12</sup> նոյն վիճակի:

Մնամք սրբազնութեան Չերում՝  
Բարսեղ արքեպիսկոպոս անդամ Սիւն-  
հոզոսի.  
Յովսէփ արքեպիսկոպոս և<sup>13</sup> կաւալեր<sup>14</sup>.  
Ղուկաս արքեպիսկոպոս.  
Ստեփան արքեպիսկոպոս Կաշակեր-  
եան<sup>15</sup> Արարատեան.  
Պրօկուրոր Թ. Ղօրղանեանց<sup>16</sup>.  
Ատենադպիր Մ. Քարտաշեանց:

1836 զեկտ. 27  
ի Սուրբ էջմիածին<sup>17</sup>:

Կարապետ եպ.—Ատանկ էր մը գրած. ինչի՞ Բարսեղն, ստորագրելիս, «խոնարհ ծառայ» չէ գրեր, նե՞ տեմեր:

Գևորգ վարդ.—Սրբազան, անդամներն միշտ ասանկ ստորագրեն<sup>18</sup> կը:

1 B Պեղի: 2 B հյուրն: 3 B չի խոսացի: 4 A քեզ: 5 B վրա: 6 B սա: 7 B գրերս չի: 8 B ինձ չի: 9 B նույն: 10 B ինչ չի: 11 B տըվեր: 12 B կոր: 13 A ամմեն: 14 B անդամներով: 15 B ալ չի: 16 B Ախալցխայու: 17 B տըվեր: 18 B Թիֆլիզու: 19 B սա: 20 B ասոնք: 21 A մի: 22 B զայվա: 23 B զայվա: 24 նստե չի:

1 B ի ձեռս չի: 2 B բարեազրոյն: 3 B սկսի: 4 B Ախալցխայու: 5 B արքեպիսկոպոսին: 6 B ասպետին: 7 B հօգևորական: 8 B զպատասխանիս: 9 A Սիւնհոզոսն: B ի Սիւնհոզոսն: 10 B նամակաւ: 11 B կարելի: 12 B կարգադրութիւն: 13 B և չի: 14 A Կավալեր: 15 A Կաշակարեան: 16 A Յ. Ղօրղանեանց: B Թ. Ոգորկունեանց: 17 A 1836 զեկտ. 27 ի Սուրբ էջմիածին չի: 18 B ստորագրին:

Կարապետ եպ.—Որդյակ, նե՞ դեմեք, շիմդի բրդ թիֆլիզ առաջնորդը բղ<sup>1</sup>, այսուհետև բաներն առանկով<sup>2</sup> հառաջ չի քալեր, պետք է այլ ճանապարհ մը փնտռել:

(Տիրացուն բերէ գիտահոգին<sup>3</sup>):

Գևորգ վարդ.—Ի հարկե, սրբազան, ամեն բանն ժամանակ ունի ուղղելու:

Կարապետ եպ.—Ձէ, իմ ձագուկ, աս տեղն գիտե՞ս ում տեղն էր. աս ներսես եպիսկոպոսի նման մարդո մը տեղ<sup>4</sup> էր, սր ոչ թե սինոդականք<sup>5</sup>, այլ և յուրյանց կաթուղիկոսն այնրանից անանկ կվախնային<sup>6</sup>, որ ինչպես մկներն կատվիցն կամ թե, աղեկն ասել, գորտերն<sup>7</sup> չաղալիցն: Ա՛ռ, ան, կարդա՛ս աս գիրն, տեսնեմք<sup>8</sup> աս լրբազանն<sup>9</sup> ինչ գրե կը:

(Գևորգ վարդապետն սկսէ ընթեռնուլ).

«Սրբազան հայր Կարապետ արքեպիսկոպոսի, սիրեցելոյ մերոյ<sup>10</sup>, ի տէր ողջոյն.

Ըստ հրամանի նախարարի եկեղեցական<sup>11</sup> գործոց, այսօր պատիւ վարկաք և սինոդականքն<sup>12</sup> Սրբոյ Աթոռոյս ծանուցանել սրբազնութեան Ձերում, զի նշանակեալ է զՁեզ վիճակաւոր առաջնորդ վրաստանու, ըստ բաղձանաց Ձերոց. ուստի և յուսամ, զի և<sup>13</sup> դուք, ըստ խոստմանց Ձերոց, վասն անչափ աշխատանաց մերոց, առաքեսցիք առ մեզ փութանակի գիտասացեալ գումարն՝ երկուհարիւր յիսուն (250) ոսկին Հոլանդիոյ<sup>14</sup>, Գիտէ տէր, թէ որքան սուտ-ըզորդ եմ խօսացեալ<sup>15</sup> առաջի կաթուղիկոսին, մինչև ի նմանէ ևս զգիր մի առանձին առեալ եմ առ Բ. Բ.: Եւ բաց ՚ի սմանէ, զիտէ՞ք, թէ որպիսի գազանք էին բացեալ զբերանն<sup>16</sup> իւրեանց՝ վասն այսպիսի վիճակի, սակայն ևս, զամէնն ի բաց հերքեալ,

զՁեզ միայն ետու նշանակել: Չայս միայն խնդրեմ. պահել առ Ձեզ ծածկարար, զի վասն երբորդ մասին գումարիս<sup>1</sup> խոստացելոյ ի Ձէնջ, պարտ եմ զջազաց մի գնել յերեան և պարզեել որդւոյ եղբօր կաթուղիկոսին կամ թէ գայլի մի: Ուստի խնդրեմ դարձեալ<sup>2</sup>, շուտով առաքել, զի մի խայտառակ եղէց առաջի նոցա: Ահա, զայս իմանալով, դուք Ձեզէն լերուք դատաւոր, թէ որքան ունի մնալ ինձ վասն այսքան նեղութեանց իմոց:

Մնամ միշտ խոնարհ ծառայ սրբազնութեան Ձերում Յովսէփ արքեպիսկոպոս Մարութեան և կաւալեր:

1836, դեկտ. 27.

Ի Ս. էջմիածին:

Կարապետ եպ.—Նայե, նայե, ինչպիսի գիր գրե կը. 250 ոսկին<sup>3</sup> համ բախամով, համ առեերով նշանակե կը. կարծես թե... թեմեսուք գրե կոր...<sup>4</sup> շուն շան որդին ինչպես համարձակութեան բանեցնե կոր, թե քանի՞ գազանք էին բացյալ<sup>5</sup> զբերանս յուրյանց, իբր թե ևս ալ գազան մը եմ... շուն շան որդին խայտառակութեան մը սեպե կոր թովմաս Թեումյանի համար այդի մը շառնեին, բայց պատիվ համարե կոր<sup>6</sup> ասպիսի անիրավ կաշառք վեր առնելն: Ա՛ռ, ան կարդա:

(Գևորգ վարդապետն սկսէ ընթեռնուլ).

«Բարձր Սրբազան Հայր, ամենաողորմած<sup>7</sup> տէր.

Մեծաւ ջերմեռանդութեամբ համբուրելով զսրբութիւն աջոյ սրբազնութեան Ձերում, յուսամ՝ ցժամանել զբոյս՝ ողջ և առողջ լիջիք: Պատիւ վարկայ համառօտ գրութեամբ շնորհաւորել զվիճակաւոր առաջնորդութիւն Ձեր ի թիֆլիզ, վասնորոյ և ի բազում ժամանակաց հեռէ հետամուտ լեալ, հաղիւ կարողացաք<sup>8</sup> բերել ի ձեռս: Սրբա-

<sup>1</sup> B նե՛ տեմեք, շիմաի պիղ թիֆլիզ առաջնորդի բղ (ինչ ասել է. հիմի մենք թիֆլիզի առաջնորդն ենք): <sup>2</sup> B առանկով չիք: <sup>3</sup> B գահօգէն: <sup>4</sup> B տեղ մը: <sup>5</sup> A սինոթականք: <sup>6</sup> B կը վախնային: <sup>7</sup> B գորտն: <sup>8</sup> B տեսնենք: <sup>9</sup> B սրբազանն: <sup>10</sup> B մեր: <sup>11</sup> B հոգևորական: <sup>12</sup> BA սինոդականքն: <sup>13</sup> B և չիք: <sup>14</sup> A Հոլլանդիոյ: <sup>15</sup> B խօսացել: <sup>16</sup> B զբերանս:

<sup>1</sup> B գումարին: <sup>2</sup> B խնդրեմ, դարձեալ խնդրեմ: <sup>3</sup> B ոսկի: <sup>4</sup> B կը: <sup>5</sup> B բացեալ էին: <sup>6</sup> B այսուհետև նախադասութեան ընդհատված է մինչև հաջորդ նախադասութեան վերջը (կարդա): <sup>7</sup> B ողորմած: <sup>8</sup> A կարողացանք:

զան, երզնում ի սուրբ օծեալ աջն Չեր, թէ  
անալրանայ տարին, յորս շարունակեալ եմք  
զբել միմեանց՝ վասն այսր տոարկայի, չէ  
մնացեալ անդամ Սինողի՝ կամ դիւանա-  
դպիր կամ գրագիր, որոց չիցեմ աղերսեալ  
վասն այսր: Ինչեկիցէ, թէպէտ ըստ բաւակա-  
նին կրեցաք զաշխատութիւն, այլ այսու-  
ամենայնիւ, սղորմութեամբն աստուծոյ,  
վերջն բարի եղև:

Սրբազան, աւելորդ համարիմ վերստին  
ի միտս բերել Ձեզ գնազար հինգհարիւր  
մանէթն, վասնորոյ համարեա թէ ստորա-  
գրութեամբ իմով և եղբօր իմոյ մուրհակք<sup>2</sup>  
եմք աւելալ երկուց անձանց, այսինքն նո-  
րին վեհապետութեանն և Բարսեղ եպիսկո-  
պոսին, թէպէտ և չկամէի զանունս նոցա  
նշանակել, զի և այլն և այլն և այլն: Ի հարկէ,  
զայսքան<sup>3</sup> աշխատանս՝ մեր շունիք թողուլ  
առանց վարձուց<sup>5</sup>: Չայս ևս խնդրեմ ի յուշ  
բերել անուանակցի իմում հայր Գէորդ  
արժանապատիւ վարդապետին, որ ունի  
մնալ յԱխալցխայ՝ ՚ի տեղի Չեր, զի չմո-  
ւսացի յիւրմէ կողմանէ զաջահամբոյրն մեր  
առաքել:

Մնամ բարձր սրբազնութեան Չերում  
կատարեալ հպատակութեամբ խոնարհ  
ծառայ՝ Գէորդ վարդապետ վեհապետ-  
եան աշտարակեցի:

1836. դեկտ. 27  
Ի Սուրբ Աթոռն:

Կարապետ.— Ազամ<sup>8</sup>, աս շուն շան որդի-  
քն զազանի ըման<sup>9</sup> հարձակվին կը մարդս  
վրա, ենիչարիքն<sup>10</sup> ասոնց վրա լավ էին:  
Պիղծ շան որդին զբե կը ավելորդ համարիմ  
և թե 1500 մանեթի համար թեմեաւք մը  
եմ տված և թե ինձ համար ալ պարզե մը  
ավելորդարար խավրե, և հետո թե Գէորդ  
վարդապետին ասա, ան ալ ինձ համար  
խավրեին չմոտանա. անանկ մտածե կոր  
1500 մանեթն ստացավ, մնաց մյուս պար-  
զեններն... Ա՛ս, ս՛ս, ս՛ս կարդա, տեսնենք,  
ս՛ս ինչ հաշա կոր:

1 A սինոթի: 2 A մուրհակ: 3 B այսքան: 4 B աշ-  
խատանն: 5 B վարձուց չիք, նրա փոխարեն՝ բաղ-  
մակեա: 6 յԱխալցխայ: 7 B խոնարհ ծառայ չիք:  
8 B. Ատամ: 9 B նման: 10 B ենիչարիքն:

(Գէորդ վարդապետն սկսէ ընթեռնուլ).  
«Բարձր սրբազան հոգևոր հօր իմում  
Կարապետի արքեպիսկոպոսի  
սրբոյ՝ աջոյն ջերմեռանդ սրախ համբոյր.

Սրբազան, գիտեմ, շատը գրած կլինեն<sup>2</sup>  
Ձեզ: Ես, աշխարհական գոլով, ուզում եմ  
մին բառով ասել, թե շնորհավոր լինի, սրով-  
հեռե փոշտի ժամանակն անց է կենում և  
ես ժամանակ չունեմ շատ<sup>3</sup> մտածելու և գրոց<sup>4</sup>  
զբելու, միայն չմոտանաք իմ աջահամ-  
բոյրն: Ամենիցն<sup>5</sup> ավելի հարկավորն, կա-  
րող եմ համարձակ ասել, իմն է, որովհեռե  
Ձեզանն ծածուկ չէ, որ նախ՝ մեծ գերդաս-  
տանի տեր եմ, նոցա պահել<sup>6</sup> պետք է, երկ-  
րորդ՝ որ ձեռնարաց՝ մի<sup>8</sup> մարդ եմ ես. վար-  
դապետ չեմ, որ ժողովեմ՝ պահեմ: Պրոկու-  
րորն յուրն ձեռաց առավ, բայց ես, տեսաք<sup>9</sup>  
ինչ քաղաքավարություն արի, որ մինչև  
ցայսօր. ոչինչ չզբեցի Ձեզ այս մասին. և  
հավատացե՛ք, եթե Ձեզ համար չկարողա-  
նայի<sup>10</sup> մին բան շինել ամենեին, ես<sup>11</sup> չէի  
էլ ուղել: Ամենից իմ բնությունն հայտնի է,  
որ եթե մի մարդս համար մին<sup>12</sup> բան չկա-  
տարեմ, երբեք ևս նրանից<sup>13</sup> աջահամբոյր  
պահանջող չեմ: Ուրեմն հույս ունեմ, որ իմ  
մարդավարության փոխարենն՝ զուք ևս  
պետք է անեք, եթե<sup>14</sup> ոչ՝ Ձեր սուրբ կամքն  
է: Աստուծով Թիֆլիզու վիճակավոր առաջ-  
նորդության աթոռն շատ թեթե է: Ինչպես  
սա էնտեղաց եկավ՝ կաթողիկոս ձեռնադրե-  
ցավ, նույնպես էլ սրան<sup>15</sup> շուտ կթաղենք<sup>16</sup>  
և Ձեզ ևս, շնորհօք աստուծո, սորա տեղն  
կը դնենք. և այն ժամանակ<sup>17</sup> իմ ծառա-  
յությունն Ձեզ ավելի լավ հայտնի կը լինի  
և այլն և այլն և այլն: Միայն իմ 100 ոս-  
կին շուտ<sup>18</sup> զրկեք, չմոտանաք:

Մնամ խոնարհ ծառայ բարձր սրբազ-  
նութեան Չերում՝  
Մկրտիչ Բարտաշով<sup>19</sup>:

1936 թիւ. դեկ 27.  
Եկջմիածին:

1 B սուրբ: 2 B կը լինեն: 3 B շատ ժամանակ  
չունեմ: 4 B գրոց չիք: 5 B Ամենից: 6 B պահելն: 7  
B ձեռնարաց: 8 B մի չիք: 9 Այստեղից B-ն ունի հե-  
տեյալ գաստիորությունը. ոչինչ չզբեցի Ձեզ մինչև  
ցայսօր և ինչ քաղաքավարություն արի, հավատացեք:  
10 B չիկարողանայի: 11 B և ես: 12 B մի: 13 B նո-  
րանից: 14 A թե: 15 A սրան էլ: 16 B կու թաղենք:  
17 B ժամանակն: 18 B շուտով: 19 B Բարտաշեան:

Կարապետ եպ. — Աստ մյուս անգամ կարգա, աղեկ չհասկցա<sup>1</sup>:

(Գէորգ վարդապետն կրկնէ, և ապա՝ ասէ Կարապետ եպիսկոպոսն). Ես անանկ կարծեցի, թե գրե կոր կաթուղիկոսին թաղենք կոր, քեզ ալ՝ անոր վերա պետք է թաղենք, բայց անանկ չի գրեր: Ասոր 100 ոսկին, պետք է բան մը շինենք, շուտով խաւրենք, սրտվհեակ, կարծեմ, սա պարտք ալ ունի և մեծ մսխ<sup>2</sup> ալ ունի. սորանն<sup>3</sup> ամենից հարկավոր է:

Գևորգ վարդ. — Հրամեք ես<sup>4</sup>, սրբազան, Պրոկուրորին և ասոր տալն ճշմարիտ հարկավոր են, սրոկուրորին աված ենք... բայց ասորն<sup>5</sup> ալ պետք է տանք՝ ինչքան<sup>6</sup> խոտացեր ենք: Ժամանակավ աս<sup>7</sup> երկուքն ալ<sup>8</sup> մեզ շատ մեծ-մեծ ծառայություններ կարող են անել:

Կարապետ եպ. — Աղամ<sup>9</sup>, ամենն ալ շուն շան սրդիք են, ինչ կտես<sup>10</sup>, ամեն<sup>11</sup> բանն<sup>12</sup> ան գազան եպիսկոպոսների ձեռաց մեջն է, որք ողորմելի եփրեմ կաթուղիկոսի<sup>13</sup> բերանին ըսրձ մը խոթեցին, թե պետք է անպատճառ աս գրիս վրա ձեռք քաշես, թե՛ ես հրաժարվեմ կը կաթողիկոսական աթոռեն. ապա թե ոչ, ահա<sup>14</sup>, աս բարձովն քեզ կը խեղդենք<sup>15</sup>, վասնորս հանգուցյալն, անձար մնալով, ձեռք էր քաշեր ան գրին վերա, որ և Կարբեցին ան հրաժարական գրովն 10-ից ց 15 հազար<sup>16</sup> ոսկի ալ մխտեց և կաթուղիկոս օժվեցավ:

Գևորգ վարդ. — Սրբազան, առաւծով մի օր ալ Կարբեցվուցն<sup>17</sup> կանեն ալք. անխ, թե որ ան<sup>18</sup> գազան եպիսկոպոսներն մեր կողմն ձգել կարողանայինք<sup>19</sup>, աս բանս հառաջ տանելու համար, աղեկ բան մը կը լիներ, մանավանդ ասանկ փուշն պետք է մարդո ալլոց ձեռք քաղել:

Կարապետ եպ. — Աղեկ խորհուրդ մը<sup>20</sup> է, բայց ան<sup>21</sup> ժամանակն ալ բան մըն<sup>22</sup> էր,

աս ժամանակն ալ բան մըն է. միայն՝ խոհեմութեամբ ժամանակ ընտրելը<sup>1</sup>, շատ փող ունենալն<sup>2</sup> և մարդույս<sup>3</sup> լաւ անուշը<sup>4</sup>. ինչ տեղ ա՛ս երեք բանը<sup>5</sup> կմիանան<sup>6</sup>, հոն չկարծած բաներն կըլլան:

Գևորգ վարդ. — Սրբազան, երեքն ալ ունինք<sup>7</sup>, մանավանդ ստակ<sup>8</sup> փարան, որ ժողովեր<sup>9</sup> ենք, թե՛ սե օրը հարկավոր ածենք: Ինձի<sup>10</sup> քանի մը հազար ոսկի տուր՝ մինչև մին ամիս՝ Կարբեցվուցն<sup>11</sup> բարձով կամ դեղով սպանել տամ. և Ձեզ կաթուղիկոս օժել տամ:

Հակոբ Կ.—Սրբազան, 61 ես կուգեմ տալու<sup>2</sup>, բայց խնդիրք մը ունեմ<sup>3</sup>. ատ գնովն հրամայեցեք<sup>4</sup> երկուսս ալ միասին ընկեր գառնանք. միմյանց նախանձու, ինչպես երևի, պետք է ալ ավելացնենք, բայց ավեք վաթսուհական<sup>5</sup> ոսկիով և<sup>6</sup> վերջացնենք:

Տեր Ավետիք.—Սրբազան, լավ է ասում վարժապետ աղեն:

Կարապետ եպ.—է՛հ, գրեք գիր մը, ինձ ավեք, աղեկ է. գացեք համաձայն, ու մի խոսքով անանկ բան մը<sup>7</sup> արեք, որ ոչ-ոք չիմանա: Ալ<sup>8</sup> ավելի աղեկ կընեք<sup>9</sup>, թե մինդ միջնորդ ըլլաք, մյուսդ ստացող, որ մեծ շահավետություն կարող եք ունենալ: Աստուծով ես ալ ձեզ օգնական կըլլամ, ատ տասն ոսկին թեպետ ինձ էվելի<sup>10</sup> ավիք, բայց ես ձեզ թող չեմի տար՝ վնաս քաշեք:

Տեր Ավետիք.—Իհարկե, սրբազան, մենք էլ քունն ինք<sup>11</sup>:

Կարապետ եպ.—Հա՛, Տեր Ավետիք, միտքս եկավ, որդյակ, գիտե՛ս դու, որ յօթնութն փոքրավոր ունեմ քովս, անոնց ոսճիկ մը ալ չեմի տար, ուրեմն անփոփ պետք է անոնք ինձի<sup>13</sup> ծառայեն—ասքան<sup>14</sup> մեծ արդյունավոր վիճակի մը<sup>15</sup> մեջ: Կըսես թե<sup>16</sup> մենք ալ քոնն ենք. էհ, անոնք ալ իմն են, տեղ մը պետք է գտնես՝ անոնց համար<sup>17</sup>, որ փոքր ի շատե անոնք ալ աշխատեն<sup>18</sup>:

Տեր Ավետիք.—Ես ինչ բան<sup>19</sup> գտնեմ. մե ուրուքմին<sup>20</sup> էնենց տեղ չկա, չեմ գիտի:

Կարապետ եպ.—Ատով ցույց կուտաս, որ անբան, անմիտ<sup>21</sup> մարդ մը ես<sup>22</sup> ինչպե՛ս կարելի է՝ ասքան մեծ վիճակու՛մն անոնց համար տեղ մը չըլլա:

Տեր Ավետիք.—Ծառայդ<sup>23</sup> եմ, մտածինք, տեսնինք<sup>24</sup>, մե<sup>25</sup> իքմին էգերա գտնինք<sup>26</sup>:

1 B վաթսուհական, վաթսուհական: 2 B տալու: 3 B ունեմ: 4 B հրամայեք: 5 B վաթսուհական: 6 B և չիք: 7 B գնացեք համաձայնությամբ բան մը: 8 A Ալ չիք: 9 B կենք: 10 B ավելի: 11 B մեք էլ քոնն ենք: 12 B Հա չիք: 13 B ինձի: 14 B այսքան: 15 B մը չիք: 16 B թե չիք: 17 B համար չիք: 18 B աշխատեն: 19 B բան չիք: 20 B ուրուքմին: 21 B անպետք: 22 A մը եմ ես: 23 B Ծառայ: 24 B մտածենք, տեսնենք: A տեսնինք բառը՝ կրկնված: 25 B մե չիք: 26 B գրտնենք էգերա:

Կարապետ եպ.— Էդիրա-մեդիրա<sup>1</sup> չեմի հասկնար, լսե, բան մը մտածեր եմ ես. աղեկ չի՞ ըլլա՞ր<sup>2</sup>, որ իմացումն տանք քահանայից, ամենքն պտակ անելիս՝ նորափեսայիցն մի-մի<sup>3</sup> մանեթ առնեն անոնց<sup>4</sup> համար:

Տեր Ավետիք.— Հը... շատ լավ եք մտածի<sup>5</sup>, միայն թե<sup>6</sup> մանեթը<sup>7</sup> շատ է:

Կարապետ եպ.— Մանեթ չըլլա<sup>8</sup>, կես ըլլա, արասի ըլլա, մինն շատ կուտա, մյուսն<sup>9</sup> քիչ. բայց մեք<sup>10</sup> պետք է անպես ասենք, որ արասին մեզ հասնի. մի՞թե իմ ասածը՝ Մահմեդի<sup>11</sup> պատգամն է, որ անպատճառ պետք է կատարվի:

Տեր Ավետիք.— Էտ խոմ խիտա լավն է. մազբամ ես էլ մեկն կոսիմ,<sup>12</sup> էն էլ լավ է:

Կարապետ եպ.— Էհ, գրուցե:

Տեր Ավետիք.— Երեցփոխաններն, երբ յուրյանց տարեկան հաշիվն<sup>13</sup> բերում են, բերեն ձեր փոքրավորներին դուս գրել տան հայեվար<sup>14</sup>. իժուժ ամեն-մե իրիցփոխանը մի-մի<sup>15</sup> թուժան տան դուս<sup>16</sup> գրելու համար<sup>17</sup>: Էս էլ մէ մինձ<sup>18</sup> արդյունք է՝ փոքրավորներին:

Կարապետ եպ.— Ատ ալ շատ աղվոր<sup>19</sup> է. շատ հավանեցա: Ուրեմն աս երկուքն<sup>20</sup> ալ քեզ հանձնեմ կոր, որ ամենին իմացումն տաս ե ամենից հաշիվն դու ժողովես, փոքրավորներին բաժանես՝ ինչպես կարգադրություն<sup>21</sup> կտամ քեզ: Էհ, գացեք, գացեք: Տոնական, ասա Եփրեմ վարդապետին՝ գա հոս:

Եփրեմ վարդ. (Գայ ծիրժաղելով և ասէ).— Սրբազան<sup>22</sup>, որսորդ որս<sup>23</sup> եմ բերած Ձեզ համար:

Կարապետ եպ.— Ինչպե՞ս թե որսորդ որս<sup>24</sup>:

Եփրեմ վարդ.— Ձկնապան Մելքոն<sup>25</sup> կա, հարուստ մարդ է<sup>26</sup>. Եկել է գործ ունելու<sup>27</sup> արդյունավոր:

1 B էդերա-մեդերա: 2 B աղեկ կըլլար: 3 B նոր փեսայիցն մի-մի: 4 B ասոնց: 5 B կարծի: 6 A թե չիք: 7 B մանեթն: 8 B ըլլա: 9 B մինն: 10 B մենք: 11 B ասածն Մահմեդի: 12 B էտ խոմ խիտա լավ է. մազբամ էս էլ մեջն կոսեմ: 13 B հաշիվներն: 14 B ասն դուս գրել հայեվար: 15 B երիցփոխանը մե-մե: 16 B դուս չիք: 17 B համար: 18 B մեձ: 19 B գրուց: 20 B երկուսն: 21 B կարգադրությունը: 22 B Սրբազան չիք: 23 A որս: 24 A որս: 25 B Ձկնապան Մելքոն: 26 A է չիք: 27 B գործի լավ:

Կարապետ եպ.— Գարձյալ չհասկացա<sup>1</sup>, ի՞նչ կուզես ասել:

Եփրեմ վարդ.— Ձկնապան՝ իբր թե ձըկնորս, Մելքոն՝ յուր անունըն է<sup>2</sup>: Էս մարդս միշտ իջարա վեր կառնե թագավորական ձուկն բռնելու տեղբանքն՝ Սալխանու<sup>3</sup> կամ նորա չորս կողմի ջրերն և էսպես<sup>4</sup> բաներով<sup>5</sup> մեծ հարստություն է ձարել փոքր միջոցումս: Սրա կնիկն, քանի մի ժամանակ<sup>6</sup> է, մեռել է. և հիմի ուզում է մեկ<sup>7</sup> 16—17 տարեկան աղջկա<sup>8</sup> հետ պտակվի:

Կարապետ եպ.— Է՛հ, ինչի՞ չեն պտակեր<sup>9</sup>. ի՞նչ կուզես:

Եփրեմ վարդ. (Ծիրժաղելով).— Պատճառներ կան, Լնդուր<sup>10</sup> համար: Այս Մելքոն 50—60 տարեկան մարդ կլինի<sup>11</sup>, ի՞նչպես կարող է նրա քահանայն 16—17 տարեկան աղջկա<sup>12</sup> հետ պտակել՝ առանց Ձեր հրամանի:

Կարապետ եպ.— Ես նոր հասկացա. ասանկ բաներիցն ալ կարելի է արդյունք ստանալ: Հասկըցա. հասկըցա<sup>13</sup>: Ատտեղ<sup>14</sup> երկու բան կա ուրեմն. առաջինն, ի հարկե, անոնցից<sup>15</sup> ես լսած<sup>16</sup>, թե՛ աղջիկն 16—17 տարեկան է: Թե անոնք ատքան կան<sup>17</sup> անպատճառ հաղիվ<sup>18</sup> 15 տարեկան կըլլա: Երկրորդ, Մելքոն, կըսես<sup>19</sup>, 50—60 տարեկան ան ալ անպատճառ 65—70 տարեկան<sup>20</sup> պետք է ըլլա. հիմի հասկցա<sup>21</sup>. հասկըցա<sup>22</sup>: Ի՞նչ՝ կսես<sup>23</sup>, սվ է ատոր քահանան<sup>24</sup>:

Եփրեմ վարդ.— Տեր Մելքիսեթն է, 4—5 ամիս կլինի<sup>25</sup>, ինչպես ասում են, յուրյանց մեջն այս խոսակցությունը կա, միայն քահանայն<sup>26</sup> չէ համաձայնվում, վստանորո այնպես մտում է: Եվ բնցի սմանէ<sup>27</sup>, ուրիշ բան ևս կա, աղջիկն գորեցի է, մայրն և հայրն ուզում են ալ, բայց յուրյանց<sup>28</sup> քահանայն<sup>29</sup> չէ թույլ տալիս. անա ամենայն պարագայքն:

1 B չի հասկցա: 2 B Ձկնապանն իբր ձկնորս, Մելքոն յուր անունըն է: 3 B Սալխան: 4 B էնպես: 5 B բաներով չիք: 6 B սրա կնիկն քանի ժամանակ: 7 B մեկ չիք: 8 B աղջիկա: 9 B պտակվիր: 10 B էնտուր: 11 B կը լինի: 12 B աղջիկա: 13 B հասկացա, հասկացա: 14 A Ատտեղ: 15 B անոնցից: 16 B լսած եմ: 17 B կըսեն: 18 A հաղիվ չիք: 19 B կսես: 20 A տարեկան է: 21 B հասկըցա: 22 B հասկցա չիք: 23 B կըսես... 24 B քահանայն: 25 B կը լինի: 26 B քահանան: 27 B սրանե: 28 B բայց յուրյանց չիք: 29 B քահանա:

Կարապետ եպ.—Մի՞թե քահանայից բան մը չեն խոստացեր, որ անով համաձայնվեր էին:

Եփրեմ վարդ.—Ինչպե՞ս չէ. շատ անգամ և մեծ գումարներ... Բայց չգիտեմ, կամ երկյուզ են կրել կամ խղճմտանքն<sup>1</sup> է տանջել... Գիտեք, որ անուսում մարդիք<sup>2</sup> ավելի խղճմտանք ունեն, քան թե ուսյալ մարդիքը<sup>3</sup>:

Կարապետ եպ.—Ձանըմ<sup>4</sup>, ինչ խղճմտանք կուզե անտեղ, ուր որ արդյունք կա ընելո. իմացար ինչ կուտան, ձվ է քեզ հետ աս բանիս<sup>5</sup> խոսացողն:

Եփրեմ վարդ.—Ի՛նչքն՝ Մեկքոն է. շատ անգամ<sup>6</sup> եկել է ինձ մոտ, բայց ժամանակ չեմ գտել՝ Ձեզ ասելո և այժմ ինքն էստեղ է, իմ խցումն է<sup>7</sup>:

Կարապետ եպ.—Ինչպե՞ս հասկըցար<sup>8</sup> աս Մեկքոն ան աղջկան<sup>9</sup> սիրե՞ կոր:

Եփրեմ վարդ.—Խոսալուցն երևում է, որ<sup>10</sup> շատ է սիրում, մինչև այն աստիճանն՝ 5—6 ամիս է, էսպես թանդ<sup>11</sup> երկրում, այն աղջկա հոր-մորը հետը<sup>12</sup> պահում է յուր մսխովն:

Կարապետ եպ.—Էհ, որդյակ, կարծեմ քո խելքն ալ կտրե կոր, որ աղեկ գումար ավող<sup>13</sup> պետք է ըլլա: Ի՛նչ կուտա, հասկացե՞ր<sup>14</sup> ես:

Եփրեմ վարդ.—Ձէ, դեռևս Ձեր պարզելի համար ոչինչ խոսք չեմ բաց արել:

Կարապետ եպ.—Կսես<sup>15</sup> Ձեր պարզելի համար, իբր թե քոնն հայտնի է...Քեզ ինչքան է խոստացեր:

Եփրեմ վարդ.— Իհարկե, երբ զլուխ եկավ՝ փոքրիշատե մին բան էլ մեզ համար կը լինի<sup>16</sup>:

Կարապետ եպ.—Ձէ, որդյակ, անպատճառ ասանկ բաների միջին դու ալ<sup>17</sup> պետք է շահվես<sup>18</sup>: Հարցնելովս չիմանաս թե զիտավորությունս ան էր<sup>19</sup>, որ քոնն քիչ<sup>20</sup> ըլլա կամ ոչինչ չտան...քավ լիցի. այլ թե զիտե՞ս, ես քեզ<sup>21</sup> խոստացած կամ տված գումարիցն կարող եմ հասկանալ<sup>22</sup> կամ

<sup>1</sup> B խղճմտանքներն: <sup>2</sup> B մարդիկ: <sup>3</sup> B մարդիկ: <sup>4</sup> B ձանըմ: <sup>5</sup> B բանն: <sup>6</sup> A անգամ չիք: <sup>7</sup> B այժմ աս ինքն էստեղ խցումն է: <sup>8</sup> B հասկցար: <sup>9</sup> B աղջկին: <sup>10</sup> A որ չիք: <sup>11</sup> B թանդ: <sup>12</sup> B աղջկանն հորը-մորը հետ: <sup>13</sup> B դուրս: <sup>14</sup> B հասկացել: <sup>15</sup> B կրսես: <sup>16</sup> B կլինի: <sup>17</sup> B դու ալ չիք: <sup>18</sup> B շահվիս: <sup>19</sup> B հարցանելովս: <sup>20</sup> B է: <sup>21</sup> A քեզ: <sup>22</sup> B քեզ չիք: <sup>23</sup> B հասկնար:

պարզն ասեմ՝ դուշակություն ընել և մարդարեանալ, թե՛ որքան ալ ինձ պետք է դուրս գալ:

Եփրեմ վարդ.—Ինձ ևս...խոստացել են տալ մի<sup>1</sup> բան:

Կարապետ եպ.—Ձրուցե, պատճառն ասի քեզ, թե ինչի կհարցանեմ<sup>2</sup>:

Եփրեմ վարդ.—Հը... խոսք են տվել... որ<sup>3</sup> երբ կատարեմ նոցա խնդիրքն՝ 50 ոսկի տան ինձ:

Կարապետ եպ.—Էհ, աղեկ... եթե ատ 50 ոսկին տասնական ոսկով<sup>4</sup> բազմացնենք, կըլլա 500 ոսկի: Ուրեմն պետք է հազար ոսկուցն<sup>5</sup> սկսենք, որ մինչև 500-ական ոսկով<sup>6</sup> վերջացնենք. 1000...1000...

Եփրեմ վարդ.—Սրբազան, շատ է. չեմ կարծում՝ այդքան տա:

Կարապետ եպ.—Ձարմանք բան մը<sup>7</sup> է. դուք իմ ասածը չեք հասկանալ<sup>8</sup>, մի՞թե աս հազարն, որ բերնես դուրս կուզա, պետք է անպատճառ անքան<sup>9</sup> ըլլա: Ես ասի հազարիցն սկսենք<sup>10</sup>, տեսնենք նա որքան կուտա: Է՛հ, գնա, որդյակ, գնա Մեկքում աղայիդ խոստովանացրե<sup>11</sup>, աղեկ խոստովանահայր մը ես դու: Դու ամենևին աս 500 կամ 1000 անունը մի տալ անոր քովը<sup>12</sup>, միայն իմացիր անոր զիտավորությունը<sup>13</sup> ու էկե՛ ինձ համբավ մը բեր:

Եփրեմ վարդ. (Նլանէ և մնացեալ անդ փոքր ինչ ժամանակ, մտանէ ի ներս<sup>14</sup> և ասէ).—Շատ խոսացի՛ ծառայդ<sup>15</sup> եմ. հազիւ թե 1500 մանեթ<sup>16</sup> վեր եկավ, այն էլ շատ ստիպեցի: Վերջին խոսքն էսքան է<sup>17</sup>:

Կարապետ եպ.—Ես մանեթ չեմի հասկընար<sup>18</sup>. աս գրիչն ինձ տուր, տեսնեմ<sup>19</sup> քանի՞ ոսկի կըլլա:

Եփրեմ վարդ.—Համարեա թե 500 ոսկի:

Կարապետ եպ.—Տես, ինչպե՞ս<sup>20</sup> աղեկ հասկացա<sup>21</sup>. հիմի իմացար, որ ես բան հասկանամ<sup>22</sup> կոր:

<sup>1</sup> B մին: <sup>2</sup> B կը հարցնեմ: <sup>3</sup> B որ չիք: <sup>4</sup> B ոսկով: <sup>5</sup> A հնգարանն, հնգար ոսկվոյն: <sup>6</sup> B ոսկով: <sup>7</sup> B մը չիք: <sup>8</sup> B ասածն չեք հասկանում: <sup>9</sup> B անանկ: <sup>10</sup> B ես հազարականն սկսեմ: <sup>11</sup> B խոստովանցրի: <sup>12</sup> B քովն: <sup>13</sup> B զիտավորությունն: <sup>14</sup> B ներքս: <sup>15</sup> B խոսացրի ծառատ: <sup>16</sup> B մանեթն: <sup>17</sup> B էսքան եկավ: <sup>18</sup> B հասկնար: <sup>19</sup> B տեսնամ: <sup>20</sup> B ինչ: <sup>21</sup> B հասկըցա: <sup>22</sup> B հասկընամ:

(Սկսէ հաշուել և գրել՝ ասելով).

Ասոր<sup>1</sup> ոսկին կտան<sup>2</sup> 3 մանեթ 1<sup>1</sup>/<sub>2</sub> շահի<sup>3</sup>. ասանկ կենե...կըլլա...կըլլա...կըլլա<sup>4</sup> 486 ոսկի՝ բան մը ավել կամ<sup>5</sup> պակաս. առ ալ 500-ի ախպարն է<sup>6</sup>: Գնա, որդյակ, մյուս անգամ խոսա հետն, տես, գոնե<sup>7</sup> 700—750 ոսկի շինես:

Եփրեմ վարդ.—էտ էլ 500 ոսկով հորեղբայրն է<sup>8</sup>. գնամ տեսնեմ:

Կարապետ եպ.—Ինձ հորեղբայրն ավելի հաճո է, քան թե եղբայրն. որքան ասանկ ազգականություններն<sup>9</sup> հեռանան՝ անքան<sup>10</sup> աղեկ է մեզ համար: Երանի հինգ հարյուրի<sup>11</sup> հորեղբոր որդին ըլլար մեզ ավածն:

Եփրեմ վարդ. (Գնայ և դինի քանի մի սովալէից<sup>12</sup> վերադառնայ և ասէ).—Սրբազան, փոքր ինչ վեր ի վայր է խոսում. բայց...կարծեմ փափկի:

Կարապետ եպ.—Գացիր, գացիր, որդյակ, բեր հոս, թե բանն աղտեղ է<sup>13</sup> հասեր, երկու խոսքով<sup>14</sup> ես անոր վայրե ի վեր<sup>15</sup> խոսացնել կտամ: Ես ավելի լավ գիտեմ ասանկ բաների ճանփան՝ քանց դու: Չան<sup>16</sup> տուր, դա հոս. ասա՛ գա ներս:

(Բանայ զգուռն կոչէ, և Մէլքումն<sup>17</sup> մըտանէ. Կարապետ եպիսկոպոսն ձայնէ<sup>18</sup> բարձր եղանակաւ).

Եկե, եկե<sup>19</sup>, Մելքում Աղա, եկե<sup>20</sup>, հրամայէ: Կըլլա՞ մի<sup>21</sup>, որ դու ասանկ<sup>22</sup> աղեկ մարդ մը ըլլաս, և ես մինչև ցայսօր չեմի ճանչնար: Աստված օրհնեսցե, աստված օրհնեսցե քեզ: Հրամե՛, նստե՛, հրամե՛, բարով եկիր, բարով եկիր...Չազուկս, ասա՛, դահվա<sup>23</sup> մը շինեն, քաղցր ըլլա, շեքերով ըլլա: Մելքում աղա, առնող ես:

Մելքոն.—Փառք աստուծո, Ձեր օրհնությամբն<sup>24</sup>, շնորհակալ եմ:

Կարապետ եպ.—Փառք աստուծո, փառք աստուծո, իմ օրհնությամբն դահա՛<sup>25</sup> աղեկ

կըլլաս՝ երբ աշխարքին՝ փողն, ապրանքն փոքր ինչ բարեկամ չսեպես: Աստված քեզ ավեր է, որ դու ալ այնց տաս, քո ազգի հոգևորականաց օգնությունը ընես, որ անոնք ալ քո ազգին<sup>2</sup> կենացն օրհնող ըլլան:

Մելքոն.—Պարուն, ես դիմ ավել եմ<sup>3</sup>. էլի կուտամ:

Կարապետ եպ.—Ճշմարիտ է<sup>4</sup>, լսած եմ, շատ բարեգործության սիրող մարդ մը ես, լավ աղա մարդ մը ես<sup>5</sup>, առատ սիրտ ունիս: (Բերեն զդահվէն<sup>6</sup>. ասէ).

Տուր Մելքում Աղային, տուր Մելքում Աղային, հրամե:

(Մէլքոն կանդնի յոտին<sup>7</sup>, համբուրէ զաջ եպիսկոպոսին և<sup>8</sup> ապա առնէ զդահվէն).

Աստված օրհնեսցե, է՛հ, Մելքում Աղա, ասա տեսնենք՝ որքան ես բերեր մեր աջահամբուրն<sup>9</sup>:

Աստված վեր կառնե՞ մի. ասքան ժամանակ քեզ նման հարուստ և բարի անձն մեզ առանց աջահամբուրի<sup>10</sup> թողած ըլլա՞:

Մելքոն.—Սրբազան, ծառայդ<sup>11</sup> եմ, ես պատրաստ եմ Ձեր աջահամբուրն տալու<sup>12</sup>:

Կարապետ եպ.—Աղա<sup>13</sup>, ինչի համար ատքան պինդ<sup>14</sup> բռնեք կոր:

Մելքոն.—Ինչի՞, սրբազան, էտենց իք հրամայում, ես ի՞նչ իմ պինդ բռնի<sup>15</sup>. դահա քիչ իմ տալիս:

Կարապետ եպ.—Իհարկե<sup>16</sup>, եթե ոչինչ ալ չտաք, մի՞թե ես քեզ նման աղա մարդո, ատպիսի բաների<sup>17</sup> համար, կուզեմ նեղացնել. քով լիցի: Միայն թե կարծեմ դու ալ աղեկ գիտես<sup>18</sup>, թե<sup>19</sup> ինչքան փող է հարկավոր մեզ<sup>20</sup> հիմի՛ վարժատան, վարժապետների համար, տպարանի համար, առաջնորդարանի համար, որ ուզում ենք նորոգել: Իհարկե, ինչպես կուտաս նե՛ մինին տասն կըստանաս<sup>21</sup> աստուծուց. ի՛նչ կարծես, ատքան հարստությունը ավեր է քեզ

1 B Անոր: 2 B կուտան: 3 B մին շահի կես: 4 B ասանկ է նե՛ կըլլա...կըլլա: 5 A կամ չիք: 6 B ապարն է: 7 A գոնե չիք: 8 B ոսկո եղբայրն է: 9 A ազգականություններ: 10 B այնքան: 11 B հարյուր: 12 B բոպեից: 13 B հոստեղ: 14 B խոսելով: 15 B ի վեր: 16 B ճանապարհն քան զդու: Չայն: 17 B Մելքոնն: 18 B և ասե կ. ե.: 19 B էկե, էկե: 20 B էկե: 21 B մի չիք: 22 B ասանկ: 23 B դայվա: 24 B օրհնությունով: 25 B տահա:

1 B աշխարքիս: 2 B ազգին: 3 B տիմ ավել եմ: 4 B է չիք: 5 B լավ աղա մարդ մը ես չիք: 6 B B դահվէն: 7 B Մելքոնն յոտին կանդնի: 8 B և չիք: 9 A Ամբողջ նախադասությունը չիք: 10 B աջահամբուրի: 11 B ծառատ: 12 B տալու: 13 B Աղա: 14 B պինտ: 15 B յի՞նչ իմ պինդը բանի: 16 B իրավցնե: 17 B բանի: 18 B գիտես աղեկ: 19 A թե չիք: 20 B մեզի: 21 B մեկին տասը կստանաս:

աստված, կուզես անոր ճամփին բան մը չտանլ<sup>1</sup>:

Մեկըն. — Ինչի՞, սրբազան, ինչի՞ չիմ տա. ծառա եմ աստուծո սորումութենին. գիփ, ինչ վուր ունիմ<sup>2</sup>, աստուծո տվածն<sup>3</sup> է ու իրն է:

Կարապետ եպ. — Աստված օրհնեսցե քեզի, անոնք<sup>4</sup>, որ գիտես, ես հիմի լավ միամիտ եմ<sup>5</sup>, որ ընդունելի կըլլա ատ<sup>6</sup> քո տվածն. աստուծով ալ միմին հաղար պետք է ստանաս: Է՛հ, ի՞նչ կուզես տալն. ի՞նչ կը բղխաք սրտիցն, ասա քո բերնոք<sup>7</sup>:

Մեկըն. — Ծառայդ<sup>8</sup> եմ, ես 500 էի ասում Եփրեմ հայր սուրբին, հիմի վուր էտքան ասում իք<sup>9</sup>, ինչ խոսք ունիմ<sup>10</sup>, ի՞նչ կօտիք ավելի՞ էն էլ կուտամ:

Կարապետ եպ. — Իմ մտքումս դրեր եմ ատ բանի համար քեզնե 750 ոսկի առնեմ և աղեկ պահպանիչ մը ալ ասեմ և շնորհափորեմ:

Մեկըն. — 250 ոսկու<sup>11</sup> համար, վուր դուք խոսում իք<sup>12</sup> ես էլ տվի, մազբամ՝ նչ-ովի չիմ<sup>13</sup> ճանչնա, բացի քեզմեն: Էս էլ ասում իմ, վուր<sup>14</sup> հրաման տաք էս գիշեր էվես պսակը զլուխ դա, էլ չուշանա:

Կարապետ եպ. — Իհարկե, իհարկե, ատպես պետք է ըլլա:

Մեկըն. — Արա, օսկիքն ս՛ւմը համբրիմ<sup>15</sup>:

Կարապետ եպ. — Աստված օրհնեսցե քեզ, աստված օրհնեսցե. օրհնյալ լինիս: Եփրեմ վարդապետ, ասա պարոն Հարոյին դա՛ աս<sup>16</sup> օսկիքն<sup>17</sup> ստանա. շուրջառ մը ալ բերեն՝ Մեկըն Աղայի<sup>18</sup> գլխին պահպանիչ մը ալ ասեմ<sup>19</sup>: Բայց Մեկըն Աղա, չմոռանաս ինձի<sup>20</sup> այսուհետե: Աստուծով ամեն կյուրակի<sup>21</sup> պետք է դաս-գնաս քովս:

(Գայ Հարօն, ստանայ գոսկիքն<sup>22</sup>, եպիսկոպոսն սկսէ ասել).<sup>23</sup>

«Պահպանիչ և յոյս հաւատացելոց, Քրիստոս, աստված մեր»... և այլն<sup>1</sup>:

Մեկըն Աղա, աս բովոյելիս կ՛ըրամայեմ կոնսիստորի անդամ մը դա քեզ պսակե<sup>2</sup> աս գիշեր և դու ալ այսուհետե անոր ժողովուրդը<sup>3</sup> կըլլաս, որ ավելի լավ եղնի քեզ համար:

Մեկըն. — Հայր սուրբ, մեզ սիլ է տվի լավ եղ, ձկան եղն չի ուտվի, մարդու քուս կը<sup>4</sup> ձգե, լավ խուզի յուզ<sup>5</sup> ունիմ, մե 10 փութ կու խրկիմ՝ դուսը էրելու համար<sup>6</sup>:

Կարապետ եպ. (Յեփրեմ վարդապետն). — Ի՞նչ կսե, չհասկացա<sup>7</sup>:

Եփրեմ վարդ. (Աչօք նշանացի առնէ եպիսկոպոսին և ասէ). — Սրբազան, Մեկըն Աղան<sup>8</sup>, Ձեր էտ առանձին շնորհքի<sup>9</sup> համար, խոստանում է 10 փութ խուզի յուզ ուղարկե՛ ծառայից մոտն էրելու<sup>10</sup>:

Կարապետ եպ. — Ծնորհակալ եմ. աղեկ կըլլա:

Մեկըն. — Աղայքարն մե մինձ բան չէ<sup>11</sup>, էտ էլ աչքիս վրա:

Կարապետ եպ.<sup>12</sup> — (Դարձեալ նշանացի առնէ<sup>13</sup> գլխոստանալ նորա դայլ ինչ<sup>14</sup>). — Մեկըն<sup>15</sup> Աղա, աղջիկն հոս է:

Մեկըն. — Չէ, օս չէ, խտակ հայ է:

Կարապետ եպ. (Յեփրեմ վարդապետն). — Ի՞նչ խորաթէ կոր:

Մեկըն. — Չէ, խուրթ չէ, մամեն, գեղեն<sup>16</sup> սաղ ին:

Կարապետ եպ. (Յապուշ մնայ նայելով վասն չհասկանալոյն գլխօսակցութլւն նորա և ապա ասէ). — Եփրեմ վարդապետ, գիր մը գրե Յեր Ավետիքին, որ աս գիշեր Մեկըն Աղային պսակե: Մեկըն Աղա, սպասե մինչև գրե՛ քո ձեռքը տանես<sup>17</sup>:

(Եփրեմ վարդապետն սկսե գրել<sup>18</sup> և տայ եպիսկոպոսին, նա ևս ստորագրէ, յանձնէ

1 B ճամբին ամենեկին բան մը չի տան: 2 B դորությունին, տիփ օր ինչ վուր: A որ ունիմ: 3 A տված: 4 B ասանկ: 5 B գիտեմ (միամիտ եմ-ի փոխ): 6 B այդ: 7 B բերնոքն: 8 B ծառայ: 9 B էք: 10 A ինչ խոսք ունիմ չիք: 11 B երկու հարյուր ոսկու: 12 B էք: 13 B օչովի չիմ: 14 B եմ, որ: 15 B ոսկիքն ումը համբրիմ: 16 A աս չիք: 17 B ոսկիքն: 18 B Աղային: 19 B բսեմ: 20 B ինձ: 21 B կիրակի: 22 B գոսկիքն: 23 B ասել զպահպանիչն և ապա):

1 B «Պահպանիչ»... և այլն տողը չիք: 2 B այս բովոյելիս կը հրամայեմ կոնսիստորի անդամին քեզ պսակե: 3 B ժողովուրդ: 4 B կու: 5 B եղ: 6 B կու գրկիմ դուսն երկու համար: 7 B ինչ կրտե, չի հասկացա: 8 B Աղին: 9 B շնորհք: 10 B երբելու համար: 11 B Աղայ քարն մե մենձ բան մը չէ: 12 A Կարեպ-ի փոխարեն՝ Եփրեմ վարդ.: 13 B առնե: 14 B ինչ և ասե: 15 A Կարապետ եպիսկոպոսն ասե. — Մեկըն: 16 B տեան: 17 B ձեռքն տանիս: 18 B վարդապետն գրե:

Մէլքօին<sup>1</sup>, որ և համբուրեալ դաջն<sup>2</sup> եպիս-  
կոպոսին, ելանէ ի դուրս<sup>3</sup>):

Եփրեմ վարդապետ, դացիբ, դացիբ<sup>4</sup> 50  
սակիդ առ, դարձյալ քսակուսն սակի մնաց.  
չթողնես մնա վաղն<sup>5</sup>: Տես, քանի մը սակի  
ալ փոքրավորների համար առնես:

Հարուստ մարդ է, խելքն պակաս և ինքն  
դյուրացի<sup>6</sup> նման կը խորաթե. ես ի՞նչ  
կսեմ՝ նա ի՞նչ կպատասխանե<sup>7</sup>: Ասանկ որս

շատ քիչ կպատահի<sup>1</sup>: Գնա՛, ժամանակը մի  
կորցնիր<sup>2</sup>, կերթա, հա՛:

Եփրեմ վարդ. — Ո՛ւր կերթա, այնպես  
մարդ<sup>3</sup> չէ, դորանից փող<sup>4</sup> առնելն գժվար<sup>5</sup>  
չէ. ուր որ գնա՛ դարձյալ իմն է: Թող աստ-  
ված տա, մի տասն էսպես գանվի Թիֆլիզ:  
Տես, սրբազան, էսպես<sup>6</sup> որս կրերեմ<sup>7</sup> հա՛,  
հույս ունեմ՝ դորանից հետո ևս լավերն<sup>8</sup>  
բերեմ:

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն 4.

Կարապետ եպ.— Էկե, էկե<sup>8</sup>, Տեր Ավետիք,  
քանի օր է չես եկեր քովս. ինչ կա, ի՞նչ  
է<sup>9</sup>, նոր համբով մը:

Տեր Ավետիք.— Ձեր սղջությունը, ծա-  
ռայդ<sup>10</sup> եմ, նուր վուչինչ<sup>11</sup> չկա:

Կարապետ եպ.— Ի՞նչ կը խոսան դարձյալ  
իմ վերա<sup>12</sup>:

Տեր Ավետիք.— Շատ բաներ ին<sup>13</sup> խոսում,  
մազրամ մե սե<sup>14</sup> փուղ չածե<sup>15</sup>:

Կարապետ եպ.— Անքան խոսան, որ հո-  
գերնին<sup>16</sup> դուրս դա. Տեր Ավետիք, ան մար-  
դը, որ մտքին դրած է փառքը, պատիվը  
ու արդարությունը, սչ անմիա ժողովրդի  
աղաղակիցն<sup>17</sup> կը սասանի, սչ չար<sup>18</sup> մարդ-  
կանց սպառնալիքեն, ոչ<sup>19</sup> նոցա բամբա-  
սանքեն կը նեղանա: Թեպետ բոլոր աշ-  
խարհքը դղրդություն մը ընկնի, անպետի<sup>20</sup>  
մարդը փոքր ինչ երկյուղ կը կրե, բայց  
ամենեին չի դրդվիլ: Ի՞նչ խոսան, թող խո-  
խան, ժողովրդի լեզուն հաղար գլխավոր  
առյուծ մը է. մինը կտրես<sup>21</sup> նե՛ մյուսը կը  
ողջանա, մինի լեզուն լռես<sup>22</sup> նե՛ մյուսն  
կը խոսա: Ի՞նչ կուզեն<sup>23</sup> թող ասեն. միայն  
թե արդյունք ընենք և ժամանակին մեր  
նպատակին անով հասնենք<sup>24</sup>:

Տեր Ավետիք.— Ծառայդ<sup>25</sup> եմ, մե բան  
կա. թե հրամայեք կատարեն<sup>26</sup> քան-յառ-  
սուն<sup>27</sup> թուման կուլի, վուր նրամեն Ձեզ  
արդյունք ընի:

Կարապետ եպ.— Ի՞նչ է, ասա, տեսնենք:

Տեր Ավետիք.— Մե քաղքցի<sup>9</sup> կա, վուր  
աղջիկն նշնել<sup>10</sup> է մե աղի վրա ու<sup>11</sup> սեղում  
է էս գիշեր էվեա<sup>12</sup> պսակե<sup>13</sup>, բայց տերտերը  
չէ պսակում, ասում է<sup>14</sup>, թե աղջիկն 15 տա-  
րեկան 9 ամսական է. էնդու համար 20  
թուման իմ<sup>15</sup> բերի Ձեր<sup>16</sup> համա, վուր հրա-  
մեք պսակեն<sup>17</sup>:

Կարապետ եպ.— Քսան թուման, այ-  
սինքն 200 մանեթ, 200 մանեթ<sup>18</sup> իբր 65  
սակի... 65 սակի քիչ չէ՞ մի:

Տեր Ավետիք.— Ձէ, սրբազան, քիչ չէ:

Կարապետ եպ.— Կարծեմ երեք «չա»-յի,  
վերջի «չա»-ն վեր առնենք՝ ավելի աղեկ  
կըլլա<sup>19</sup>:

Տեր Ավետիք.— Չհասկացա<sup>20</sup> ինչ վուր  
հրամայեցիք:

Կարապետ եպ.— Քո ասած խոսքի մե-  
ջին<sup>21</sup> երեք «չա» կա, համարե. ըսիր, թե «չէ»<sup>22</sup>  
սրբազան, քիչ չէ», պետք էիր ըսել<sup>23</sup> չէ,  
սրբազան, քիչ է: Ամեն ժամանակ երրոր-  
դությունը<sup>24</sup> աղեկ է, բայց այս<sup>25</sup> «չա»-յի  
երրորդությունը ինձ ամենեին ախորժ չե-  
ղավ<sup>26</sup>, երկրորդությունը ըլլար՝ ավելի լավ  
կըլլար:

Տեր Ավետիք (ժպտալով)<sup>27</sup>. — Կամենաք  
չորրորդություն կու շինինք<sup>28</sup>, այսինքն.  
վնչ, չէ, սրբազան, քիչ չէ:

Կարապետ եպ.— Աղած<sup>29</sup> ատ անհամ

1 B Մելքոյին: 2 B գաջ: 3 B ի դուրս և ապա  
ասե ցնիքեմ վարդապետն: 4 B դացիբ չիբ: 5 B  
փողն: 6 B դյուրացից: 7 B կը պատասխանե: 8 B  
եկե չիբ: 9 B ի՞նչ է չիբ: 10 B ծառայ: 11 A ոչինչ:  
12 B վրա: 13 B են: 14 B սիա: 15 B չածի: 16 B հո-  
գերներն: 17 B աղաղակիցը: 18 B դուր: 19 B ոչ ար:  
20 B ընչնի անպիսի: 21 B կրտրես: 22 B լռե: 23 B  
կուզին: 24 B անհոգ հասնինք: 25 B Ծառայ: 26 B  
կատարին: 27 A քառսուն:

1 B կը պատահի: 2 B կորցնիր: 3 A մարդ մը:  
4 B փողն: 5 B գժվար բան: 6 B եպիսկոպոս: 7 B  
կը բերեմ: 8 B հույս ունեմ սրանից լավերն: 9 B քաղ-  
քցի: 10 B նշանիլ: 11 B ու չիբ: 12 B էվեա չիբ:  
13 B պսակի: 14 B ասում է չիբ, 15 B եմ: 16 B Ձեզ:  
17 B պսակին: 18 B 200 մանեթ չիբ: 19 A ըլլա: 20 B  
Ձի հասկցա: 21 B մեջն: 22 B չիբ չէ: 23 B ըսել թե:  
24 B երրորդությունն: 25 B աս: 26 B չի եկավ: 27 B  
ժպտալով: 28 B կը շինեք: 29 B Ատամ:

չորրորդութիւն մը<sup>1</sup> կըլլա, որ ավելի անախորժ լսելու բան մը է: Է՛հ, ասա տեսնենք՝ ինչ կուզե տալ:

Տեր Ավետիք.— 200 մանեթ:

Կարապետ եպ.— Թե՛ 200 ոսկի:

Տեր Ավետիք.— Շատ կուլի էա:

Կարապետ եպ.— Եթե շատ կխոսաս<sup>2</sup> ավելցնեմ կոր, ան միայն աս գիշեր ատրան մսխ<sup>3</sup> արած կըլլա՝ պսակի պատրաստութեան համար և թե հետ ընկնի նե՛ դու ալ գիտես, ես ալ գիտեմ, բոլոր քաղաքն ալ գիտե, որ անքան մսխն պետք է ոչընչանա:

Տեր Ավետիք.— Սրբազան, դուք վճարողացեմեն<sup>4</sup> իք լսի էս բանը<sup>5</sup>:

Կարապետ եպ.— Մի՛թե անանկ կարծես կոր աս առաջինն<sup>6</sup> է, կամ՝ քնած եմ ես, լրանաներ<sup>7</sup> չունիմ:

Տեր Ավետիք.— Էն քաղքցին<sup>8</sup>, աղջկա մամեն<sup>9</sup>, էստի է, կամենաք՝ ներս բերիմ:

Կարապետ եպ.— Ձէ, որդյակ, ես գիտեմ, որն պետք է ներս գա, որն՝ ոչ<sup>10</sup>:

Տեր Ավետիք.— Ուրեմն պիտի 200 ոսկին անպատճառ տա<sup>11</sup>:

Կարապետ եպ.— Իհարկե, աղքատ մարդկանցից 60—70 ոսկի կը առնեմ<sup>12</sup> ատանկ պսակներին և հետո կը հրամայեմ պսակել: Մի՛թե ատանկ հարուստ մարդ մը ալ կուզե աժան ու<sup>13</sup> անոնց գնովն անցկացնե. քով լիցի:

Տեր Ավետիք.— Էս էլ ավելի հարուստ չէ:

Կարապետ եպ.— Եթե հարուստ չէ, 5000 մանեթ ուստից էր փեսին բաժնիք ավեր<sup>14</sup> իհարկե, 2000—2500 մանեթի ալ շորեղեն, արծաթեղեն<sup>15</sup> աված կըլլա: Կուզես<sup>16</sup> ինձ խարել. ներէ, ախպար, խարվող մարդ մը չեմ ես:

Տեր Ավետիք.— Սրբազան, էն օրն դուք ինձ հրամայեցիք, թե, մի՛թե իմ խոսքս<sup>17</sup> Մահմետի պատգամն է: Ես գնում իմ՝ յառսուն թումնով շինիմ<sup>18</sup>:

<sup>1</sup> B մը չիբ: <sup>2</sup> B կը խոսաս: <sup>3</sup> B մըսի: <sup>4</sup> B վճար տեղացեմեն: <sup>5</sup> B բանն: <sup>6</sup> A առաջինը: <sup>7</sup> A լրանաներ: <sup>8</sup> B քաղքցին: <sup>9</sup> B մասին: <sup>10</sup> B չէ: <sup>11</sup> B գնանա: <sup>12</sup> B կառնեմ: <sup>13</sup> B աժանով: <sup>14</sup> B բաժնիք ավեր: <sup>15</sup> B մանեթ ալ շորեղեն, հանդերձեղեն: <sup>16</sup> B Կուլիս: <sup>17</sup> B խոսքն: <sup>18</sup> B ես գնում եմ յառսուն թումանով շինեմ:

Կարապետ եպ.— Ան ուրիշ բանի մը<sup>1</sup> վրա էր, աս ալ՝ ուրիշ բան մը<sup>2</sup> է:

Տեր Ավետիք.— Է՛հ, յառսուն հինգ թումնով շինիմ<sup>3</sup>:

Կարապետ եպ.— Ձէ, չէ կարելի:

Տեր Ավետիք.— Ապա ի՞նչ ուզում իս<sup>4</sup>. 100 թուման խո չի տա:

Կարապետ եպ.— Ես 200 ոսկի ասի, պակաս չի ըլլար:

Տեր Ավետիք.— Ձիք<sup>5</sup> խոսքը հասկանում իմ, գնում իմ<sup>7</sup> քառսուն թումնով<sup>8</sup> շինիմ. մազբամ էս էլ ասում իմ<sup>9</sup>, թե չիք<sup>10</sup> անի, երեք ամիս էլ կու համբիրե ու<sup>11</sup> իժում կու պսակե, ու դուք էլ էս քառսուն թումանը կկորցնիք<sup>12</sup>:

Կարապետ եպ.— Է՛հ, ուրեմն 5 ոսկի թող տա փոքրավորներին, 450 մանեթ՝ ինձ:

Տեր Ավետիք.— Հը՞... 5—6 թումանի համար<sup>13</sup> միք խոսա. մե բան չե. աժում չունե:

Կարապետ եպ.— Ձէ, չէ կարելի, աս վերջի գինն է, որ ասի:

Տեր Ավետիք.— Գնամ, իրան ասիմ, թե դուզե՛ անիմ փողերը բերիմ<sup>14</sup>:

(Ելանէ ի դուրս և վերադառնայ՝ բերելով ընդինքեան զ450 մանեթ<sup>15</sup>, համարէ և ասէ).

Ա՛յ, էս հինգ ոսկին<sup>16</sup> էլ տալիս եմ դուսը տղերանցը, անա էս էլ վկայութիւնը<sup>17</sup> է, ձեռք քաշե<sup>18</sup>:

Կարապետ եպ.— Բեր, բեր հոնտեղաց զրիչը, տուր՝ ձեռք քաշեմ, տուր անոր, դու եկե<sup>19</sup> հոս քեզ հետ բան մը ունիմ խորաթելս:

(Գնայ և<sup>20</sup> վերադառնայ Տէր Աւետիքն<sup>21</sup>).

Էկե<sup>22</sup>, Տեր Ավետիք, նստե, առ անփիա մը, հետո նստե, օչ-օվ չկա, մինակ եմ<sup>23</sup>. նստե, փոքր ինչ լախըրթի<sup>24</sup> ընենք:

<sup>1</sup> B մը չիբ: <sup>2</sup> B մը չիբ: <sup>3</sup> B Այս և նախորդ տողը չիբ: <sup>4</sup> B Կարապ. եպ. չիբ: <sup>5</sup> B Ապա ինչ ուզիմ: <sup>6</sup> A Ձեր: <sup>7</sup> B եմ: <sup>8</sup> B թումանով: <sup>9</sup> B եմ: <sup>10</sup> B չիբ: <sup>11</sup> B ու չիբ: <sup>12</sup> B կը կորցնեք: <sup>13</sup> B համար: <sup>14</sup> A բերեմ: B ասեմ, թե կուզե՛ անիմ փողերն բերիմ: <sup>15</sup> B մանեթն: <sup>16</sup> B ոսկին: <sup>17</sup> B վկայութիւնն: <sup>18</sup> B քաշեք: <sup>19</sup> B եկո: <sup>20</sup> B Գնա և չիբ: <sup>21</sup> B Ավետիքն և եպիսկոպոսն ասէ: <sup>22</sup> A Կարապետ եպիսկոպոսն.— Էկե: B Եկե: <sup>23</sup> B ոչ-ով չի կա, մինակ իմ: <sup>24</sup> B լախըրթի:



(Նւ ահա մտանէ ի ներս սարոն Սէփօյ՝  
խոնակիրն կախկոպոսի<sup>1</sup>, բարձրացեալ և  
կատաղեալ ասէ).

Սեփո.<sup>2</sup>—

Փառք ասուածս, Տեր Ավետիք,  
Որ Ձեզ դառ աստեղ մեկիկ,  
Յալո իմացեք հատիկ-հատիկ,  
Ճանրա<sup>3</sup> ցուցեք ինձ խորոտիկ:  
Սրբազանըն<sup>4</sup> ինձ հոս բերալ  
Ան հուսերովն<sup>5</sup>, որ ինձ տվալ,  
Ուր կամ ցայտօր քաղցած ծարալ՝  
Հիտուն տարվան մարդ մը պառալ:  
Ինձ ասալ թե «ա», «բ», սովորեա,  
Ծեր հասակիդ կյանքդ<sup>6</sup> մարեա,  
Փառք և պատվի, աստիճանի  
Եվ լալ փողի տեր դու կլնես:  
Հիմի քանի ամիս հոս եմ,  
Ընտանիքս հոն թողեր եմ,  
Անհաց, անջուր, ալլոց դռան<sup>7</sup>,  
Աչքերն ճանրան, միշտ ինձ մնան:  
Հիմի աս անիրալ ու<sup>8</sup> անհողին  
Կըսե՛ ըսի Տեր Ավետիքին,  
Որ քեզ համար լալ արդյանց տեղ  
Պետք է ցույց տա քանի մը հեղ:  
Հիմի ասա, աստված սիրեա,  
Ճշմարիտը՝ թե լսեր ես,  
Ատանկ բան մը քեզ ասե՛ր է,  
Կամ դու անոր<sup>9</sup> խոստացե՛ր ես:

Տեր Ավետիք (ընդ այս զարմացեալ փոքր  
ինչ նկատէ և<sup>10</sup> ասէ).—

Ճշմարիտը էս է, վուրթի,  
Ո՞վ քեզ ասալ<sup>11</sup>,  
Մէ էտպես բան<sup>12</sup> մինք չինք<sup>13</sup> խոսի.  
Գանա էստի վուր էկի՞լ<sup>14</sup> իք,  
Դիփուն<sup>15</sup> մետի  
Խաղնի տե՛ր պիտի ըլնիք<sup>16</sup>:  
էս քաղկուծը<sup>17</sup> փուղ թափած չէ՛  
Ամեն կոս,  
Քեզ պես մարդիկ, դա ժողովե:  
Ձեք<sup>18</sup> հոր գերի մինք չդառանք<sup>19</sup>.

Թե մե իքմին<sup>1</sup>  
Պահ իք ալի՛ էկեք հիտ<sup>2</sup> տանք:  
Մողիք<sup>3</sup>, էլի՛, դիփ էլ<sup>4</sup> կոս՝  
Պետս, Մաթո,  
Հակո, Շեկո, Սրքո<sup>5</sup>, Հարո:

(Մոթմոթալով<sup>6</sup> և հայհոյելով ելանէ ի  
դուրս<sup>7</sup> Տէր Աւետիքն և գնայ<sup>8</sup>, վասնորոյ  
կախկոպոսն զայրացեալ ի վերայ Սէփօին<sup>9</sup>,  
ասէ).

Կարապետ եպ.<sup>10</sup>—

Տեսնը ինչպես պատասխանի հետ ստացանր.  
Ասքան ամիս թիֆլիզեցվոց չճանչըցար<sup>11</sup>:  
Ամեն բանը, շուն շան որդի, անանկ գիտես,  
Ում մոտ ըլլա, ինչ ժամանակ, պետք է խոսես:  
Գացիր, գացիր, հասիր անոր, ասա՛ հետ դա,  
Հարկավոր բան խորաթելս խորհուրդ մը կա:

Սեփոն<sup>12</sup>.—

Քալ լիցի, թե նա իմ խոսքով  
Հետ դառնա հոս՝ ատանկ<sup>13</sup> շուտով.  
Անանկ, որ ես անոր տեսա,  
Ամենեկն հետ չի դառնա:

Կարապետ եպ.—

Ուրեմն ինչի՞ ատանկ գոռոզ,  
Անխել, անմիտ կը խոսաս հոս:

Սեփոն.—

Ա՛խ, սրբազան, ի՞նչ անեմ ես,  
Դու որ ըլլաս՝ կը համբերես.  
Աս ինչ գիր է, սո մէկ, կարդա՛,  
Ասոր չարեն դու ինձ ասա:

(Հանէ դրարեազիր մի և տայ կախկո-  
պոսին լալով).

Կարապետ եպ.— Տիրացու Մաթո, Տեր  
Ավետիքին շուտ հետ դարձու՛ թե լսե քո  
խոսքին:

(Տիրացու Մաթօն վազէ՛ վերադարձու-  
ցանել և Կարապետ կախկոպոսն սկսէ<sup>14</sup> ըն-  
թեռնուլ<sup>15</sup> դրարեազիրն, զոր մատոյց նմա  
Սէփօն, բարձր ձայնիւ<sup>16</sup>):

1 B խոնարարն կախկոպոսին: 2 A Սեփո—չիք:  
3 B ճամբա: 4 B սրբազանը...: 5 B հույսերովն: 6 B  
կենքդ: 7 B դրան: 8 B ե: 9 B նրան: 10 B և ապա:  
11 B ասա: 12 B բան չիք: 13 B մենք չենք: 14 B  
եկի՞ր: 15 B Տիփուն: 16 B լինի՞ք: 17 B քաղքուծը:  
18 B Ձեք: 19 B չի դառանք:

1 B իքմին: 2 B եկեք հետ: 3 B մոտիք: 4 B տիփ:  
5 B Սրգու: 6 B Մոթմոթալով: 7 B դուրս ելանէ:  
8 B և գնայ չիք: 9 B Սեփօյին: 10 A Կարապետ  
եպ.—չիք: 11 B չի ճանչըցար: 12 B Սեփո: 13 B  
անանկ: 14 A և չիք: Կարապետ եպ.—Սկսէ: 15 B ըն-  
թեռնուլ բարձր ձայնիւ: 16 B բարձր ձայնիւ չիք:

է.

«Հասցե դիրս, աստուծով, Թիֆլիզ քաղաքն, Կարապետ արքեպիսկոպոսի քովն, Թյուֆյունցի<sup>1</sup> Տրդատ Օղլու Ստեփան<sup>2</sup> Աղայի ձեռքն. ամեն:

Հազար<sup>3</sup> ու մեկ սիրեկան, գլխիս տեր, աչացս լույս, Սեփո.

Ասորից առաջ<sup>4</sup> ալ քանի մը հեղ գիր եմ գրած քեզ վերա, լաքին հեշ<sup>5</sup> մինի պատասխանը դահա<sup>6</sup> չեմ ստացեր: Ասոված գիտե, մեռած ես, թե՛ ողջ, երկնքս<sup>7</sup> եմ, թե՛ գետնի տակին, դժոխքս<sup>8</sup> եմ, թե արքայության միջին: Թե կենդանի ես՝ անգիրը կարգա, հետո՛ գետինն մտե: Ատ<sup>9</sup> Փետիցն չիտի ամաչնա<sup>10</sup>, որ գլխիդ դրեր ես. ջանք<sup>11</sup> Սեփո<sup>12</sup>, չեսի մտածեր, թե խարարա տուն մը ունեմ, մանչեր ունեմ, աղջիկներ ունեմ<sup>13</sup>, ոչ բարով ինձ նման ալ կնիկմարդ մը ունեմ<sup>14</sup>, անոնք ինչ պետք է ուտեն, ինչ պետք է խմեն<sup>15</sup>, ինչ պետք է հաքեն<sup>16</sup>: Ո՞վ է Ախալցխու<sup>17</sup> պես մեմլեքեթումն անոնց համար<sup>18</sup> աշխատողն: Քենվենսերս մը ես հոս թողեր<sup>19</sup>, թե խանութներ, որ անոնցմով գեշքն<sup>20</sup> ըլլանք: Դու գնալիս շատ ուրախ կերթայիր և հույս ալ կուտայիր, թե սրբազանն խոստացավ ինձ շատ փարա վաստակել<sup>21</sup> տա. դու ալ սատակե<sup>22</sup>, սրբազանդ ալ սատակի: Փարատ չուզեցինք, դառտակ գրիդ ինչ եղավ<sup>23</sup>: Թե դու գրել չիյտես, ջանք<sup>24</sup>, երբ ատքան արեւացուի, մոնթի<sup>25</sup>, վարդապետի ձեռքը-ստքը չողացավ<sup>26</sup>, խուրդ-մուրդ եղավ, որ մատ մը թուղթ ալ չես<sup>27</sup> գրեր տար: Հեշ չիսի նայիր քեզ հետ գացողներին<sup>28</sup>, ինչքան փարա խավրեն կոր յուրյանց տունն. դու ալ<sup>29</sup> անոնց չերեքն խավրեիր: 17—18 տարեկան մանչերը քեզ վերա գրինդ դուրս եկան<sup>30</sup>. Չավուշ Գալոյի տղա Սրբոն, Դահ-

վաջի Սողոմանի<sup>1</sup> տղա Մաթոն, Թուլուզի<sup>2</sup> Կարապետի տղա Դավիթն, Բաստրմաչի Յոհաննեսի տղա Պետոն<sup>3</sup>, Ջեվղեկ Գեորգի<sup>4</sup> տղա Հակոն՝ ամիսը երկու վիրեք<sup>5</sup> հազար դուռուշ փարա խավրեն կոր հոս՝ յուրյանց հորը, մորը, ախարը. դու պատի տակերին քնանա<sup>6</sup> կոր<sup>6</sup>: Ջանք<sup>7</sup> Սեփո, մեք ալ մեղք ենք. թե ատ<sup>8</sup> սրբազանի քովն բան մը չեսի<sup>9</sup> շահվիր, վեր կաց, եկե<sup>10</sup> հոս. ինչ ես ատ վարդապետների ստը<sup>11</sup> ամուր բոներ, նստեր, ատքան<sup>12</sup> տարի, որ ատոր կյանքը<sup>13</sup> քո ձեռքին էր<sup>14</sup>, ինչ եղար, որ բունան սորա<sup>15</sup> ինչ եղնիս: Լսեմ կոր, որ<sup>16</sup> Թիֆլիզ հազարավոր մեր երկրացի մարդիք Ֆոռնջություն կենն, փափուջ, թեսպի<sup>17</sup> ծախեն, գելելություն<sup>18</sup> կընեն, Թուլուզություն կենն<sup>19</sup> ու փարա վաստակեն<sup>20</sup> կոր. դու ալ ասոնց լման փեշեք մը չկարողացա<sup>21</sup> քեզ համար փեյտա ընել<sup>22</sup>: Աս քանի օրս խարար մը հասավ հոս, թե Սեփոն գիշեր մը կնիկմարդ մը է տարեր բաղնիքը, Գեորգ վարդապետն ալ, խաղախի շորերով, գացեր է հոն, որ չճանչնան: Երբ Գեորգ վարդապետն<sup>23</sup> ու ան կնիկը մտեր են բաղնիքի օդան<sup>24</sup>, համամչին իմացեր է, եկեր է, դրսիցն դուռը գոցեր է. մնացեր են երկուքն ալ օդայի<sup>25</sup> մեջն, մինչև լուսը: Ասովստը շատ աղաչեր<sup>26</sup> է Գեորգ վարդապետը ու 60 ոսկի ալ տվեր<sup>27</sup> է, որ խալիսովեր<sup>28</sup> է համամչու ձեռքն: Կըսեն<sup>29</sup> թե<sup>30</sup> Թիֆլիզու մեջին<sup>31</sup> խայտառակվեր է, անոր համար սրբազանը խավրեր է հոս: Ջանք<sup>32</sup>, դու անանկ անամոթ ես<sup>33</sup> եղեր, որ հիմի փեղավենկություն կընես վարդապետների: Ջանք<sup>34</sup>, քո փեշեքն մոռացեր ես, ատանկ փեշեք<sup>35</sup> ես շլինքդ առեր. գենն<sup>36</sup>

1 B Թյուֆյունցի 2 B Սեփոն: 3 B ու չիք: 4 B հառաջ: 5 B հիշ: 6 B տահա: 7 B երկնքումն: 8 B դժոխքումն: 9 B աս: 10 B չեսի ամչնա: 11 B ճանքմ: 12 A Սեփո չիք: 13 B աղջիկներ ունիմ, մանչեր ունիմ: 14 B կնիկ մը ունիս: 15 B ինչ պետք է խմեն չիք: 16 B հաքնին: 17 B Ախալցխայի: 18 A համար չիք: 19 B թողեր հոս: 20 A անոնցով գեշքն: 21 B վաստակել: 22 B սատակիս: 23 B տարտակ գրիդ ինչ եղավ: 24 B ճանքմ: 25 A մանթի: 26 B չողախցավ: 27 B չեսի: 28 B գնացողներին: 29 B էլ: 30 B պրինդ դուս եկավ:

1 B Դահվեճի Սողոմանի 2 B Թուլուզի: 3 B Պետոնն: 4 A Գեորգի: 5 B երեք: 6 B դու պատի տակերին քնանա կոր չիք: 7 B ճանքմ: 8 B թէ ուտ: 9 B չես: 10 B եկե: 11 A սոր: B սոր: 12 B ատքան: 13 B կյանքն: 14 B է: 15 B խաննան սորա: 16 B կը լսեմ, որ: 17 B մարդիկ Ֆոնջութիւն կանեն, փափուշ թեղպէհ: 18 B թելլութիւն: 19 B Թուլուզություն կենն չիք: 20 B վաստակեն: 21 B անոնց նման փեշեկ մը չը կարողացա: 22 B փեյտան անի: 23 B վարդապետը: 24 B օտան: 25 B օտայի: 26 B աղաչի: 27 B տվիր: 28 B խալիսովիր: 29 B կոսեն 30 A թե չիք: 31 B միջին: 32 B ճանքմ: 33 B իս: 34 B քեզի փեշեկություն կընես վարդապետներին ճանքմ: 35 B փեշեք: 36 B կենն:

փարա չես կարողանար վաստըկել, թե վարթապետն<sup>1</sup> վաթսուն ոսկի համամշուն<sup>2</sup> կուտար, ի հարկե, մին տասն-տասնուհինգն ալ քեզ կուտար: Ապա ի՞նչ ըրիր անքան փարան: Գևորգ վարդապետը<sup>3</sup> քեզ ալ, յուրյան ալ խայտառակ ըրավ ատանդ՝ բավական չէ, հիմի եկեր է հոս, դահա<sup>4</sup> ավելի վատ խայտառակություններ կընե: Աստուց քանի մը օր հառաջ երկու հեղ մարդ էր խավրեր քովս, թե եկե խուցս, բան մը ունեմ քեզ գրուցելու: Ես չի գացի, ու, չիտեմ<sup>5</sup>, ի՞նչ է ասոր միտքն: Անանկ կարծե կոր, Սեփոն բոշրոզազ<sup>6</sup> մարդ մը էր, Թիֆլիզ ինձ փեղեվենկություն<sup>7</sup> կընե, անոր կնիկն ալ անոր յման կըլլա ու Ախալցխա ինձ փեղեվենկություն պետք է ընե<sup>8</sup>: Ասոնք քեզ կարճառոտ գրեմ կոր, մնացյալն դու հասկցիր<sup>9</sup>, թե ի՞նչ պետք է ըլլա: Գյուլզարն, Հոսոն, Ճիճիկն, Խոսոտիկն<sup>10</sup>, Մեկքոն՝ ձեռքդ պագնեն ու, փառք աստուծո, ողջ են ու սալամաթ. ամեն. եղիցի: Աս գիրս գրեցի քո կնիկ Խորո<sup>11</sup> Խաթունի բերնեն՝ Քեշիշ Օզլու տիրացու Բարսեղս ու հազար ու մեկ ալ բարե կընեմ քեզ:

Թվին Հայոց ուձթ.  
Մայիսի 7 Ախալցխա:

Կարապետ եպ.—Տեր<sup>12</sup>, տեր, ողորմյա, տեր, ամեն բանը, որ<sup>13</sup> գրե կոր՝ ոչինչ, ջանք՝մ, անոնց սիլ է իմացրել<sup>14</sup> Գևորգ վարդապետի անցքը<sup>15</sup>. մեք անքան ոսկիք տվինք, որ ձանն<sup>16</sup> դուրս չելլա, սրտեղաց են անոնք Ախալցխա իմացեր:

Սեփոն.—Ծառայդ<sup>17</sup> եմ, ատանկ բան մը կծածկվի մը<sup>18</sup>. Թիֆլիզու սոխախներումն խոսան կոր:

Կարապետ եպ.—Ի՞նչ կեսն<sup>19</sup>:

Սեփոն.—Վալլահ, մանչերն հոս սոխախներումն ձան կուտան միմյանց.

- Օրհնյալ լինիս, դուռը բաց:
- Չէ, հայր սուրբ, ջեր<sup>20</sup> մե քիչ կաց...

<sup>1</sup> B վարդապետն. <sup>2</sup> B համամշուն: <sup>3</sup> B վարդապետն: <sup>4</sup> B տահա: <sup>5</sup> B չգացի ու չիյտեմ: <sup>6</sup> A բոշ: <sup>7</sup> B բեղեվենկություն: <sup>8</sup> B Ախալցխա ինձ բեղեվենկություն կընե: <sup>9</sup> B դու մնացյալն հասկցիր: <sup>10</sup> B Ճիճիկն, Խորոտիկն: <sup>11</sup> B Խորոյի: <sup>12</sup> B Տեր չիք: <sup>13</sup> B որ չիք: <sup>14</sup> B իմաց արեր: <sup>15</sup> A անձքը: <sup>16</sup> B ձանն: <sup>17</sup> B Ծառատ: <sup>18</sup> B բանը կը ծածկվի մի: <sup>19</sup> B կըսեն: <sup>20</sup> B չէ:

Կարապետ եպ.—է՛հ, ուրիշ ի՞նչ կեսն<sup>1</sup>, Սեփոն.—Ուրիշ՝ շատ բան, բայց սեւ մտքին է. հազարավոր խաղեր էին<sup>2</sup> շիներ ասոր վերա<sup>3</sup>:

Կարապետ եպ.—Աղամ<sup>4</sup>, ինչպես միլլեթ մը<sup>5</sup> էն աս թիֆլիզեցիք:

Սեփոն.—Ի՞նչպես միլլեթ կուզես<sup>6</sup> ըլլան, ասոնք ի՞նչ ընեն, երբ մեր հոգևորականներն յուրյանց պատիֆն չենի պահեր, քանի<sup>7</sup>-քանի հեղ ասի, Գևորգ վարդապետ, ծածուկ մեղքը լավ է, քան զթե հայանի վարձքը. չեղով, ամիս մը էր հողիս հաներ կոր, ինչպես ձեզ ալ պատմեր եմ, ինչ խայտառակություններ արավ տեղս, բավական չէ, տես, ի՞նչ կուզե ընել<sup>8</sup> հոն: Ասաված վեր կաննե՞ մի:

Կարապետ եպ.—Լոն, լոն, Տեր Ավետիքն կուզա, լոն, մտե աս ֆերդեի<sup>9</sup> տակն, մինչև անոր հետ քանի մի<sup>10</sup> խոսք խորաթեմ՝ հետո դուրս եկե, երբ գնա:

(Յ Տէր Աւետիքն):

Եկե, եկե, մի բարկանար, ինչի ատանկ շուտ բարկանաս կոր:

Տեր Ավետիք.—Սրբազան, ես ինչ դառա գանա, գալիս իմ<sup>11</sup> դուռն, ջեր<sup>12</sup> փոքրավորներն ին<sup>13</sup> բռնում, իժու՛մ՝ տիրացուքդ, իժու՛մ՝ դուք, իժու՛մ, մեյթարըդ, իժու՛մ՝ կոչերդ, իժու՛մ՝ աշպաղդ<sup>14</sup>: Մեկը ի՞նչ է ուզում, մինը<sup>15</sup> ի՞նչ է ասում. ես վսեբի<sup>16</sup> օհտիցն գամ, սեմը տամ, ի՞նչ աղացեմեն<sup>17</sup>: Ճուր<sup>18</sup> խոմ չդառանք դրանցը<sup>19</sup>. մե եպիսկոպոս ունինք՝ 20 թոխ ունինք<sup>20</sup>, ինձ գանա մե իքմին պահ ին<sup>21</sup> տվի ու չին կանացի<sup>22</sup> առնի:

Կարապետ եպ.—Տեր Ավետիք, մարդս փոքր համբերություն պետք է ունենա ու մեծ սիրտ. արա<sup>23</sup>, չիյտես, որ կըսեն. «Բոյուկ բաշըն<sup>24</sup> բոյուկ գարդի<sup>25</sup> օլմւր\*»:

<sup>1</sup> B կըսեն: <sup>2</sup> B են: <sup>3</sup> B վրա: <sup>4</sup> B Աղամ: <sup>5</sup> B մի: <sup>6</sup> B կուզիս: <sup>7</sup> B եանի: <sup>8</sup> B անել: <sup>9</sup> B փերտեի: <sup>10</sup> B մը: <sup>11</sup> B եմ: <sup>12</sup> B Ջեր: <sup>13</sup> A փոքրավորներն ին: B փոքրավորներն են: <sup>14</sup> B բռնում, իժու՛մ բուշուրըդ, իժու՛մ մեյթարդ, իժու՛մ տիրացուքդ, իժու՛մ աշպաղդ, իժու՛մ դուք: <sup>15</sup> B մեկը: <sup>16</sup> B իս որ մեկի: <sup>17</sup> B աղացեմեն: <sup>18</sup> B ճուրդ: <sup>19</sup> B դրանց: <sup>20</sup> A թոխ...ինք: <sup>21</sup> B են: <sup>22</sup> B կարացի: <sup>23</sup> A եա: <sup>24</sup> A բաշըս: <sup>25</sup> B տերտի:  
\* Մեծ գլուխը՝ մեծ հոգս կունենա:

Տեր Ավետիք.—Մեռնի իմ բոյուկ բաշը, վուր պոծնիմ<sup>1</sup>:

Կարապետ եպ.—Աստված մի արասցե, աստված մի արասցե, նստե, նստե, առ բունութի<sup>2</sup> մը քաշե. էկե<sup>3</sup>, աղեկ անֆիա մը քաշե, նստե: Աստնք ինչ որ կուզեն, քեզանե խոշ չի՞ դուրս գար, այլոցից կաննես՝ ատոնց կուտաս. քեզմե բան մը չի երթար:

Տեր Ավետիք.—Խոսչը, խայտառակ էլա<sup>4</sup> քաղքումը, գիւթ<sup>5</sup> ինձ վերա են խոսում, անկաճովս<sup>6</sup> էլ լսում եմ, էրեսիս<sup>7</sup> էլ ասում ինչ<sup>8</sup>, թե Կարապետ եպիսկոպոսի չիմ<sup>9</sup> գիտի ինչն է:

Կարապետ եպ.—Աղամ<sup>10</sup>, շան նման հաշան կոր, ինչ կուզեն՝ թող ըսեն, քեզ ամենին բան մը չի պակսիր, ատոնք դարդակ<sup>11</sup> խոսքեր են<sup>12</sup>. ան ասա, թե մեր Սեփոյի ու Շեկոյի համար բան մը ճարենք, ասոնք ալ մեղք են<sup>13</sup>, դատարկ կմնան<sup>14</sup>:

Տեր Ավետիք.—Դրանք վուր միխք ին, նրանք վուր տալիս ին՝ միղք չի՞ն<sup>15</sup>:

Կարապետ եպ.—Մեք<sup>16</sup> անանկ մարդոցմե չենք<sup>17</sup> ուզեր, որ մեղք ըլլան:

Տեր Ավետիք.—Դուք գիղիք<sup>18</sup>, ինչ հրամանք կօնիք, իս<sup>19</sup> էլ կու կատարիմ<sup>20</sup>:

Կարապետ եպ.—Հրամանք մը չկա հոս. կուզեմ խորհուրդ մը հարցանել քեզմե:

Տեր Ավետիք.—Հրամայեցեք:

Կարապետ եպ.—Աս շարաթ կուզեմ Տեր Ղազարին գրել<sup>21</sup>, որ 4—5 եկեղեցվո ավագ քահանայից իմացումն տա, աղքատի մը<sup>22</sup> համար, կիրակի օրն, գանձանակ շուռ ածեն<sup>23</sup>. էն, ինչ որ կժողովվի<sup>24</sup>, ասոնց տանք, թե քիչ էլ ըլլա, կարող են մյուս կիրակի օրն այլ<sup>25</sup> եկեղեցյաց համար<sup>26</sup> գրել, որ հոնտեղրանք ալ ժողովեն<sup>27</sup>. ասանկով կարծեմ բավական գումար ժողովվի<sup>28</sup>:

Տեր Ավետիք.—Դիախ, կու ժողովվի<sup>29</sup>:

Կարապետ եպ.—Ուրիշ բան մը ալ կարող ենք ընել. այսուհետև որքան աղքատաց համար փող ժողովել կտանք<sup>1</sup>, չենք կարող բերել տալ հոս, կեսն սոցա<sup>2</sup> տանք կեսն աղքատաց: Ասանկ բաներն ալ մեղք չէ, որովհետև ասոնք ալ աղքատ մը են:

Տեր Ավետիք.—Հավ կուլի, գրեցեք:

Կարապետ եպ.—Չէ, գրելն, ինարկե, գրել կուտամ, միայն քեզ ասելուս պատճառն ալ ան է, որ դու ընկած տեղն վկայություն տաս ու ասես, թե ես ալ տեսա ողորմելի, թշվառ աղքատ են: Ինարկե, գիտեն, միշտ հոս կերթաս-կուզաս. քո ասելովն<sup>3</sup> շատ դանազանություն կընես, ալ վերի վայր չեն խոսալ<sup>4</sup> վրանիս:

Տեր Ավետիք.—Ուրիշ<sup>5</sup> լավ կօնիք՝ գրերն Տեր Ղազարին դուք տաք<sup>6</sup> ու հանձնեք, վուր լավ աշխատե:

Կարապետ եպ.—Կերթամ...աղեկ, գնա՛. չմոռանաս ալ Տեր Ղազարին խալրել քովս, գնա՛, տեր ընդ քեզ:

Տեր Ավետիք.—Ծառայդ<sup>8</sup> եմ, փուքը<sup>9</sup> բան ունիմ:

(Ելանէ ի դուրս).

Կարապետ եպ.—Եկե, Սեփո, դուրս եկե. լսամք մի<sup>10</sup>, ձեզ համար ալ աղեկ արդյանց տեղ ճարեցինք. աստուծով քանի մը անգամ անպես անենք, աղեկ հատակ կը ժողովվի<sup>11</sup>, է՛ն, դանա՛<sup>12</sup> ինչ կը խոսան մեղ վրա. ի՞նչ ես լսեր:

Սեփոն.—Շատ բան լախրթի<sup>13</sup> կընեն, բայց ինչ հարկավոր է ասելն, որ սե փարա մի<sup>14</sup> չի աժի:

Կարապետ եպ.—Ասա՛, մի ամաչնար<sup>15</sup>. նչ-ոք չկա հոս:

Սեփոն.—Գեորգ վարդապետի աս բոնըվելն<sup>16</sup> շատ անպատվություն եղավ<sup>17</sup>:

Կարապետ եպ.—Ատ իմացանք. ուրիշ ինչ կխոսան<sup>18</sup> հիմի:

Սեփոն.—Հիմի կըսեն, թե Գեորգ վարդապետի տեղապահն եղեր է Նփրեմ վարդապետն, անորից չէր վախնար սրբազանն,

1 B պրծնիմ: 2 B բունութի: 3 B եկե: 4 B ելա: 5 B տիփ: 6 B ականջովս: 7 B երեսիս: 8 B են: 9 B չեմ: 10 B Ատամ: 11 B դատարկ: 12 B ին: 13 B ասոնք մեղք են: 14 B չմնան: 15 B դրանք որ մեղք են, էնտունք, վուր տալիս են՝ մեղք չի՞ն: 16 B մի՞նք: 17 B չի՞նք: 18 B գիտեք: 19 B ես: 20 B կատարեմ: 21 B գրել Տեր Ղազարին: 22 B մը չիք: 23 B աժի: 24 B կը ժողովվի: 25 B օրն ալ մյուս: 26 B վրա: 27 B հոնտեղրանքն ալ ժողովին: 28 B ժողովի: 29 B Տիախ, կը ժողովվի:

1 B կուտանք: 2 B նոցա: 3 B ասելովդ: 4 B խոսար: 5 AB օրբու: 6 B տակ: 7 B դա: 8 B Ծառատ: 9 A փոքր: 10 B մը: 11 B հրատակ կը ժողովի: 12 B տահա: 13 B լախրախ: 14 B մը: 15 B ամչնար: 16 B բոնըվելն: 17 A անպատվություն: 18 B կը խոսան:

ասորից<sup>1</sup> կը վախնա, որ ասքան նեղացնե  
կոր ժողովուրդը. ոչինչ չի խոսար, միշտ  
մինչև կես գիշեր<sup>2</sup>, պարսպից դուրս քալի  
կոր. լուսնիակ<sup>3</sup> գիշերներն ալ. սրբազանն  
չի արգելեր: Մարը կուգա-կերթա քովս՝  
կերպ-կերպ կանանց հետ. ամենեին սրբա-  
զանն չի ասեր, թե սոքա<sup>4</sup> սովք են:

Կարապետ եպ. — Դարձյալ ի՞նչ կըսեն:

Սեփոն. — Կըսեն, սրբազանը յուր երկրա-  
ցիները բերեր<sup>5</sup> է քովը, ինչ կուզեն՝ կա-  
նեն, ոչ մինի վերա<sup>6</sup> չի բարկանար: Կը բամ-  
բասեն, թե վանքական տունը տվեր է<sup>7</sup>  
տիրացու Հակոբին՝ կես գնով: Հն, մատա-  
ղի վրա շատ կը խոսան, թե շարաթը 50—60  
ոչխար կուգա ուխտատեղերիցն, բոլորն կը  
բաժնե<sup>8</sup> յուր երկրացիներուն անփող, մա-  
նավանդ տիրացու Հակոբի<sup>9</sup> տունը և այլն,  
և այլն, և այլն:

Կարապետ եպ. — Աս<sup>10</sup> և այլն և այլնի  
միջին<sup>11</sup> բան մը կար, որ շասիր, լուցիր:

(Մինչ զայս խօսէին<sup>12</sup>, մտան է ի ներս<sup>13</sup>  
Եփրեմ վարդապետ ի ձեռին պահարան մի,  
մատուցանէ եպիսկոպոսին և նա<sup>14</sup> բացեալ  
ընթեռնու ինքն և ապա տայ Եփրեմ վար-  
դապետին ասելով).

Ա՛ս, կարդա, աչիներս<sup>15</sup> չի ջսկեր:

Եփրեմ վարդ.<sup>16</sup> —

«Բարձր սրբազան հօր իմում սրբոյ  
աջոյ խոնարհարար<sup>17</sup> համբոյր.

Ամենեին չկարծէի, թէ երկրացիք իմ  
մինչ ցայդ աստիճան անբաւական էին ի-  
նեւոց ի սրբազնութենէ Ձերմէ: Չգիտեմ,  
ընդէր<sup>18</sup> գիր դանդատանաց զՁէնջ օրըսա-  
օրէ առաւելանան. ստիպեցայ քանի մի տո-  
ղիւք ծանուցանել սրբազնութեան Ձերում  
փոքր ինչ զգուշանալ, զի մի հասցեն այս  
ամենայն տարածայնութիւնք յականջս տէ-  
րութեան: Ահա ես կատարեալ զպարտակա-

նութիւն իմ, տամ Ձեզ զծանօթութիւն, զի  
եղէց յայնժամ անպարտ:

Մնամ ամենախոնարհ ծառայ բարձր<sup>1</sup>  
սրբազնութեան Ձերում՝

Թ. Յ. Ղ.՝<sup>2</sup>

Կարապետ եպ. — Աս յուր ձեռագիրն է.  
ան, ան ալ կարդա, ես չիմի<sup>3</sup> ճանչնար աս  
ուսմի<sup>4</sup> ձեռագիրն է՝ առանց ստորագրու-  
թյան:

Եփրեմ վարդ. (սկսէ<sup>5</sup> ընթեռնուլ զմիւսն<sup>6</sup>).

«Սրբազան, ոճն միւս գրութեան չէ ան-  
յայտ ի Ձէնջ. Միթէ այդքան առանց  
խղճմտանաց պարտի ինեւ ոք ի միջոցի  
այսքան ամսոց. կարծէք<sup>7</sup> թէ չէ<sup>8</sup> յայտնի  
ինձ<sup>9</sup> զորքանութիւն զբամոց ժողովելոց ի  
Ձէնջ ի վիճակի Ձերում, վասն զանազան  
չնչին իրաց: Չխնայէք յիս և յայսքան ըն-  
տանիս<sup>10</sup> իմ, որք նստիմք յայսպիսի վատ  
և անմարդաբնակ տեղուոյ: Ընդէր<sup>11</sup>, եթէ ոչ  
վասն վաստակելոյ զգումար ինչ<sup>12</sup> յաղագս  
ապագայ զառամութեան մերում: Թողում,  
ուրեմն, բարեմտութեան Ձերում՝ չմոռա-  
նալ և զմերն և այլն և այլն»:

(Մնան երկօրեանն<sup>13</sup> ևս ավշեալք, յերեսս  
միմեանց նայելով և ապա ասէ եպիսկո-  
պոսն).

Կարապետ եպ.<sup>14</sup> — Ա՛ս ի՞նչ է, ան ի՞նչ էր:

Եփրեմ վարդ. — Միթե այս ևս մյուս  
գրության միջին էր:

Կարապետ եպ. — Հն, ատ ալ ևս<sup>15</sup> պահա-  
րանի մեջիցն դուրս եկավ:

Եփրեմ վարդ. — Է՛հ, բաներն ուրիշ կերպ է:

Կարապետ եպ. — Ի՞նչպես:

Եփրեմ վարդ. — Ինչպէս պետք է ինի.  
էս վատ նշան է, հավատացնեմ Ձեզ, սրբա-  
զան, այնպես<sup>16</sup> անխղճմտանք մարդ է սա,  
որ ոչինչ բանի համար մարդո հողին կը  
հանէ: Գիտեմ ինչ է սորա միտքն: Ծ աղջիկ  
ուներ, երեքն մարդո է տվել. այժմ, այս  
գրությամբն, այնքան<sup>17</sup> պետք է գոնե ձե-  
զանե ստանա, որ երկու մնացյալ աղջկա

<sup>1</sup> B սրանից: <sup>2</sup> B գիշերը: <sup>3</sup> B լուսնյակ: <sup>4</sup> B  
ասոնք: <sup>5</sup> B բերեր: <sup>6</sup> B վրան: <sup>7</sup> B տվեր է: <sup>8</sup> B կը  
բաժնե: <sup>9</sup> B Հակոբի: <sup>10</sup> B Աս չիք: <sup>11</sup> B մեջն: <sup>12</sup> B  
յայտ բան... <sup>13</sup> B ներքս: <sup>14</sup> B գոր (եւ նա՝-ի փոխ.):  
<sup>15</sup> B աչվրներս: <sup>16</sup> A Եփրեմ վարդ. չիք: <sup>17</sup> B խո-  
նարհական: <sup>18</sup> A ընդդէր:

<sup>1</sup> B բարձր չիք: <sup>2</sup> Թ. Յ. Ղ. = Թովմա Յովսեփի  
Ղորղանյան: <sup>3</sup> B չիմի: <sup>4</sup> B ուսմ: <sup>5</sup> B սկսանի: <sup>6</sup> B  
զմիւսն չիք: <sup>7</sup> B կարծեմ: <sup>8</sup> B չէք: <sup>9</sup> B ինչ: <sup>10</sup> B  
այսքան ընտանիքն: <sup>11</sup> A ընդդէր: <sup>12</sup> B ինչ չիք:  
<sup>13</sup> B երկօրեան: <sup>14</sup> A Կարապետ եպ. չիք: <sup>15</sup> B աս:  
<sup>16</sup> B այնպես չիք: <sup>17</sup> A այնքան այնքան:

մինի գոնե բաժինք<sup>1</sup> լինի: Փոշտով զիր ստացանք<sup>2</sup> էրեկ, այս մասին ոչինչ հիշատակութիւն չէր արել:

Կարապետ եպ.— Միթե աս ալ փոշտով չէ<sup>3</sup> եկեր:

Նփրեմ վարդ.— Ո՛չ, յուր եղբոր մարդը բերավ:

Կարապետ եպ.— Է՛ն<sup>4</sup>, վախեցեր<sup>5</sup> է փոշտով խավրել, յուր եղբոր գրի մեջին է գրեր<sup>6</sup>:

Նփրեմ վարդ.— Ինչեիցե, հողս պետք է քաշել, թե ոչ ամեն բանը<sup>7</sup> տակն ու վերա<sup>8</sup> կանե:

Կարապետ եպ.— Ինչքան լինի՝ բավական է. ինչ կը կարծես:

Նփրեմ վարդ.— Ի՞նչ է Ձեր միտքն<sup>9</sup>. կամենաք բավական լինի Ձեզանե, թե՛ կամենաք մին բանով զլուխն եղել:

Կարապետ եպ.— Է՛ն, բավական էր՝ որքան գլուխն եղեցինք. պետք է բան մը խավրել, որ մին ասան ամիս ոչինչ չուզե:

Նփրեմ վարդ.— Իմացել եմ ես, սորան<sup>10</sup> շատ բան էք տված:

Կարապետ եպ.— Ձէ, տված եմ, բայց հառաջ եմ տված, քանի ժամանակ, որ եկեր եմ աս վիճակն, ոչինչ՝ չեմ տվեր:

Նփրեմ վարդ.— Ուրեմն պետք է պակաս, պակաս հազար ոսկի զրգել<sup>11</sup>՝ մունջ կենա:

Կարապետ եպ.— Օհ, շատ-շատ է:

Նփրեմ վարդ.— Ուրիշ ճար չկա, թե չէք տալ, չէք կարող ևս հանդարտ արդյունք անել:

Կարապետ եպ.— Ի՞նչ տեղաց պետք է այդքան<sup>12</sup> գումարն տալ. մեզանե տալն — ա՛յդ<sup>13</sup> ևս անխղճմտանքութիւն է:

Նփրեմ վարդ.— Ուրեմն Ձեր միտքն<sup>14</sup> ի՞նչ կա. Ձեզանե չտանք<sup>15</sup> սրտեղաց պետք է տանք<sup>16</sup>:

Կարապետ եպ.— Մեզանե՞. ամոթ չէ՞, որ ասքան<sup>17</sup> մեծ վիճակումը դարձյալ մեր ժողոված փողիցն<sup>18</sup> տանք:

Նփրեմ վարդ.— Ի՞նչ գանազանութիւն

1 B բաժինքն: 2 B ստացար: 3 B չի: 4 A է՛ն չիք: 5 B վախեցեր: 6 B մեջն է գրել: 7 B բանն: 8 B վրա: 9 B կամքն: 10 B որ: 11 B զրգել: 12 B պետք է չիք: 13 B այդ չիք: 14 B մտքին: 15 B կտանք: 16 B տաք: 17 B տանք աս: 18 B փողերն:

ունի, նոր ժողովենք<sup>1</sup> կամ<sup>2</sup> վաղուց ժողոված փողեն տաք:

Կարապետ եպ.— Շատ գանազանութիւն կա. դու տեղ մտածե, թե<sup>3</sup> սրտեղաց այդքան<sup>4</sup> գումարն պետք է հավաքել:

Նփրեմ վարդ.— Տեղ շատ կա. թե որ պինդ կանգնեք, մի շարաթվան միջին երկու այդքան կը հավաքեմ:

Կարապետ եպ.— Չագնւկս, դու փող արդյունք ընելո տեղ ցույց տուր, ոչ թե ամուր, այլ և մինչև գոտիկս<sup>5</sup> ալ գետինը կարող եմ մանել, որ ոչ-ոք չկարողանա զիս շարժել<sup>6</sup>: Ասա՛, տեսնեմ, ասա՛:

Նփրեմ վարդ.— Ասիմ, ասիմ, ծառայդ եմ<sup>7</sup>, ես աղբյուրը ցույց եմ տալիս, հետո<sup>8</sup> ա՛յլք են գովանում նրա ջրովն. ես Ձեզ ցույց կտամ, վնայթե այլոց ձեռքն վերջացնեք, աշխատանքը ես քաշեմ, արդյունքը այլք վեր առնեն, ինչպես մի<sup>9</sup> քանի անգամ պատահեց:

Կարապետ եպ.— Ո՛չ, քով լիցի, այս<sup>10</sup> անգամն մյուս անգամների նման չէ. ասա՛:

Նփրեմ վարդ.— Ա՛յ, նախ Միրո Միրիմանովիցն կարող եմ առնել Ձեզ համար 1500 մանեթ, միայն թե քանի մի ամիս նրա հաշիվներն չուզեք և թույլ տաք դարձյալ երեցփոխանութիւն անի<sup>11</sup>. նույնպես Քարտաշով Մկրտումիցն, որ Բեթղեհեմու երեցփոխանն<sup>12</sup> է, 1000 կամ 1500 մանեթ կը տա<sup>13</sup>. Էստունք՝ էս. հետո Թելափեցի երեցփոխանն է նմանապես, իմացիր<sup>14</sup> 500 մանեթ բերել<sup>15</sup> է, թե՛ Տեր Բաղդասարին անպատիվ անել տաք, կամ 4—5 ամիս չթողնեք քահանայութիւնն անե: Ծառայդ<sup>16</sup> եմ՝ առեք զրիչն, մի-մի գրեք<sup>17</sup> չմոռանաք:

Կարապետ եպ.— Ա՛նա, ասա՛. աստուծով. Բարսեղ եպիսկոպոսինը, Հովսեփինը և<sup>18</sup> Գևորգ վարդապետինը ալ ասոնցից դուրս<sup>19</sup> դա, թե ափեւանա՝ Քարտաշովին ալ բան մը կը խավրենք:

Նփրեմ վարդ.— Ոչ թե դոցա համար, այլ

1 B ժողովք: 2 B կամ թե: 3 B թե չիք: 4 B այդքան: 5 B գոտիքս: 6 B շարժել զիս: 7 B ասիմ չիք: 8 B հետո չիք: 9 B մին: 10 B աս: 11 B երեսփոխանութիւն անի: 12 B Բեթղեհեմու երեսփոխան: 13 B կտա: 14 B երեսփոխանն էնպես իմացիր: 15 B բերել: 16 B Ծառայ: 17 B գրեցեք: 18 B և չիք: 19 B կու գա:

դոցա պապերին էլ սոցանցից կը հանեմ, գրեք էտունք... Հը՛... գրեք<sup>1</sup> Գորվո ավագ էրեցն<sup>2</sup>, քանի որ է, դնում է, զալիս է<sup>3</sup> մոտս և խնդրում է, որ միջնորդություն անեմ Ձեզ մոտ, այսինքն 1500 մանեթ տա յուր միաբաններովը<sup>4</sup>, միայն թե Ախալցխա<sup>5</sup> անց կենալիս՝ Գորի—մի գիշերից ավելի չմնաք և քննություն չանեք: Սարգիսովներիցն 1000 մանեթ կառնեմ, թե՛ լուռ կենաք, նոցա հորեղբոր քոչքի<sup>6</sup> համար, նոքա գնան դատաստանաներումն աշխատեն<sup>7</sup> և այդ շինությունը յուրյանցը շինեն:

Ինչքան էլավ<sup>8</sup> դումարն:

Կարապետ եպ.—Սարգիսովներինն<sup>9</sup> ալ ձեզցի, բայց Քարտաշովինը<sup>10</sup> 1000 մանեթ հաշվեմ կոր, դումարն եղավ... եղավ 5,500 մանեթ:

Եփրեմ վարդ.—Բավական չէ՞:

Կարապետ եպ.—Համբերե, աս ալ հաշվեմ, 3000 մանեթ պրոկուրորին, 1000՝ Բարսեղին<sup>11</sup>, 1000՝ Հովսեփին<sup>12</sup>, 1000՝ Գևորգ վարդապետին և 300 ալ՝ Քարտաշովին<sup>13</sup>, կընե 6300 մանեթ, կը պակասի 800<sup>14</sup> մանեթ:

Եփրեմ վարդ.—Լավ... Մին Աղամ<sup>15</sup> կար էստեղ, որ Սիրիբ են գրգել<sup>16</sup>, հիմի նորա կնիկը<sup>17</sup> ուզում է մարդու գնալ, նորա քահանայն չէ պսակում, պատճառ տայով<sup>18</sup>, թե կարելի է մարդդ կենդանի լինի և մին որ հեա դա: Թե կը հրամայեք պսակել, հույս ունեմ 300 մանեթ նորանից<sup>19</sup> առնել: Եվ Գորվո Տեր Թաղեսոն, յուրյան եղբոր որդվո չհաս պսակի համար, քանի մի<sup>20</sup> անգամ եկել է ինձ մոտ, 400 մանեթ է խոստանում: Էստունք էլ դումարեք<sup>21</sup>:

Կարապետ եպ.—Ձէ, չէ, պսակի բաներն ասոնց մի խառնիր<sup>22</sup>, ասոնք ես ալ գիտեմ, սոցա արդյունքը պետք է ուրիշ հարկավոր տեղ գործածեմ:

Եփրեմ վարդ.—Էստունց<sup>23</sup> վրա ի՞նչ հարկավոր տեղ ունիք:

<sup>1</sup> B գրեք չիք: <sup>2</sup> B երեցն: <sup>3</sup> B է չիք: <sup>4</sup> B միաբաններովը: <sup>5</sup> B Ախալցխա: <sup>6</sup> A կոչի: <sup>7</sup> B աշխատին: <sup>8</sup> B ելավ: <sup>9</sup> A Սարգիսովներինը: <sup>10</sup> B Քարտաշովինն է: <sup>11</sup> B պրոկուրորին 1000 մանեթ Բարսեղինը: <sup>12</sup> B Հովսեփինը: <sup>13</sup> B վարդապետինը. 300 ալ Քարտաշովինը: <sup>14</sup> B կը պակասի 1200: <sup>15</sup> A անգամ: <sup>16</sup> B գրգել: <sup>17</sup> B կնիք: <sup>18</sup> B պատճառ է տալիս: <sup>19</sup> B նրանից: <sup>20</sup> A մի չիք: <sup>21</sup> B դումարին: <sup>22</sup> B, խառնեք: <sup>23</sup> A էստունց:

Կարապետ եպ.—Ունիմ, որ հարկավոր չէ հիմի ասելն. ուրիշ տեղ մը մտածե:

Եփրեմ վարդ.—Հն, մտիտ ընկավ, ծառայդ<sup>1</sup> եմ. ձայն հանեք, թե Թեկեթու Տեր Գևորգին պետք է հանենք նրա տեղն անլ քահանա կարգենք Թեկեթու եկեղեցումն<sup>2</sup>. Ես նրանից անպատճառ 1000 մանեթ առնեմ՝ Ձեզ համար:

Կարապետ եպ.—Բավական են ասոնք. է՛, որդյակ, գնն, միայն աշխատե, որ ասածներդ ալ գործով<sup>3</sup> կատարես:

Եփրեմ վարդ.—Ես գնացի, միայն դարձյալ<sup>4</sup> խնդիրքս անլ է, որ այս հիշյալ գործերի մեջն<sup>5</sup> նվ-ոք որ գա Ձեզ մոտ՝ ոչ-ոքի ձեռքն չկատարեք<sup>6</sup> և չխառնեք խոսակցության մեջն ևս, ես Ձեզ խոսք եմ տալիս, որ կարելի<sup>7</sup> է ասածներիցս մին-մին բան ևս ավելորդությամբ<sup>8</sup> առնեմ:

Կարապետ եպ.—Տիրացու Տոնական, արքայու Տոնական, Հակոբին ձան<sup>9</sup> տուր՝ գա հոս, շուտ:

(Որ եկեալ կանգնի առաջի եպիսկոպոսին, որում հարցանէ).

Ի՞նչ բերի ան քահանայից գործն, որ խառն փիլոն և դավազան կուզեն ստանալ:

Հակոբ Կ.—Քանի մը հեղ խոսացի անոնց հետ, միայն անոնք բան մը կըրեն, թե աս մեր պարգևներն, որ կամիք մեզ տալ, ասոնց Սինոթի ըլլա:

Կարապետ եպ.—Ի՞նչ է ատոր<sup>10</sup> պատճառն:

Հակոբ Կ.—Ա՛ն է, որ<sup>11</sup> անոնց միջին անպես քահանայք կան, որ 25—30 տարեկան կըլլան և նորընծա են. յուրյանց ևս հայտնի է, թե Սինոթն իմանա՝ չի համաձայնվեր<sup>12</sup>:

Կարապետ եպ.—Է՛հ, ատանկ ըլլա՝ մեք<sup>13</sup> մեզանե կտանք<sup>14</sup>, անոնց իմացում<sup>15</sup> չենքի տար:

Հակոբ Կ.—Բացի սրանե<sup>16</sup>, թե անոնց գրես, իհարկե, անոնց ալ բան մը պետք է<sup>17</sup> խավրել: Ով է հարցնում, ան, որ անոնց

<sup>1</sup> B ծառայ: <sup>2</sup> B եկեղեցումը: <sup>3</sup> B խոսքով: <sup>4</sup> B դարձյալ միայն: <sup>5</sup> B մեջն: <sup>6</sup> B կատարեք: <sup>7</sup> B կարելին: <sup>8</sup> B ավելորդ: <sup>9</sup> B ձայն: <sup>10</sup> B ատոր: <sup>11</sup> A որ չիք: <sup>12</sup> B իմանա նե՛ չի համաձայնվիր: <sup>13</sup> B մենք: <sup>14</sup> B կուտանք: <sup>15</sup> B իմացումն: <sup>16</sup> B Բացի սմանե: <sup>17</sup> B պետք է տանք նե:

պետք է<sup>1</sup> տաք նե՛ դո՛ք վեր առեք. և մի՛թե վիճակավոր արքեպիսկոպոս մը առանկ ոչինչ բանը<sup>2</sup> պետք է նոցա ալ իմացու՛մ տա:

Կարապետ եպ.— Ի՛նչարկե, առանկ է. առ իմ վզիս ըլլա. մոտա, թե ի՛նչ կուտան. ըսեր եմ, ուրտեղ հստակ կա՛ կարելի<sup>3</sup> է ամեն բանը ընել—ինչպես կուզեն:

Հակոբ Կ.— Գինը վերջացրել եմ<sup>4</sup>. այս սինքն խառա փիլոնի կարելն, խառան, կուճակն՝ յուրյանցից. միայն, ծածկելու հրաման<sup>5</sup> տալու համար, Ձեզ բերեն հիանական սակի: Նույնպես<sup>6</sup> գավազանի գինը յուրյանցից ըլլա, Ձեզ տան քառասնական սակի: Ավագերիցության կոնդակի կամ հրամանի համար՝ ութսունական<sup>7</sup> սակի:

Կարապետ եպ.— Ա՛մենի գինը ալ արժանես կարելի<sup>8</sup>:

Հակոբ Կ.— Ծառայդ<sup>9</sup> եմ, արժան չէ, չորսհինգ օր է, որ կխոսանք<sup>10</sup>, հազիվ թե աս գինը հասցրի:

Կարապետ եպ.— Է՛հ, արժան ես ըլլա նե, վերջացրել<sup>10</sup> ես. դնո՞ ամենի հրամանը առանձին-առանձին գրե և փարեքն ալ վերան գիր յուրաքանչյուրինը<sup>11</sup>, բեր՝ ձեռք քաշեմ: Չմոռանաս, ով որ հստակն չտա նե՛ չգրես անոր<sup>12</sup> հրամանագիրն: Հո՛, հաշվեցի՛ք նե<sup>13</sup> չհաս պսակների գումարն, թե<sup>14</sup> քանի՞ հոգի եղան, կամ որքան է<sup>15</sup> անոնց հստակն:

Հակոբ Կ.— Հրամեք ես<sup>16</sup>, 67 հոգիք են, բայց գումարն խտակ մաքիս<sup>17</sup> չէ. կարծյոք 5000 սակի պետք է ըլլա:

Կարապետ եպ.— Հինգ հազար. պետք է<sup>18</sup> ավելի ըլլար. ի՛նչ կըսես. սխալվեր ես:

Հակոբ Կ.— Ծառայդ<sup>19</sup> եմ, կարծյոք ըսի, ի՛նչ հարկավոր է<sup>20</sup> ատենք. ցուցակ<sup>21</sup> կա Ձեր քովն, անոնցմե ոչ կարելի է պակասցնել և ոչ՝ ավելացնել<sup>22</sup>:

Կարապետ եպ.— Ի՛նչեիցե. շուտով պետք է պատրաստ ըլլա, որ կուզեմ խավրել, աղեկ հավատարիմ մարդ կա գնացող Ախալցխա<sup>1</sup>:

(Մինչ այս, մինչ այն՝ մտանէ ի ներս<sup>2</sup> տիրացու Պետոն, ասէ).

Տիրացու Պետոն<sup>3</sup>.— Ծառայդ<sup>4</sup> եմ. մարդ մը է<sup>5</sup> եկեր հոս, կըսե թերզիրաշի եմ, կուզե՞ սրբազնությանդ բան մը խորաթել:

Կարապետ եպ.— Հո՛, գիտեմ՝ ի՛նչ պետք է ըլլա. ասա՛ դա ներս:

(Որ եկեալ ներս համբուրէ դաջն)<sup>7</sup>:

Եկե, վարպետ, եկե, տեսնենք՝ ի՛նչ կա: Դերձիկ<sup>8</sup>.— Ծառայդ<sup>9</sup> եմ. մե դեռցիկ<sup>10</sup> է մեռի. խնդրում ինք, էքուց իրիքշափթի է<sup>11</sup>, բաց պատարագ անեք:

Կարապետ եպ.— Ի՛նչ կըսես<sup>12</sup>, վարպետ աղա, առաջ իմացիր, աս Մեծ Պասի լի օրերն ոչ թե միայն բաց պատարագ, այլ և ծածկածն ալ չի ըլլար. դու ալ կը խնդրես, որ ես ըլլամ ժամբար:

Դերձիկ.— Սրբազան, իմացիլ իմ<sup>13</sup>, վաւր Ձիզ մտա անկարելի բան չկա. էս մեր<sup>14</sup>, խնդիրքն պիտի<sup>15</sup> կատարիք<sup>16</sup>:

Կարապետ եպ.— Ես ըսի քեզ, չի<sup>17</sup> կարելի, պետք է պահեք մինչև շաբաթ օրն կամ կիրակի օրն<sup>18</sup> թե կամենաք պատարագով թաղել, և ան ալ՝ ծածկած պատարագով:

Դերձիկ.— Պարուն<sup>19</sup>, վաւր լի<sup>20</sup> խնդրում ինք, էքուց<sup>21</sup> դուք ժամբար ըննիք ու բաց պատարագ անիք<sup>22</sup>:

Կարապետ եպ.— Աղամ, ի՛նչ գրուցես<sup>23</sup> կար. կամիս ինձ հրամայել. չեսի հասկնամք՝ ի՛նչ կըսես<sup>24</sup>:

Դերձիկ.— Իս հասկանում իմ<sup>25</sup>, մաղրամ գիտիմ, վաւր գիփ<sup>26</sup> փուղի բան է. ու Ձիր ձեռքին է՝ երեքշափթին շափաթ շինիլը<sup>27</sup>,

1 B Թավրել բառից մինչև այստեղ չէր: 2 B բան մը: 3 B կարելին: 4 B վերջացրիք իմ: 5 B հրամանն: 6 B նմանապես: 7 B ութսունական: 8 B կարելի: 9 B կը խոսանք: 10 B վերջացրել: 11 B յուրաքանչյուրին: 12 B նրա: 13 B թե: 14 B թե չէր: 15 B է չէր: 16 A Հրամեք: 17 B միաբեր: 18 B էր: 19 B Ծառայդ: 20 B են: 21 B ցուցակը: 22 B պակասցնել և ոչ ավելցնել:

1 B Ախալցխա: 2 B ի ներս: 3 A Տիրացու Պետոն—չէր: 4 B Ծառայդ: 5 B է չէր: 6 B թերզիրաշի եմ կսե և կուզե: 7 B փակագծում եղածի փոխարեն՝ Դայ ի ներս, դերձիկն, առ որ ասէ): 8 A Դերձիկն: 9 B Ծառայդ: 10 B դերձիկ: 11 B խնդրում ենք, էքուց իրիքշաբաթ է: 12 B կսես: 13 A իմացել եմ: 14 B էս մե մեր: 15 B պետք է: 16 A կատարեք: 17 B չէ: 18 B կամ կիրակի օրն չի: 19 B Պարուն: 20 B ըլլի: 21 B ենք, էքուց: 22 B անիք, 23 B Աղամ, ինչ գրուցես: 24 B կսեմ: 25 B ես հասկանում եմ: 26 B գիտիմ, որ փի: 27 B երեքշաբաթը՝ շաբաթ շինել:



ծածկածը բաց անել տալը: Խնայք դիտենա, մինք<sup>1</sup> ուսիրս շատ կու տանք, քանց թե քու էն մինձի-մինձ կնյազնիրն ու քաղկցիքը<sup>2</sup>:

Կարապետ եպ.—Տեր սոսրմյա, տեր, ասոնք ինչպես մարդիք<sup>3</sup> մը են:

Դերձիկ.—Սրբազան, ի՞նչ էք շփոթվում, դանա մինք<sup>5</sup> փուղ չինք տալի, մինք հայ չինք<sup>6</sup>:

Կարապետ եպ.—Աղեկ, ինչ կըտաս<sup>7</sup> արքեպիսկոպոսի մը՝ պատարագ անելս համար:

Դերձիկ.—Ուրիշներն<sup>8</sup> հինգ օսկի ին<sup>9</sup> տալիս, մինք<sup>10</sup> 10 կուտանք:

Կարապետ եպ.—Է՛հ, բնց պատարագը քնելս համար ի՞նչ կտաս<sup>11</sup>:

Դերձիկ.—Գանա էտ էլ մե ուրիշ գին ունե<sup>12</sup>:

Կարապետ եպ.—Ե՛ս. կուզես մին գնով<sup>13</sup> անցնել. ատ իմ քովս չի ըլլար:

Դերձիկ.—Էտու համա էլ 10 օսկի թեղուգ<sup>14</sup> առ:

Կարապետ եպ.—Չէ, կարելի չէ Մեծ Պասին<sup>15</sup> բաց պատարագ քնել:

Դերձիկ.—Գանա 20 օսկին քիչ է՞, վուր չի<sup>16</sup> կարելի:

Կարապետ եպ.—Ե՛ս... ի՞նչ կարծես կոր:

Դերձիկ.—Քսանուհինգ օսկի<sup>17</sup> առ:

Կարապետ եպ.—Քիչ է. կարելի չէ:

Դերձիկ.—Ինչ ասիմ արա<sup>18</sup> Տարիել Չախարիչի ախպուր<sup>19</sup> Գանիելի<sup>20</sup> համա<sup>21</sup>, վուր ազնիվուրդի<sup>22</sup> էր ու հարուստ, հինգ օսկի տվին ու էն էլ ի՞նչ գոռով. դանա չիմ<sup>23</sup> իմացի: Մինք 25 ինք<sup>24</sup> տալի էլի:

Կարապետ եպ.—Անոր Գանիել Չախարիչ կըսեին, քուզինը<sup>25</sup> դերձիկ մը կսեն: Գիտես, որ հարուստ ևս<sup>26</sup> անուանի մարդիքը<sup>27</sup> յուրյանց կենդանության ժամանակը ի՞նչ ծառայություններ կընեն մեր ազգին<sup>28</sup> և ինչ պատիվներ՝ մեր հոգևորակա-

1 B մենք: 2 B քան գթե քո էն մենձ-մենձ կնյազնիր ու քաղցրիկն: 3 B մարդիկ: 4 A էք: 5 B մինք չիք: 6 B տալիս, մինք հայ չինք: 7 B կուտաս: 8 B Ուրիշներն: 9 B են: 10 B մենք: 11 B կուտաս: 12 B ունի: 13 B գնով: 14 B համար էլ ասոն օսկի թեղուգ: 15 B Պասին: 16 B չէ: 17 B օսկի: 18 B ասեմ ապա: 19 B ախպոր: 20 A Գանիել: 21 B համար: 22 A անգիվուրդի: B ազնիվուրդի: 23 B չիմ: 24 B Մինք քսանուհինկ ենք: 25 B քուզինք: 26 B ևս չիք: 27 B մարդիկը: 28 B կենն կոր ազգին:

նաց: Ուրեմն մենք ալ պարտավոր ենք անոնց թաղման պատիվը պահենք: Իհարկե, դանազանություն մը պետք է ըլլա ազնվականի և դերձիկի<sup>1</sup> մը, ինչպես կենդանության, նույնպես մահվանից հետք<sup>2</sup>. Ե՛ս:

Դերձիկ.—Չիմանաս թե իս<sup>3</sup> մե տուտուց<sup>4</sup> օքմին իմ. էսպես մի տեսնի<sup>5</sup> ինձ: Գու ջեր չուրս տարի<sup>6</sup> էլ չկա, վուր նրանց<sup>7</sup> ճանչնում իս<sup>8</sup>, ևս 40—50 տարի ավել կուլի, վուր քու<sup>9</sup> էն մինձ-մինձ<sup>10</sup> մարդկանց կու ճանաչեմ. դիփունի հիդ կոճի<sup>11</sup> էլ իմ խաղացի ու մուշակուխով էլ<sup>12</sup> եմ տվի. խմելու էլ իմ գնացի: Ասինք հիմի նրանք մե-մե շլապկա ին ծածկի ու մե-մե շինել ին գցի<sup>13</sup> վրեններուն ու փքվում ին<sup>14</sup>: Խնայք դիտենա, չէ թե հայու ազգին, քու էն հոգևոր տերին<sup>15</sup> էլ, մե կասկեկի լավութին, նընգած<sup>16</sup> տեղն, հարկավոր չին դա: Էստունք վուր ասում իս<sup>17</sup> դանա չիմ հասկանում<sup>18</sup>. դիփմեաի թանխեք իք տալի<sup>19</sup>, թե ինչ է, մե քանի օսկի տվելի առնիք<sup>20</sup>. Էս ասեք, էլի:

Կարապետ եպ.—Բավական է՝ որքան կը խոսաս. երեսնական օսկի ըլլա ու 5 հաա ալ Ֆարաջա<sup>21</sup> կարեք անփող:

Դերձիկ.—Էլի մինք<sup>22</sup> լավ ինք ձեզ վրա՛ Աչքիս վրա<sup>23</sup>, 5 Ֆարաջին է կու կարինք<sup>24</sup>, հիմի ի՞նչ խոսք<sup>25</sup> ունիք. բաց պատարագ<sup>26</sup> անում ի՞ք<sup>27</sup>, թե՛ չէ:

Կարապետ եպ.—Իհարկե կըլլա, թե կուզես՝ ամեն շափաթ<sup>28</sup>, ասանկ գնով, քեզ համար, բաց պատարագ կնեմ<sup>29</sup>:

Դերձիկ.—Լավ է, լավ. 30<sup>30</sup> օսկի, հինգ հաա էլ Ֆարաջա<sup>31</sup> անփող կարինք:

Կարապետ եպ.—Աստված քեզ օրհնե, ասանկ աղեկ մարդ մը ես, ինչի՞ շատ չեսի գար-երթար քովս:

Դերձիկ.—Գոռ խո չիմ, վուր վարդապետի մոտ գնամ-գամ, էս էլ<sup>32</sup> պատահեցավ՝

1 B մը ու դերձիկի: 2 B հետն: 3 A ևս: 4 B մին տուտուց: 5 B էհնց մի տեսի: 6 B ջուր դարի: 7 B նրանց: 8 B ևս: 9 B քու: 10 B մենձ-մենձ: 11 B կու ճանչնենամ, ուր ախպունի հետ կոճի: 12 A էլ չիք: 13 B են քցի: 14 B են: 15 B հոգևորականներու: 16 B կոսկեկի լավությունը քնկած: 17 B ևս: 18 A հասրանում: 19 B ախիփմեաի թանխեք իք տալիս: 20 B առնիք: 21 B Ֆարաջի ալ: 22 B մենք: 23 B վերա: 24 B Ֆարաջի էլ կու կարենք: 25 B խոսք: 26 B պատարագն: 27 B ե՞ք: 28 B շափաթ: 29 B չկընեմ: 30 B յառասուն: 31 B Ֆարաջն: 32 B էզ:

էկա: Գաղղես<sup>1</sup> տիրացու է, գաղս՝ տերտեր է, ութոս՝ ափեղա<sup>2</sup>, ասեղս՝ վարդապետ, թելս՝ էպիսկոպոս<sup>3</sup>, մկրասա էլ՝<sup>4</sup> հողեոր տեր: Գիմ նրանց մող<sup>5</sup> գնամ-գամ՝ վուր ամեն օր ինձ հաց ու ջուր են տալիս...

Սուրբ Նշանի էգեղեցումը<sup>6</sup> ունինք մեռելն: Իս<sup>7</sup> գնում իմ:<sup>8</sup>

(Եւ ելանէ ի դուրս):

Կարապետ եպ.— Աս ինչ եղավ, ձան տուր, ձան տուր, անոր համար ես կուզեմ ամեն բանը հստակ ըլլա:

Տիրացու Հակոբ, վախնամ՝ աս բանիցն զրույց մը ելլե:

Գնա, գնա, ասա, փողն մինչև հստանամ՝ չիմի<sup>9</sup> գար, հա, ես ատանկ չիմի<sup>10</sup> սիրեր, հա:

Հակոբ Կ.<sup>11</sup>—(Վաղէ և վերադարձուցանէ գնա, որում ասէ եպիսկոպոսն):

Կարապետ եպ.<sup>12</sup>— Լսա՞ր մի՛ ինչ ըսավ քեզ տիրացու վարժապետն:

Գերձիկ.— Ինձ ինչ հարկավոր է տիրացու վարժապետիցն իքմին լսելն: Փնւղն իս<sup>13</sup> ուղում՝ համեցեք, հիմիսկեվեա<sup>14</sup> տամ. 1, 2, 3, 4 և այլն:

Կարապետ եպ.— Էհ, հիմի գացիր և միամիտ կաց, որ կուզամ հոն:

Գերձիկ.— Աչքիս վրա. հուն շատ կու ճարվի, էնդումեն մե լավ սպաս էլ էփել<sup>15</sup> կուտամ՝ քեզ համա:

Կարապետ եպ.— Սպասել հարկավոր չէ. այ բան մը չունեմ<sup>16</sup> քեզ հետ:

Գերձիկ.— Սպաս էլ հարկավոր չէ... Ինչ վուր ուղում իս<sup>17</sup> պասվան քելիս՝ էնդումեն էփել<sup>18</sup> կուտամ:

Կարապետ եպ.— Հասկանամ<sup>19</sup> կը եփ ըլլալը. ես ինքս կուզամ, դու գացիր:

Գերձիկ.— Կենամ:

(Նստէ միւս անգամ):

Կարապետ եպ.— Ուրիշ բան մը ալ<sup>20</sup> ունի՞ս խոսալս:

Գերձիկ.— Ի՞նչ բան... Դու ասիր կացի<sup>1</sup>, ես էլ նստեցա:

Կարապետ եպ.— Ե՞ս ըսի:

Գերձիկ.— Դիւիս<sup>2</sup>:

Կարապետ եպ.— Թեե ես<sup>3</sup> ըսի, բայց հիմի՛ թե կամենաս՝ գնա:

(Գերձիկն ելանէ ի դուրս, և՛ ասէ եպիսկոպոսն ց՝ Յակոբ Կարենեանն):

Ատեղու մարդիքն<sup>5</sup> բոլորն ալ վայրենի գաղանի ըմանեն<sup>6</sup> կոր. շուն-շան որդին գեղացվո՞<sup>7</sup> պատկեր մը ուներ, բայց խոսակցությունն ինչպէս խելացի էր:

Հակոբ Կ.— Չգիտեմ, հասկացա՞ր մի, որ կոս խոսք մը ասավ<sup>8</sup>. աս կոս ասելով մեզի կը հասկանան:

Կարապետ եպ.— Ի՞նչ կըսես. ինչ ըսեր է՞<sup>9</sup> կոս:

Հակոբ Կ.— Կոս, այսինքն կուրո, ինչպէս քուրդերն ձո, ձո խոսքի տեղն կուրո-կուրո կըսեն, ասոնք ալ ան չենի կըրնար<sup>10</sup> արտասանել, անոր համար կոս, կոս կըսեն մեզի:

Կարապետ եպ.— Այսինքն, մեզի ըսելովդ կիմանաս<sup>11</sup> հողեորականներին:

Հակոբ Կ.— Չէ, ան մարդուն կըսեն<sup>12</sup>, որ կամ օսմանցվոց<sup>13</sup> շորերով է, կամ՝ ան կողմի մարդ է: Սոխախներումն երեխաքն<sup>14</sup> ալ ձան կուտան, որ անպատիվ խոսք մը կը սեպեն:

Կարապետ եպ.— Ադամ<sup>15</sup>, ինչ կուզեն նե, թող հաշան, միայն թե փարա ըլլա, փարա ըլլա<sup>16</sup>. ամեն բանը անորմե<sup>17</sup> դուրս կուզա: Գնա, օղուլ, ասա Եփրեմ վարդապետին՝ գա, ժամանակ է երթալս. ասօրվան<sup>18</sup> պատարագն սուղ<sup>19</sup> չի պետք է ըլլա մեզ համար:

(Մտանէ ներս<sup>20</sup> Եփրեմն. գնան ի միասին յեկեղեցին: Յայսպիսի նկարագրութիւն. պարտ է ցուցանել զսեղանն, յորմէ իջանէ<sup>21</sup> եպիսկոպոսն իւր եպիսկոպոսական<sup>22</sup>

1 B եկա: Գաղղասու: 2 B ութուս՝ արեղա է: 3 B եպիսկոպոս: 4 B էլ չիք: 5 B մոս: 6 B եկեղեցումն: 7 AB ես: 8 B եմ: 9 B չեմի: 10 A չեմի: 11 B Հակոբ Կարենյանն— ևս փակագծի մեջ: 12 AB Կար. եպ.— չիք: 13 B ես: 14 B հիմիկեվեր: 15 B եփել: 16 B չունիմ: 17 B ես: 18 B եփել: 19 B Հասկընամ: 20 B ալ չիք:

1 B ասեցիր կացիր: 2 B դիւսիս: 3 B ես չիք: 4 B և չիք: 5 B Ատեղի մարդիկն: 6 B նմանին: 7 A գեղացվոց: B գեղացու: 8 B ըսավ: 9 B թե ինչ ըսել է: 10 B չենի կըրնար: 11 B կիմանան: 12 B կսին: 13 B օսմանցոց: 14 B սոսախներումն: 15 B Ատամ: Այսատեղից մինչև 16-րդ նշանը բաց: 17 B անորմեն: 18 B ասօրվան չիք: 19 B աս սուղ: 20 B ի ներս: 21 A իջանէ չիք: B իջանէ, իջանէ: 22 B իւր եպիսկոպոսական չիք:

զգեստուք, և կատարել զկարգն մեռելի և անախ ելանել: Եպիսկոպոսն<sup>1</sup> ուղեկից<sup>2</sup> լիալ<sup>3</sup> ննջեցելոյն, հասանեն ի Հալվարաք<sup>4</sup>, ուր եպիսկոպոսն զգազար անուռ՝ ի մեջ փողոցի և ասէ ցԵփրեմ վարդապետն):

Եփրեմ վարդապետ, դադրեցա՞. ևս կուղեմ հոս մին տեղ զգեստս<sup>6</sup> հանել, կամ թե անանկ զգեստով հետ դառնալ:

Եփրեմ վարդ.— Սրբազան, այս տեղաց մինչև վանքն մինակ հետ դառնալ և այն ևս եպիսկոպոսական զգեստուք՝ ամոթ է. և այսպես տեղն ևս<sup>7</sup> հանելն ինչպես կարելի է:

Կարապետ եպ.— Չէ, մտնիմ կը հոս, աս խանութների մեկն, հոն կը հանեմ զգեստս և կարեթով կերթամ:

Եփրեմ վարդ.—

Ա՛խ, սրբազան, գիտե՞ք աս ինչ խանութ է, Մի մանեք հոս<sup>8</sup>. ևս Ձեզ ասի ամոթ է. նայն, նայն, որքան արբած լիքն<sup>9</sup> են, Գիշեր-ցերեկ<sup>10</sup> յուրյանց կեանքն կանցնեն<sup>11</sup>:

Կարապետ եպ.—

Որդյակ, աս փնաս<sup>12</sup> չունի, աս ասա, Թե մեռելի տերն, զնալուս համար, չնեղանա,

Թեպես երսուն<sup>1</sup> ոսկի տվեր են<sup>2</sup> գոքա, Բայց այս ևս որքան եկանք՝ մեզ<sup>3</sup> բալ ա: (Կանգնի):

Եփրեմ վարդ.— Ինչպես տեսում եմ քեզ<sup>4</sup>, սրբազան, դու քո ասածը պետք է կատարես<sup>5</sup>. մեզքը քո վիզը: Ուրեմն զնա, հանե զգեստդ, ինչպես կամում ես:

Կարապետ եպ.— Պահե՞ք, կանգնեցե՞ք՝ ասեմ հանդուստյան<sup>6</sup> վերջի հողոցն<sup>7</sup>, ևս ձեր մարդ մը եմ, չունեմ<sup>8</sup> զսրություն շատ<sup>9</sup> քալելուցը:

Ներեցե՞ք, աղբարք<sup>10</sup>, ևս հետ դառնամ կոր. տեր ողորմեսցե, ձեր<sup>11</sup> ննջեցելոց հողին արդարոց դասը դասեսցե:

(Սկսէ ասել. «Հողոց<sup>12</sup> հանդուցելոց, Գրիստոս, աստուած մեր» և այլն. զինի վերջացուցանելոյ, բազմութիւնն զնայ ընդ հանդուցելոյն, և եպիսկոպոսն մտանէ ի կրպակ մի զինիվաճառի՝ երկուք<sup>13</sup> ամբարջուօք և երկու քահանայիք: Բայց պարտ է զգուշանալ յայսմ<sup>14</sup> նկարագրութեան. հանել զգեստն նորա որպէս վայել է արքեպիսկոպոսի միոյ):

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ծ.

Տոնական.—

Հայր սրբազան,  
Աստված օգնական:

Կարապետ եպ.—

Անմեղ իմ ձագուկ,  
Միրելի գառնուկ,  
Ոչինչ ժամանակ,  
Ատանկ համարձակ,  
Ողջուշնդ ուրախ,  
Երեսիդ<sup>13</sup> ծիծաղ,  
Երբեք չեմ տեսած՝  
Հոս մանես հանկարծ:  
Թե ունես<sup>14</sup> համբավ,  
Մի պահեր<sup>15</sup> բնավ.  
Ասա, իմանամ,  
Շուտով հասկանամ<sup>16</sup>:

Տոնական.—

Այսօր մեզ կազանդ, Ձեզ ճոխ<sup>15</sup> գատիկ է,  
Թե որ իմանաս՝ աս ինչ նամակ է...

Կարապետ եպ.—

Շուտով ասա՝ տեսնենք ինչ կա,  
Բեր նամակդ, մտիս կարգա:

Տոնական.—

Անանկ կը կարտես, թե ասանկ գիրը  
Միշտ հեշտությունով կըլլա կարգալը.  
Ասա տեսնեմ, թե ինձ ինչ պետք է տաս,  
Որ ասպես<sup>16</sup> լուր մը ինձմե հասկընաս:

Կարապետ եպ.—

Դու աղեկ գիտես, որ վարդապետ մը  
Ամենեին չի տար մարդս բան մը.  
Մերը<sup>17</sup> ասնելն է և ոչ թե տալն,  
Անմեղ կը անցանի<sup>18</sup> աս քո խոսալն:

<sup>1</sup> B Եպիսկոպոսն շիր: <sup>2</sup> A ուղեկից: <sup>3</sup> B լինել: <sup>4</sup> B Հալվարաք: <sup>5</sup> B դադարեցա: <sup>6</sup> B զգեստն: <sup>7</sup> B աս: <sup>8</sup> B հոն: <sup>9</sup> B հարբած լիքն: <sup>10</sup> B ցորեկ: <sup>11</sup> A կանցկացնեն: <sup>12</sup> B վրնաս: <sup>13</sup> B Երեսիդ: <sup>14</sup> B ունիս: <sup>15</sup> B պահեր: <sup>16</sup> A հասկընամ:

<sup>1</sup> A քսան: <sup>2</sup> B տվեր լն: <sup>3</sup> B նե: <sup>4</sup> B ես քեզ: <sup>5</sup> B կատարես: <sup>6</sup> B հանդուստյան չիք: <sup>7</sup> B հողոցը: <sup>8</sup> B չունիմ: <sup>9</sup> B շատ չիք: <sup>10</sup> B աղբարք: <sup>11</sup> B մեր: <sup>12</sup> B Հողոցն: <sup>13</sup> B զինիվաճառի երկուք: <sup>14</sup> B յայսմ: <sup>15</sup> A քեզ ճոգ: <sup>16</sup> B այսպես: <sup>17</sup> B Մերն: <sup>18</sup> B կանցնի:

Տոնական.—

Առքան հասակը ինչ պիտի<sup>1</sup> ընես,  
 Թե այլոց չեք տար, ինչի՞ կը ժողվես,  
 Ինչո՞վ ձեռք բերիք Ձեր աս<sup>2</sup> վիճակը,  
 Մի՞թե մտացեր եմ անքան ստակը<sup>3</sup>։  
 Ես աղեկ դիտեմ, հայի մը չես տար,  
 Թեև տասն սնդամ քեզ հողի կուտար<sup>4</sup>,  
 Բայց այլազգով<sup>5</sup> մը՝ ոչընչի համար՝  
 Չես նայիր, կուտաս՝ բռնով<sup>6</sup> անհամար։  
 Մեկիցն<sup>7</sup> «Հայր մեր»-ով, մյուսին<sup>8</sup> օրհնելով,  
 Մատուցով, խաչով, խաչակնքելով,  
 Կընդրկով, խնկով, շուրջառով, թագով<sup>9</sup>,  
 Ամեն հնարքով, հաղար-մեկ բանով,  
 Ուժով է, կամքով, կաննք խարելով,  
 Թե ինչ է, վատնեք՝ այլոց բաժնելով։

Կարապետ եպ.—

Ես քեզի ըսի, ալ հարկավոր չէ,  
 Թե քո աս լուրն բանի մը կարժե<sup>10</sup>,  
 Քեզ չիմի<sup>11</sup> թողնեք առանց վարձի մը,  
 Աս իմ խոսքերին<sup>12</sup> չե՞ս<sup>13</sup> հավատար մը։

Տոնական.—

Աշխարհը<sup>14</sup> դիտե, մտ բանի համար,  
 Գիշեր ու ցերեկ շունեիք<sup>15</sup> դադար,  
 Անա նամակդ, ոչինչ չուղեցի,  
 Աս փոքր բանով քեզ ճանաչեցի։  
 Ինչպես որ լսած<sup>16</sup> էինք մենք վաղուց,  
 Կարբեցին հիվանդ պառկած<sup>17</sup> էր<sup>18</sup> շատուց,  
 Քանի մը օր է, ըլլա աչքդ լնւյս<sup>19</sup>,  
 Մեռեր, դացեր է, թողեր է քեզ հույս։

Կարապետ եպ.—(Ի լսելն դայս, կանգնի յտի, գրգէ<sup>20</sup> գնա և ասէ).

Ա՛խ, անմեղ գառնուկ, մի՞թե ինձ առքան  
 Կտակածոս սրահեկ քեզ էր մը արժան։  
 Ասո՛, հանդարտվի հողիս հավիտյան,  
 Քեզ մատաղ ընեմ կյանքս ամենայն։  
 Հարկավոր էր մը ատանկ ավեախ  
 Անքան<sup>21</sup> ժամ ինձմե դու ծածուկ պահիս<sup>22</sup>։  
 Կացիր միամիտ, երգնում քո արև,

<sup>1</sup> B պետք է։ <sup>2</sup> B աս Ձեր։ <sup>3</sup> B առքան բտակը։  
<sup>4</sup> B կըտար։ <sup>5</sup> B այլազգո։ <sup>6</sup> B բռնով։ <sup>7</sup> B Մեկիցն։  
<sup>8</sup> A միսին։ <sup>9</sup> B Այս և նախորդ առգր կրճատված  
 ձուլիկ են իրար, տալով այսպիսի առգ.  
 «Մատուցով, յուզով, շրջառով, թագով»։  
<sup>10</sup> B կարժե։ <sup>11</sup> B չիմի։ <sup>12</sup> B խոսքերուս։ <sup>13</sup> A չեսի։  
<sup>14</sup> B Աշխարհը։ <sup>15</sup> B ցորեկ շունեի։ <sup>16</sup> B Ինչ-ինչ  
 լսած։ <sup>17</sup> A պարկած։ <sup>18</sup> B է։ <sup>19</sup> B աչքդ ըլլա լուս։  
<sup>20</sup> B յտին, գրգէ։ <sup>21</sup> B Առքան։ <sup>22</sup> A պահես։

Երբ նպատակիս հասա ես բարև,  
 Ակնկալությունդ չի ըլլար դերև<sup>1</sup>,  
 Ինչ որ քո կամքն է՝ կընեմ քեզ պարզև։

Տոնական.—

Սրբազան, մտ ինձ մարս խրատեր է,  
 Ա՛սօրվան բանը վաղը<sup>2</sup> մի՛ ձգե.  
 Ինչ որ տալու ես՝ հիմի տուր, պրծե<sup>3</sup>,  
 Հետս պարզև մը ընել՝ Ձեր կամքն է։

Կարապետ եպ.—

Ուշըդ վրադ<sup>4</sup> պահե, լսե Տոնական,  
 Թեպեա ծնած ես մարից դյուզական,  
 Բայց սնունդ եղեր է քովս<sup>5</sup> աղնվական,  
 Եվ ինքդ՝ խոհեմ, մանուկ բանական։  
 Փառք աստուծոս, հիմի ամեն<sup>6</sup> լրացավ<sup>7</sup>,  
 Երեսիդ մաղն ալ դուրս դալ ըսկսով<sup>8</sup>,  
 Սարկավազությանդ ժամանակն<sup>9</sup> եղավ,  
 Վարդապետությանդ<sup>10</sup> կերթա իւր կարգով։  
 Հարկ է, մեր օծումն, չի քաշե<sup>11</sup> տարի,  
 Որ ան ժամանակն կարեմ ձեռնադրի  
 Քեզ եպիսկոպոս, արհի մը բարի,  
 Որ կարողանաս ուղածդ կատարի։  
 Հիմի հարկավոր չէ ատ խոսքերն,  
 Թե՛ մարս տվեր է ինձ աս խրատներն,  
 Փող մը չեն արժի<sup>12</sup> անանկ մարերն,  
 Երբ դու կը տեսնաս ասանկ հոր սերն։

(Տօնականն տրտում դիմօք<sup>13</sup> ասէ.)

Տոնական.—

Սրբազան, ատուր չէի սպասեր,  
 Լավ էր մեռնելի, քան զթե լսեր,  
 Քանի հեզ Գավթի վրա եմ խնդացեր<sup>14</sup>,  
 Երբ դեռ ծնունդս չէի հասկըցեր<sup>15</sup>։  
 Հողը-մոխիրը իմ գլխուս ըլլա,  
 Ես աշխարհումն<sup>16</sup> խայտառակ եղա։  
 Մնացեք բարև,  
 Չուղեցի պարզև,  
 Ինձ համար եղավ  
 Ասպես<sup>17</sup> մի համբավ,  
 Կսկիծ բավական,  
 Հավիտենական։

(Ելանէ զայրացեալ ի դուրս)։

<sup>1</sup> A ըլլար դերև։ B ելլար դերև։ <sup>2</sup> B վաղվան։  
<sup>3</sup> A պրծե։ <sup>4</sup> B Ուշտ վրատ։ <sup>5</sup> B Բայց սնունդ եղեր  
 է քաջ։ <sup>6</sup> A ամենը։ <sup>7</sup> B լրացավ։ <sup>8</sup> B սկսով։ <sup>9</sup> B  
 ժամանակ։ <sup>10</sup> B վարդապետությանն։ <sup>11</sup> B կը քաշե։  
<sup>12</sup> B արժիր։ <sup>13</sup> B երեսօք։ <sup>14</sup> B խնդացեր։ <sup>15</sup> B հաս-  
 կացեր։ <sup>16</sup> B Ես աս աշխարհում։ <sup>17</sup> B Այսպես։

Կարապետ եպ.— Ձո՛ւ, սրբո՛ղ կաք հոս,  
եկեք մի՛նքդ ներս:

(Մտանէ ի ներս Գրիգոր Տէր-Յովհան-  
նէսեանն<sup>1</sup>).

Կարապետ եպ.<sup>2</sup>— Գնա՛, ձան տուր գա՛  
հոս՝ որն որ ըլլա, կամ՝ տիրացու. Հակոբին  
կամ Գևորգ վարդապետին:

(Գրիգորն դնացեալ<sup>3</sup> փոքր ինչ սպասէ,<sup>6</sup>  
գայ ի ներս ընդ Գէորգ վարդապետին:  
Եպիսկոպոսն<sup>7</sup> ասէ ց՛Գրիգորն).

Մի՛ ըլլար գեղջուկ,  
Գնա դուրս, ձագուկ,  
Խորհուրդ մը ունեմք<sup>8</sup>  
Խոսալո ծածուկ:

(Գրիգորն ելանէ ի դուրս: Եպիսկոպոսն<sup>9</sup>  
ասէ ց՛Գէորգ վարդապետն).

Ասանկ բաներին, Գևորգ վարդապետ,  
Ավելի աղեկ դու կըլլաս վարպետ,  
Գրե Կաշակեր Ստեփաննոսը,  
Եոթըն օր կըլլա, կաթուղիկոսը

Մեռեր, թաղեր են.  
Մեղի հրավիրեն.<sup>10</sup>  
Որքան կարող ենք,  
Շուտով աշխատենք,  
Որ անպես տեղը  
Ձեռաց չթողնենք:<sup>11</sup>

Հիմի ասա թե ինչպես հնարքով,  
Պետք է աշխատել դոնե մին կերպով,  
Տեղվույս իշխանաց ստորագրութիւնով,  
Աս ընտրութիւնը ըլլա մեր անուանով:

Քանի մը ամիս  
Պետք է աշխատիտ,<sup>12</sup>  
Ինչքան փող կուզես՝  
Մսխել կարո՞ղ ես՝  
Մինչ գլուխ բերես:

Գևորգ վարդ.<sup>13</sup>— (Ձարմացեալ նայէ ցնա<sup>14</sup>  
և ապա ասէ).

Փառք աստուծո, հիմի ամենն լրացավ<sup>15</sup>,  
Մեր ասածներն նոր կատարեցավ,  
Թանգ<sup>16</sup> արժե կոր մեզ ատանկ մին համբավ,  
Շնորհավոր ըլլա և վերջն բարյավ:

<sup>1</sup> A Յովհաննէսեանն չիք: <sup>2</sup> B Կարապետ եպ.—  
չիք: <sup>3</sup> B դա չիք: <sup>4</sup> B կամ չիք: <sup>5</sup> B գնա և: <sup>6</sup> B  
սպասեալ: <sup>7</sup> B և: <sup>8</sup> B ունիմ: <sup>9</sup> B ապա: <sup>10</sup> B հրա-  
վիրեր են: <sup>11</sup> B չը թողնենք: <sup>12</sup> A աշխատես: <sup>13</sup> A Գե-  
որգ վարդ — չիք. դրա փոխարեն իբրև փակագծված  
մաս ունի. Գևորգ վարդապետն զարմացեալ... և այլն:  
<sup>14</sup> B հայի ի նա: <sup>15</sup> A լրացավ: <sup>16</sup> B թանկ:

Կարապետ եպ.—

էհ, այժմ նայենք. ինչպես ըսկսենք<sup>1</sup>,  
Որքան ոչ-ոքի լուր մը ավեր չենք,  
Կամ սում մեր ձեռքին խաղալիք<sup>2</sup> չինենք.  
Որ աս խորհուրդը շուտ գլուխ բերենք:

Գևորգ վարդ.—

Տեղուս<sup>3</sup> իշխանաց քանի մը հողի,  
Որ խոսան կոր միշտ մեր կողմը բարի,  
Անոնց կարող ենք միշտ մեր խորհուրդը  
Ասել, խորաթել, հայտնել<sup>4</sup> ուղղակի:

Կարապետ եպ.—

Ասա տեսնեմ, թե սովք են ատ՛ մարդիկ,  
Որ մեր խորհուրդին ըլլան արժանիք:

Գևորգ վարդ.—

Մինն է Երեմիա Աղա Արծրունին,  
Սերա<sup>5</sup> մեզ բարեկամ, այլոց թշնամին:

Կարապետ եպ.—

Երբեք ես անոր բարեկամութեան  
Ձեմ կարող դնել կոպար և սահման<sup>7</sup>,  
Անոր օգնութիւնը է մեզ անպիտան,  
Միտքդ բեր այլ մի՛ ըլլա մեզ արժան:

Գևորգ վարդ.—

Մյուսն է Սողոմոնն Արիսալամով<sup>8</sup>,  
Որս ավելի կըլլամ ապահով:

Կարապետ եպ.—

Աս ալ անանկ մարդ մը է անհաստատ,  
Որում չեմ կարող ընծայել հավատ.  
Եվ մեզ բարեկամ է այժմ թեպետ,  
Բայց վարքն ու բարքն<sup>9</sup> ինքն է չարամետ:

Գևորգ վարդ.—

Դոցա վերա մեզ առավել հարմար,  
Որոց կարող եմ ասել ծածկարար,  
Թե դուք աշխատեք աս բանի համար,  
Սրբազանն ձեզ երբեք չի մոռնար:

Աս մին բառով<sup>10</sup> նոքա կը կարծեն,  
Թե երբ վերջացավ՝ սլարդե մը կանեն.  
էհ, երբ աստուծով<sup>11</sup> հասաք Ձեր կամքին,  
Դատարկ խոսքով ալ բավական կլինին<sup>12</sup>:

Կարապետ եպ.—

Ասա, տեսնեմ, թե ասածդ<sup>13</sup> սովք են,  
Բանի մը կուզան. թե ոչ<sup>14</sup> քամիք են.  
Ես հոս չտեսա<sup>15</sup>, չի ալ պատահել,  
Որո՞՞ մեր մարդը կարենա խաբել:

<sup>1</sup> B սկսենք: <sup>2</sup> B խաղալիկ: <sup>3</sup> B տեղվույս: <sup>4</sup> B  
հայտնի: <sup>5</sup> B աս: <sup>6</sup> A Սիրա: <sup>7</sup> A հահման: <sup>8</sup> B Սո-  
լոմոնն Արիսալամով: <sup>9</sup> B բարքն ու վարքն: <sup>10</sup> A  
բարբովս: <sup>11</sup> B աստուծով երբ: <sup>12</sup> B կըլլին: <sup>13</sup> B  
ասածդ: <sup>14</sup> B ողջ: <sup>15</sup> B չի տեսա: <sup>16</sup> B որոց:

Պետրոս վարդ.—

Առաջինն է ազգն Բեհրությանց<sup>1</sup>,  
Որք վասն օգտի<sup>2</sup> և անվան յուրյանց  
... ևս ևս:

Կարապետ եպ.—

Ես ատոնցից<sup>3</sup> ալ  
Ոչինչ չեմ հուսալ:

Պետրոս վարդ.—

Մյուս ատոնս են Ղորղանյանք բոլոր,  
Որոց մինն ալ Թոմեն պրոկորոր<sup>4</sup>,  
Ամեն բան նորա ձեռքին է ասօր<sup>5</sup>  
Եվ աս գործերի համար հարկավոր:

Կարապետ եպ.— Հը... լսե... աղեկ ականջդ

բաց արա՛ տեղվույս մարդկանց համար:  
Ամենն խորամանկ ազգ են խաբերա,  
Թեև բարեկամ, բայց միշտ են երկրա<sup>6</sup>.

Չեոնից չեն թողնել, թե է յուրյանց շահ,  
Մի լինիր երբեք սոցա դու վստահ:

Միմյանց չեն հավտա՛ թեև են եղբարք,  
Մեջերնին չկա ոչ օրենք, ոչ կարգ,

Ամեն վատությանց միջին են ճարտարք,  
Չեն ալ հասկանալ<sup>7</sup> ի՞նչ ըսել է բարք:

Ինչ ժամանակ մին մարդս կը խաբեն,  
Առանց ամսթա միմյանց կը պատմեն.

Հափշտակելն<sup>8</sup> պարծանք համարեն<sup>9</sup>,  
Եվ մաանողին հոս գոքա կը պատվեն:

Ուրեմն պեաք է միշտ լինես զգուշ,  
Ոչինչ չես շիներ՝ թե շունիս դու<sup>10</sup>, հուշ,

Ջրուցներին<sup>11</sup> քնքուշ, կխոսան<sup>12</sup> անուշ,  
Ինչ ունիս՝ կառնեն ձեռիցդ անուժ:

Հիմի ասա, թե ինչպես կարող եմ  
Ատոնց, որ կսես<sup>13</sup>, ես ինձի հանձնեմ.

Առաջ<sup>14</sup> հույս կուտան, մեծ-մեծ խոստանան<sup>15</sup>,  
Բայց թե չեն շահվել՝ իսկույն հեռանան<sup>16</sup>:

Հը... թեպետ... ասեմ... ոչ մինի վերա<sup>17</sup>  
Չեմ կարող ըլլալ հիմի ես վստահ...

... Բայց պեաք է ցույց տանք անձարութենե<sup>18</sup>,  
Թե ձեր... բարեկամությանց մեք եմք

աներկրա:

... Դարձյալ Արծրունին<sup>19</sup> է բուն վանեցի,  
Որ այսօր կսեպվի<sup>20</sup> նա մեզ<sup>21</sup> երկրացի.

Լավ... Մարդ մը դրդե<sup>1</sup>, դա այսօր<sup>2</sup> հոս հացի,  
Որո՞ք իմացում տանք հարեանցի:

Հնա, դու<sup>3</sup> ալ կերթաս աս երեկոյան  
Սողոմոնի մոտ Արեսալումյան<sup>5</sup>,

Կպատմես<sup>6</sup> անոր աս մեր առարկան,  
Կը խնդրես ալ, որ ըլլն օգնական:

Նա է էնպես<sup>7</sup> մարդ՝ ինչպես որ ըսի<sup>8</sup>,  
Որ յուր վատ գործոց համար բամբասի,

Բայց աս բանի մեջ շատ հարկավոր է,  
Որ ամենի քով մեր կողմն խոսե<sup>9</sup>:

(Ելանէ ի դուրս Գէորգ վարդապետն,  
դա ներս Արծրունին<sup>10</sup>, որ ասէ).

Եր. Արծրունի.<sup>11</sup>— Աստված օգնական:  
Կարապետ եպ.— Աստված պահապան:

Եր. Արծրունի.— Ո՞ղջ եք, սրբազան:  
Կարապետ եպ.— Ազոթոյ կնք միշտ կե-

նացդ պատվական... Հրամեցեք, նստեք:  
Եր. Արծրունի.— Աղաչեմ<sup>12</sup>, հրամեցեք,

նստեք:  
Կարապետ եպ.— Հրամեցեք, նստեք: Ան-

փիա կամ ի՞ք, սովորություն ունի՞ք. հրա-

մեցեք<sup>13</sup>, քաշեք: Էհ, Աղա Երեմիա, շատ

ժամանակ է չես դար, չես երթար. պատ-

ճասն ի՞նչ է:  
Եր. Արծրունի.—

Ի՞նչ հարկավոր է Ձեզ ձանձրություն տալ,  
Թանկ ժամանակին արժան գին հատյալ,

Անմեզ ու անրան բովակքն վասնյալ<sup>14</sup>,  
Եվ ծառայությանց գործից<sup>15</sup> հետ մնալ:

Կարապետ եպ.—  
Օհ, ի՞նչ հարկավոր, խելացի խրատ,

Գրելո արժան մեզ<sup>16</sup> օրենք հաստատ,  
Ա՛խ, ինչ կըլլար, որ ամեն մեր իշխանն

Ոսկետառ դրած պահեր յուր վրան:  
Ատ քաղցր, անուշ քո խոսակցությանց,

Տես, որ<sup>17</sup> դմայլած եմ մտոք չափազանց:  
Եր. Արծրունի.—

Հողվով շնորհակալ եմ, սրբազան հայր,  
Այդ Ձեր չափազանց<sup>18</sup> մեծ շնորհաց համար:

1 B Բ... եանց: 2 B ազգի: 3 B ատոնցից: 4 B Որոց մինն էլ Թոմեն պրոկորոր: 5 B այսօր: 6 B Տողը չիք: 7 B Չեն հասկանալ թե: 8 B Հափշտակելն: 9 A համարին: 10 B դու: 11 B գրուցներին: 12 B կը խոսան: 13 B կրտսեր: 14 B Հառաջ: 15 A կխոստանան: 16 A կհեռանան: 17 B վրա: 18 B անձարության: 19 B Ա...: 20 A կը սեպվի: 21 B մեր:

1 B դրդե: 2 B այսօր: 3 A որ: 4 A տու: 5 B Սողոմոնի մոտ Արեսալումյան: 6 B կը պատմես: 7 B Նա է ինչպես: 8 B ըսի: 9 A խոսի: 10 B գայ ի ներքս Արշակունին: 11 A Եր. Արծ.— չիք: 12 Ա.— (այսպես միշտ): 12 A Աղաչեմ չիք: 13 B հրամայեցեք: 14 B բովակքն հատյալ: 15 B գործոց: 16 B մեջ: 17 B ես (Տես, որ-ի փոխ.) 18 B ասանձին:

Տոնակահան<sup>1</sup>.—(Յանկարծ մտանէ ի ներս<sup>2</sup> և ասէ<sup>3</sup>).

Սրբազան, չորքեն,  
Սեղանի վրեն<sup>4</sup>,  
Պատրաստ է արդեն:

Կարապետ եպ. (Կալեալ գձեռանէ Ար-  
ծրունւոյ, ասէ).—

Աղա Երեմիա<sup>5</sup>,  
Եկե, հրամայո՛ւ,  
Սեղանի վրա  
Կխոսանք դահա<sup>6</sup>:  
Տոնական, դնա,  
Հարոյին ասա՛  
Մի-մին ըստի տա,  
Շատ աղեկ կըլլա:

Տոնակահ. — Հրամայե՛ր ես<sup>7</sup>, հասկըցա:

Եր. Արծրունի. — Աղաչեմ<sup>8</sup>, հրամայեցե՛ք<sup>9</sup>  
հառաջ, սրբազան:

Կարապետ եպ. — Քալ լիցի, հրամայե՛ք<sup>10</sup> սի-  
րեկան:

(Արծրունին յառաջ ելանէ քան դնա և  
ասէ).

Եր. Արծրունի.<sup>11</sup> — Սա մին աղոն ունի  
աղալու<sup>12</sup>, տեսնենք վերջն ինչ կլինի<sup>13</sup>:

(Նստին ի վերայ սեղանի և սկսեն խմել  
և միմեանց հետ խօսել: Ասէ եպիսկոպոսն)<sup>14</sup>:

Կարապետ եպ.<sup>15</sup> — Աշխարհումս շատ և<sup>16</sup>  
կերպ-կերպ վիճակներ կան, համարյա թե  
ամենն ալ զանազան<sup>17</sup> դժվարություններ  
ունին և մեծ-մեծ տառապանքներ, բայց  
ոչ մինն հոգևորական վիճակի նման հան-  
դիստ և առանց նեղությանց չըլլար:

Եր. Արծրունի. — Ի՞նչպես, սրբազան:

Կարապետ եպ. — Անանկ, որ սմանք ան-  
դադար կաշխատեն կոր<sup>18</sup> յուրյանց հացը  
վաստակելո՞ւ<sup>19</sup>, սմանք՝ պատիվ ձեռք բերե-  
լու, ոմանք ալ՝ յուրյանց աղազայից հարըս-  
տություն մը թող տալու, բայց մեք ասոնց  
ոչ մինն ալ չունենք և ընդհակառակն,

<sup>1</sup> A Տոնակահ. — չիբ: <sup>2</sup> B ի ներքո: <sup>3</sup> A Տօնա-  
կանն և ասէ: <sup>4</sup> B վրա: <sup>5</sup> B Երեմիա: <sup>6</sup> B Կը խո-  
սանք տահա: <sup>7</sup> A Հրամայե՛ր: <sup>8</sup> A Աղաչեմ չիբ: <sup>9</sup> B  
հրամայեցեք: <sup>10</sup> B հրամայ չիբ: <sup>11</sup> A Եր. Արծրունի. —  
չիբ: <sup>12</sup> B Սա (մեզմ) մին աղան ունի աղալու: <sup>13</sup> B  
կը լինի: <sup>14</sup> B (Նստին ի սեղան և սկսին ցքի խմել  
և խօսել ընդ միմեանս): <sup>15</sup> A Կար. եպ. — չիբ: <sup>16</sup> B  
և չիբ: <sup>17</sup> B զանազանություն: <sup>18</sup> B աշխատին ան-  
դադար դոր: <sup>19</sup> B վաստակելու:

աղատությամբ հասնենք կոր անոնց և մեր  
զիտավորության<sup>1</sup>:

Եր. Արծրունի. — Սրբազան, այդ Ձեր  
առաջարկությունն շատ դավելի բան չէ.  
դոր օրինակ. միթե թագավորք չեն կարող  
աղատությամբ և առանց նեղությանց հաս-  
նել ամեն Ձեր<sup>2</sup> ասածներին, բայց տեսնում  
ենք, որ նոքա ևս վաստակում են:

Կարապետ եպ. — Աս իմ ասած առարկա-  
յի պատասխանն չէք. ևս թագավորաց հա-  
մար չեմի՞ք ըսեր:

Եր. Արծրունի. — Ուրեմն սե՛մ համար կը  
հրամայեք:

Կարապետ եպ. — Ես մեզ<sup>4</sup> նման մարդ-  
կանց վրա ըսեմ<sup>5</sup> կոր. դոր օրինակ դուք,  
որ զինվորական մը եք և ամեն օր, ամեն  
ժամ, ամեն րոպե<sup>6</sup> զանազան երկյուղի և  
կասկածանաց մեջ եք և միշտ նեղություն-  
ներ և տառապանքներ կրեք կոր, բայց մեք  
Ձեզ<sup>7</sup> նման չենք:

Եր. Արծրունի. — Աղաչեմ<sup>8</sup>, իհարկե, մեք,  
որ այնքան նեղություններ<sup>9</sup> կը կրենք, մին  
զիտավորություն ունենք, այն պատճառի  
էլ յանձնառու եմք լինում:

Կարապետ եպ. — Ի՞նչ զիտավորություն.  
շատ որ ըլլա՛ եներալ<sup>10</sup> պիտի որ ըլլաք,  
դարձյալ մեզ նման չեք կարող ըլլալ:

Եր. Արծրունի. — Ընդմարիտ է, մեք, որ  
աշխատում ենք կամ նեղություններ եմք<sup>11</sup>  
հանձնառու լինում, այն զիտավորությամբ  
է, որ մեր հետագայից մին կտոր հաց և  
անուն թողնենք, իսկ դուք, ինչպես հեշ-  
տությամբ եք ձեռք բերում, այնպես էլ<sup>12</sup>  
հեշտությամբ եք կորցնում:

Կարապետ եպ. — Ըշտե ատ զանազանու-  
թյունն է, որ մեք<sup>13</sup> մեր ժողովածն վայե-  
լենք կոր, իսկ դուք՝ այլնց թող կուտաք:

Եր. Արծրունի. — Աղաչեմ, սրբազան<sup>14</sup>,  
ի՞նչ է Ձեր վայելչությունն, ոչինչ համարյա  
թե<sup>15</sup>:

Կարապետ եպ. — Մեր վայելչությունն  
ձեզնե ավելի աղղու է և ցանկալի, դոր  
օրինակ դուք, որ այժմ կաք հոս, Գևորդ<sup>16</sup>

<sup>1</sup> B զիտավորության: <sup>2</sup> B Ձեր ամեն: <sup>3</sup> B չէի:  
<sup>4</sup> B մեր: <sup>5</sup> B կրեմ: <sup>6</sup> B րոպե: <sup>7</sup> B Ձեր: <sup>8</sup> A  
Աղաչեմ չիբ: <sup>9</sup> B նեղություն: <sup>10</sup> B ենարալ: <sup>11</sup> B  
ենք: <sup>12</sup> B ալ: <sup>13</sup> B մենք: <sup>14</sup> B սրբազան չիբ: <sup>15</sup> B  
համարյա թե ոչինչ: <sup>16</sup> B Գ.:

Աղայի սրդին էք. հայրդ՝ երևելի, դուք՝ երևելի, բայց ես ումի՞ն սրդին եմ. փռնչիի մը սրդի: Կարբեցին ումի՞ն սրդին էք. դուդապի ալեկական գոհեկի<sup>1</sup> մը սրդի. ուրեմն, ի՞նչ երջանկություն է անպիտի վիճակեն աս վիճակն հասնել<sup>2</sup>, որ ձեզ նման երևելի հազարավոր անձինք մեր ձեռքը սրահնեն կոր, մեր առջևը համեստությամբ նստեն կոր և խորաթեն կոր: Ասացեք, սրն է ավելի լավ վայելչություն. կամ՝ մեք ավելի լավ եղանակով մեր վիճակն վայելնք կոր, թե՛ դուք, որ աշխատեք և մեզ համար նեղություն<sup>3</sup> քաշեք կոր ըստ մեծի մասին:

Եր. Արծրունի. — Աղաչեմ, սրբազան, ներեցեք<sup>4</sup>, այդ մի խարեական երջանկություն է, որովհետե թեպետ մեք Ձեզ պատվում ենք, բայց Դուք ևս Ձեր մտքումն, Ձեր սկզբնական վիճակն միտ բերելով, իսկույն այն պատիվն<sup>5</sup> Ձեզ համար արհամարհանք է լինում:

Կարապետ եպ. — Միրելի, ատ<sup>6</sup> Ձեր կարծիքն է և ոչ թե մերն: Բոլոր աշխարհն<sup>7</sup>, որ Կարբեցվույն պատվեր կոր, ի՞նչ կարծես, նա այն պատիվն յուրյան արհամարհանք համարեր կոր. քով լիցի: Աստված տա անանկ մը<sup>8</sup> արհամարհանք ալ ինձի տային: Հա՛, գիտես, որ գիր մը առի էջմիածնն<sup>10</sup>. Կարբեցին մեռեր է:

Եր. Արծրունի. — Մի՞թե. ի՞նչ էք հրամայում:

Կարապետ եպ. — Հրամեր ես<sup>11</sup>, ասոր<sup>12</sup> գիր ստացա:

Եր. Արծրունի. — Ուրեմն իստակ վախճանվել է:

Կարապետ եպ. — Կըսեմ՝ գիր առի էջմիածնա:

Եր. Արծրունի. — Վա՛յ, խեղճ ողորմելի:

Կարապետ եպ. — Ի՞նչի՞ խեղճ: Բավական չէք, որքան կաթողիկոսություն արավ. ուրիշներն ալ պիտի որ հառաջ երթան:

Եր. Արծրունի. — Ուրիշներն, ուրիշներն, ուրիշներն, իհարկե, իհարկե:

Կարապետ եպ. — Է՛հ, ըշտե դանք մեր արհամարհանաց վրա, անոր համար կըսեմ նե, է՛<sup>1</sup> անանկ արհամարհանք աստված տար ինձի<sup>2</sup>:

Եր. Արծրունի. — Աղաչեմ, սրբազան, լավ<sup>3</sup> ժամանակ է, և շատ լավ էք մտածել:

Կարապետ եպ. — Ըշտե անոր համար էք Ձեզ նեղություն տալն և հոս բերելն:

Եր. Արծրունի. — Կարբեցին մեռավ. Կարբեցին մեռավ. է՛հ, աստված ողորմի նորա հողվույն: Խեղճ Կարբեցի:

Կարապետ եպ. — Է՛հ, ըշտե խեղճ կամ ոչ խեղճ. մեռավ... անցյալն անցավ, ներկայիս վրա խոսանք, թե ընդ<sup>4</sup> պետք է ընել, աս ասա:

Եր. Արծրունի. — Ի՞նչ ասեմ. աղաչեմ<sup>5</sup>, այդ Ձեր ձեռքին՝ կարծեմ շատ դժվար չը լինի<sup>6</sup>:

Կարապետ եպ. — Գիտես, որ սահմանն դուրս ինձի<sup>7</sup> շատ գրություններ են ըրած<sup>8</sup> այս մասին, միայն գիտես, որ ամենքն նայեն կոր թիֆլիզեցվոց:

Եր. Արծրունի. — Իհարկե, այսօրվան օրս տեղվույս հայքն ավելի ձայն ունեն:

Կարապետ եպ. — Է՛հ, ասոր համար աղեկ մտածողություն է հարկավոր:

Եր. Արծրունի. — Աղաչեմ<sup>9</sup>, իհարկե էսպես բանին<sup>10</sup> մեծ մտածողություն, լավ բարեկամներ, լավ գործակատարներ է հարկավոր:

Կարապետ եպ. — Ես ըսեմ. իմ վիճակումս և օսմանյան երևելի քաղաքներումն<sup>11</sup> հավատարիմ և լավ-լավ բարեկամներ ունեմ<sup>12</sup>... Բայց խնդրեմ կոր, հոս, ամեն աշխատանքն Ձեզ վրա առնուք և թե կուզեք՝ աղվոր մարդ մը ալ Ձեզ օգնական տամ կոր:

Եր. Արծրունի. — Ո՞վ է այն մարդն:

Կարապետ եպ. — Սողոմոն Արեսալումովն<sup>13</sup>:

Եր. Արծրունի. — Աղաչեմ<sup>14</sup>, շատ հարմար է, ինձ ևս<sup>15</sup> լավ բարեկամ:

Կարապետ եպ. — Ուրեմն ի՞նչ կեսս, ինչպես պետք է սկսել<sup>16</sup>:

Եր. Արծրունի. — Ի՞նչ միտք պետք է, կամ

<sup>1</sup> B գեղացի գոհեկի: <sup>2</sup> B հաննել: <sup>3</sup> B նեղություն չիք: <sup>4</sup> B Աղաչեմ, սրբազան, ներեցեք չիք: <sup>5</sup> B պատիվը: <sup>6</sup> B այդ: <sup>7</sup> B աշխարհս: <sup>8</sup> B մը չիք: <sup>9</sup> B մը ալ: <sup>10</sup> B էջմիածնա: <sup>11</sup> A Հրամերս: <sup>12</sup> B այսօր:

<sup>1</sup> B համար չիք: կըսեմ թե: <sup>2</sup> B ինձի: <sup>3</sup> B Մասա կեմ, լավ: <sup>4</sup> B ընդ: <sup>5</sup> B աղաչեմ չիք: <sup>6</sup> B չլինի: <sup>7</sup> B ինձի: <sup>8</sup> B ըրած: <sup>9</sup> B Աղաչեմ չիք: <sup>10</sup> B բանին չիք: <sup>11</sup> B քաղաքներումը: <sup>12</sup> B ունեմ: <sup>13</sup> A Ս. Ա.: <sup>14</sup> B Աղաչեմ չիք: <sup>15</sup> B և ինձ: <sup>16</sup> A ըսկսել: B սկսելն:



ասել հարկավոր է. աղաչեմ, սրբազան<sup>1</sup>, էս մին բան է, որ փողով պետք է ըսկսելն<sup>2</sup>:

Կարապետ եպ.— Փողով:

Եր. Արծրունի.— Աղաչեմ, սրբազան<sup>3</sup>, հառաջ կուզեմ իմանալն, թե Ձեր միտքն ինչ է. փողով եք կամենում կատարել Ձեր դիտավորությունն, թե այնպես<sup>4</sup>:

Կարապետ եպ.— Ի՞նչպես. այնպես<sup>5</sup>:

Եր. Արծրունի.— Ի՞նչպես, էնպես. գիտեք, սրբազան, այս ժամանակին<sup>6</sup>, առանց փողի, ոչինչ չի գնալ հառաջ: Իհարկե, վերահասու եք, որ Կարբեցին բացի ուսաց, միմիայն Բ...ին<sup>7</sup>, որ Հայոց իշխան է, հազար ոսկի տվալ:

Կարապետ եպ.— Իհարկե, առանց<sup>8</sup> անոր ալ չի ըլլար: Գիտե՞ս մի<sup>9</sup>, Կարբեցին որքան<sup>9</sup> ծախս ըրալ էն ժամանակն<sup>10</sup>:

Եր. Արծրունի.— Աղաչեմ<sup>11</sup>, ինչպես լսած եմ, մոտ քսան հազար ոսկի մոխ արալ նա:

Կարապետ եպ.— Նա արդյունք մը չուներ արած ազգին, և տերությանն<sup>12</sup> ալ ծառայություն մը չէր ըրեր: Ինչ կըսեմ<sup>13</sup>. իմ արդյունքն<sup>14</sup> ազգի առջևը և ծառայություններս<sup>15</sup> տերության առջևը բան մը չեն ի՞ սեպվիր:

Եր. Արծրունի.— Հա՛, հա՛, հա՛ (ծիծաղէ), հա՛...միթե կամենում ես ազգով կամ տերությունով կաթուղիկոս ըլնել, որ հարցանեն. հա՛, հա՛, հա՛, հա՛:

Կարապետ եպ.— Ի՞նչ խնդաս<sup>16</sup> կոր:

Եր. Արծրունի.— Ինչպես չը<sup>17</sup> խնդամ. աղաչեմ, սրբազան<sup>18</sup>: Ձէ, սրբազան, խելքս չէ կտրում, որ Դուք կաթուղիկոս ըլնեք<sup>19</sup>: Էստեղ փող է հարկավոր, փող և ոչ թե այդպիսի<sup>20</sup> մտածմունք: Ուրեմն, աղաչեմ<sup>21</sup>, համբերե մինչև ազգն կամ տերությունն<sup>22</sup> քեզ ընտրե:

Կարապետ եպ.— Է՛հ, ես ան կսեմ, թե անքան, որ ծառայելի կոր կամ աշխատելի՝ ազգիս համար, Կարբեցին, յուր օղայումն<sup>23</sup>

նստած, քնանար կոր, անորմե փող առան, կաթուղիկոս ըրին, միթե չենի նայիր<sup>1</sup>, թե ես անորմե ավելի արժանավոր մարդ մը եմ:

Եր. Արծրունի.— Աղաչեմ, սրբազան, այս բանս 5—6 մեծամեծ ուսաց ձեռքին է<sup>2</sup>, որ նոքա միարերան հրամայեն ծածկաբար՝ հայոց երեկի անձանց, և նոքա ևս, ինչպես ստորագրյալ՝ այս մեծամեծացն, կաշխատեն<sup>3</sup> նոցա հրամանն կատարել և այլ ոչինչ մտածողություն չէ հարկավոր. միայն թե՛ այն 5—6 հողվոցն բավականություն տալ փողով:

Կարապետ եպ.— Է՛հ, կըսես<sup>4</sup> 5—6 հողիք, ի՞նչ կարծես կոր, քանիով կարելի է անոնց բավականացնել:

Եր. Արծրունի.— Աղաչեմ, սրբազան<sup>5</sup>, աստված գիտե, նրանք էնպես մարդիք<sup>6</sup> չեն, որ 500.000 վեր առնեն. նոցա պետք է հառաջ փորձել:

Կարապետ եպ.— Է՛հ, դարձյալ ինչ կարծես կոր:

Եր. Արծրունի.— Աստված գիտե:

Կարապետ եպ.— Դարձյալ, Ձեր կարծիքն որքան է:

Եր. Արծրունի.— Պակաս...պակաս—վեց հազար ոսկի կը մոխով. սրանից թե ավելի չլինի<sup>7</sup>, պակաս չի ըլնի<sup>8</sup>:

Կարապետ եպ.— Վեց հազար ոսկի...վեց հազար... է՛հ, ամենին ալ մն գլխիցն պետք է վճարել:

Եր. Արծրունի.— Իհարկե:

Կարապետ եպ.— Ձէ՛ կարելի խոստանալ, որ երբ կատարեն՝ հետո տանք:

Եր. Արծրունի.— Աղաչեմ, սրբազան<sup>9</sup>, պատահել է, որ Դուք, այլոց հավատարմով<sup>10</sup>, գործն կատարած ըլնիք և հետո փողն ստացած:

Կարապետ եպ.— Ձանըմ<sup>11</sup>, մեր գործն այլ բան մը է:

Եր. Արծրունի.— Նոցա գործն ինչ է, ի՞նչ<sup>12</sup> զանազանություն ունի:

Կարապետ եպ.— Ա՛ս է, որ մենք հողե-

1 B աղաչեմ, սրբազան չիք: 2 B սկսելն: 3 B այս  
4 B էնպես: 5 B էնպես: 6 B ժամանակին: 7 A Բ.: 8 B որ:  
9 B ինչքան: 10 B ժամանակին: 11 B Աղաչեմ չիք:  
12 B տերության: 13 B կսեմ: 14 B արդյունք: 15 A  
ծառայություններ: 16 B խնտատ: 17 B չի: 18 B աղա-  
չեմ, սրբազան չիք: 19 B ըլնիք: 20 B էսպիսի: 21 B  
աղաչեմ չիք: 22 B ազգը կամ տերությունը: 23 B  
օտայումն:

1 B չեն նայիր: 2 B Սրբազան, աղաչեմ. այս  
բանս 5—6 ուսաց մեծամեծաց ձեռքն է: 3 B կաշ-  
խատեն: 4 B կսես: 5 B Աղաչեմ, սրբազան չիք: 6 B  
մարդիկ: 7 A կլինի: 8 B չլինի: 9 B Աղաչեմ, սրբա-  
զան չիք: 10 B հավատարմով չիք: 11 B ձանըմ: 12 B  
որ:

վորականք<sup>1</sup> ենք, չենք կարող մարդո մը բան բսել<sup>2</sup>, թե որ հետո չվճարեն նե. անոր համար մեք ան գլխեն կը ստանանք<sup>3</sup>:

Եր. Արծրունի.— Աղաչեմ, թե որ Գուք ևս չտաք, նոքա կարող են այլոց բան ասել կամ դանդատել:

Կարապետ եպ.— Ձեն կարող:

Եր. Արծրունի.— Քալ լիցի:

Կարապետ եպ.— Ուրեմն ի՞նչ կըսես, ի՞նչ քնել պետք է<sup>4</sup>:

Եր. Արծրունի.— Աղաչեմ<sup>5</sup>, էնպես՝ ինչպես ասի: Միայն կամ հանձնեք Արեսալոմովին<sup>6</sup>, նա տա՝ ումին կասեմ, կամ թե նա Ձեր փողն ունի. թող մսխե, հետո Ձեզանե<sup>7</sup> ստանա, ինչպես կարգադրություն կտաք, այնպես անե:

Կարապետ եպ.— Ես չիշտեմ. անոր չիմի<sup>8</sup> ճանչնար, վեց հազար ոսկի, որ կըսես<sup>9</sup>, ես Ձեզ հանձնեմ կոր և Ձեզանե հաշիվ կառնեմ<sup>10</sup>. Ձեր ձեռքին ըլլա ավելի աղվոր է, և դուք ինչպես դիտեք նե՝ անանկ քնեք:

Եր. Արծրունի.— Ի՞նչ զանազանություն կա՞ աղաչեմ<sup>11</sup>. իհարկե, այսպես բանն ամեն մարդո հայտնելն լավ չէ:

Կարապետ եպ.— Գիտե՞ս, Աղա Երեմիա, ես ան փողն Ձեզ տամ կոր ու Ձեզանե ձեռագիր մը առնեմ կոր. աստուծով ալ, երբ աս բանն կատարվեցավ նե՝ հազար ոսկի ալ Ձեր աշխատանաց վարձ<sup>12</sup> տամ կոր:

Եր. Արծրունի.— Ես, աղաչեմ, սրբազան... աշխատանաց<sup>13</sup> համար Ձեզանե, սրբազան, վարձ ուղող չեմ, և այդ գումարի համար էլ ես Ձեզ ձեռագիր տվող չեմ, ի՞նչ հարկավորություն է ինձ. կամիք՝ կամ նրան տվեք կամ ուրիշին. ես երբ Ձեզ<sup>14</sup> խնդրեցի՝ իմ ձեռքն ընի այդ գործն. ինձ համար ինչ զանազանություն ունի, թե Գուք ընիք<sup>15</sup> կաթողիկոս կամ<sup>16</sup> այլ ոք:

Կարապետ եպ.— Ասածս ան է, թե դուք ավելի հարմար եք ատ բանին և շատ ալ բարեկամներ ունիք և Ձեր պատիվն ուսք<sup>17</sup> ավելի պահեն<sup>18</sup> կոր ամեն<sup>19</sup> մեծամեծք:

1 B մեք հողեորական: 2 B ասել: 3 B կստանանք: 4 B կսես, ի՞նչ պետք է քնել: 5 B Աղաչեմ չիք: 6 A Ա. 7 B Ձեզանե չիք: 8 B չեմի: 9 B կսես: 10 A շառնեմ: 11 B աղաչեմ չիք: 12 B վարձն: 13 B Ես... աշխատանացս (աղաչեմ, սրբազան չիք): 14 B Ձեզ երբ: 15 B լիսիք: 16 B թե: 17 B սուսե: 18 B կը պահեն: 19 A ամեն չիք:

Եր. Արծրունի.— Աղաչեմ, սրբազան<sup>1</sup>, ճշմարիտ չեք լսած. ուսք իմ պատիվն չեն պահել:

Կարապետ եպ.— Ինչի՞ խոժոռեցար<sup>2</sup>, սիրեկան, ես ատ վատ մտք չասի քեզի<sup>3</sup>:

Եր. Արծրունի.— Աղաչեմ<sup>4</sup>. ես ևս վատ մտք չհասկացա<sup>5</sup>:

Կարապետ եպ.— Ապա ինչի՞ խոժոռեցար:

Եր. Արծրունի.— Ե՞ս... Քալ լիցի՞ աղաչեմ, սրբազան<sup>7</sup>:

Կարապետ եպ.— Տեսնեմ կոր, որ<sup>8</sup> գուշնդ փոխվեցավ:

Եր. Արծրունի.— Ձարմանք է. ինչպես չփոխվի<sup>9</sup> գուշնս. աղաչեմ, սրբազան<sup>10</sup>, եթե Գուք ինձ չէք հավատնւմ, ես Ձեզ ինչպես հավատամ:

Կարապետ եպ.— Ես Ձեզ<sup>11</sup> ինչպես չեմի ավտար: Եթե չէի ավտացեր, ինչի՞<sup>12</sup> ուրեմն Ձեզ բերել տայի կոր հոս՝ խորհուրդ հարցնելու:

Եր. Արծրունի.— Աղաչեմ<sup>13</sup>, սրբազան, պատճառ տվիք բաց խոսալո<sup>14</sup>. իհարկե, դատարկ խորհուրդ հարցնելն կհավատաք, բայց փող տալն՝ ոչ: Կալ, ինձ փող տվիք և ես ձեզ ձեռագիր տվի, բայց երբ Ձեր դիտավորությունն չկատարվի կամ թե կատարվի<sup>15</sup> ևս, հետո Ձեր փողն իմ ձեռագրովն պահանջեք, կարող եմ ասել, թե կաշառք տվի այլոց՝ Ձեր<sup>16</sup> գործոց համար:

Կարապետ եպ.— Միթե ինձ անանկ անհողի մարդ մը ճանաչես<sup>17</sup> կոր:

Եր. Արծրունի.— Աղաչեմ<sup>18</sup>, չեմ հասկանում. ուրեմն ի՞նչ դիտավորությամբ եք գիր ուղում ինձանե. մի՞թե ես պետք է ուրանամ Ձեր փողն: Ես նորա քաղցածն եմ<sup>19</sup>:

Կարապետ եպ.— Քալ լիցի և քալ լիցի<sup>20</sup>. ես անանկ տասն փող ալ Ձեզ ավտամ<sup>21</sup> կոր, ո՞վ ասաց թե դու անոր քաղցածն ես:

Եր. Արծրունի.— Աղաչեմ<sup>22</sup>, սրբազան. լավն այն է, որ Ձեր այս հանձնարարու-

1 B Աղաչեմ, սրբազան չիք: 2 A խոժոռեցար: 3 B քեզ: 4 B Աղաչեմ չիք: 5 B չըհասկացա: 6 B Ես չիք: 7 B աղաչեմ, սրբազան չիք: 8 B որ չիք: 9 B չի փոխվի: 10 B աղաչեմ, սրբազան չիք: 11 B Ձեզի: 12 B ինչն: 13 B Աղաչեմ չիք: 14 B տվեք բաց խոսալու: 15 B չիք՝ կամ թե կատարվի: 16 A Ձեզ: 17 B կը ճանաչես: 18 B Աղաչեմ չիք: 19 B քաղցածն չեմ: 20 B Քալ և քալ լիցի: 21 B ևս տամ: 22 B Աղաչեմ չիք:

թյունն այլ Ձեր հավատարմի՛ հանձնեք,  
կամ թե ինչպես ասի՝ Արեսալումովի՛:

(Արծրունին՝ ասէ ինքն-ինքեան).

Աստված տա, քոռանա, նրան տա. ինչ  
ընկերությամբ ուտելու՜ փող է՛:

Կարապետ եպ.— Հասկըցա... աղեկ հաս-  
կըցա՛. շատ նեղացար ան իմ չնչին դրու-  
ցեն:

(Մերձենայ առ նա՛ և համբուրէ զգլուխ  
նորա և ասէ). Հաշտվենք, հաշտվենք, Աղա  
Երեմիա...<sup>7</sup> Գիտես կոր, նախ՝ երկրացի եմք,  
երկրորդ, ասքան տարվա՞ ըարեկամք. ըշտե  
եթե ասանկ օրն՝<sup>9</sup> դու ինձի շօղնես, սիլ պի-  
տի որ օղնե:

(Յառնեն ի սեղանայ):

Եր. Արծրունի.— Աղաչեմ<sup>10</sup>, սրբազան, ես  
պատրաստ եմ օղնելու. ի՞նչ եք հրամայում:

Կարապետ եպ.— Էհ, Տոնական, մարդ մը  
խավրե Աղա Սուրման Արեսալումովի<sup>11</sup> գա  
շուտով հաս: Դանվա ալ բերեք. քաղցր ըլ-  
լա, թանձր ըլլա: Եկե, Աղա Երեմիա, եկե  
նստե, եկե հրամե: Փառք աստուծո, աղքատ  
չեմ, անանկ տասն փող ալ կորչի<sup>12</sup> նե, այ-  
սինքն կորցնես<sup>13</sup> նե, մի՞թե ես խոսացող  
եմ. ինձ աղեկ<sup>14</sup> չես ճանցչեր. աստուծով  
այտուհեակ պիտի լավ ճանչնաս:

(Ինքն ինքեան ասէ).

Աս աղեկ եղավ, որ երկուսն միատեղ  
կըլլան, երբ փողն պիտի որ յուրյանց  
տամ. եթե<sup>15</sup> մինն ուրանա նե՛ մյուսն վկա  
կըլլա, բայց վախնամ երկուսն ալ միանան  
ու<sup>16</sup> աս փողն ուտեն (յանկարծ փռշտայ<sup>17</sup>  
երկիցս անգամ<sup>18</sup>): Ձէ, աստուծով, վերջն  
աղեկ կըլլա, ես շատ անգամ փորձել եմ  
ասանկ փռշտայն:

(Փռշտայ երրորդ անգամ<sup>19</sup>).

Ձէ, աս աղեկ նշան չէր: Ը՛հ... էհ:

Եր. Արծրունի.— Ասողջություն, սրբա-  
զան:

Կարապետ եպ.— Ասողջությունն ան ժա-  
մանակն կըլլա, երբ աստուծով աս մեր խոր-  
հուրդն կատարված ըլլա:

Եր. Արծրունի.— Աղաչեմ, սրբազան՛, աս-  
տուծով կատարված է. բանի գծվարու-  
թյունն սկսելն է և մանավանդ կաշառքն...

(Յանկարծ մտանէ ի ներս Սօլումն<sup>2</sup> Արի-  
սալումովն ուրախ գիմօք, համբուրէ զաջ  
սրբազանին և ասէ).

Սողումն Ար.<sup>3</sup>— Աչքերնիս լուս, սրբազան,  
աչքերնիս լուս. Գեորգ վարդապետին լավ  
պարգև իմ խոստացի. աչքերնիս լուս. ձիւլ  
մեր խորհուրդը՛ կատարվեցավ: Ա՛հ... Աղա  
Երեմիա, հրամանքդ էլ էստի իս էլի<sup>5</sup>. գի-  
տեմ, վուր դուն<sup>6</sup> էլ ուրախ կուլիս. քու  
աչքն էլ լուս: Արա, ի՞նչ իք ասում, ինչ  
իք խոսացի, մե լավ բան շինիլ իք<sup>7</sup>, թե չէ:  
էստու համար լավ փիքք պետք է արած<sup>8</sup>.  
էս է, հա՛, էս օր է, հա՛, սրբազան<sup>9</sup>, դուք  
չիք գիտի, ես լավ գիտեմ, էտենց չէ՞, Աղա  
Երեմիա<sup>10</sup>:

Եր. Արծրունի.— Իհարկե, իհարկե<sup>11</sup>, ես  
էլ էտ<sup>12</sup> էի խոսում սրբազանի հետ, երբ  
դուք ներս մտաք:

Սողումն Ար.— Արա, ի՞նչ էիք խոսում,  
ասա էլի, էս ինչ լավ բան էլավ<sup>13</sup>. արա,  
փիքք արեք, արա, ի՞նչ էիք խոսում, ասա՛  
տեսեմ:

Եր. Արծրունի (Աչօք նշանացի առնէ և  
ասէ այնպէս, որ միմիայն Արիսալումովն  
հասկանայ).— Տօ, շատ մի փռափռտալ, բա-  
նը շինիլ եմ<sup>14</sup>, մունջ կացի. էստի բան կա:  
(Աղա բարձրացնէ<sup>15</sup> զձայնն և ասէ).  
էսպես չէ՞, սրբազան:

Կարապետ եպ.— Ես աղեկ չհասկացա:

Եր. Արծրունի.— Էս էի ասում Սուրման  
Արիսալումովին, թե էսպես բանն ծածուկ  
պետք է լինի և լավ մտածելով:

Կարապետ եպ.— Իհարկե... իհարկե...

Եր. Արծրունի.— Աղաչեմ, սրբազան<sup>16</sup>,  
գիտեմ, Սուրման Աղա, մենք<sup>17</sup> շատ ժամա-

1 B հավատարմի: 2 A Ար...: 3 B Ար2.: 4 B  
ուտելու: 5 B Հասկցա, աղեկ հասկցա: 6 B Ար2.: 7 B  
Հաշտրվինք, հաշտրվինք Աղա Ե.: 8 B տարվան: 9 B  
ասանկ օրն եթե: 10 B Աղաչեմ չէր: 11 A Սուրման  
Ար... B Սողումն Արեսալումովն: 12 B կորնչի: 13 B  
կորցնես: 14 A աղե: B աղեկ չէր: 15 B թե: 16 B  
ու չէր: 17 B փռշտայ: 18 B անգամ և ասէ [այնու-  
հեակ ողջ պարբերությունը չիք]: 19 B Ձիք այս  
տողը ես:

1 B Աղաչեմ, սրբազան չիք: 2 B ի ներս Սող-  
ման: 3 A Սող. Ար.— չիք: 4 B մեր խորհուրդն:  
5 B ես էլի: 6 B որ դու: 7 B էք: 8 B լավ պետք է  
փիքք անել: 9 B սրբազան չիք: 10 A Ե. Ե. (Աղա  
Երեմիա-ի փոխ.): 11 B իհարկե չիք: 12 B էտի: 13 B  
կլավ: 14 B իմ: 15 B բարձրացուցանէ: 16 B Աղաչեմ,  
սրբազան չիք: 17 B մեր:

նակ է, էս բանի վրա սկսել ենք խոսալն, վասնորոք քեզ կարճն ասեմ. սրբազանն, լավ գիտես, մեծահողի և յուրյան աստիճանն ճանաչող մարդ<sup>1</sup> է. իհարկե, մեր ազգի հոգևորականաց միջին ամենեքայն ևս կը խոստովանվին, որ առաջին<sup>2</sup> է արդյամբք, հայրենասիրությամբ և սուամբ. ուրեմն էսպես ժամանակն, եթե յուր իրավունքն կորցնե<sup>3</sup>, այն ամեն արտոնություններն կը ոչնչանան: Ճշմարիտ է, ազգի կամացն է այս ընտրությունն, բայց այսուամենայնիվ, որովհետեւ ժամանակն վատ է և առանց կաշառքի ոչինչ չի լինի<sup>4</sup>, վասնորոք բարեհաճում է այն արտոնությանցն կից, փոքր ինչ ևս<sup>5</sup> փող մսխե<sup>6</sup>, որ չլինի<sup>7</sup> այլ արժանավոր անձն անձնընծա<sup>8</sup> լինի և ոչ թե միայն<sup>9</sup> ազգի անունն խայտառակե, ինչպես Կարբեցին, այլ և<sup>10</sup> սրբազանիս անունն արատավորվի մեր<sup>10</sup> ազգի և այլոց<sup>11</sup> ազգաց միջին: Ասեցի արատավորվի<sup>12</sup>, որովհետեւ հասարակ կամ հեռավոր ժողովուրդքն չեն կարող զանազանությունն իմանալ թե<sup>13</sup> առանց կաշառաց չէ նոցա ընտրությունն. այլ այնպես կը կարծեն, թե Կարապետ սրբազանն երեւի որ արժանի չէր, վասնորոք և նրան<sup>14</sup> չը ընտրեցին:

Կարապետ եպ.— Ճշմարիտ է Ձեր հրամայածն. ահա սոգ<sup>15</sup> է իմ միտքն:

Եր. Արծրունի.— Աղաչեմ, ներեցեք, սրբազան, փոքր ինչ, մինչև մեր դիտավորությունն հասկացնեմ Սուրբն Աղային: Է՛հ, ինչեկեցե, իհարկե, սրբազանիս աշխարհն<sup>16</sup> գիտե, հարուստ է, և այն հարստությունն ժողովել է՝ յուր անվան և այսպիսի ժամանակն գործածելու<sup>17</sup>, յուր իրավունքն չկորցնելու<sup>18</sup> համար: Մթթե չէ կարող 20—30 հազար ոսկի, ահան<sup>19</sup> թոթափել, բերե, մսխե և յուր ստածն կատարե: Հայանի է, որ կարող է, և այն ինչպես, առանց մեղ նման<sup>20</sup> մարդկանց հարցանելու:

Բայց ոչ... ոչ... մեք պետք է այս դիտավորությամբ չսկսենք աշխատելու... այլ՝ թե որքան կարող ենք՝ ժլատությամբ. ոչ էնպիսի ժլատությամբ, որ չկարողանանք բան շինել, այլ թե չափավոր: Ես գորական մարդ եմ. ճշմարիտ է, հարուստ եմ, փանք աստուծո, բայց փողի հաշիվ, առևտուր<sup>1</sup> այնքան չեմ հասկանում. վասնորոք պետք է այս սրբազանի հրամանքն և իմ խնդիրքն հանձնառու լինեք<sup>2</sup>. այս վեց հազար ոսկին, որ սրբազանն յուրյան կաթողիկոս գառնալու<sup>3</sup> համար զո՛հ է անում, զուք ստանաք, պահեք և, երկուսիս խորհրդովն, սւմ<sup>4</sup> հարկավոր է՝ տանք: Ասի երկուսիս խորհրդովն, չմտանաս<sup>5</sup>, որ երկուսս կախյալ եմք սրբազանի հրամանն. ամեն բանն, որ պիտի կատարենք կամ վերջի կոպեքն<sup>6</sup> ումն որ ուղենանք տալն, պետք է նախ սրբազանին<sup>7</sup> հարցնենք<sup>8</sup> և ապա տանք:

Կարապետ եպ.— Հն, ատ աղեկ ըսեցիր.<sup>9</sup> Ես ալ ատոր հավան եմ<sup>10</sup>:

Սողոմոն Ար.— Ո՛ւր է էտ վեց հազար ոսկին:

Եր. Արծրունի.— Պատրաստ է, ներսն է, այս բովայելիս<sup>11</sup> սրբազանն կերթա, կը բերե՝ թե կուզես<sup>12</sup> ստանալն: Սրբազան, հրամայեցեք<sup>13</sup> բերեն, կամ թե կարելի է՝ Դուք պիտի բերեք:

(Կարապետ եպիսկոպոսն յառնէ գնալ, և ահա Սողոմոն Արիսալամովն բարձրացուցանէ զունչն՝ փոշտալ. ասէ Երեմիա Արծրունի<sup>14</sup>).

Տն, քիթդ, տն, տն, քիթդ:  
(Եպիսկոպոսն գնայ ի միւս սենեակն<sup>15</sup>),  
Ինչ էիր քո խելքին էլի զոռ տալիս, տեսմբ, ինչպես սկսեցի խոսալն, որ շուտ վերկացավ<sup>16</sup>, գնաց փողերն բերե. թե թողել էի քեզ խոսալու<sup>17</sup> բանն խտակ խառնել էիր:

Սողոմոն Ար.— Արա ես ինչ գիղիմ<sup>18</sup>, ինչ է ձեր միտքն, ան թե՛ ինչ իք խոսացի ձեր մեջն:

<sup>1</sup> B անձ: <sup>2</sup> B կը խոստովանվին, որ առաջինն: <sup>3</sup> B կորցրնէ: <sup>4</sup> A չի լինել: B չլինել: <sup>5</sup> A և: <sup>6</sup> B մսխե: <sup>7</sup> B քնծա: <sup>8</sup> B միայն չիք: <sup>9</sup> B և չիք: <sup>10</sup> B արատավորվի մեր չիք: <sup>11</sup> B ազգի մեջին և այլ ազգաց: <sup>12</sup> B արատավորի: <sup>13</sup> B թե նորա: <sup>14</sup> B վասնորոք և նրան-ի փոխարեն՝ որ նորա: <sup>15</sup> B ատ: <sup>16</sup> B սրբազանին աշխարհք: <sup>17</sup> B գործածելով: <sup>18</sup> B չկորցրնելու: <sup>19</sup> B հակն: <sup>20</sup> B պետ:

<sup>1</sup> B աստուր: <sup>2</sup> B լինիք և: <sup>3</sup> B գառնալու: <sup>4</sup> B ումն: <sup>5</sup> B չը մտանաս: <sup>6</sup> B կապն: <sup>7</sup> B սրբազանն: <sup>8</sup> B հարցանենք: <sup>9</sup> B ասացիր: <sup>10</sup> B իմ: <sup>11</sup> B բովայելու: <sup>12</sup> B ուզես: <sup>13</sup> B հրամայեցեք, սրբազան: <sup>14</sup> B, որում ասէ (ասէ Եր. Արծր. յ-ի փոխ.): <sup>15</sup> B սենեակն ապա ասէ: <sup>16</sup> B վերջացավ: <sup>17</sup> B խոսալն: <sup>18</sup> B գիտեմ:

Եր. Արծրունի. — Շատ մի խոսիր<sup>1</sup>. Էսպես ուտելու փողեր մեր ձեռին<sup>2</sup> չի ընկնի: Տն, էս անմիան ուզում էր ինձ խարե, ինձանե ձեռադիր աննե:

Սողոմոն Ար. — Էսպես տուտուց օքմինն քիզ պեաք էր<sup>3</sup> խարի. դիւիս, դիւս<sup>4</sup>:

Աշխարհումս շատ անձոտնի<sup>5</sup> մարդ կմ տեսած,

Բայց էսպիսի<sup>6</sup> անպիտանի չեմ պատահած.

Ափսոս սա մեքեան քարձող չարվադար չէ,

Կամ հինգ դրոշով<sup>7</sup> ալբի հակն շալակող չէ:

Հասակը նման ութ դադանոց Գողիաթին<sup>8</sup>,

Աչքի մեկը դուրս է էկած<sup>9</sup> ճակտի միջին,

Շլինքը հաստ, փորը ուռած, նման գոմշի<sup>10</sup>,

Թե չուրս վուան ունեցիլ էր՝ կը նմաներ իշի<sup>11</sup>:

Եր. Արծրունի. — Ի՞նչ հարկավոր է էտունք. էն սակիքն, որ նա ունէ, հավատացիր<sup>12</sup>, հրեշտակի հավասար է. ի՞նչ կստում:

Սողոմոն Ար. — Գիղթիս<sup>13</sup>, ինչ անելու ես՝ չնւտ արա, որ էն Արախու, ան էն Ջաֆար<sup>14</sup> Սան շուն-շան վուրթիքն<sup>15</sup> չզան, նրանք բեղչատին, չին<sup>16</sup> թողնի, ու սախա կուլինք:

Եր. Արծրունի. — Շատ կստում. Քրիստոսն<sup>17</sup> էլ որ գա, էն սակիքն մերն է, ի՞նչ կստում: Բայց դու զուռ չկացի, շատ մի խոսիր<sup>18</sup>, բանն կը քանդես<sup>19</sup>: Ես լավ գիտեմ զբանց բնությունն:

(Ելանէ Կարապետ եպիսկոպոսն ի ձեռին զսակիքն տալրակներով<sup>20</sup>, նստէ և ասէ).

Կարապետ եպ.<sup>21</sup> — Եկե, Աղա Երեմիա, կս գադրեցա<sup>22</sup>, հրամանքդ համբե Սողոմոն Աղային:

Եր. Արծրունի. — Ի՞նչ եք<sup>23</sup> վազում, աղաչեմ<sup>24</sup>, սրբազան, կս ևս դադրեցա<sup>25</sup> շատ խոսալուցն<sup>26</sup>: Ես փող համբելն չեմ կարող. ինքն Սողոմոն Աղայն<sup>27</sup> լավ կը համարե<sup>28</sup>.

Թող ինքն համբե<sup>1</sup>, ստանա. Ձեզ ևս ընդունելի է կարծեմ... Ձէ<sup>2</sup>:

Սողոմոն Ար. — Էս ամեն մե<sup>3</sup> տալրակն վուրքան է:

Կարապետ եպ. — Հաղարական է, ըշտե<sup>4</sup> վրան ալ դրուկ է<sup>5</sup>:

Եր. Արծրունի. — Շատ լավ կանես, որ էս փողերն տաս դառաֆին<sup>6</sup>, շանն չը կորչի, Սողոմոն<sup>7</sup> Աղա, երբ որ հարկավոր ըլնի՝ կարող ենք էն ժամանակն դառաֆիցն ըստանալ<sup>8</sup> ինչ փող որ հարմար ըլնի՝ տալու: Էս էլ սրբազանիս համար մի<sup>9</sup> առանձին շահավետություն է<sup>10</sup>:

Սողոմոն Ար. — Թէ էսմնց է՝ էլ ուր իմ համբրում, զրդինք դառաֆն<sup>11</sup> գա էստիեվես քաշե՝ ստանա:

Եր. Արծրունի. — Աղաչեմ, լսեցեք<sup>12</sup>, ճըշմարիտ էնենց<sup>13</sup> կ'օնիս, որ ասի... Ի՞նչ է. ուզում իս աշխարհն<sup>14</sup> իմացումն տան<sup>15</sup>. միթե սրբազանն Ձեզ չէ հավատում<sup>16</sup>, բայց կարծեմ սրբազանի մոտ վատ փող չլինի:

Կարապետ եպ. — Ի՞նչ կըսեք<sup>17</sup>, հատիկ-հատիկ քաշած եմ ձեռքս. ըշտե կշիւք ալ ունեմ, սեռոսֆի<sup>18</sup> քար ալ ունեմ<sup>19</sup>, թե կուղեք՝ բերեմ կշոսեցեք և տեսեք:

Եր. Արծրունի. — Ի՞նչ հարկավոր է, սրբազան, աղաչանացս լսի<sup>20</sup>, շատ էլ որ վատ ըլնեն...ը... թեկ թեկ ըլնեն, կաշառք առնողը միթե քաշելով<sup>21</sup> է:

Կարապետ եպ. — Ձէ, ջանքմ<sup>22</sup>, հարյուրին մին հատ ալ ավելի է:

Եր. Արծրունի. — Է՛, պրծե, պրծե<sup>23</sup>, կս ուրիշ տեղ եմ գնալու, իմ զրոշկեն էստեղ չէ, քոնն բան տուր, Սողոմոն Աղա, կամ միատեղ գնանք:

(Գլխօք և աչօք ցուլց տայ նմա. ասել՝ սպասէ<sup>24</sup>).

Սողոմոն Ար. — Ձէ, չէ, հորես պրծա<sup>25</sup>, համփիրե, մեաի կ'էհանք<sup>26</sup>, ուր վուր<sup>27</sup>

1 B խոսիր: 2 B ձեռքն: 3 B քեզ պիտի: 4 B գիլիս, դիլիս: 5 B անձոտի: 6 B էնպիսի: 7 B գոռոշով: 8 A Գողիթիս: B Գողիաթին: 9 B եկած: 10 B տողը չիք: 11 B էշի: 12 B հավացիր: 13 B Գիղթիս: 14 B Շաֆար: 15 B վուրթիքն: 16 B բեթչաթին, չեն: 17 B Քրիստոս: 18 B խոսա: 19 B չքանդես: 20 B սակիքն ի ձեռին տալրակներով: 21 A Կար. եպ.— չիք: 22 B դադրեցա: 23 B է: 24 B աղաչեմ չիք: 25 B դատրեցա: 26 B խոսելուցն: 27 A Ս. Աղան: B Սալոմոն Աղին: 28 B կը համբե:

1 B համբե: 2 B կարծեմ... Ձէ-չիք: 3 B ամենն է: 4 B ըշտե: 5 B դրուկ է: 6 B ստաֆին: 7 A Ս.: B Սալոմոն: 8 B կարող ենք ստաֆիցն ստանալ: 9 B սրբազանին մի: 10 B է չիք: 11 B եմ համբում, ստաֆն: 12 B Աղաչեմ, լսեցեք չիք: 13 B էնեն: 14 B ուզում եմ աշխարհին: 15 B տան: 16 B չի հավատում Ձեզ: 17 B կսեք: 18 B ունիմ, ստաֆի: 19 B ունիմ: 20 B աղաչանացս լսի չիք: 21 B քաշելու: 22 B ճանքմ: 23 A պրծե, պրծե: 24 B սպասել: 25 A պրծա, 26 B համբերե միատեղ կերթանք: 27 A օր: B որ:

գուղիս<sup>1</sup> գնալ՝ կուտանիմ, իժում ես հեա կեհամ:

Եր. Արծրունի.— Պրծե, պրծե<sup>2</sup>:

(Կարապետ եպիսկոպոսն մնայ այնպէս մունջ և խորին լուսթեամբ, առանց պատասխանի նայէ<sup>3</sup> յսկիսն):

Սողոմոն Ար.— Արա, պրծա<sup>4</sup>, գնանք. սրբազան, աստուծով ամեն բանն լավ կուլի. էքուցեմ<sup>5</sup> քիզ լավ խարար կու բերիմ<sup>6</sup>:

Կարապետ եպ.— Էհ, աղաներ<sup>7</sup>, դիտեք, որ ես աս ոսկիքն տամ կոր ձեզ ինչպես պահեստ մը, ձեզ մոտ ըլլա... էհ... մինչև աստուծով աս մեր ասածներն դլուխ դա, հետո ումին տալն ինձ հաշիվ տաք արդարությամբ. հը... ճշտությամբ կամեի նը ասել<sup>8</sup>:

Եր. Արծրունի.— Իհարկե, իհարկե, աղաչեմ, սրբազան, ոչ թե միայն հետո արդարությամբ կամ ճշտությամբ հաշիվ պարտաւոր ենք տալու, այլև մինչև Ձեզ չհարցընենք կամ Ձեր համաձայնությունն չլինի, մեք ինչպես կարող ենք այլոց տալ: էհ, աստված օգնական:

Կարապետ եպ.— Կերթա՞ք... Աստված պահպան... էհ, տեր ընդ ձեզ:

(Տայ դաջն համբուրել, և ելանեն նոքա):

Եր. Արծրունի (Յելանելն ասէ ց Ս[ողոմոն] Ար[խտումոյն]).— Էնպես հաշիվ տանք դրան, որ հալիտյանս չկարողանա կարգալ:

Սողոմոն Ար.— Ամենն փակազիրով կու գրենք:

Եր. Արծրունի.— Դու ինձ վրա լավ մտածեցիր, արի... արի, գնանք:

(Կարապետ եպիսկոպոսն մնայ միայն, լուռ, անհանգարտ, երբեմն նստէ, և երբեմն շրջի<sup>9</sup> ի մեջ սենեկին, նայելով հայն տեղին, ուր համարելին գոսկիսն, շարժե զգլուխն՝ ախ քաշելով և ապա ձայնէ):

[Կարապետ եպ].— Ո՞վ կաք հոս, ասեք, դահվա մը բերեն, դանն ըլլա:

(Մտանէ ի ներս Գէորդ վարդապետն, տեսանէ գնա այնպէս փոփոխեալ և ասէ):

[Գևորգ վարդ].— Սրբազան, ինչի՞ եք ատանկ խոժոռած, ասանկ օրն դուք ուրախ պիտ[ի] որ ըլլաք և ոչ թե տրտում:

Կարապետ եպ.— Օ՛խ... օ՛խ... (նստէ): Իբավունք ունես. ի՞նչ կընես, սերտեղաց դաս կոր, սեր էիր. Եփրեմ վարդապետն հոս է... նոր համբավ մը... վեց... ունիս... վեց, հը...

Գևորգ վարդ (Չարմացեալ նայէ և ասէ).— Ծառայդ եմ, ի՞նչ կա... ի՞նչ է եղեր. ինչի՞ ատանկ խոսաք կոր:

Կարապետ եպ.— Բան մը չկա... բայց... բայց դիտես, բան մը եմ ըրեր, չիյտեմ հալինես կոր:

Գևորգ վարդ.— Ի՞նչ եք ըրեր. ինչ բան պիտ որ ըլլա, որ ես հալանություն չտամ:

Կարապետ եպ.— Էհ, ըշտե երեմիա Արծրունին եկավ հոս, հացի պահեցի, շատ խոսակցություն ըրինք, վերջն խավրեցի Սողոմոն Արխտումոյն ալ եկավ, անոր քովն ալ բավականին խորհուրդ ըրինք... անանկ եղավ որ... վեց... առանց կաշառքի բան չերթար հառաջ... անոր համար քանի մը հազարական ոսկի տվի անոնց, որ... ումին հարկավոր ըլլա, աս մեր գործի համար, պարզե տան:

Գևորգ վարդ.— Քանի՞ մը հազարական:

Կարապետ եպ.— Հո՛ւ, ըշտե տվի... անանկ եղավ... չիյտեմ, խաբովեր եմ, թե՛ նչ:

Գևորգ վարդ.— Քանի մը հազարական ի՞նչ ըսել է, ես չեմի հասկանալ:

Կարապետ եպ.— Վեց հազարական:

Գևորգ վարդ.— Վեց հազարական մանամթ է, թե՛ ոսկի:

Կարապետ եպ.— Վեց հազարական ոսկի... ոսկի... ոսկի:

Գևորգ վարդ.— Ի՞նչ եք հրամայում, վայ... ինչպես, աչքերնիդ բաց, ատքան ոսկին տվիք անոնց, առանց բան մը ինձմե հարցընելու: Մի՞թե, երբոր ինչքան հարկավոր էր ըլլալու, չէին կարող դալ և ստանալ ձեզմե:

Կարապետ եպ.— Ըշտե ատ ալ առավել ցավ մը, որ աչքերս բաց տվի, երանի կըլլար՝ խփած էի եղած: Ես հիմակ դարմանամ կոր ինձմե. կյանքումս ասանկ սխալած չէի... դու ալ օրն հարյուր անգամ հոս մանեիր-կելլեիր, ասոր ի՞նչ եղավ քեզ, որ ամենևին չերեցար աս տեղբանք:

<sup>1</sup> B կուղիս: <sup>2</sup> A Պսծե, պսծե: <sup>3</sup> B հայի: <sup>4</sup> A պսծա: <sup>5</sup> B էգուցեմ: <sup>6</sup> B խարար կու բերիմ: <sup>7</sup> B աղայներ: <sup>8</sup> B կամեիմ ասել: Սյատեղ ընդհատուած է այս (B) օրինակը (դա ձեռագրի նախկին 107-րդ էջումն է և արդի ՃՏԹԹԹ-ում, որից հետո (մինչև 70րթերթը) չի գրված: <sup>9</sup> A շրջի:

Գևորգ վարդ.—Մթթե ես էլ ատ խորհուրդի համար չէի քալել սղջ օրն:

Կարապետ եպ.—Ո՛ւր էիր գացեր. ի՞նչ ես ըրեր:

Գևորգ վարդ.—Ինձ ըսին, թե Հավլարար պառավ մը կա եղեր, որ շատ լավ դուշակություններ կընեն՝ ամին բանի համար: Գացի Տեր Հ. տանն նստեցի, մարդ խավրեցի, փնդակեցին, գտան, բերին, ես ալ վեր առի եկա. հիմի դուքսն կանգնած է. թե հրամայեք կոր՝ ներս գա:

Կարապետ եպ.—Էհ, առանկ դուշակությանց ավտալն մեղք բան մը է, և սուտ սուտ բաներ խորթելով առանկ պառավներն ժողովրդից փող ժողվեն կոր:

Գևորգ վարդ.—Ծառայդ եմ. իհարկե, մեք քրիստոնեա եմք, մեղք է անպիսի մարդկանց ժողովրդոց մեջ թող տալն ալ, բայց ըստ որում ուսաց և վրացվոց մեծամեծքն փորձեր են և ճշմարտախոս կըսեն. վասնորո ես ալ բերեր եմ. հրամայեցեք ներս գա, փոքր ինչ խոսա՝ տեսնենք ի՞նչ կըսե և Ձեր ատ ոսկիքանց համար ալ բան մը հարցնենք կոր, կարելի է բան մը հասկանա, բայց դուք ըսեք թե կորցրեր եմ, որովհետե կըսեն, թե կորուստն շուտ կիմնա կոր:

Կարապետ եպ.—Հն... հն... հն. աստ, ներս գա:

(Գևորգ վարդ. բանայ դուռն, և պառավն մտանէ ի ներս, համբուրէ զաջն Կարապետ եպիսկոպոսի և սա ասէ).—

Մայրիկ, հրամե, նստե: էհ, զիտեն, մեք կորուստ մը ունենք. կարճը ես իմանալ:

Պառավն.—Սրբազան, հույս ունեմ, որ կարողանամ:

Կարապետ եպ.—Էհ, իմացիր:

Պառավն.—Ո՞նց՝ կարելի է էսպես իմանալ. թող մին գավաթ պարզ ջուր բերեն:

(Գևորգ վարդապետն իսկոյն բերէ և դնէ առաջի պառաւին):

Պառավն (Ասէ ց Կարապետ եպիսկոպոսն).—Ծառայդ եմ. «Յանուն հօր և որդւոյ» ասեք:

Կարապետ եպ. (Ասէ).—«Յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. ամէն»:

Պառավն.—Էհ, սրբազան, կորուստդ փճի է, թե՛ սպրանք:

Կարապետ եպ.—Փող է:

Պառավն.—Երծանթ է, թե ոսկի. և քանի՞ օր է:

Կարապետ եպ.—Ոսկի է, և դողանալն մեք ասօր իմացանք:

Պառաւն (Նայէ ի մէջ ջրոյն և ասէ).—Օհ, օհ, էգ ոսկիքն արյունստ են և շատ անիրավությամբ ժողոված: Գողացողներն երեք հոգի են էլի. ցերեկով են տարի. մինը վեր է առի, ավել է էն երկուսին, նրանք տարել են: Հիմի էս բովայնս էն ոսկիքն բաժանում են էն երկուսն: Ոսկիք վեր առնողն էրկար մարդ է էլի, հաստ, ու աչքը շիլ՞: Է՛լ էն ոսկիքն հետ չեն գա. անմեղ միք պառաի:

Գևորգ վարդ. (Յ Կարապետ եպիսկոպոսն տաճկերէն ասէ, զի չհասկանայնէ պառաւն). Սրբազան, ըշտե դեորդը՞ն՝ նասլ էի անդլաթի՞\*:

Կարապետ եպ.—Չնք... չնք... չոք էի սոյլեղի. շիմդի սոյլալիմ բըղըմ զիտավորությունք\*\*\*:

Գևորգ վարդ.—Էլրեթ թե, օ դա սոյլամալի\*\*\*\*:

Կարապետ եպ.—Էհ, պառավ, ատ թողի տանք. Ուրիշ բան մը ալ ունեմ. լավ մտածե ու անանկ նայե ջրիդ... Ես խորհուրդ մը ունեմ մաքումս. տես զլուխ կգն:

Պառավն.—Էղպեսով չեմ կարող իմանալ. դուք Ձեր խորհրդի սկզբնատան պետք է ինձ իմացում տաք, ինչպես թե ճանապարհորդություն է՝ «Ճ.» ասեք, թըշնամություն է՝ «Թ.» ասեք, կարգադրություն է՝ «Կ.» ասեք և այլն:

Կարապետ եպ.—Գլխի տան է «Կ.»:

Պառավն.—Կ. կ. կ. օհ... հրամեքս, եկավ. տեսնում եմ էա Կենի մտն մին «Թ.» էլ կա, դրանց գլխին մին պոպոզի նման բան է քաշած, ինչպես եկեղեցվա կաթուղիկե. խորհուրդ(դ) լավ խորհուրդ է, թե որ աստ-

\* Ակնարկում է Կար. եպիսկոպոսին, որի մի աչքը շիլ է եղել:

\*\* Տեսնո՞ւմ եմ ինչպես լավ հասկացավ:

\*\*\* Ծառ... շատ... շատ լավ ասաց, հիմի խոսենք մեր զիտավորությունները մասին:

\*\*\*\* Իհարկե, այն ես պետք է ասել (հարցնել):

1 A Վոնց:

ված հաջողի: Էս բանը վաղուց է մաքումդ  
դրած ունես, էս երկու օրվան միջին լավ  
գիր կամ համբավ ես լսի էստու համար:  
Մե մարդ կա, որ էս խորհուրդիդ գլխին  
կանգնած է. թե նա չլինի՝ կու հասնիս  
խորհուրդիդ: Էն մարդն, ինչպես երևում է,  
հասակն կարճ է, նիհար, արծվաքիթ, մա-  
ղերն սպիտակ\*: Ամեն մարդո մի հավատար,  
և խորհուրդդ ծածուկ պահե. հույսդ մի կըտ-  
րել, աստված ողորմած է. շատ լավ օրեր  
էլ, շատ վատ օրեր էլ կը քաշես, բայց  
միշտ խորհուրդիդ վրա հաստատ կացիր:

Կարապետ եպ.— Գեորգ վարդապետ, նե՞  
դեմեք, շուքարի [=կարը] չոք էի անդլեոր\*\*:

Գեորգ վարդ.— Էվես էֆենդա՞, դյորդը-  
նըդ: Դախի սորմուլի բիր շեի վար դըր,  
սորունչի\*\*\*

(Սկսէ Գեորգ վարդապետն ընդ Տօնա-  
կանին ձևօք, գլխով խօսել ծածկարար, երբ  
և ստէ ցպառան).

Կարապետ եպ.— Սաթուն, բան մը բսեմ  
քեզի...

Պառավն.— Իմ անունը Սաթուն չէ, Կա-  
տարինն է:

Կարապետ եպ.— Աստուծով, երբ կատարի  
նե՛ ան ժամանակն ինձմե ավելի ստանաս  
կոր:

Պառավն.— Ո՞վ է սքվոր, մարդս, սրդիքս,  
կենդանի են:

Կարապետ եպ.— Իհարկե կենդանի կըլ-  
լանք:

Պառավն.— Կենդանի կուլանք, ապա խոմ  
մեռած չենք կանա լալ:

Կարապետ եպ.— Մասնիքի համար կես,  
լալ չէ, յաղութ է՞...

## О пьесе Г. Ширмазаняна „Описание кое-каких дел Карапета епископа...“

( Р Е З Ю М Е )

Գալստ Շիրмазанյան—один из писате-  
лей-современников Хачатура Абовяна.

Армянские историки и литературо-  
веды часто вспоминают об одной со-  
чиненной им комедии, которая счита-  
лась потерянной. В последнее время в  
рукописном отделе Матенадарана были  
найжены две рукописные копии этой  
комедии, по которым и составлен из-  
даваемый текст.

Эта комедия —один из первых об-  
разцов драматургии восточных армян,—  
создана в 1841—1842 г.г., когда Абовян  
выступал в ожесточенной борьбе против  
грабара и клерикальной литературы. Ко-  
медия написана с использованием ахал-  
цихского и тбилисского диалектов, а  
также современного ему нового лите-  
ратурного языка. Материал комедии  
взят из реальной жизни: все действующие  
персонажи являются исторически-

ми лицами и названы своими собствен-  
ными именами.

В этой комедии-памфлете Г. Шир-  
мазанян убийственно высмеивал клери-  
калов, а в первую очередь архиепископа  
Карапета и католикоса Ованеса Карпеци.  
В комедии высмеяны также государ-  
ственные чиновники, богачи, имеется  
также намек на одного из представи-  
телей царизма на Кавказе. Автор уни-  
тожающе критиковал взяточничество,  
жульничество, лицемерие духовенства  
и всем вышеуказанным отрицательным  
образам противопоставил положитель-  
ные образы крестьянина и городского  
ремесленника.

Комедия была поставлена на сцене  
известного дарбази того же Ширмазаняна  
в гор. Тбилиси. При содействии архи-  
епископа Карапета полиция преследо-  
вала автора комедии, но не нашла, а  
запрещенная комедия распространялась  
секретно, рукописными экземплярами.

\* Ակնարկված է ներսես Աշտարակցին:

\*\* Ինչ ասել է, այս կինը շատ լավ է հասկանում:

\*\*\* Այն, տեր իմ, տեսնո՞ք: Էլի հարցնելու մի  
բան կա, հարցրու:

\* Այստեղ ընդհատվում է նաև Ա օրինակը: Դա  
ձևագրի նախկին 138ա և արդի 141ա թերթումն է:



# Ծ Ա Ն Ո Յ Ա Գ Ր Ո Ւ Յ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

«Նկարագրութիւնք ինչ-ինչ գործոց...» պիեսի

1. Միմեոն Բզնունի (1769—1841).—Մնկել է էջմիածնում: Նրա կյանքի մանրամասնությունները գրված են իր ձեռքով, պահպանվում են մեր Մատենադարանի № 2945 ձեռագրի մեջ:

1831 թվին նա Աշտարակցու կողմից նշանակվում է որպես իր փոխանորդը Թիֆլիսում, առյուծ շոգնական նմայ զՅարութիւն վարդապետն Ալամդարեանց:

էջմիածնում Սիմեոն Բզնունին ուժեղ բողոք է կազմակերպում Հովհ. Կարբեցու դեմ, ուստի և արտորվում է: Աքսորում սակայն նա շարունակում է իր բողոքը՝ խայտառակելով Կարբեցուն՝ ցարի առաջ: Կարբեցին, ստիպված, 1837 թվին ետ է կանչում նրան էջմիածին, ուր և Բզնունին մեռնում է 1841 թվի օգոստոսի 9-ին: Իր մի ձեռագրում նա ծաղրանկարի նյութ է դարձրել Ռոզենին, իշխան Բենբուզովին և ուրիշներին:

2. Հովսեփ Վեհապետյան Տ. Մարուզյան.—Հովհաննես Կարբեցու հայրենակիցը, մտերիմ աշակերտը, սպասավորը և նրա ամենավստահելի օգնականը: Գրել է Հ. Կարբեցու 1831—1841 թվերին վերաբերող գործունեության ամփոփ պատմությունը (տես ձեռագիր № 2944):

3. Հարություն Ալամդարյան.—Բանաստեղծ 19-րդ դարի սկզբում: Խ. Արովյանի ուսուցիչներից:

4. Մելքոն (ձկնապան).—Թիֆլիսի հարուստներից: Նրա մասին, սույն պիեսում եղած հիշատակումից բացի, խոսում են նաև Աղ. Երիցյանը («...Կովկասի Հայք...»), Գեղամյանը («Փորձ» ամսագրում) և Կ. Կախիսկոպոսի կենսագրության մեջ) և դարձյալ Գ. Շիրմազանյանը՝ յուր «Անեկդոտներ»-ում:

5. Կարապետ Կախիսկոպոս (Բագրատունի).—Հայտնի է նաև որպես առաջնորդ Կարինի շրջանի հայության՝ 1828 թվի զաղթի ժամանակ (դեպի Ախալցխա): Նոր վայրում նա ճարպկորեն գնում է բաղձաթիվ գյուղեր և կալվածքներ: Ախալցխացիները մի անգամ (1834) ըմբոստանում են նրա դեմ, և խռովության ալիքը հորդում է դեպի նրա բնակարանը: Բայց նա կարողանում է ազատվել մահվան վտանգից: Հսկայական հարստության տեք լինելով, կաշառքի շնորհիվ, դառնում է Թիֆլիսի և շրջակայքի հայոց առաջնորդ:

6. Գևորգ վարդապետ (Տեր Գավթյան).—Կարապետ Կախիսկոպոսի սպասավորն ու աշակերտը, որին նա Ախալցխա բերելով՝ դարձնում է վարդապետ, Կախիսկոպոս Սա ևս Կարապետ Կախիսկոպոսի

օրինակով բավականին կալվածքներ և հարստություն է ձեռք բերում:

7. Ավետիք Էնֆիաճյան.—№ 8810 ձեռագրի առաջին տնորենը: Նրա և իր եղբոր մասին Երիցյանը գրում է. «Կարենցի գաղթական Ավետիք Էնֆիաճյանը՝ յուր կրտսեր եղբայր Համբարձումի հետ Ախալցխայից հասնելով Թիֆլիս, Կարապետ արքեպիսկոպոսի կարգադրությամբ մի փոքրիկ սենյակ էր վարձել հիշյալ գաղթական շինության մեջ 1844 թվականին»: Նրանք հիմք են դնում Կովկասյան առաջին գրաված տանոցին:

8. Հակոբ Կարենյան.—Կարապետ Կախիսկոպոսի աշակերտներից, սույնպես Կարենի գաղթականներից: Հ. Կարենյանը եղել է Ներսիսյան դպրոցի դասատուներից մեկը: Նրա հետ ընդհարվել է Միքայիլ Պատկանյանը՝ նրան դարձրել նյութ իր մի պիեսի մեջ: Հակ. Կարենյանի գրական ժառանգությունից հայտնի են նրա «Շուշանիկ» պիեսը և թարգմանություններ: Եղել է «Կովկաս»-ի խմբագիր:

9. Երեմիա Արծրունի.—Վանից Թիֆլիզ գաղթած հայտնի հարուստ Գեորգ Արծրունու որդին և Գրիգոր Արծրունու հայրը:

10. Տարթեղ Զախարիչ (եղբայրը՝ Գանիել).—Երևի հենց սույն Տարթեղ Զախարիչ Լոսու Մելիքյանն է, որ հիշատակվում է Խ. Արովյանի «Դիվան»-ի 2-րդ հատորում (էջ 152): Լոսու Մելիքյաններից են նաև Գրիգորը և նրա որդի Սիմյոնը, որը 1830—40-ական թվերին գլխավոր բժիշկ էր Երևանում:

11. Ստեփան Արարատյան վարդապետ.— էջմիածնի միաբաններից, Կարբեցու համախոհներից, որին Ներսես Աշտարակցին, հենց առաջին առիթով, արտոբեց Հովսեփ Վեհապետյանի հետ միասին:

12. Գևորգ վարդապետ Մարուզյան.—Կարբեցու սպասավորը, որին Կարբեցին 1841-ին ձեռնադրել է Կախիսկոպոսի Պիեսում նկարագրված Սոֆիա կնոջ հետ կապված արկածները կապված են սույն Գևորգի հետ:

13. Ստեփաննոս Արղուսթյան.—Կարբեցու մտերիներից էր Թիֆլիսահայոց առաջնորդը՝ Կարապետ արքեպիսկոպոսից առաջ:

14. Մկրտիչ վարժապետ Եկենյան.— № 3045 ձեռագրի ընդօրինակողը: Եղել է Միքայիլ Նալբանդյանի ուսուցիչներից, Նալբանդյանի մահվան ժամանակ տեղ է դամբանական:

15. Զաքարիա Կ. Բեհրուզյան.—Նաև Գուլաստյան, աներկյուղ, արկածախնդիր անձն:

հոգևորականների շրջանում: Նրա ամփոփ ձևագիր կենսագրությունը նույնպես գտնվում է Մատենա-գարանում: Մեսրոբ Թաղիադյանը որոշ ժամանակ սովորել է նաև սույն Զաքարիայի մոտ: Զաքարիան ունի ձևագիր վիճակում գտնվող մի աշխատություն «Վեպի կղզոյն Քեղամայ...» գրված 1825 թվին՝ Սևանում (ձեռ. № 8074):

16. Ն ե բ ս ե ս Ա շ տ ա ր ա կ ց ի (1806—1857).— Կաթողիկոս: Շիրմազանյանների ընտանիքի հետ կապված էր խնամիրական կապերով: Գ. Շիրմազանյանը նրան սկզբում համակրել է, սակայն, ինչպես երևում է, հետագայում սկսել է հակակրել: Աշտարակցու մահից հետո անգամ վերջինիս ազգականներից մեկը՝ Հարություն Կամսարական Շահադիդյանը երկար ժամանակ շարունակել է պաշտպանել ներսես Աշտարակցուն՝ Գ. Շիրմազանյանի հարձակումներից (տես «Արարատ» 1878թ. փետրվար):

17. Հ ո վ հ. Շ ա հ խ ա թ ու ն յ ա ն.— Հայտնի է իր պատմական աշխատություններով: Ժամանակին զբաղվել է մեր Մատենադարանի կարգավորմամբ: Մեկն է այն մարդկանցից, որոնք (այդ թվում նաև Խ. Աբովյանը) ցանկանում էին հիմնել Սևանի միաբանությունը: Ս. Բզնունու խմբակից, որը զբաղորդողները հարուցեց Հովհ. Կարբեցու դեմ:

18. Հ ո վ հ ա ն ն ե ս Կ ա ր ք ե ց ի.— Կաթողիկոս 1831—1842 թ.թ.:

19—20. Մ ե լ ք ու մ և Թ ո վ մ ա ս Թ կ ու մ յ ա ն ն ե ր.— Եղել են Հով. Կարբեցու եղբոր որդիները, դրանցից մեկի տղան սովորել է Պաշտաուր Աբովյանի մոտ:

21. Ս ո լ ո մ ո ն Ա ր ի ս ո լ ո մ ո վ.— Գործող անձի մասին կենսագրական տեղեկություններ չգիտենք: Տվյալ ժամամակներում եղել են. ա) Սողոմոն Ստեփանյան Աբխալամյան, որը 1827 թվին ավարտում է ներսեսյան դպրոցը: բ) Սողոմոն Հարությունյան Աբխալամյան, որը ներսեսյան դպրոցից դուրս գալով մտնում է գինվորական ծառայության: գ) С. З. Абесаломов,

որը մտել է Յացենկոյի Թատրոնի (ռուսական) դիրեկցիայի կազմի մեջ՝ որպես «Комерцкий Советник»: Վերջինս միտք է հղանում ռուսական Թատրոնի առանձին խոշոր շենք կառուցել՝ ինժեներ Իվանովի հետ, բայց տարաձայնությունների պատճառով հեռանում է գործից:

Թե զրանցից որի մասին է Շիրմազանյանի խոսքը, չգիտենք, հավանաբար վերջինի, որովհետև սա է միայն զրվել Աբխալամով և ոչ Աբխալամյան:

22. Տ ո ն ա կ ա ն.— Կ. եպիսկոպոսի սղասավոր-տիրացու ինչպես երևում է նա հետագայում Կ. եպիսկոպոսի շնորհիվ ուղարկվում է Ախալքալաքի Կարապետյան կոչվող դպրոցը՝ որպես դասատու:

23. Տ ե ր Ա վ ե տ ի ք.— Թեֆլիսի հոգևորականներից: Կոնսիստորիայի անդամ. 1841—1843 թվերին ներսեսյան դպրոցի ելուժուտքի հաշիվները վարել է նա: Ազգանունը եղել է Տեր Ավետիքյան:

24. Գ ր ի դ ո ր Տ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն.— Եղել է Ախալցխացի: Կարապետ եպիսկոպոսի մոտ ծառայելուց հետո, ծառայել է կոնսիստորիայում որպես զբաղիք, ապա, ներսեսյան դպրոցում՝ որպես ուսուցիչ:

25. Բ ե ն կ ե ն դ ո ր Փ Ա լ ե ք ս ա ն դ ր Թ ր ի ս տ ա Փ ո ր ի չ (1783—1844).— Գեղարքիստների հետապնդողներից. 1826 թվից ժանդարմերիայի շեֆ և երբորդ բաժանմունքի պետ 1827 թվի պատերազմի ժամանակ մասնակցել է էջմիածնի զբաղմանը:

26. Ս ր մ ո լ ո վ Ա լ ե ք ս ե յ Պ ե տ ր ո վ ի չ (1772—1861).— 1817—27 թվերին ցարական իշխանության կողմից նշանակված է եղել Վրաստանի գլխավոր հրամանատար. ցարական կառավարության ներկայացուցիչը Կովկասում:

27. Պ ա ս կ ե վ ի չ Ի վ ա ն Փ ե ո դ ո ր ո վ ի չ (1782—1856).— Նիկոլայ 1-ինի քաղաքականության մոլի ջատագովներից և պաշտպաններից: Երմոլովի հաջորդը՝ որպես Կովկասի կառավարիչ և գործերի գլխ. հրամանատար (1827-ից):

Յ Ա Ն Կ Հ Ա Տ Ո Ւ Կ Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր Ի

Աղամ—160  
 Ալեքսանդր Քրիստաֆորովիչ Բենկենդորֆ—126  
 Ախալցխացիներ (մի շարք անուններ)—155—156  
 Ակն—127  
 Աղվան—128  
 Աշտարակ—131, 132, 135  
 Աստվածատուր Աղա Երևանցի—132  
 Ավթանդիլ Կուկուջանով—131  
 Արախու—174  
 Արարատյան երկիր—124, 125  
 Արիաշայ—124  
 Բազու—105  
 Բաղդասար քահանա—159  
 Բարոն Ռոզեն—108, 114, 124

Բարսեղ եպիսկոպոս (նաև արքեպիսկոպոս)—107, 111, 123, 159, 160  
 Բարսեղ եպիսկոպոս՝ Մուղնի գյուղի—126  
 Բարսեղ Քեչիշ Օղլի—156  
 Բեթղեհեմի եկեղեցի—159  
 Բեժան Խատիսով—131  
 Բեհրուդյաններ—167 (տես և Բ. իշխան)  
 Բեյ Օղլի—128  
 Բեսարաբիա—115  
 Բ. Իշխան—170  
 Գարրիել Հովհաննիսյան—105  
 Գալուստ Զուղայեցի—127  
 Գաղղիա—115  
 Գևորգ Արծրունի—130, 168—169

Գևորգ Եջարաշի—127  
 Գևորգ (Թելեթի քահանա)—160  
 Գևորգ Վենապետյան—Աշտարակցի—107, 109, 110  
 131—135, 160  
 Գևորգ Տաթևացի—124  
 Գևորգ Քեղխուզյանց—130  
 Գողիաթ—174  
 Գորի—145, 160  
 Գուժրի—127  
 Գրիգոր Արզվիկացի (Ցուգուլ)—123, 124  
 Դանիել Զախարիչ—162  
 Դանիել Կաթուղիկոս—127  
 Դավիթ Կաթուղիկոս—127  
 Դավիթիկա Սուրենյան = Դավիթ Սուրբանցի—114  
 Երևան—126, 127, 130, 132—135  
 Երևանի կոմս—125  
 Երմուզ—128  
 Երուսաղեմ—142  
 Եփրեմ Կաթուղիկոս—110, 125, 128  
 Զաքարիա Բեհրուզյան—132  
 Էրզրում (Արզրում)—117, 128, 138  
 Թաղևոս քահանա Գորի—160  
 Թավրիզ—127  
 Թելեթ—160  
 Թախաթ—126—128  
 Թովմա Ղորղանյան—107, 114, 121, 158, 167  
 Թովմաս Թեոֆան—107, 130  
 Իզմիր—127, 128  
 Ինզիլիզու Էլչի (անգլիական դեսպան)—128  
 Խորոյ-Խաթուն—155  
 Կարապետ վարդապետ—144  
 Հակոբ Շուլավերցի—137  
 Հադսաա—128  
 Հասան-Խան—128  
 Հավլարար—164, 176  
 Հարություն Ալամդարյան—122  
 Հարություն Շիրմազանյան—Վարդանյան—130, 131  
 Հարություն Քալանթարով—133  
 Հին Անապատ (Երևանում)—133  
 Հոլանդիո սակի—108, 130  
 Հովհաննես արքեպիսկոպոս—127  
 Հովհաննես Կարբեցի (Կաթուղիկոս)—Շատ հաճախ,  
 համարյա ամենուր, հատկապես 2-րդ գործողու-  
 թյան մեջ:  
 Հովհաննես Ղրիմեցի—123, 124  
 Հովհաննես Շահխաթունյան—123, 124  
 Հովսեփ Կաթուղիկոս—107, 123  
 Հովսեփ Մարուզյան—108, 159, 160  
 Հրեշտակապետաց Եկեղեցի—141  
 Հ. քահանա—176  
 Զորագյուղ—126  
 Ղազարապատ—132  
 Ղազար քահանա (Գորի)—137  
 Ղայարի (Կեսարիա)—127, 128, 131  
 Ղարս—127  
 Ղոջավանք—127  
 Ղորղանյաններ—167

Ղուկաս արքեպ.—107, 122, 123, 131, 132, 134  
 Ղուկաս Կաթուղիկոս—127  
 Ղիշաղ—144  
 Մահմադ-Խան—127  
 Մաթեոս Կաթուղիկ.—131, 132, 134  
 Մարտիրոս վարդ. Աշտարակցի—124  
 Մարտիրոս քահանա Թելեթի—137  
 Մելքիսեթ—148  
 Մելքուժ Թեոֆան—130  
 Մեծ Բերդի Եկեղեցի—106, 140—142  
 Մինաս Կաթուղիկ.—123  
 Միրո Միրիմանով—140, 159  
 Միքայել Սալանթյան—122  
 Մկրտիչ Եկեղեցի—105  
 Մկրտիչ Երևանցի—132—135  
 Մկրտիչ Քարաաշյան—107, 109, 121, 159, 160  
 Մկրտուժ Քարաաշով—159  
 Մոզնի—126  
 Մոսկովա—115  
 Մուշ—127  
 Նահապետ Արշակունյան—127  
 Նասվետով (Նեսվետան)—127  
 Ներսես Աշտարակցի—108, 115, 122, 128, [հաճախ]:  
 Ներսիսյան Ուսումնարան—135  
 Նիկողայոս Կաթուղիկոս—123  
 Նիկողայոս Տ. Մարուզյան—123, 124  
 Շահան Զրպետյան—122  
 Շահադա—128  
 Շամախի—126  
 Շիրվան—125  
 Պարիզ (Փարիզ)—115  
 Պոլիս (Կ. Պոլիս)—127, 128  
 Ուսումնակի—128  
 Պարսկաստան—125, 127  
 Պետրոս Քալանթար—127  
 Ջաֆար Խան—174  
 Թուս մեծեր—170  
 Սալթան—148  
 Սաղիան—124—126  
 Սարգիսովներ—160  
 Սեթ-Պետրոս—126  
 Սիրի—160  
 Սիմոն Բրնունի—123—129  
 Սիլուատար—128  
 Սուլթան օսմանյան—124, 136  
 Սուրբ Քայանեի վանք—129  
 Սուրբ Գևորգի Եկեղեցի—140  
 Սոֆիա—131—135  
 Սպահան—115, 127  
 Ստեփան Ախալքալաքեցի—137  
 Ստեփան Արղության—114, 122, 137  
 Ստեփան Ենոքյան—128  
 Ստեփան Կաշակերյան—Արարատյան—107, 111, 112,  
 122—124, 166  
 Ստեփան Տայինով—113, 114  
 Ստեփան Տեղապահյան—128  
 Վարշավայի Կնյազ—125

Վրաստան—105, 106, 108, 122, 124, 125, 136  
 Տայք—105, 106  
 Տարիել Չախարիչ—162  
 Փամբակ—127

Փարաբար—133  
 Փոքր Բերդի եկեղեցի—140—142  
 Օսմանյան երկիր—124, 169\*

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ազամ (Ատամ)—մարդ  
 Աժուժ—արժեք, նշանակութուն  
 Աղոն—աղուն, աղացվող հացահատիկ  
 Անֆիա—(Լնֆիա)—հատուկ տեսակի քթախոտ, որով  
 այն ժամանակ հայտնի է եղել Թիֆլիսը  
 Աշղազ—խոհարար, ճաշ պատրաստող  
 Արդա—գլխուժ, խնդրագիր (արդ—խնդիրք)  
 Աստուց—սրանից  
 Ասիդնացի—բանկային չեք. դրամի արժեք ունեցող  
 փաստաթուղթ, թղթադրամ  
 Արդյունք—շահ, եկամուտ, օգուտ  
 Բախալ—նպարավաճառ  
 Բաշխայ—ուրիշ, բացի  
 Բասորմաշի—բասուրմա պատրաստող, պլստադորժ  
 Բեղշատին—կնքեն (Печатать—բան է)  
 Բուն[ն]ան սորա—սրանից հետո  
 Բոյուք—մեծ  
 Բոշ—դատարկ, իզուր  
 Բոշբողազ—շատախոտ  
 Գանա—խնչ է, կարծում ես, միթե  
 Գեշմիշ (գեշընմիշ) ըլլալ—ապրել  
 Գլուխ վեր անել—գլխի մազերը սափրել  
 Դահա—էլ ավելի, առավել  
 Դելիլ—զալալ—առևտրական միջնորդ  
 Դյախ—այո  
 Դիփ մետի—բոլորը միասին  
 Դիփունք—բոլոր  
 Ենիշարի—ավազակ, հին Օսմանեան զօրք, որ  
 ստեղծվում էր հատկապես բնությամբ մահմե-  
 դականացված քրիստոնեա մանուկներին, երբ ար-  
 դեն նրանք չափահաս էին դառնում:  
 Զառաֆ—սառաֆ—ոսկերիչ  
 Զեվզեկ—շատախոտ  
 Զրինդ—առույդ  
 Էդերայ—զուցե, երանի  
 Էլշիլ—զեսպան  
 Էֆենտի—պարոն, տեր  
 Թանխա տալ—պտույտ տալ  
 Թեմեսուք—պարտամուրհակ  
 Թեսպեն—թագրեն, տերոզորմայ, համբիշ  
 Թերդիբաշի—գերձիկներին մեծ. գլխավոր գերձիկ  
 Թուլուղճի—տիճուր պատրաստող կամ շրկիք (որը  
 կրում է տիճորով), կամ տիով փողոցներում շուր-  
 ցանոց:  
 Իջարով—կապալով  
 Լախրիլի—զրույց, խոսակցութուն  
 Լաքին—բայց, սակայն

Խալիսվել—ազատվել  
 Խավրել—ուղարկել, ճամբել  
 Խարճ—ծախս  
 Խորաթիլ—զրուցել  
 Խոշ—խո, խոմ, հո (նաև քաղցր, դուրեկան)  
 Կեորա—Գորա—չափ  
 Կոճի—ճան, վեդ  
 Կոպիտ—կոպիտ—պատճեն  
 Կուշեր—կառավան  
 Հայդե—դե, դնա, շտապիր, դեհ  
 Հեղ—անգամ  
 Հիմիսկիվետ—այժմեետ, իսկույն, հենց հիմա  
 Զլիլ—հազիլ, վերջապես  
 Դուրուշ—դրամի տեսակ, տանկական փող, նախա-  
 սովետական շրջանում արժ. 8 կոպ. (դուրուշա-  
 նոց—դուրուշի արժեք ունեցող):  
 Դանվեշի—կոֆե պատրաստող  
 Մազբամ—բայց, սակայն  
 Մեմլեքեթ—երկիր  
 Մեյթար—ձխապան, դոմապան  
 Միլլեթ—ցեղ, ազգ  
 Մունջ—լուռ, համբ  
 Մուշտակաիլ—բանցքամարտ  
 Մսխ, մխս—ծախս  
 Մոդ կոնիք—կհավաքեք, կժողովեք  
 Նե տեմեք (նե դեմեք)—խնչ ասել է, ինչ է նշանա-  
 կում  
 Ուրուքմին—հարմար  
 Ուփրո—առավել  
 Զորբա—ճաշ  
 Զեր—դեռ, նաև անգամ  
 Զիրու—խնաղու—հակառակությամբ, ի հակադրու-  
 թյուն  
 Սանդուղ—սնդուկ  
 Սեպել—հաշվել  
 Սոխախ—նեղ փողոց, նրբանցք  
 Սուրկուն—արտաքսումն  
 Ստակ (ըստակ, յստակ)—դրամ  
 Տեվթեր—զավթար—մատյան  
 Բախամ—թվանիշ  
 Բախիլ—օղի  
 Փակագիր—ժածկագիր  
 Փարա—դրամ

\* Սույն ցուցակում ցույց չենք տվել դործող  
 անձանց և Թիֆլիս, էջմիածին, Ախալցխա վայրերի  
 անունները:

Փափուջ — ասնամանի տեսակ

Փեղեվենկ — միջնորդ՝ ստոր գործերի

Փեյզահ — սկիզբ, հայտնվել, սկսվել, ծնվել

Փեշեք — արհեստ

Փեշին — փեշքեշ — նվեր աչքալուսանք

Քամբախտ — բախտագուրկ, վատաբախտ

Քերխանա — Քարբիկա — գործարան

Քերվանսարա — խան, իջևան

Քոծ — կին ծառա, աղախին

Քոշք — ապարանք

Օղա — սենյակ

Օղուլ — տղա, գավակ

Օբմին — մարդ

Ֆերման — հրաման

Ֆերդե — Փարդա — վարագույր

Ֆոնջի — փոնջի — հացագործ

Ա.Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ԱՆՏԻՊ ԷԶԵՐ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՈՆԶԻԱՅԻՑ

Տպագրության ներկայացվող բանաստեղծությունների այս շարքը քաղված է ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագրերից: Դրանք բոլորն էլ տպագրվում են առաջին անգամ:

Այս բանաստեղծությունների ամենամեծ արժանիքը՝ նրանց բովանդակությունն է:

Հակոբ Ակնեցին (XVII դար) նկարագրում է թուրք բռնակալ Սուլթան-Մուրադի հրամանով Կոստանդինուպոլսից արտաքրսված հայերի, հույների և այլ ազգերի ծանր վիճակը: Լինելով արտաքսվողների քարավանում, նա, որպես ակնաստես, ցույց է տալիս հատկապես հայ գաղթականության տառապանքները, զոհերը և տարբեր աշխարհներ ցրվել գալը:

Ջուղահայ անվանի աշուղ Բադեր Օղլի Ղազարը (XVIII դ.) ցույց է տալիս պարսիկ բռնակալ Նադիր Շահի բարբարոսությունները, նրա նշանակած բազմաթիվ, ծանր հարկերը և ժողովրդի սարկական վիճակը: Բադեր Օղլին ևս, Հակոբ Ակնեցու նման, նկարագրում է նաև ուրիշ ազգերի կրած նույն անլուր հալածանքները. ուստի, թվելով Նադիր Շահի դաժանությունները, նա գրում է.

«...Ուզում այ շալ ու մահուդն,  
Կտրում այ աշխարհիս ումուդն,  
Թուրքին ու Խային ու Զեռլին՝  
Ողջին էլ դարբեղա՛ր այ ուզում:

Երկու անհայտ հեղինակներ (հավանաբար XVI—XVII դարերի) և Հակոբ Սսեցին (XVII դար) իրենց բանաստեղծություններին նյութ են դարձնում հայ ժողովրդի ներքին թշնամիներին: Նրանք կամ սար-

կազմի կամ անարգանքի կծու խոսքերով են պախարակում հողևորականների և հարուստների ազահությունը, թալանը և բռնությունները:

Նազարեթը սղբում է հայ իշխանների լկախության պատճառով դժբախտացած «քոյր Շահանի» անտանելի վիճակը:

«Տաղ կարնկին» ժողովրդական ծագում ունեցող և Հովսեփ ու Բարուենակ երգիչների բանաստեղծությունների մեջ դրսևորված է պանդուխտ հայի դառն ու դժվար վիճակը և նրա կարոտը՝ հայրենի երկրի նկատմամբ:

Ոմն Հարություն (XVIII դար) նկարագրում է միջնադարյան դպրոցի սիմվոլ ֆալախայի սարսափները՝ և իր փախուստը՝ վանական դպրոցից:

Կան նաև սիրո ու այլ թեմաներով հորինված երգեր էլ:

Իսկ Աղեքսանդր գրիչն, առաջինը լինելով մեր բանասիրության մեջ, XIX դարի սկզբներին, գրի է առնում ժողովրդական — հարսանեական մի եղակի «Ծառագովք» («Ծաղկոց»-ներից), որի հնությունը կրում է նախաքրիստոնեական դարերի կնիքը:

Այս բանաստեղծությունների հաջորդ կարևոր արժանիքներից կարելի է թվել հեռակայները.

Դրանցից շատերը հորինված են բանաստեղծական մեծ վարպետությունով, ժողովրդական պոեզիայի անմիջական և բարբար ազդեցությունով, միջնադարյան աշխարհիկ լեզվով, երբեմն էլ բարբառներով և ժողովրդի բառ ու բանով:

Դրանից մի քանիսի շնորհիվ մենք ծանոթանում ենք նաև այնպիսի բանաստեղծների հետ, որոնք մինչև օրս հայտնի չեն

եղել (Հակոբ Ակնեցի, Օքսուզ Ավետիք, Բարունակ, Հովսեփ, Հարություն և այլն):

Բանաստեղծություններից մի քանիսի մեջ գտնում ենք բանասիրական կարևոր տեղեկություններ, որոնցով լուսարանվում են իրենց հեղինակների կենսագրության հետ կապված որոշ խնդիրներ (տես ծանոթությունների մեջ):

\* \* \*

Տպագրվող շարքի ուսումնասիրությունը դյուրացնելու նպատակով՝ բնագրերին կըցում ենք համառոտ ծանոթություններ, իսկ յուրաքանչյուր բանաստեղծության տակ (կամ ծանոթության մեջ) նշում ենք այն ձեռագրի համարը, թերթը և զրչության տարեթիվը, որտեղից քաղված է տվյալ բանաստեղծությունը:

ՅԱՂԱԳՍ ՄՈՒՐԿՈՒՆԻՆ, ՈՐ ՅԱՒՈՒՐՍ ՍՈՒԼՏԱՆ ՄՈՒՐԱՏԻ ԵՂԵԻ

Յայտնեմ ձեզ իրս ժամանակի,  
 Որ կատարէր մերում ամի.  
 Սուլտան Մուրադն, յազգէն տաճկի,  
 Սուրկուն արար յԼստամպոլի:  
 Արձակեցաւ պատերազմի՝  
 Չղէմս իւր եղեալ յարեկի,  
 Ընդ հրապաշտ արքայն Պարսկի,  
 Որ շահ նոցա Սեֆի ձայնի:  
 Կեսարիայ երբ հասանի,  
 Որ Կապադովկիայ անուանի,  
 Կողմանս նորա հայեալ լինի,  
 Գիւղս տալ ի յաւերի:  
 «Ո՛ւր են, հարցեալ, մարդիք սորի,  
 Որ շինութեամբ չէ այս տեղի».  
 Նորա ետուն պատասխանի.  
 «Կնացեալ, ասեն, յԼստամպոլի»:  
 Բանս գրեաց ի հրովարտակի  
 Առ պահապանն Բուզանդի,  
 Չի որք եկեալ յԱնատոլու՝  
 Փութով ի տեղիսն առաքեսցի:  
 Ի սուրհանդակ զհրովարտակն ետուն  
 Եւ յԼստամպոլ փութացուցին,  
 Առ պահապանն քաղաքին,  
 Վաղ-վաղ կատարել զբանս զրին:  
 Էր խայմախամ Պայրամ փաշան,  
 Որ ունէր հուքմ եւ հրաման,  
 Չի վեղիրն ի մարտ էր ընդ ինքեան,  
 Սայ էր կացեալ նորա փոխան:  
 Հազար ութսուն եւ չորս թիւ[ն] էր,  
 Մայիս ամսոյ տասն եւ ինն էր,  
 Օրն չորէքշաբթի անուանէր,  
 Որ հրովարտակն նա հասանէր:  
 Յորժամ որ նա զգիրն երաց,  
 Ետես զպատճենն, որ կայր զբաժ,

Ասաց՝ որպէս իրք հրամայեաց,  
 Մինչ ընդ թշնամիսն մարտ չէ մտած:  
 Լինէր նմա զգիրմի ունել,  
 Պարտել զթշնամիսն եւ յաղթել  
 Եւ զալ յաթոռ իւրում նստել,  
 Ապա թէ զայս բանս կատարել:  
 Իսկ թագաւորն էր սաստիկ գրել,  
 Չքանըն չկարաց այլայլել,  
 Շուտով զհրամանն ետ կատարել,  
 Չերեք ազգն քաղքէն հանել:  
 Հրաման արար մուհետիկի,  
 Ազաղակել մէջ քաղաքի,  
 Մինչև քսան օր սր լինի,  
 Գառասնամից եկեալ ոչ սք զացի:  
 Գուժն ի բերան մուհետիկին,  
 Ըստ կիտակուլ մարգարէին.  
 Նա քարոզէր զբան արարչին,  
 Սա՛ զհրամանս իւր արքային:  
 Արեթացիքն, որ Հայք ասին,  
 Եւ Սեմայ ազգին, որ Յոյնք լսին,  
 Եւ Տաճիկք՝ զարմը Հազարին,  
 Որք յարեկից եկեալ էին,—  
 Յորժամ լուան ըզբօթն զայն,  
 Միջարեկան ամենեքեան,  
 Շուկայքն ամէն խափանեցան,  
 Կրպակից զբունք փակեցան:  
 Ելեալ յերկիրսն ցրուեցան  
 Եւ ի գաւառս պանդխտացան,  
 Որպէս երգէ մարգարէն այն,  
 Դաւիթն՝ ընտրեալ աստուածաբան:  
 Չի բաժանեցան եզրաբք-քըւերէ,  
 Որոշեցան դուստրըք—մօրէ,  
 Չատս կացին արք ի յարակցէ,  
 Եւ բարեկամք՝ բարեկամէ:



Դստերք առ հարս իւրեանց լային,  
 Թսուունք առ հանիկան ողբային.  
 ՇՄեք զինչ առնեմք յօտար երկրին,  
 Որ զմեզ խարխալ երկիր տանին:  
 Զի մեք սնաք մէջ քաղաքի,  
 Ոչ տեսաք զերես արևի,  
 Որպէս ասրիմք զիւզամիջի,  
 Որ և չգիտեմք զգործ երկրագործի:<sup>2</sup>  
 Ծնողք յորժամ դայս լսէին,  
 Սիրաքն առաւել ճմլէին,  
 Որպէս քերչօք քերեալ մարմին,  
 Քացախ արկցեն վերայ վիրին:  
 Զի էր կսկիծըն նոցա մին,—  
 Որ բնակութեանց արտաքսէին,  
 Յորժամ և զնյս տեսանէին՝  
 Եւս քան զես մորմօքէին:  
 Այլ և փեսայացուք բազումք կային,  
 Որ հարսնացուքն յայլուտա էին,  
 Սակս չգատելու միմիանց զնոսին,  
 Զհարսանիսն աստ առնէին:  
 Այսօր նոցա պսակ զնէին,  
 Վաղիւ ճանապարհ ձգէին.  
 Փոխան յուրախութեան տեղին՝  
 Սգով ըզսիրտ նոցա լնուին:  
 Հարսունքն՝ զքօղս պատանէին,  
 Փեսայք՝ զթագս յերկրի հարին,  
 Աղիողորմ կական բարձին,  
 Զի ի սիրելեաց բաժան կացին:  
 Եւ տնարգել կանայք զհերս փեաին,  
 Արիւնախառն արտասուեցին,  
 Հող զգլխով արկանէին,  
 Զի զյուր երթալն ոչ գիտէին:  
 Յըզի կանայք վայրս տային,  
 Սաքնդիայք զնոյն երկրորդէին,  
 Ոմանք զմանուկս ձգէին,  
 Ըստ հրամանի տեսան բանին:  
 Զի ոմն երթայր Նիկսմիդայ,  
 Ոմն զնայր Բութանիայ,  
 Ոմն ճեպէր Կեսարիայ,  
 Այլք փութային Դաղատիայ:  
 Յեւդոկիայ և Սերաստիայ,  
 Որ և միմիանց են մօտակայ,  
 Ի Տիւրիկէ քաղաք որ կայ,  
 Յերապօլիս և ի գիւղս նորա:  
 Դարանաղեաց և յԵրզնկան,  
 Թէոդուպօլիս ևս զնան,  
 Այլք՝ մեծ քաղաքն Բերիայն,  
 Տիգրանակերտ՝ և Եգեսիայն:

Գիւղք և քաղաք, որ հեա նոցին,  
 Լցան նոքա ամենեքին,  
 Այլ ճանապարհի թէ զլինչ կրեցին՝  
 Է՛ գիտելի սահղծողին:  
 Շատք ցամաքով քնթանային,  
 Եւ շատք՝ նաւով Պոնտոս գնացին.  
 Որք ոչ տեսեալ զափըն ծովին՝  
 Վարանէին վերայ նորին:  
 Այնկոծմամբ և տատանմամբ  
 Գնացեալ Պոնտոս հասանէին,  
 Զնաւահանդիսան անդ առնէին,  
 Անտի յերկիրսն ցրուէին:  
 Իսկ ո՞ պատմէ զաղէտ սոցին՝  
 Ըզմովու և ըզցամաքին,  
 Բայց թէ մաքուրն Երեմիայ,  
 Որ ողբ երգէր յԻսրայէլին:  
 Յորոց միջոյ փրկեաց զիս տէր,  
 Որ քաղղէացոց նման էր.  
 Լեզու չբուէ զաղետս պատմել,  
 Զի տեսողաց սիրան ճմլէր:  
 Զի ժամանակն էր Յունիսին,  
 Որ տօթոյն կապարք հալէին.  
 Հովանոցի կալ չկարէին,  
 Զանարգելս ի տանց արտաքսէին:  
 Ի մեր մեղաց ելեալ բանս այս,  
 Զոր և խօսեցաւ Եսայեաս.—  
 Որք փախիցեն ձերպս վիմաց,  
 Անկցին դարձեալ ի խորս ասաց:  
 Ծերպ վիմաց էր մեզ Ըստամպուլ,  
 Մեք բնակեաք արձակ և սաւլ,  
 Զպահելով դաեառնն բան՝  
 Ընկեց ի խորխորատ՝ և ի կաւլ:  
 Զսակաւ բանիկս ի յոտ հանի  
 Անիմաստ զպիրս Ակընցի,  
 Զանուես յիշման չեմ արժանի,  
 Այլ յառաջագրէն ծանխցի...<sup>3</sup>

Ձեռ. № 1113, թերթ՝ 209բ—211ա.  
 Ժամանակ՝ 1648—1662 թվ.

<sup>3</sup> Սկզբի տնկըը հորինված են ակրոստիխով.  
 «Յակարի է»:

Մանրություն.—Հակոբ Ակնեցին մեկն է վերել-  
վում նկարագրված աղետից փրկվածներից: № 1113  
ձեռագիրը, որում կա վերելի ողբը, Հ. Ակնեցու ինք-  
նագիրն է: Այդտեղ հիմնականում ամփոփված են  
մեկնություններ, որոնցից բացի՝ կան նույն Հ. Ակ-  
նեցու մի քանի այլ գրությունները և հիշատակա-  
գրությունները: Այսպես օրինակ.

ա) թ. 113ա «Պատմութիւն յաղագս առնելոյն  
տաճկաց զսուրբ Նիկողայոս եկեղեցին ի ձեռաց  
հայոց...» (1627 թիվ):

բ) թ. 116բ «Պատմութիւն նոր վկային Քրիս-  
տոսի և սրբոյն Գարբիէլի» և այլն:

Իրանք նույն թեմային են վերաբերում, ինչին  
նվիրված է ողբը, սակայն այստեղ հայերի կրած  
այլ տառապանքներն են նկարագրված: Բոլոր դեպ-  
քերին ականատես հեղինակը տվել է կոնկրետ դեպ-  
քերի նկարագրություններ:

Ինքը Հակոբ Ակնեցին ապրել է ժե դարում:  
Ձեռագրի 293բ թերթում կան որոշ տվյալներ իր  
մասին, բայց դրանք ջնջված են, ուր, ինչպես  
երևում է, նշված են եղել իր ծնողները, կիներ, և  
ուրիշ հարազատները. կարգացվում են Հովհաննես  
և Մարտիրոս անունները: Այդ հիշատակարանի  
ամենից պարզ կարգացվող տողերն են.

«Եղև ստացումն սորա ՌՂԷ ամի, յօրում յաւուրս  
մեռաւ Սուլտան Իպրահիմն և մատաւ Սուլտան Մու-  
համատն քազաւօր յԼատամպալ:»

Հ. Ակնեցու ընդօրինակած ձեռագրից է նաև  
№ 188 ձեռագիրը, որը շնայած իր բովանդակու-  
թյամբ առանձին ուշագրավ արժանիքներ չունի,  
բայց կարևոր է նրանով, որ նկարագրված է  
դրչի կողմից: Այսպիսով կարող ենք տեսնել, որ Հա-  
կոբ Ակնեցին ոչ միայն բանաստեղծ է, ժամանակա-  
գիր, գրիչ, այլև նկարիչ: № 118 ձեռագիրը նա ընդ-  
օրինակել և դարգազրել է 1643 թվին Կ. Պոլսում:  
Այս ձեռագիրն ուշագրավ է նաև յուր հիշատակա-

րանով և հիշատակագրություններով (100ա, 449բ,  
471բ, 515բ):

Հակոբ Ակնեցու մասին կարևոր տեղեկութուն-  
ներ կան Տաշյանի կազմած ձեռագրաց ցուցակի  
496—97 էջերում: Այստեղ նկարագրվող № 180 ձե-  
ռագրի վրա 1647 թվին աշխատել է Հ. Ակնեցին՝  
որպես վերանորոգող, կազմող, ծաղկող, թողնելով  
այսպիսի տողեր.

«... Յիւեցեք զվերջի ստացող սորա և նորոգող զվե-  
րայստացեալ զԱկեցի Յակոբ, և զբարեւեր հայրն՝  
զմահեսախ Վահեստ և զմայրն՝ զմահեսախ Շազատան,  
և զգաւակսն իւր՝ զհամգուցեալսն առ ստուած՝ զՅո-  
վաննէան, զՄկրտիչն, զՄտան և զկեղանիսն՝ զՅո-  
վաննէան, զՄարբան և զկաղակիցն զԳոհարն և զամե-  
նայն արեան մեծաւարսն:»

Այս հիշատակարանից տեղեկութուններ ենք  
ստանում նրա հարազատների մասին: Բացի դրա-  
նից, այդ հիշատակարանի միջոցով կարողանում  
ենք մոտավոր գաղափար կազմել նաև հեղինակի  
ծննդյան տարեթվի մասին: Եթե 1647 թվին նա  
այդպիսի ընտանիք ուներ, ապա հավանաբար նա  
պիտի ծնված լիներ 1600-ական թվերին:

Վերևում նշված «Պատմութիւն Յօր վկայիմ...  
Գարբիէլի» վարքարանությունը վերաբերում է 1662  
թվի սեպտ. 17-ին: Նահատակը Գարբիէլ Ղալաթա-  
ցին է, որին թուրքերը կախել են Կ. Պոլսում:  
Հակոբն ականատես է եղել այդ դեպքին (այդ վկա-  
յարանությունը տպված է «Հայոց նոր վկաներ»-ի  
484—87 էջերում): Երևում է որ հեղինակը 1635  
թվի «սուրկուն»-ից հետո վերադարձել է Կ. Պոլսու:

Այս բանաստեղծության մեջ նկարագրված է հայ  
ժողովրդի միջնադարյան արյունոտ պատմության  
էջերից մեկը՝ որը տեղի է ունեցել 1635—1636  
թվերին, թուրք-պարսկական պատերազմների պատ-  
ճառով: (Որոշ մանրամասնություններ տես Չամչյան  
«Պատմություն հայոց» Գ. 617—618: Ավելի մանրա-  
մասն՝ Գար. Այվազովսքի—«Պատմություն Սուլանյան  
պետության» 1—88):

ՂԱԶԱՐ ԲԱՂԵՐ ՕՂԼԻ

Ի ՎԵՐԱՅ ՆԱԴՐԻՆ՝ ՎԱՍՆ ՏԱՌԱՊԵԱԼ ԱԶԳԻՆ ՀԱՅՈՑ

Աստուանձ, դու մեզ մին ճար արայ,  
Շահ՝ թամամ աշխարհ այ ուզում,  
Աշխարհ քանդում՝ վարայ-վարայ,  
Ողջ հազար-հազար այ ուզում:  
Հազարով այ ուր մաթլապն,  
Քաշում այ աստղին հասապն,  
Յիրուր տալման չար քթարն,  
Միջիցն գոփամր այ ուզում:  
Ուզի գովտարն յիմանայ,  
Սափարն դար Հոսմաստանայ,  
Չկուշտացաւ Հնդստանայ,  
Նոր լալ ու գոհմր այ ուզում:

Հալ ու գոհար ու մարգարէն,  
Կապում այ բարխանայ բարէն,  
Մալն բշխէց կրեք տարէն,  
Տասնէն չափ թօմմր այ ուզում:  
Թօմար-թօմար առում բարաթ,  
Քանդում խօշնչին ըռահաթ,  
Դէմն էլ առում այ մուստարաթ,  
Դէմն էլ խունավմր այ ուզում:  
Թունավարին փարքանդ առում,  
Մարդի դարդի չի յիմանում,  
Յամէն տեղէ զուլ այ տանում,  
Մին-մին էլ նօքմր այ ուզում:

Ղուլի նօքարի չունի ֆրսաթ,  
 էլ ոչ հալ կայ, էլ ոչ դուաթ,  
 Ոչ պղինձ եթող, ոչ արկաթ,  
 Բոլորում այ, ամէնն [այ] ուղում:  
 Բոլորում այ, քաշում ուրն,  
 Բընադամ դրայ շնուրն,  
 Մէջ այ մաման, տալման թուրն,  
 Բէզրաս խօշ քնար այ ուղում:

Ուղում այ շալ ու մանուղն,  
 Կտրում այ աշխարհիս ումուղն,<sup>1</sup>  
 Թուրքին ու թային ու Ձնուղն՝  
 Ողջին էլ դարբէղար այ ուղում:

Ձեռ. № 5954, թերթ՝ 83ա-բ,  
 ծամանակ՝ XVIII դ.

ՂԱՋԱՐ ԲԱՂԵՐ ՕՂԼԻ

\* \* \*

Ասիմ.—Նազու դիլբար, չնն բէզամադ ես.  
 Ասու.<sup>1</sup>—Վեր առ, ամիր, սնգ արայ, սիրուն.  
 Ասիմ.—Ուռուսխաթ տուր, որ քեզ հետ  
 խոսեմ.  
 Ասու.—Ասայ, լսեմ, հնգ արայ, սիրուն:  
 Ասիմ.—Ինձ երեւ է կրակա, բոցըտ.  
 Ասու.—Մայլամ կուտամ՝ լաւանայ խոցըդ.  
 Ասիմ.—Ուռուսխաթ տուր, որ մանեմ  
 ծոցըտ.  
 Ասու.—Մին դամ ինթիմանս արայ, սիրուն:  
 Ասիմ.—Քոյ սերտ ինձ կու ըսպանի.  
 Ասու.—Ըսպանիլ չէ, խելքդ կու տանի.  
 Ասիմ.—Քեզ շինել տամ սսկի մատանի.  
 Ասու.—Բաս աղըն՝ արմազ արայ, սիրուն:<sup>2</sup>

Ասիմ.—Ուշս կորած, խելքս ցրված է.  
 Ասու.—Երնակ էնդուր քեզ[ի] տված է.  
 Ասիմ.<sup>2</sup>—Չնն ծամերտ մճըճորած է.  
 Ասու.—Վեր առ, սանդրիր, մնգ արայ,  
 սիրուն:  
 Ասիմ.—Աչկերտ՝ ծով, պարզնիտ՝ նով է.  
 Ասու.—Քեզնից դեյրու շատ մարթ կու  
 դովէ.  
 Ասիմ.—Ասայ, տեսնեմ՝ քոյ եարն սվ է.  
 Ասու.—Բազր Օղլի<sup>3</sup> Ղազարն այ, սիրուն:

Ձեռ. № 3263, թերթ՝ 113ա,  
 ծամանակ՝ 1728—1751 թվ.

ՂԱՋԱՐ ԲԱՂԵՐ ՕՂԼԻ

\* \* \*

Մարդիս ավալ բազարն ասեմ  
 Իւր կողակից եարին վերայ,  
 Ոչ թէ մինըն, հազարն ասեմ՝  
 Եամամի աշխարհիս վերայ:  
 Առաջի բազարն մանմուդ այ,  
 Մարդի սրտի սուն այ, դութ այ,  
 Ալմազ այ, եաղութ, դմրութ այ,  
 Գնոչ այ՝ գո՛վարի վերայ:  
 Յետինն բեադայաթ այ,  
 Գացախ այ, դոր ասեմ մնթ այ,  
 Մսուջան չի, քարբար չի, սնթ այ՝  
 Պղնձէ քամարի վերայ:

Առաջինն թարքայ եայ, ջուշ այ,  
 Սասած նուրար, փիշոսս նուշ այ,  
 Հոտըն առավիլ անուշ այ՝  
 Ըսեհան—սուսանրարի վերայ:  
 Յետինն այ իվիլի դիքայ,  
 Ղուի դօշակ չի, թաղիք այ,  
 Անաէր, թումոշկաճ ծաղիք այ՝  
 Ընկաճ այ ճանապարհի վերայ:  
 Առաջինն մեխակ այ, ջավդ այ,  
 Փաղարօլ մարմարէ հավդ այ,  
 Յինքն՝ չիման, դովըն՝ սավդ այ,  
 Սառն աղբուր այ՝ սարի վերայ:

<sup>1</sup> Ասու բառը այստեղ և երբեմն ստորև գրված է «ասալ» ձևով, միօրինակության համար գրում ենք «ասու»:

<sup>2</sup> Ասու.—Բաս աղըն արմազ դուն արայ, սիրուն.

<sup>1</sup> Ձեռագրում՝ ումխան  
<sup>2</sup> Ձեռագրում՝ Ասու  
<sup>3</sup> Ձեռագրում՝ Ողլի

Յեախնն ինչ մարդ որ կառու,  
 Յախերըն կընկանի դարու,  
 Յէնց գիտես մին պղտոր առու՝  
 Խարարայ դուզարի վերայ:  
 Առաջինն բարատու ծառ այ,  
 Գարնան ծընած թաղայ դառ այ,  
 Կինչ սնուլ աստղն պայծառ այ՝  
 Շամս ու Ղամարի վերայ:  
 Յեախնն է գէր բիվայ դանայ,  
 Բաս Սաղահէլի նման այ,  
 Սթարէն քօռ ու խափան այ,  
 Մութն այ՝ խափարի վերայ:  
 Առաջինն ուրախութիւն այ,  
 Ջուխան՝ մին միս, մին արուն այ,  
 Մէլ այ, մարդի՝ սրտի սուն այ,  
 Բար ունի դարարի վերայ:  
 Յեախնըն արժան չի ծոցի,  
 Նման այ չափուստ սղոցի,  
 Մարդի սիրտ էնպէս կըխոցի—

Գոր նշտարն՝ տամարի վերայ:  
 Առաջինն մարգարիթ այ, դան այ,  
 Մարդ պիտի՝ դադըն յիմանայ,  
 Ախրաթ այ, դին այ, իման այ,  
 Ջան այ՝ ըխախարի վերայ:  
 Յեախնն օվ որ ընթղար այ,  
 Յալրաթ ուր ջանէն բէղար այ՝  
 Մէնաթ այ, ամալ այ, դար այ,  
 Ֆիքր, դուս այ՝ դարի վերայ:  
 Առաջինն նոր հէշիս, նոր հաւառ այ,  
 Բլօր շիշայ, շինի աս այ,  
 Ափսոս, մաթլապիս չխասայ,  
 Մուշտաղ ամ դիտարի՝ վերայ:  
 Բաղէր Օղլիս դարտէրս բացի,  
 Էստով երկու դուս գնացի,  
 Առաջինն ու յեախնըն ացի,  
 Ուրէնց քարդ է քարի<sup>2</sup> վերայ:

Ձեռ. № 5954, թերթ՝ 40ա-բ, ժամ. XVIII դ.

Ծանոթություն.— Ջուզահայ ակննավոր երգիչ Բաղեր Օղլի Ղազարն ապրել և ստեղծագործել է 18-րդ դարում: Հորինել է պատմական, կենցաղային, սիրո և այլ թեմաներով բազմաթիվ երգեր: Նրա կյանքի և գործունեության մանրամասնությունները դեռ պարզված չեն:

Մեր Մատենադարանում պահպանվում են Բաղեր Օղլու հետևյալ բանաստեղծությունները.

- ա) «Ասուած, դու մեզ միմ հաբ արայ...»
- բ) «Ասիմ.—Նազու գիլար, չո՞ւն բղամաղ ես...»
- գ) «Մարդիս ավալ քազարն ասեմ...»
- դ) «Ասուածայ սիբելի յուսով հաւասով...»
- ե) «Հայր և որդի, եզգի սուրբն ումբր եղավ...»

Առաջինն ինչպես նրա, նույնպես և մեր միջնադարյան պոեզիայի, ամենաարժեքավոր գործերից մեկն է: Այստեղ երգիչը բողոքում է Նաղիր Շահի բարբարոսությունների դեմ, ցույց տալով ինչպես հայ նույնպես և հրյա ու ազրբեջանցի ժողովուրդները կրած անտանելի տանջանքները:

Չնայած այս բանաստեղծության մասին, հատվածների մեջբերումով, մեկ անգամ խոսվել է, բայց և այնպես բանաստեղծությունը մինչև օրս մնացել է մեր գրականագետների ուշադրությունից դուրս:

Նրկորդ երգն ընդօրինակված է հավանաբար 1751 թվին, կամ դրանից մի քանի տարի առաջ (ոչ վաղ 1728-ից)՝ Հովնաթան և Հակոբ Նաղաշները տաղարանի վերջում, անդրել մնացած մի էջի վրա: Դա սիրո զեղեկիկ երգ է, որից առաջին անգամ

տեղեկանում ենք Բաղեր Օղլու (Բաղերի սրտ) անվան հետ.

«Ասիմ.—ասայ, տեսնեմ՝ բոյ կարն սի է.

Ասու.— Բաղր Օղլի Ղազարն այ, սիրուն»:

Նրկորդ բանաստեղծությունը հորինված է կենցաղային թեմայով և ունի նաև որոշ կենսագրական տեղեկություններ: Պարզվում է, որ Բաղեր Օղլին ամուսնացել է երկու անգամ: Այս բանաստեղծության մեջ նա դիպուկ պատկերներով և համեմատություններով գովում է իր առաջին կնոջը և գործվում երկրորդին:

Չաբորդ բանաստեղծությունը հորինված է յուր ժամանակի վարդապետ Աստվածատուր Ֆահրապապուցու (Աղաթի մականվամբ) մահվան առթիվ ունի ուշադրով խորագիրը, «Ի վերա Աղաթի Աստվածատուր վարդապետին ասացեալ ումեմնեկ անուսուսնե ի գրոց, ուսմիկ, զեղջուկ յառնէ»:

Կարելի է ասել, որ այս բանաստեղծությունը հորինված է 1745—1750 թվերին: Դրանից մի քանի

1 Աստվածատուր Ֆահրապապուցին մեռել է 1745 թվի հունվարի 17-ին: Սակայն բանաստեղծությունը հենց այդ թվին չի հորինված, այլ հետո, որովհետև երգիչը խոսելով նրա հաջորդի մասին ասում է.

«Ինչպես ասացիր՝ Պօղոս վարդապետն անէ».

Իսկ վերջինս նշանակվել է Ա. Ֆահրապապուցու փոխարեն միայն 1748 թվին (Մանրամասնությունները տես «Ազգագրատուն» 2956, 2981 և այլն): Ասով. Ֆահրապապուցին հայտնի էր որպես ուսուցիչ, հրատարակիչ: Նրա աշակերտներից մեկն է եղել նաև բանաստեղծ Բաղդասար Գալիբը.

«Ըստպահանայ մինչև Ստամբուլ մոնթ ունես...»

Գրում է Բաղեր Օղլին՝ նրա մասին:

1 Ձեռագրում՝ գիտարիտ:  
 2 Ձեռագրում՝ քարիկ:

նի ասարի առաջ էլ հորինված է նազիր Շահի դեմ  
զբված բանաստեղծութիւնը:

Հիմնգետը բանաստեղծութիւնը հորինված է կրո-  
նաբարոյական բովանդակութեամբ, բառականին քն-  
դարձակ է: Այստեղ հեղինակի անունը հիշատակ-  
վում է այսպես.

«էն օրն դու Ուսնայու կալն դաս՝  
Բազեր Ազազին ողորմաս».

Այս փաստի շնորհիվ առավել անկասկած է դառ-  
նում Բազեր Օղլու անվան Ղազար՝ լինելը:

Չերոնիշյալ բոլոր բանաստեղծութիւններն էլ  
(բացի երկրորդից) գտնվում են նույն ձեռագրում  
(5954), որը զբված է ԺԸ դարում և իրենից ներկա-  
յացնում է տարբեր նյութերի մի խառնարկա ժո-  
ղովածու: Դա պատկանել է հայանարար ոմն ջու-  
ղայիցի վաճառականի, որը կապեր է ունեցել Պե-  
տերբուրգի, Մոսկվայի, Աստրախանի և այլ քաղաք-  
ների հետ: Այդ անձանթ վաճառականը զբի է ասել,  
այդ ձեռագրի մեջ, նաև ուսական ժող. առածներ,  
երգեր և այլն:

ԱՆՀԱՅՑ ՀԵՂԻՆԱԿ



Անձինք ասեմ հազներգական,  
Ստորագրաստ առնէ զանազան.  
Բարեաց՝ լուեալ՝ ուղ[ղ]են զինքեան,  
Ծուլլքն՝ տեսեալ՝ հայհոյանք տան:  
Բազմաց զգլուխն մեծացուցեալ,  
Ի դատաւոր համեմատեալ,  
Երթեալ կանգնին մօտ գրակալ,  
Չկարեն կարգալ զՅայնժամ թողեալ:  
Գլուխ սմանց է բազմամագ,  
Չերդ զքառամեայ չօպիի նսխագ,  
Ի պաշտամունս երթայ խիստ վագ,  
Ոչ շարական գիտէ՝ ոչ խաղ:  
Դաս մի հիւսեն զմագն պէս-պէս,  
Թէ վարսաւոր եմ քան զսրովբէս,  
Չփորն ընու ճաշ և խրէզ,  
Չգիտէ կարգալ զԱսէր այսպէս:  
Եւ ոմն արկեալ չուխայ զիւրե,  
Չձեռն և զթեն արկեր ներքե,  
Չգիրքն զամէն կասէ «և», «և».  
Երկու երեսն լինի սև:  
Չանգակաձև շարեալ կոճակ,  
Ի յուսմանէ փորն է դատարկ.  
Յորժամ մըանուն ի պատարագ,  
Յայնժամ զսչէ քան զյաւանակ:  
է ոմն ազեր մօտ և մաւր,  
Ի ժամատեղն ասէ. «գլուխս կու ցաւի»,  
Պուտուկ մի ճաշ փորոյն չքաւի,  
Կուտով առնէ զպաշտման դաւի:  
Ըմպեն սմանք պէս-պէս զգինին,  
Ի ժամատեղն կու քընին.  
Յականջ չառնուն զպատասխանին,  
Նոցա բաժին հուր գեհնին:

Թողեալ են զկարգ արեղութեան,  
Շալկեն խաշիկ մի և կանդան,  
Չերեսն արեր են քան զյեսան  
Եւ զիւրեանց կարգն հայհոյի տան:  
Ժողովս մեծ հազնին մօտ սուֆ,  
Չփորն շինեն համիսեայ դուֆ,  
Գրոց կարգալն է քան զկոր բուֆ,  
Չկարէ բաժնել զՈվսէ զՈւսուֆ:  
Իսկ ոմն ունի կարմիր դաստմալ,  
Իրրե զշերէվի է իւր գրգալ,  
Յորժամ սկսնու «Յամենակալ»,  
Ոտքն քան զուռ առնու զողալ:  
Լօզկի սընքի սմանց կարմիր,  
Բընաւ չասէ զՄի նախանձիր».  
Չփորն ընու կաթնով սամիր,  
Չկարէ կաղալ զՄի երկընշիր:  
Խանջարաձև դանակ երկայն,  
Ենգիշարոյ կերպի նըման,  
Կախեն վերայ աջոյ ճրտանն,  
Չսր յԱւովթա սահմանեցան:  
Ծոփս ձրգես կամ ի զընդան,  
Վիզն կապես իշու երկան,  
Չարնես հազար բիր նըմայ դան,  
Չկարէ ասել զՆեղութեան:  
Կարմրագոյն հազնէ կօշիկ,  
Չմորուն սանդրէ, լինի քօշիկ,  
Չփորն ընու սպիտակ լօշիկ,  
Ի գիրք կարգալն է կոր բուշիկ:  
Հագեր սպիտակ շապիք բեհեզ,  
Ունի բազում սչխար և եզ,  
Բարուքն հպարտ և ոչ է հեզ,  
Չգիտէ ասել զՕրննեմք զքեզ:

1 «Ազազ»-ը «Ղազար» անվան տեղական դարձա-  
ծական ձևն է:

1 Բազեր Օղլու մի երգն էլ տես Գ. Թարգիերդյան  
«Հայ աշուղներ» 11:

Չեռաց մասնիկն է ձոյլ արծաթ,  
 Ինքն չարժէ կողով մի յարդ,  
 Եւ թէ ասես. «այս սր շարաթ»,  
 Գոյնն լինի քան զսև երկաթ:  
 Դամբար մտաց ոմանց շիջեալ,  
 Զմակացութիւն դրոց թողեալ,  
 Արուեստ մարմնոյ են ըստացեալ,  
 Յարքայութեան երկնից զրկեալ:  
 Ճիւղադարար եղեալ ոմանք,  
 Բնակին ի դեղ, թողեալ զվանք,  
 Զկարգիկն իւրեանց տան բամբասանք,  
 Երթան նոքա ի չար տանջանք:  
 Մըսին հագնին տես և դեղին,  
 Շրջին հրպարա ի մէջ գեղին,  
 Զձեռն անցուցեն վերայ բեղին,  
 Յիշունց շահին իւր օրհնողին:  
 Յուսըն պաճուճ մօռ ծիրանին,  
 Զգիտէ ասել նա զ«Երանի»-ն,  
 Զձեռն դնէ դէմ բերանին,  
 Զթիկունքն տա սեան գերանին:  
 Նաև թողեալ ոմն զիւր մայր,  
 Քոյր և մայրզիր բռնէ օտար,  
 Սուրբ կանոնադիրքըն կոչէ վատթար,  
 Եւ անիծէ զնա չարաչար:  
 Շատանց թողեալ զիւր հալալ կին,  
 Երթեալ պղծէ զայլ անկողին,  
 Այնք կայծականց վերայ նիրհին,  
 Անքուն որդանցըն կեր լինին:  
 Ոմն ստացեալ է երիվար  
 Եւ կու պաշտէ զնա անդադար,  
 Նըստի վերայ զսուղաբար.  
 Նոքա տեղին է չար խաւար:  
 Զասնն եթէ աէրըն տերանց,  
 Այն սր նըստերն յաթոս փառաց,  
 Ի յաւանակ եղև նըստած,  
 Նոյնպես լինել մեզ քարողեաց:  
 Պաշտեն սմանք ըզյսրովայն,  
 Շինեն դմարմինս բուժող սրդան.  
 Նոքա զընան ի հուր դեհեան,  
 Ըստ օրինակի չար մեծատան:

Զընար առեալ են և տամբուր,  
 Ստացեալ պէս-պէս սլեն և սուր,  
 Նոցա երեսն լինի մուր,  
 Երթեալ տանջին ի յանշէջ հուր:  
 Ռամկացն ես տաց զերեսս իմ կոխ,  
 Նոցա լինիմ միշտ զոհացող,  
 Յորժամ ժողով լինի 'ւ ամբսխ,  
 Նոքա լինին մեղ խրատող:  
 Սպիտակ մորուս ու քան զկոճ  
 Դես կու խօսին անվայելուչ,  
 Յար-յանապաղ ցանկան կընոջ,  
 Երթեալ շնան քան զկեռպոչ:  
 Վարդապետաց հոյլքըն կընատ,  
 Միրեն զգինին 'ւ ատեն զխրբատ,  
 Արծաթատէր են և ժըլատ,  
 Բնաւ շկամին տեսնուլ զաղքատ:  
 Տիրանք, զղջմամբ դառնամք չարեաց,  
 Մինչ ժամանակ դոյ ի ձեռաց,  
 Տուայտելով Պօղոս գոչեաց,  
 Մի իւ իւր փաստ տայք մեղաց:  
 Բամքն որք ունողք են այս չարեաց,  
 Էին անդարձ յայն յամառած,  
 Թէ անմարմին, թէ մարմնացած,  
 Պէս-պէս տանջեաց զնոսս աստուած:  
 Յասմամբ զղևան յերկնից ձգեաց,  
 Զկայեն եօթնիւք պատուհասեաց,  
 Զպոռնիկոն համայն ջրասուղեաց,  
 Յաշտարակին զլեզուս խառնեաց:  
 Ի իւր ատեցողքն հրով-կիրկեաց—  
 Եւ զՓարաւոն չարեօք պատժեաց,  
 Սորեկ երկրէն զՔանան խլեաց՝  
 Եւ զմօրայէլ ի նմա արնկեաց:  
 Փառք աստուծոյ տուք ի բարձանց,  
 Զի ի մէնջ հանցէ զսիրտ քարացած,  
 Աստ փըրկեացէ ի փորձանաց,  
 Անդէն առնէ ժառանգ փառաց:  
 Քանզի չասէք մեղ իսկ մոլած,  
 Թէ զինչ առնէ զղեստ չար մարդկաց,  
 Հոգւով սրբով Միրաք ասաց,  
 Թէ զգէստ սրտին կրից յաւելած:

Մանրորոյում. — Սույն բանաստեղծութիւնը կա հետևյալ ձևագրերում (ամենուր՝ անխորհրդի)

1. № 1424, 3ա-3բ. 1620 (տաղը որպես զրչափորձ՝ բայց էլի XVII դարի զրչությամբ. վերջը թերի կա՝ Ա-Մ):

2. № 2292, 264ա-265բ. 1624 (կան միայն Ա-2-րդ աները):

3. № 1, 121ա-122ա. 1632-33 (վերջը թերի չկան ձ-Ք-րդ աները):

4. № 4618, 161ա-161բ և 168 ա, XVII դ. (լրիվ):

5. № 7703, 60ա-63բ, ժէ. (լրիվ):

6. № 5387, 13բ-16ա, XVII դ. (8 տող):

Տպագրության համար հիմնականում օգտագործեցինք №№ 4618 և 7703 ձևագրերը: Այդտեղ աչքի

ընկնող տարբերութիւններ չկային: Եղած փոքրիկ տարբերութիւններից է նկատել առանք ընտիր ընթերցվածքները: Հեղինակն անհայտ է (հավանաբար ԺԶ—ԺԷ դար):

№№ 1424, 2292 և 1 ձեռագրերի մեջ այլ ձև ունեն հետևյալ տները .

«Ըմպեն ոմանք դուարթ զգինին,  
Ի ժամտեղն հասեալ քնին,  
Ի դարչ հոտոյն տեղն տլին,  
Որպէս Բէլլա մողան լինին:  
Թժրուկ սիրեն և լաւ շօղուր,  
Սպառազին սրլիխ և սուր .

Ձերես հողւոյն առնեն գերդ մուր,  
Նորա կերթան է յանշէջ հուր...  
Ի յուսմանէ ոմանք են փուշ,  
Բայց յերախանս անգանին դուճ .  
Թառնէն ըզճաշն և զեղին պուճ,  
Քան զիշոյ զլուխ շինեն բրգուճ:»

№№ 2292 և 1-ում մի քիչ այլ ձև ունի նաև հետևյալ տուներ .

«Ձեռաց մատնին ոսկի 'ւ արծաթ,  
Ինքն նմանի հովիւ նեկաթ .  
Թ՛ առես. «տէրտէր, այս ի՞նչ շարաթ»,  
Շառագունի իրրև զերկաթ»:

ԱՆՀԱՅՏ ՀԵՂԻՆԱԿ



Առաջնորդք, դուք խանգարիչք,<sup>1</sup>  
Որք տեսակաւ կեղծաւորիք,  
Դուք իմաստնոց էք դայթակղիչք  
Եւ անմտաց էք կողոպտիչք:  
Օրինացն էք դուք քակաիչք,  
Ժողովրդոց էք մուրրիչք,  
Իրաւանց էք դուք թիւրիչք,  
Արծաթասէրք և կռապարիշտք:  
Աշխարհաց էք աւերիչք,  
Հողւոց մարդկան էք խաւարիչք,  
Քանասարի նրման դայլից  
Եւ թիւնաւորք՝ նրման օձից:  
Կերպարանեալ իրրև զգից,  
Այնպէս պաշտիք է համայնից .  
Դուք բերան տեառըն կու կոչիք,  
Յոփ բերանով կատակ խօսիք:  
Հողորմութիւնն հարկիւ կուզեն,  
Քան զփոխատու կու պահանջեն,  
Ըստ իւրեանց կամացն թէ ոչ առնեն,  
Աշխարհավար կու հայնոյնն:  
Լսողք նոցին կու ձանձրանան  
Դի է հաւատոց կու թերանան,  
Յորժամ նըստին է դատաստան,  
Քինախընդիր լինին մարդկան:  
Որպէս ըզմեծ մարմնոյ իշխան,  
Սպաննելոյ կու տան հրաման,  
Վասն փառացն իւրեանց համայն,  
Թող կորընչին սրղիք մարդկան:  
Առին ըզվայն տերունական,  
Որք սիրեցին զփառքս մարդկան,  
Ձի ոչ խորհին զահեղ ատեանն,  
Այլ կու ջանան զհաճոյս մարդկան:

Անցին զհրաման տեառն արարչին,  
Հողաթափ յոտն, ցուպ է ձեռին,  
Եւ ոչ բառնալ պղինձ է դօտին  
Եւ կամ երկու հանդերձս ունեն:  
Վաճառականք լինին բանին,  
Սուրբ մարգարտին այն դիւրազին .  
Սուտ պատճառաւ փող հաւաքին  
Եւ փափկացեալք՝ նովաւ սըճնին:  
Ընդ բազմանալն մամոնային  
Յոյժ կուրանան հողուով է նմին,  
Այն անիծեալ ժանկահարբիւն  
Ձինչ կամենան՝ դայն կու դործին:  
Յորժամ յերկրէ յերկիր շրջին,  
Չանուեն և զձեն կու փոխին,  
Հեթանոսաց անուամբ կոչին  
Եւ հաւատոյ կու կորընչին:  
Հեծեալ է ձի, նիզակ ձեռին,  
Վահանն է յուս, սուր ընդ մէջին,  
Այսպէս է կարդ կրօնաւորին  
Եւ կամ հրաման տեառն արարչին:  
Առնուն գանուն վարդապետին  
Եւ ըզպատուէր ձեռնադրօղին,  
Բառնալ ըզխաշ տեառն է յուսին,  
Որ զչարչարանքն դուշակին:  
Մոռանան զան դատաստանին  
Եւ զհամար տալն յատենին,  
Ի յաչս իւրեանց գերան ունին,  
Ըզշիւղ եղբարցն հանել ասին:  
Մէջ միամիտ ժողովրդին  
Օրինապահ կու երեին  
Եւ վարդապետ կերպարանին,  
Դերաստիճան անուամբ պարծին:  
Շանք բեռն մարդկան զընին,  
Ինքեանք մատամբ խակ ոչ մերձին,

<sup>1</sup> Ձեռագրում՝ հանգարիչք:

Օրինադիր քարոզ լինին  
 Եւ լսելիք միայն բանին:  
 Գողանան զմիտս պարզամբան  
 Եւ ամբոխ կայ յիւրեանց սրբան,  
 Յանդիմանչաց՝ գործոց նոցին՝  
 Թըղթով իւրեանց նըշաւակին:  
 Այն խըղճալի ժողովըրդնին  
 Յոյժ զարհուրին ի գրոյ նոցին,  
 Յուրով մարդիկք միջնորդ լինին,  
 Ասունն կաշառս և արձակին:  
 Մայրս և եղբայրս և քոյրս բռնին,  
 Կեղծիւք խօսին միշտ ընդ նոսին,  
 Ուտեն՝ ւ ըմպեն, այլ և զեխին,  
 Մինչ յանդիման խայտառակին:  
 Նոր վարդապետք եղեն այժմոյս,  
 Որք խիտ սիրեն զփառս կենցաղոյս,  
 Ոչ են կըրթեալ ի վարս սուրբս,  
 Այլ լսի անուամբ են զեռարոյս:  
 Զի անհրահանք են վարժեցեալ  
 Եւ ոչ ուսմամբ միշտ ճոխացեալ:

Այլ զպատմութիւնքսն քարոզեալ  
 Եւ զմիամիտսն զարմացուցեալ:  
 Երկու՝ ւ երեք քարոզ ուսեալ,  
 Աստուածարան զինքեանս կարծեալ,  
 Հպարտ բնութեամբ յոյժ փըքացեալ,  
 Գիտեն թէ յօգս են բարձրացեալ:  
 Ունին զձև մեծ բարունից  
 Այս խոսվարար սուտ արեղից,  
 Առաջնորդաց անուն վեհից  
 Հեռի է ի նոցունց՝ երկիրս՝ երկնից:  
 Զի մեր Հայոց ազգս Արամից  
 Ոչ եմք ընտրող նոցին բանից,  
 Այլ եմք նըման մեք անասնից,  
 Ամօթ կըրեմք ի ճըշմարտիցն:  
 Զի չեն թողեալ ըզհայրենին,  
 Այլ են սրդիք շինականին,  
 Ի մեծութիւն երբ հասանին,  
 Ոչ ոք չկարէ խօսել ընդ նոսին:

Զեռ. № 7703, թերթ՝ 73ա—75բ,  
 ժամանակ՝ XVII դ.

Ծանոթություն.—Սույն ձեռագրում առանձին բաժին են կազմում այս և նման մի քանի ուրիշ սուր քննադատող բանաստեղծությունները, դրանք են.

- 1) «Անձինք ասեմ հազներգական» (Տես սրանից առաջ տպվածը):
- 2) «Դարձեալ մասունք այլ զանագան» (չենք տպում):
- 3) «Ով եղբարք խոհեմագոյն» (Վասն թութունի, վաղուց տպված է):

4) «Զականջդ բաց, դրանս լսէ» (տես Հակոբ Սսեցի):  
 5) «Իրաւամբ ժողովրդոց պարտ է գրել» (չենք տպում):

6) «Առաջնորդք, զուք խանդարիչք» (սույնն է):  
 7) «Բանք ի Ֆրիկ գրոցն. Աստուած արդար» (վաղուց տպված) և այլն:

Որոշ առանձնահատկութիւններով 1, 5 և 6-րդ բանաստեղծութիւնները հիշեցնում են իրար, երեքն էլ անոնիմ են և երեի մի հեղինակի գործ:  
 Այս բանաստեղծութիւն այլ օրինակ չգիտենք:

ՀԱԿՈՒ ՍՍԵՅԻ

ՎԱՍՆ ՊԱԽԱՐԱԿԵԼՈՅ ՕՐԻՆԱԶԱՆՅԻՅՆ

Զականջըդ բաց, դրանս լսէ  
 Եւ ի միտ առ, ի թուղթ գրէ,  
 Թէ ինչ եղաւ ի Հայոց մեծէ.  
 Այ Հայոց ազգ, հայիֆ սէնի:  
 Դաւթա առածն կատարեցաւ,  
 Ծըշմարտութիւնն նուազեցաւ,  
 Սուտ և կալանն առաջ ընկաւ.  
 Այ խաբերայ, հայիֆ սէնի:  
 Կիսոց զաշինքն ջրեցան,  
 Բազումք ուխտին վերայ չկեցան,  
 Այլ ձեռագիրն սուտ եղան.  
 Այ սուրբ երգում, հայիֆ սէնի:

Պատրիարքներն իրար անկան,  
 Քսան բիւր եղև պարտքն ի լման,  
 Վէճն ու կռիվըն մաշեցան.  
 Այ սուրբ աթոռ, հայիֆ սէնի:  
 Այն անիրաւ նուիրակնուն՝  
 Տաճիկի ըրախտով ձի կու հեծնուն,  
 Շարժմունքն ամէնն զէտ օսմանցուն.  
 Այ սուրբ մեռոն, հայիֆ սէնի:  
 Վարդապետքն այլ քարոզող չեն,  
 Ժողովրդեան կաշառք խնդրեն,  
 Այն սր չտա՝ կու հալածեն.  
 Այ դաս ու քարոզ, հայիֆ սէնի:



Առաջնորդներն կանոնք չի բռնեն,  
 Կաշառքի համար կանոնք ծրոնեն,  
 Ձեռնադրածին հարցում չառնեն.  
 Այ սատիճան, հայիֆ սէնի:  
 Սեազլուխքն թէ կամիս՝ տես,  
 Չոմանց զգործն լաւ՝ թէ չըլսես,  
 Ամենեցուն թէ մէկն եմ ես.  
 Այ սուրբ վեղար, հայիֆ սէնի:  
 Իրիցաներ ոմանք որ կան,  
 Լիրբ և անզուք՝ և անբարտաւան,  
 Պատարաղեն՝ և կն անարժան.  
 Այ սուրբ խորհուրդ, հայիֆ սէնի:  
 Երեսփոխանք ամէն թերի,  
 Լի են չարաւք, չունին բարի,  
 Օրէնքն նոցա ձեռքն գերի.  
 Այ սուրբ կանոնք, հայիֆ սէնի:  
 Սարկաւազներն կամիս՝ լսէ,  
 Շատք՝ իւրեանց գործոց վրայ չէ,

Չեկեղեցին մտացեալ է.  
 Այ սուրբ աստիճան, հայիֆ սէնի:  
 Ռաիզ՝ և իշխանք ոմանք լաւ չեն,  
 Ըզկաշառքըն արմաղան կոչեն,  
 Չուողին բոխտան դնեն.  
 Այ հարամխօսք՝, հայիֆ սիզի:  
 Կէսք ժողովուրդք գայթակղեցան,  
 Եւ այլք՝ գաւրէնսըն մոռացան,  
 Շատք՝ ըզհաւատքըն ուրացան.  
 Սուրբ աւազան, հայիֆ սէնի:  
 Աֆիսն կլնուն, թութուն խմեն  
 Եւ զաղ ու հացն ապականեն,  
 Ոչ կու վախեն, ոչ կամաչեն.  
 Ութանմազար, հայիֆ սիզի:  
 Չամէնն ասիր, զքեզ էր թողիր,  
 Չայլքն ի բաց թող՝ և ի քեզ փակիր,  
 Սըսցի Յակոբ, ի քնոյ գարթիր.  
 Ե՛ս մեղաւոր, հայիֆ սէնի:

Ծանոթություն.— Սույն բանաստեղծութիւնը գտնվում է № 41 ձեռագրի 156բ—157բ թերթերում (XVII դ.) և № 8482 ձեռագրի 1բ—2ա թերթերում (1664 թ.): Տպագրելիս ի նկատի ունեցանք այդ երկու օրինակի լավագույն ընթերցումները: Պիտի նշել, որ տարբերությունները շատ քիչ էին:

№ 7703 ձեռագրում սույն բանաստեղծության մի այլ վարիանտը վերադրված է ոմն Գրիգորի: Հիմնականում տարբերություններ չկան, սակայն Գրիգորին վերադրվածի մեջ կա մի տուն (նախա-վերջին տուն), որը բացակայում է սույնի մեջ և վերջին տան մեջ հեղինակի անունը այլ է. ահա այդ 2 տները.

Շատ ցեղ ու ցեղ դեղեր առնեն  
 Եւ թութունով զայն պատրաստեն,  
 Ապա առեալ ի բիմա քարչեն.  
 Ով անամօթ, հայիֆ սէնի:

Չամէնն ասիր, զքեզ թողիր,  
 Չայլքն ի բաց թող՝ և ի քեզ հայիր,  
 Նիրհեալ Գրիգոր, ի քեզ գարձիր,  
 Լի ես մեղօք, հայիֆ սէնի:

Հակոբ Սսեցու մի բանաստեղծությունն առաջին անգամ տպագրել է Կ. Կոստանյանը (Գ. պրակ 9—11): «Յուցակ Հայերեն Ձեռագրաց Հայեպի»-ի 25-րդ էջում կարգում ենք. «Տաղ ազնիւ. Յակոբ վարդապետէ ի վերայ Բաղաբիմ Բուզանդիոյ և է տու-նըն «Ղարանձիլ Ներկիզ»-ին, որի սկիզբն է.

Այս խաղ չափաբան Յակոբայ լեզու,  
 Տո՛ւ. Ալէք խօսի, քալիս Կոստանդիմէ,  
 Տաղ Եայիբական ճորտ խօսիմ է..

Նույն ցուցակի 82 էջում կա «Այ անգիմ գոհար»-ի մի այլ օրինակը, որը դրված է իր կնոջ մահվան կապակցությամբ: Այդ երգի այլ օրինակները կան նաև մեր Մատենադարանում: Բացի դրանից, մեր

Մատենադարանում կան Հակ. Սսեցու նաև երկու ուրիշ (անտիպ) բանաստեղծությունները.

ա) Այս տաղ զուսական բեր Ակոր լեզուն,  
 Տես, նելէք՝ անսեր նա ի Ղարասուն...  
 (3411, 179, XVII դ.):

Նկարագրում է Ղարասու ավանն՝ իր անե-րով, շուկաներով, ծառերով, եկեղեցիներով, կա-մուրջով, թաշուններով և այլն:

բ) Յայտնում բանից քոց լուսաւոր,  
 Ասնէ զտրդայսըն մտաւոր...  
 (3107, 137բ—139ա, XVII դ.):

Գրված է ահրոստիխով («Յակոբ վարդապետ Սրբոց, խնդրէ Յոնան Էրէց»): Այս բանաստեղծու-թյան մեջ ցույց է արված, թէ որ շարականն ով է հորինել:

Հակոբ Սսեցու կենսագրության մասին ամփոփ տվյալներ չկան: Կ. Կոստանյանի տպած երգում, այդ երգի հորինման ժամանակի մասին, ինքը, Հ. Սսեցին գրել է «Ձեռնիմէ» թվին. Կ. Կոստանյանն այդ թիվը համարում է 1585. հաշվի մեջ առնելով միայն «Ձեմե՛» տառերը, դուրս թողնելով «իմէ» տառերը:

«Յայտնում բանից քոց լուսավար» բանաստեղծու-թյան մեջ կարգում ենք.

«Յուցանէ զայս թիւ Թորգոմայ.  
 Աս աղ շինէ քանակ սորայ».

Մենք դուրս ենք թողնում «շինէ» բառը, թվա-կան բնորոշելով միայն «Աս աղ»-ը՝ 1092+551= =1643: Նախորդ «Ձեռնիմէ»-ից էլ պիտի, այս օրի-նակի հիման վրա, վերցնել միայն «Ձեմ»-ը (1085+ +551=1636):

1 Նաև՝ հարամխօսք:

\* Նելէք, նելէք = ինչեր:

«Այս սաղ զուսական բեր Ակոբ լեզուե՞ն երգի մեջ  
թվականն է «Ղարաբարա կապ քրվական Հայուն».  
ուր «Ղարաբարա» բառը պիտի լինի «Ղառաբարա»...  
ըստ որի կստանանք 90 + 1 + 1000 + 1 + 2 + 1 + 2 + 1 =  
= 1649:

Տաշյանի ցուցակում (էջ 791) կա տպագրության  
ներկայացվող «Ձականջղ բաց» բանաստեղծության  
մի այլ օրինակի նշումը, որի վերջին տողերը մի  
քիչ այլ են.

Ձամէն ասիք, զբեզ յէ՞ր թողիք,  
Ձայլք ի բաց թող 'ւ ի բեզ փակիք.  
Թիւ ՂԱ. եղև, ի քնոյ զարթիք,  
Այ եղկելի, հայ(ի՞Ֆ սէնի):  
Եզրաբք, լսեցէք, զամէնն տեսայ,  
Յակոբ սեռորս սոսկ զարմացայ և այլն»:

Այս տողերի համաձայն, հորինման թվականն է  
ՂԱ. (91), որը պիտի բնորոշել 1091 + 551 = 1642:  
Այսպիսով ունենում ենք ևս մի տարեթիվ՝ Հակ.  
Սսեցու մասին, որը միաժամանակ մեր տպագրու-  
թյան ներկայացրած բանաստեղծության հորինման  
թվականն է:

Հալսպի ձեռագրաց ցուցակի համաձայն եթե ըն-  
դունենք, որ «Այ անգին զոհար»-ը հորինված է բա-  
նաստեղծի կնոջ մահվան աննշությամբ, ապա կստա-  
նանք, որ 1636 թվին նա արդեն ամուսնացած էր  
և զրկված կնոջից: Դրա հիման վրա կարելի է պըն-  
դել, որ Հ. Սսեցին ծնվել էր մոտավորապես  
1600-ական թվերին, և 1636 թվին զանվում էր իր  
հայրենիքում (Սիս): Իր հայրենիքումն է զանվել

նաև «Յայտնումն բանից Բոց յուսաւոր» բանաստեղ-  
ծությունը հորինելիս (1643 թվին): Յյդ բանաստեղ-  
ծության մեջ կարգում ենք.

«էյ, Տէր Գրիգոր, ևս քեզ մեղայ,  
Առջև ծերոյդ ևս նոխացայ,  
Յոտք հանի զբանս վանքն Սըսայ,  
Աս սո Շմաւոն կաթողիկոսայ,  
Յուցանէ զայս թիւ Թորոսայ,  
Աս աղ շինէ քանակ սորայ,  
Նոյեմբերի թոյ ժէ Հոսմայ,  
Տաղս ի Սըսայ Ձէյթուն կուգայ»:

Այդ թվից մի տարի առաջ է (1642) հորինված  
տպագրվող բանաստեղծությունը: Ուստի դա ևս  
հորինված է Սսում ուր և տեսել է իր նկարագրած  
«կարգ ու կանոնը»:

Այնուհետև Հակոբ Սսեցին տեղափոխվում է  
Ղրիմ (Ղարասու ավանը), ուր և զրկ է Ղարասույի  
զովքը: («Այս սաղ զուսական բեր Ակոբ լեզուե՞ն»):

«Այս խաղ չափարան Յակոբայ լեզուե՞ն երգը՝  
Պոլսի մասին՝ նույնպես զրկ է Ղարասույում (կամ  
Ղարասույից որևէ ասիթով Պոլիս դնացած օրերին):  
Դա երևում է «է Տաւն Ղարանֆիլ Ներկիզ»-ին ծա-  
նոթությունից, որը Ղրիմահայ հայտնի բանաստեղծ  
Խասպէկի (Խաչատուր, նաև նկարիչ ու գրիչ, 1610—  
—1686) մի բանաստեղծության սկիզբն է:

Տաշյանն իր ցուցակում Հ. Սսեցուն է վերա-  
գրում մի այլ բանաստեղծություն ևս՝ Նրուսաղեմի  
մասին, որը մեզ հայտնական չի թվում:

Ն Ա Ջ Ա Ր Ե Թ

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ԲԼԲՈՒԼԻ

Երկու բյուրւ բաղին միջումն խօսէին,  
խօսէին,  
Չի զիզացի, թէ ո՞րն էր [նւմ] համարին,  
համարին.  
Քա[ղ]ցր ձայնիւ [մէկ] — մէկու հետ խօսէին,  
խօսէին,  
Անոշ թվեալ իմ բերանիս համարին,  
համարին:  
Առաջ Եւան, որ ստեղծեց Աթամայ,  
Աթամայ,  
Չար թշնամին իւրեան զանն էր Աթամայ,  
Աթամայ,  
Մեք այն մեզի համին հայրին համարին,  
համարին:  
Վարար կետ էր, որ բերէին ասելով,  
ասելով,  
Դարզն շատ է, չի քաշիլ, հայ, ասելով,  
ասելով,  
Իշխան մարդիք այս բանքեր համ արին,  
համ արին:

Թուրն քաշեաց, սասանեաց զիս խաղար[ին]  
խաղար[ին],  
Սօհրաթ արին, վարս ասին, խոնդ արին,  
խոնդ արին,  
Եարմոպ, աստուած, նոքայ ինչի՞ համարին,  
համարին:  
Շօշափ բերին միայն տերին Նաղարին,  
Նաղարին,  
Քոյ հասրաթէա ծառայ աշըղ Նաղարին,  
Նաղարին,  
Արտասունքն համ ջուր եղև, համ՝ արին,  
համ՝ արին:  
Զեռ. № 1265, թերթ՝ 1ա,  
ժամանակ՝ XVII—XVIII դդ.

Ծանոթ.— Գրված է ձեռագրի դատարկ մնացած  
թերթին՝ խառը գրչությամբ: Տաղի անմիջական  
չարունակությունն է. «Ես անարժան Տէր Նաղարեքս  
գրեցի Բոյր Շահանիմ համար: Գիրս մնայ, ձեռս կնայ»:  
Ինչպես երևում է, Նաղարեթի այս երգը զրկված է  
ոչ միայն բույր Շահանի համար, այլ և նրա բե-

բանից: Եղած ակնարկներից նկատվում է, որ իշխան մարզիք քույր Շահանին ծանր վշտի մեջ են գցել՝ նրան վարկարեկելով, սակայն թե ինչու, ինքն էլ չգիտե:

«Ետարս ասուած, նոհա ինչի՞ համարին, համարին»:

Ըստ էության այս երգը միջնադարյան մի գեղջուկ աղջկա բողոք է լիտության բոլոր սահմաններն անցած «իշխան մարդկանց» դեմ:

Նման այլ երգ չգիտենք:

Աշուղ Նազարեթի ով լինելն էլ մնում է անորոշ: Մեր Մատենադարանի № 7707 ձեռագրում (ընդօրինակված 1611—1614 թվերին) կա մի բանաստեղծություն, որի վերջում հեղինակը հիշվում է որպես Առուղ Նազար Բասենցի: Իսկ № 1495 ձեռագրի 149ր թերթում գանձող ստանափորի հեղինակն է սմե Նազարեթ:

Նման Նազարն է այս երգերի մեջ հիշվածը, դժվար է ասել:

Տ Ա Ղ Կ Ռ Ը Ն Կ Ի

[ Փ ո դ ո վ ր դ ա կ ա ն ]

Կանչէ, կռունկ, կանչէ, ձայնիկդ ի հողիս,  
Խիստ դանազան քաղցրիկ ձայնիկ մի ունիս,  
Աշունն յառաջ երթաս դարնան աւետիս,  
Թըխտիկ մի գրեմ, աամ՝ իմ տանն տանիս:

Կանչէ, տուռնամ, կանչէ, դու քաղցրաձայնես,  
Չայնըն կուգայ հեռուստ, դու անըման ես,  
Բազում և խիստ ի վեր բարձրազրնայ ես,  
Ազաչեմ յիմ տանէն խարար մի բերես:

Կանչէ, տուռնամ, ձայնէ, իմ հողւոյ հողիս,  
Երթաս, բարով դառնաս, մուրաախտ դու  
հասնիս,

Ղարխուլութիւն անկայ, տրտում է գերիս,  
Թխթիկ մի յիմ տանէն բեր, մխթարէ զիս:

Կանչէ, կռունկ, կանչէ, սրտով սիրելի [ս],  
Գիտեմ, որ բարձր կերթաս, յամէն տեղ  
նայիս,

Չաչերդ համբուրեմ՝ զիմ տունն տեսնիս,  
Որ է անդադար ի մէջ իմ սրտիս:

Գանգատ առնեմ քեզ, թոչուն գովելի,  
Ղարխուլութիւն անկայ ողորմ ու լալի,  
Ոչ ազգական աստ կայ և ոչ սիրելի,  
Սըտիկս է դառնացեր, աչերս է լալի:

Գնայ, կռունկ, զընայ, աէր ընդ քեզ լիցի,  
Պահէ ըզքեզ անփորձ ի յորդոց-յորդի,  
Ես եմ դարիպ անկեալ ի յօտար երկրի,  
Տէրն նասիպ առնէ զմեր տեղըն մեղի:

Ձեռ. № 2339, թերթ՝ 274ա—274բ,  
ժամանակ՝ XVII դ.

Ծանոթություն. — Այս երգը, որքան գիտենք, անտիպ է, կան սույնի ապագիր մի քանի վշրանք վարիանաներ, մեծ մասամբ որպես քառյակներ.

- ա) Կանչէ, կռունկ, կանչէ, ձէնդ բարակ է,  
Եարս կորուցեր, հալս համան է.
- կռունկ, եղած տեղդ շայիբ շիման է,  
Աշխարհք արեզակ, ինձի տուժան է».
- բ) Կանչէ, կռունկ, կանչէ, քանի՞ դարուն է,  
Ղարխուլների սիրտը գունդ-գունդ արուն է,  
Քու եղած տեղդ շայիբ շիման է,  
Աշխարհին արեզակ, ինձի տուժան է:
- գ) Կանչէ, կռունկ, կանչէ, բարձր սարեր է,  
Գնացեր եմ դարիպ երկիր, վախեմ մեռնելէն,  
Մի լա, մայրիկ, մի լա, ես դարիպ տեղ եմ,  
Վաթանիս հողի ջրին ես կարօտցեր եմ:

(Ն. Լալայան, «Չափաբի բուրմունք»  
1892 թ. էջ 21 և 34—35):

Որոշ փշրանքներ էլ կան Մ. Արեգյանի «Փառվրդական խաղեր»-ում (Տեա 758, 759, 795, 1052): Գրանք բոլորն էլ ժողովրդական ծագում ունեն և հիմնականում նվիրված են սրանդիտության թեմային: Չնայած գրանք գրի են առնված XIX դարում, բայց մեր ներկայացրած երգը ցույց է տալիս, որ դեռ XVII դարում շատ է տարածված եղել այդ մտախփը, որի հիման վրա ստեղծվել է ներկայացվող բանաստեղծությունը:

Նախնարար այդ երգն էլ հանրահռչակ «Կռունկ»-ի («Կռունկ, ուստի՞ կուգաս») հետ ծնվել է նույն տարիներին: Երկուսի էլ ամենահին օրինակները գանձվում են XVII դարի ձեռագրերում:

Հ Ո Վ Ս Ե Փ

ՏԱՂ ԿԱՐՕՏԻ Ի ՍՐՏԻ

Յերփ կու շարժի սրախ սէրն իմ սիրելեաց,  
Կելնու ուշն ի դլխոյս և աշխետոյս՝ լաց,  
Խառն արիւն կու թափի յետ իմ արտասուաց:  
Կարօտ եմ, կարօտ եմ, կարօտ՝ սիրելեաց,  
Կարօտ՝ ազգականի և բարեկամաց:

Որչափ ուրախ շրջիմ՝ պանտուխս եմ տանիս  
Եւ կամ ի մեջ ցաւոց, նշ դոյ ընդանիս,  
Միտք իմ ամենայն ժամ՝ ի օթեանիս:  
Կարօտ եմ, կարօտ եմ, կարօտ՝ սիրելեաց,  
Կարօտ՝ ազգականի և բարեկամաց:

Վայրիարար անցաւ կեանքս իմ աշխարի,  
Բարեաց գործոցն հետի, մօտ եղայ շարի,  
Եղբարց կարօտ մնացի երկրիս օտարի:  
Կարօտ եմ, կարօտ եմ, կարօտ՝ սիրելեաց,  
Կարօտ՝ ազգականի և բարեկամաց:

Սիրոյն ծնողացս իմ ցաւք բազում յանձն  
առի,  
Հուր եղև քովանդակ, մարմինս կու վառի,  
Միտք իմ խաւար, լեզուս ալ նշ բարբառի:  
Կարօտ եմ, կարօտ եմ, կարօտ՝ սիրելեաց,  
Կարօտ՝ ազգականի և բարեկամաց:

ԲԱՐՈՒՆԱԿ

ՏԱՂ ԱՆՈՒՇ

Առաւօտուն հաւն խօսի,  
Ջրուցէ, պլպուլ, զրուցէ:  
Ես ալ քեզի բան մի ասի,  
Ջրուցէ, պլպուլ, զրուցէ:  
Ինձի եկեր կարկուտ ու բուք,  
Քո տէրաբն՝ մէկ մէ, իմն՝ երկուք,  
Աշունն կու մաննս ի սուք,  
Ջրուցէ, պլպուլ, զրուցէ:  
Ղափիլ կու առնուն գնողիտ,  
Վերանայ գնողիտ,  
Հեղեղն է տարեր ըղայդիտ,  
Ջրուցէ, պլպուլ, զրուցէ:  
Վարդն տեսաւով կու ծախովի,  
Կասկամն թէվէն կու կախովի,  
Աշունն կու ձայնըդ փոխովի,  
Ջրուցէ, պլպուլ, զրուցէ:  
Վարդն թոռոմեր և գնացեր,  
Պրլպուլն զի տերն իմացեր,  
Քեզի չոր փուշն է մնացեր,  
Ջրուցէ, պլպուլ, զրուցէ:

է՛, ինձ միշտ վնջ ասեմ ի անցաւորիս,  
Ամք և աւուրքս սենայն է մեղաւորիս,  
Հետի եմ ծանօթից և մերձաւորիս,  
Կարօտ եմ, կարօտ եմ, կարօտ՝ սիրելեաց,  
Կարօտ՝ ազգականի և բարեկամաց:

Փակեալ եմ ես զտան դրունսն հօր իմոյ,  
Միշտ խոցստում սիրտս իմ դութի մօր իմոյ,  
Փափակն քուրոչս սենեմ և եղբօր իմոյ,  
Կարօտ եմ, կարօտ եմ, կարօտ՝ սիրելեաց,  
Կարօտ՝ ազգականի և բարեկամաց:

Զեռ. № 5954, թերթ՝ 16ա—16բ,  
ժամանակ՝ XVIII դ.

Ծանոթութիւն.— Հեղինակի անունն այս երգում  
պահպանված է անազուխ տառերով: Նույն ձեռա-  
դրի հաջորդ էջում կա սիրո մի երգ, որի մեջ  
նույնպես անազուխ տառերով հոգված է նույն  
անունը («Յովսէփ»):

Ընդգծված բառերը ձեռագրում գրված են այս-  
պես (զրում ենք բոս հերթականութեան), «լացս»,  
«արտասովաց», «ազգայկանի», «մէշ», «վայրիարար  
անցավ», «հանցն», «անցավորիս», «բուրսոչս»:

Ես ի Պաղտատ եմ, դու ի Սիս,  
Ես ի քեզ նայիմ, դուն ի յիս,  
Հելպէթ դուն ալ տէրա մի ունիս,  
Ջրուցէ, պլպուլ, զրուցէ:  
Ես ի Պաղտատ եմ, դու Հալապ,  
Ձայնըդ չի կարբեր պէյտօլապ,  
Ես կու մաշիմ վարդին սապապ,  
Ջրուցէ, պլպուլ, զրուցէ:  
Քանի կանչես, պլպուլ, քանի,  
Քամին զքո ձայնն տանի,  
Ով որ լսէ՝ խէջ կու լինի,  
Ջրուցէ, պլպուլ, զրուցէ:  
Բարունակն կանէ ֆէս,  
Դուն ալ չէս պահեր ի պօֆէս,  
Քեզի շինած է արծաթէ դէֆէս,  
Ջրուցէ, պլպուլ, զրուցէ:

Զեռ. № 7708, թերթ՝ 41բ—42բ,  
ժամանակ՝ XVIII դ.

Ծանոթութիւն.— 2-րդ տան 2-րդ տողում «եր-  
կուս» բառը փոխեցինք «երկուք»-ով: 3-րդ տան

2-րդ տողը պակասաժուր է: 4-րդ տան 2-րդ տողում «թեմիկն» բառը ձևազրուժ գրված է «բնթեմիկն»:

Անուզդիլի մնաց 5-րդ տան 1-ին տողի «զի» բառը:

Այս երգն իր կրկնակով հիշեցնում է Անդրեաս Արծկեցու «Անա եղև այլի գարուն» երգը:

Նման մի ուրիշ երգից, № 6588 ձևազրուժ (էջ 43), պահպանված է հետևյալ հատվածը.

«Իմ ցարս ինձ հերիք է,

Մէկ-երկու չէ, բիւր հագար է.

Քու հառաջն զիս կու հալէ,

Զբուցէ, սոխակ, զբուցէ:

Նսան ծաղակն հաւասար հասեր.

Սոխակն ի վարդէն էլ գէղ արեր, (—բեզարեր)

Սև է հազեր՝ է ի սիւզ նսաեր.

Զբուցէ, սոխակ, զբուցէ:

Վարդն զսոխակն յորժամ տեսաւ,

Կանանչ կարմիր ծիրան հազաւ,

Բերան երաց, զիւր ցուն ասաւ (Ձևազրուժ-«ասաց»).

Զբուցէ, սոխակ, զբուցէ:

(Ի տաղարանի երես մի թուղա էր պակաս փերոյ ու կիսատ մնաց երգս):»

Ինչպես երևում է այս երգի ոգուց, դա ծողո-վրդական սեղծագործարյուն է. որի մշակողն է եղել այս օրինակում հիշատակված Բարունակը: Նման մի ուրիշ ընդարձակ և անոնիմ երգ պահ-

պանված է մեր Մատենադարանի № 3751 ձևա-զրուժ (էջ 994), ուր կան և համընկնող և բոլորո-վին տարբեր հատվածներ: Այդ օրինակում կրկնակն ունի այս ձևը.

«Զբուցէ, հաւիկ, զբուցէ,

Զբուցէ, կարաւիկ, զբուցէ»:

Նման մի երգ էլ տպագրված է եր. Շահազիզի «Պատմական պատկերներ»-ում (1903 թ էջ 102), ուր հեղինակն է ոմն «Ամսանիկ»:

Սույն բանաստեղծության համեմատաբար լրիվ մի այլ օրինակը գտնվում է № 2436 ձևազրուժ (56բ—60ա), որը նույնպես անոնիմ է:

Սույն երգի կրկնակը կա նաև այլ երգերում:

Մեր մատենադարանի մեջ ընդհանրապես Բա-րունակ անունով անձինք շատ քիչ կան, զբանցից մեզ ծանոթ են.

ա) Մեր մատենադարանի № 5613 ձևազրուժ զրի-չը (1608 թ.):

բ) Տաշյանի ցուցակի 284բ էջում նշված Բարու-նակը՝ պատվիրոց (1497թ.):

գ) Manus. brit. mus. 139բ էջում նշված Բարու-նակը (1622 թ.):

դ) Manus. brit. mus. 629 էջում նշված Բարու-նակը (անթվական):

Արդյոք կապ կա այս Բարունակներից որևէ մեկի և տպագրության ներկայացվող Բարունակի միջև, չենք կարող ասել:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

\* \* \*

Ես եմ փոքրիկ երախայ, երախայ,

Զոտերս եղին ֆալախայ,

Վասն այն ելեալ ես փախայ,

Վայ ինձի:

Արդ ասացի իմ մայր Նաղ[լ]ուին, Նաղլուին,

Իմ մեծ եղբայր Սարգիսին,

Նայե մեր ազգականին,

Վայ ինձի:

Ես եմ փոքրիկ երախայ, երախայ,

Զոտերս եղին ֆալախայ,

Վասն այն ելեալ ես փախայ,

Վայ ինձի:

Յորժամ դնացի ի վանքըն, ի վանքըն,

Թէ յուսանիմ սաղմոս գիրքըն,

Տեսի խիստ ծանր էր կարգն,

Վայ ինձի:

Ես եմ փոքրիկ երախայ, երախայ,

Զոտերս եղին ֆալախայ,

Վասն այն ելեալ ես փախայ,

Վայ ինձի:

Յորժամ մտի վարժատուն, վարժատուն,

Նայեցայ չորեք անկիւն,

Տեսի ֆալախայն վեց կանդուն,

Վայ ինձի:

Ես եմ փոքրիկ երախայ, երախայ,

Զոտերս եղին ֆալախայ,

Վասն այն ելեալ ես փախայ,

Վայ ինձի:

Յորժամ եղին ֆալախայ, ֆալախայ.

Զի եղև միջնորդ և արխայ,

Նա զիս ծեծէր անխնայ,

Վայ ինձի:

Ես եմ փոքրիկ երախայ, երախայ.

Զոտքերս եղին ֆալախայ

Վասն այն ելեալ ես փախայ,

Վայ ինձի:

Վայ իմ գալու օրերուս, օրերուս,

Դարման արէք սաներուս,

Արիւնաթափ դունկներուս,

Վայ ինձի:

Ես եմ փոքրիկ եղախայ, երախայ,  
Զոտքերս եղին ֆալախայ,  
Վասն այն ելեալ ես փախայ,  
Վայ ինձի:

Արդ ասացի վարդապետին, վարդապետին,  
Զեմ տիմանալ քո փայտին,  
Դաստա կուպած ջրպտտին,  
Վայ ինձի:

Ես եմ փոքրիկ երախայ, երախայ,  
Զոտքերս եղին ֆալախայ,  
Վասն ելալ ես փախայ,  
Վայ ինձի:

Վանքէդ ելեալ փախայ ես, փախայ ես,  
Որքան արի եմ ես, տես,  
Այլ զիս դու ոչ տեսանես,  
Վարդապետ:

Ես եմ փոքրիկ երախայ, երախայ,  
Զոտքերս եղին ֆալախայ,  
Վասն այն ելեալ ես փախայ,  
Վայ ինձի:

Ծանոթութիւն.— Սույն բանաստեղծութիւնը միակ նմուշն է, ուր այնքան ազատ և անմիջական ապրումներով, ոմն աշակերտ, նկարագրել է միջնադարյան դպրոցի տանջանքները:

Զեռագրում «ֆալախայ» բառը երբեմն գրված է «փալախայ» ձևով, միօրինակութեան համար ընդունեցինք բոլոր դեպքերի համար «ֆալախայ» ձևը: Կրկնակը՝ ձեռագրում, բացի առաջին տնից, մյուս բոլոր տներում ցույց է տրված ոչ լրիվ մենք տալիս ենք լրիվ:

Զեռագրի գրիչն է Հովհաննես վարդապետը: Բանաստեղծութեան հեղինակ Հարութիւնի ով լինելը մեզ համար պարզ չէ: Հովանարար նա այդ երգը հորինել է 1788 թվից ոչ էլ այնքան առաջ: Այդ թվերին հայանի է եղել մի այլ բանաստեղծ Հարութիւն, որը կոչվել է Տփիսիսեցի: Այս վերջինն իր ուսումն ստացել է Կ. Պոլսում Հակոբ Նալյանի և Բաղդասար Գլխի հիմնած և զեկազարած դպրոցում: Նա այդ դպրոցի մասին թողել է գրվատական

Արդ ասացի վարդապետ, վարդապետ,  
Այլ ոչ դառնամ դարձեալ յեա,  
Մնաս բարով այսուհետ,  
Վարդապետ:

Ես եմ փոքրիկ երախայ, երախայ,  
Զոտքերս եղին ֆալախայ,  
Վասն այն ելեալ ես փախայ,  
Վայ ինձի:

Յորժամ հասայ ի մեր տուն, ի մեր տուն,  
Եօթն աւուր անկայ ի քուն,  
Զի մնացի ժամ մի արթուն.  
Յարութիւն:

Ես եմ փոքրիկ երախայ, երախայ,  
Զոտքերս եղին ֆալախայ,  
Վասն այն ելեալ փախայ,  
Վայ ինձի:

Զեռ. № 8213, Թերթ՝ 82բ—83ա,  
Ժամանակ՝ 1788 թվ.

ընդարձակ բանաստեղծութիւն (անտիպ): Կարելի է կասկածել այդ Հարութիւնների նույնութեան վրա, որովհետև կան հիմքեր: Այսպես՝ սույն № 8213 ձեռագրում, ուր կա ներկայացվող բանաստեղծութիւնը, կան մի շարք նամակների ձևեր: Այդ ձևերի տակ կան ստորագրութիւններ, որոնց թվում՝ նաև «Պ. Ն. Դ.», «Պաղտատար չեչին Դպիր»<sup>2</sup>, «Յարութիւն չեչին Բա ծառայ»<sup>3</sup>: Այս վերջին նշումի մոտ կա «թուին ԹՃՂՁ մուր. Ի. Լ. ի Կօս. Գօլ. ԹՄԼէ»<sup>4</sup>: Այդ երկու թվերը (1747 և 1788) երեք նամակի հորինման, առա՛ջ ընդօրինակման թվերն են: Եթե ընդունենք, որ սույն բանաստեղծութեան հեղինակը նույն Հարութիւն Տփիսիսեցին է, ապա նրա այս բանաստեղծութիւնը պիտի հորինված լինի ժ. Լ. դարի սկզբներին, երբ նա աշակերտ է եղել:

Հարութիւն Տփիսիսեցին կոչվում է նաև Կարնեցի, ունի մի շարք բանաստեղծութիւններ՝ մեր Մատենադարանի № 8216 ձեռագրում:

ՕՔՍՈՒՁ ԱՎԵՏԻՔ

Տեի դաֆիլ նայեցայ, աւելցաւ բոցս,  
Ատ քու քնքուշ, բխրոջ ձեռացտ մեռնիմ,  
Անա քեզի տէստիր, խսթէ ի ծոցս,  
Ատ քու քնքուշ, բխրոջ ձեռացդ մեռնիմ:

Տ Ա Ղ Ս Ի Ր Ո Յ

Արժան ես աստուծոյ պսակի, թաքի,  
Սէրասէրնուտ վրայ դէրպապլատ հազի<sup>4</sup>,

<sup>1</sup> 1ա թերթում:  
<sup>2</sup> 12բ թերթում:  
<sup>3</sup> 12ա: Նման նմուշներ կան և այլ թերթերում:  
<sup>4</sup> Զեռագրում՝ հազիր:

Ղալտեցար ու տվիր հեղիկ մը պաքի,  
 Առ քու քնքուշ, բխրոջ<sup>1</sup> ձեռացդ մեռնիմ:  
 Դու գիտ յէ՞ր կաղարես, ես գքեզ կուզեմ,  
 Բեր զիվիֆիկա սանտրեմ, մազիկա հուսեմ,  
 Ձէտ գիրքք, աւետարան, բեր աչքքս քսեմ,  
 Առ քու քնքուշ, բխրոջ<sup>2</sup> ձեռացդ մեռնիմ:  
 Յովսէփ Գեղեցիկը ատանկ ձեռք չունէր,  
 Երբ տեսայ՝ հառչեցի, սրտիկս արնուն էր,

Աստուած ինտո՞ր է ըստեղծեր՝ ւ օրիներ,  
 Առ քու քնքուշ, բխրոջ<sup>3</sup> ձեռացդ մեռնիմ:  
 Իմ անունն Աւետիք ու քուկն է Սառայ,  
 Դուն ինձի պարոն ես, ես քեզի ծառայ,  
 Հանէ ծոցուս՝ հայիմ, թէ չէ ես մեռայ,  
 Առ քու քնքուշ բխրոջ ձեռացդ մեռնիմ<sup>2</sup>:

Ձեռ. № 9271, թերթ՝ 146բ—147ա,  
 Ժամանակ՝ XVII դ.

Մանարու քյուլն.—Սույն տաղի հեղինակի մասին կենսագրական տեղեկություններ չկան: Այս երգից բացի, նույն ձեռագրի հաջորդ թերթում, կա նույն հեղինակի մի այլ բանաստեղծությունը՝ հայաստաթուրքերենով, որն սկսվում է այսպես.

«Պէնի սէվաիկիմակն այբբ տիշիւրտուն»  
 Դա ես սիրո երգ է: Այդ երգում նա իրեն կոչում է Աւգուզ Աւետիք:  
 «Աւգուզ Աւետիքին տէրտի յիկին տիր...»

Ու շնայած ներկայացվող երգում նա իրեն կոչել է լսի Ավետիք, բայց և այնպես մենք նրա անունը գրեցինք լրիվ (Օքսուդ Ավետիք): Օքսուդ մականունով ուրիշ երգիչներ էլ կան մեր մատենագրության մեջ (Օքսուդ Տերտեր, Օքսուդ Վանեցի): Այստեղ Օքսուդ ձևը երևի գրչական սխալի արդյունք է: Հեղինակը հավանաբար նույն դարին է պատկանում, երբ գրի է առնվել երգը (17-րդ դ.):

ՄԵԼՔԻՍԵՂԵԿ



Մեր մեղքըն է առեր զխօրոզն զօրաւոր,  
 Ինքըն հըպարտ է դէտ ըզմեղաւոր,  
 Ոչ օրէնք ունի, ոչ բան հոգևոր,  
 Ոչ նիքեան ունի, ոչ պըսակաւոր:  
 Ելեալ մէջ զիշերի դաստուած կու օրննէ  
 Եւ ցորեկն ի բուն անաս կու քայլէ,  
 Ոչ ի մարդկանէ յամօթ կու քաշէ,  
 Եւ ոչ կանօնաց նա հնազանդէ:  
 Լսեցէք, եղբար[ք], զգանկատ աղուեսին,  
 Որ կաղաղակէ ի ձեռաց սորին,  
 Թէ՛ թաղաւոր տաք ի մէջ աշխարհին՝  
 Մէկ կին մի կաննեն՝ ւ ընկեր մի նորին:  
 Քան զսա մեղաւոր այլ ըսկի չի կայ,  
 Որ քսան՝ ւ երսուն կին առեր, կերդայ,  
 Ոչ ի մարդկանէ յամօթ ունի նայ  
 Եւ ոչ ատաւածոյ նա կու վախենայ:  
 Ելեր է, կերթայ ի փողոցն ի նա,  
 Ձորն որ կամենայ՝ կու հեծնէ ըզնայ.  
 Քըչիդ մի կտիկ, որ թէ գըանէնայ,  
 «Դուզուսի-զուսոս» կու ձենէ ըզնոսայ:  
 Սուք շունի ըսկի և ոչ տրամի նա,  
 Թէ մի կնոջնուս կապա պիտինայ.  
 Ոչ ըզձաղեւուն կերակուրըն կու հոգայ  
 Ի ոչ ըզմորթելուն օրըն կիշէ նա:  
 Եզկիլի խօսօզ, շատ մի հպարտանար,  
 Ըսկի դէտ ըզքեզ պոսնիկ չի տեսար,  
 Որ թէ հիւանդանար, նա էրէց չերթար,  
 Ձէտ գքեզ մեռնի, կու մնայ անճար:  
<sup>1</sup> Ձեռագրում՝ Առ քու բխրոջ քն:  
<sup>2</sup> » » բղ:  
<sup>3</sup> » » բղ:

Դուք դատաստանու եկայք՝ խօսեցէք,  
 Ձմեկքիսեթեկիս զգանկատն լսեցէք,  
 Խօսօզին ձեռնէն զիս խալսեցէք,  
 Չի թողուր քնիմ, զբանըս լսեցէք:  
 Երբ կու դարդենամ, դիտեմ թէ լուս է,  
 Ի մէջ զիշերին ա խօրօզ խօսէ.  
 Ըն հանգչեցնեք՝ թէ սաղմոս ասէ,  
 Դլուխըս ծանր է—որ թաս պակաս է:  
 Այ իմ սիրելիք, զգանկատս լսեցէք,  
 Բընեցէք ըզնա, վիզըն կտրեցէք,  
 Ով դուք, տանտիկնայք, շուտով բեատեցէք,  
 Ու չոր-չոր փատավ զինքըն խօրվեցէք:  
 Սոխով, տաղդեզով ըզփորըն լըցէք,  
 Շատ մեղք ունի դա, զկրակն խիստ արէք,  
 Նման պոսնիկի դժոխքն ձգեցէք,  
 Թէ շուտ մեղա գայ՝ ի մէջլիս բերէք:  
 Ելէք, զնացէք, աշխարհն շուրջ կկէք,  
 Ըզկարմիր զինուն տեղըն իմացէք,  
 Ըզկակուղ լօշերըն հազըր արէք,  
 Ու կարմիր զինով ըզնա լըւացէք:  
 Բարունիք, եղբարք, բոլորն շարեցէք,  
 Յառաջ ըզասող բանիս յիշեցէք,  
 Ու մէկ-մէկ գաւաթ դուք անուշ արէք,  
 «Աստուած սղորմի հողոյն» ասացէք:

Ձեռ. № 7193, թերթ՝ 115բ—117բ,  
 Ժամանակ՝ XVII դ.

<sup>1</sup> Ձեռագրում՝ բղ:  
<sup>2</sup> » » բղ:  
<sup>3</sup> » » բղ: ձեռացտ մեռնիմ:

Ծանոթություն.— Ինչպես ցույց է տրված վերոհիշյալ երգի տնադրուի տառերով և 8-րդ տան մեջ, այդ երգի հեղինակը կոչվում է Մելիքսեղեկ:

Մելիքսեղեկ անունով ոմն միջնադարյան բանաստեղծի մի տաղը տրված է Չարարիա Գնունեցու տաղարանում: Դրանից բացի Օրմանյանի «Ազգաստուած»-ի 2683 էջում նշված է, նաև մի այլ Մելիքսեղեկ, «Սուպհի Շայիր» մականունով (1698):

Կապ ունի՞ արդյոք մեր ընդօրինակած տաղը այդ Մելիքսեղեկներից մեկն ու մեկի հետ, չգիտենք:

Տպագրության մեջ վաղուց ի վեր ծանոթ է միջնադարում ժողովրդականացած «Տաղ վասն ազնաւի» բանաստեղծությունը, որն սկսվում է մոտավորապես նույն տողով, որով սկսում է մեր ներկայացրած այս երգը:

Այդ երկու երգն էլ միասին գտնվում են նույն № 7193 ձեռագրում: Ազգավիճի նվիրվածը ավելի վաղ ժամանակի արդյունք է, ուստի Մելիքսեղեկի երգը հորինված է զրա նմանությամբ: Չի կարելի կարծել, թե ազգավի երգն էլ է սլաակահանում Մելիքսեղեկին:

ԳՈՎԱՍՍԱՆՔ ՆՈՐ ՓԵՍԱՅԻ,

ԶՈՐ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ Է ՊՍԱԿՎԻԼ ԸՆԴ ՀԱՐՍԻՆ ԻԻՐՈՅ՝ ՕՐԻՆՕՔ \*

[ Փ ո դ ո վ ր դ ա կ ա ն ]

Էն աստուծոյ օրհնութենով  
Ծառ այսայր բազամեցար,  
Խաչ ալամն ի գլուխդ,  
Խաչ ալամ բազամեցար:

5 Սուրբ Կարապետու սուրբ զօրութենով,  
Հանյ, զօրութենով,  
Ծառս ծաղիկ է,

Ծառ ծաղկեցաւ,  
Ծառ կայնեցաւ՝  
10 Կանանչ ու կարմիր տերևով:  
— օ —  
— Թագոր, ի՞նչ բերեմ քեզ նման,  
Քոյ կանանչ արեգ ի նման,  
Էն լուսու աստղն, որ կու ծաղկի,  
Ծաղիկն արեգ ի նման:

\* Միջնադարյան օրինական հարսանիքը բավականին մանրամասն նկարագրված է № 3937 ձեռագրում (193ա—196բ), որը սլաակահանում է ժՆ գարին: Այդպես քսանից ավելի կետերի մեջ ամփոփված էր տրված են բոլոր արարողությունները:

2. «Այսայր»-ը հավանաբար պիտի լինի «այսուր» (այսօր):

1—4 տողերը ձեռագրում ձայնագրված են, ուստի հենց այս տողերից անմիջապես հետո տրված է հետևյալ ծանոթությունը. «Այս է եղանակն, որչափ որ կարաս՝ ասայ: Դրան կից կա նաև այսպիսի ծանոթություն. «Սերոցն. առաջ սուր Կարապետի օրհնեմք ասայ, հետո այս. ահայ այս է ձեզն երկու եղանակով. այսպէս. ապա սկսվում են հաջորդ տողերը «Լուրբ Կարապետու...» և այլն. (տես տեքստում):

Ծաղկոցների եղանակի մասին նշումներ կան նաև «Էմիմյան ազգ. ժողովածու»-ի մեջ. «Շատ ծանր և քաղցր կերպով ազգայ շարիք. Յուրախանյուր տող կը գրկենն: Երբօր տողի վրա ձայներնին կը բարձրացնեն, ճները վերջանալուն՝ միասին կասեն.— «Սսված շնորհավոր էնա: Ազա կը կրկնեն.— «Մեկ էլ հեղիլի»: Նույն տեղում նշում կա, թե երգաչափի որ մասն ինչպես է երգված («Շաներ», «Միջակ արագ», «Բերի արագ», «Տարբեր», «Շառ արագ» և այլն 2. հատոր էջ 33—35):

5—10-րդ տողերին համապատասխան տողեր գրանում ենք «Ծաղկոց»-ի ժՆ գարի վերջին գրի առած օրինակների մեջ նաև հետևյալ կերպ: Ազգայների մի խումբ երգում է («Մլաթցու հարսանիքը»).

«Սուրբ Կարապետի զօրութենով  
Ծառս ծաղկեցաւ,  
Ծառ կայնեցաւ,  
Ծիւղ տուեց,  
Ծիւղ կայնեցաւ,  
Կանանչ ու կարմիր»:

Ազգայների մյուս խումբը շարունակում է.  
Սուրբ Սարգսայ զօրութիւնով  
Ծառս ծաղկեցաւ,  
Ծառս կայնեցաւ,  
Ծիւղ տուեց,  
Ծիւղ կայնեցաւ,  
Կանանչ ու կարմիր»:  
(«Էմիմյ. ազգ. ժող.» 2. 387—415):

Ազգային «Ծաղկոց»-ի մեջ այդ հատվածը ունեցել է այսպիսի ձև.

«Էրկնից գետնի զօրուտենով  
Էդ ծառն ծաղիկ էր,  
Ծառ ծաղկեցաւ,  
Ծուղ կայնեցաւ,  
Կանանչ կարմիր»:  
(«Փշրանքներ» 56—58):

10-րդ տողից հետո ձեռագրում կա հետևյալ ծանոթագրությունը.

«Որչափ որ սրոց անուն կարաս՝ ասա, հետո այս՝ «Էմիմյան բազուարի արեղն» և այլն. հետո՝ այսպէս. «Թագոր, ինչ բերեմ...» և այլն. տես տեքստում):

Թե ի՞նչ երգ է եղել իրենց այնքան ծանոթ շնորհամբ բազուարի արեղն» տողով սկսվող երգը, չգիտենք:



15 — Թագոր, ի՞նչ բերեմ քեզ նման,  
Քոյ կանաչ արևդ ի նման.

Էն առաւօտն, որ կու ծաղկի,  
Ծաղիկն արևդ ի նման:

— Թագոր, ի՞նչ բերեմ քեզ նման,  
20 Քոյ կանանչ արևդ ի նման.

Էն բալասան ծաղիկն, որ կու ծաղկի,  
Ծաղիկն արևդ ի նման:

— օ —

Օգնէ Յիսուս, օգնէ Քրիստոս,  
Օգնէ մեր տէր հայր ամենակալ:

25 — Թագոր, ամէ, կիչ կիտէյայ,  
Որ քոյ ծառին, հայ, գովքն ասէյանք:

— Գնացէք, բերէք խօսան պիւլպիւլն,  
Որ գայ, գովէ, հայ, ծառս ու ծաղիկ:

Գնացին, բերին խօսան պիւլպիւլն,  
30 էրնեկ մտաւ, հայ, ի դարպասին,

էրնեկ մտաւ ի դարպասին,  
Բարև երեւ, հայ, թագաւորին,

Բարև երեւ թագաւորին,  
Հազար բարին, հայ, իբ խէչ մանկտացն:

35 [Մենք էն պիւլպիւլին հետ կէհէյանք,  
Երբ մուտն ընկնէք, հայ, հոն պառկէյանք,

Երբ մութն ընկնէք հոն պառկէյանք,

11—22-րդ տողերը համարյա բոլոր «Ծաղկոց»-ներում կան (որոշ տարբերութիւնով): Խլաթցիւնեբի հարսանիքում քառյակները երգվել են ազատ-ների երկու խմբի կողմից (մեկ ընդ մեջ): Դրա հիման վրա էլ տեքստում յուրօրոյն յուր ասան սկզբում գրել ենք զծիկ: Զեռագրում 22-րդ տողից հետո կա հետեյալ ծանոթութիւնը. «Այսպէս. ինչ որ ծաղիկ կարաւ՝ ասայ, իսկ կամացք է, ետայ շենտամբ բագորի արեւն» ասայ, եվ դառցիք արեւն (?) ասայ՝ օրչափ որ կարաս, դու գիտես. ետայ «Սննճանք բագորի արեւն» ասա, ինչ էլ որ արտաբերուի ունիս, բեր խէչ ախպօրն եվ խէչ մանկտացն եվ ծաղիկոյնացն, սեղան բերօղաց, բագ օրնաղացն, ծառ շինողացն, ետայ ասայ «Օգնէ Յիսուսն»:

Եթե այստեղ առում է, շինչ օր ծաղիկ կարաս՝ ասայ», ապա Ալաշկերտում գրի առնված ծաղկոցի համապատասխան տողերի համար ասված է. «Յուրաբանչյուր գովքը յոթը տնից բաղկացած պիտի լինի»: (Էմ. Ազգ. ժող. Զ. 33—35):

23-րդ տողից սկսվող տողերը միանգամայն նորութիւն են «Ծաղկոց»-ներին գրի առնված շարքերին համար: Այս հատվածի որոշ տողերի հետագայում ձեւակերպում արձագանքը կա տված «Ծաղկոց»-ներին մեջ հետեյալ ձևով.

. . . . . ]:

— Թագոր, յամէ, կիչ կիտէյայ,  
40 Որ քոյ ծառին, հայ, գովքն ասէյանք:

— Գնացէք, բերէք եղնիկ դաշտէն,  
Որ գայ, գովէ, հայ, ծառս ու ծաղիկ:

Գնացին, բերին եղնիկ դաշտէն,  
էրնեկ մտաւ, հայ, ի դարպասին.

45 էրնեկ մտաւ ի դարպասին,  
Բարև երեւ, հայ, թագաւորին,

Բարև երեւ թագաւորին,  
Հազար բարին, հայ, իբ ծաղկունայ:

Մենք էն դաշտին մէջ կէհէյանք,  
50 Երբ մուտն ընկնէք, հայ, հոն պառկէյանք,

Երբ մուտն ընկնէք հոն պառկէյանք,  
Մեծ աստուծոյ, հայ, փառս տայանք:

— օ —

— Թագաւոր, ամէ, կիչ կիտէյայ,  
Որ քոյ ծառին, հայ, գովքն ասէյանք:

— Գնացէք, բերէք դառն արեւոյն,  
Որ գայ, գովէ, հայ, ծառս ու ծաղիկ:

Գնացին, բերին դառն արեւոյն,  
էրնեկ մտաւ, հայ, ի դարպասին,

էրնեկ մտաւ ի դարպասին,

«Գնացէք, կանչէք թագաւորաներ,  
Յիգայ նստի դարբաս էնայ.  
Զնգլիկ դարկայ սուրբ սեղանին,  
Խերն ու բարին մեր թագաւորին»:  
(Էմ. Ազգ. ժող. Զ. 33):

«Գնացէք բերէք զկոռնին ի չօլէն,  
Իգայ նստի սէյրան անէ,  
Ծընտրիկ դարկէ սուրբ սեղանին,  
Խերն ու բարին մեր թագաւորին»:  
(Քնար Հայկական 144):

25-րդ տողը — «Թագոր, ամէ կիչ կիտէյայ» — անհասկանալի է: Կարելի է կարծել, որ դա «Թագոր, հրամէ, ի՞նչ պիտէյայ» ձևն է ունեցել, ապա՝ ազատագրվել է (գուցէ նաև՝ «Թագաւոր, ներեր, քիչ գիտէյայ»):

35—38 տողերը լրացրինք մենք՝ հաջորդ տներին հիման վրա: Կետանիշ տողը (քանակի իմաստով) պայմանական է, կարող է մեկից շատ լինել: Այդ մասը կամ գրի առնողն է մոռացել կամ ասողը:

55-րդ տողում գտնվող «գառն արեւոյն»-ը հավանաբար հեթանոսական հավատքի հետ կապված հասկացողութիւն է:

60 Բարև երես, հայ, թագաւորին,  
Բարև երես թագաւորին,  
Հազար բարին, հայ, իր խէշ մանկտացն:

Մենք էն դառին հետ կէհէյանք,  
Երբ մուտ[ն] ընկներ, հայ, հոն  
պառկէյանք,

65 Երբ մուտն յընկներ հոն պառկէյանք,  
Փունճ մանուշակ, հայ, խոտն արծէյանք,  
Փունճ մանուշակ խոտն արծէյանք,  
Դէմ լուսինին, հայ, որօճէյանք:

—o—

—Թագոր, ամէ, կիշ կիտէյայ,

70 Որ քոյ ծառին, հայ, դովքն ասէյանք:  
—Գնացէք, բերեք քօշն ի քարէն,  
Որ գայ, դովէ, հայ, ծառս ու ծաղիկ:

Գնացին բերին քօշն ի քարէն,  
էրնեկ մտաւ, հայ, ի դարպասին

75 էրնեկ մտաւ ի դարպասին,  
Բարև երես, հայ, թագաւորին,  
Բարև երես թագաւորին,  
Հազար բարին, հայ, իր ծաղկունացն:

Մենք էն քօշին հետ կէհէյանք,  
80 Երբ մուտն յընկներ, հայ, հոն  
պառկէյանք,

Երբ մուտն ընկներ հոն պառկէյանք,  
Ի քար դօտուն, հայ, թոտատէյանք,  
Ի քար դօտուն թոտատէյանք,  
Մեր տէր աստծոյն փառս տայանք:

—o—

85 —Թագոր, ամէ, կիշ կիտէյայ,  
Որ քոյ ծառին, հայ, դովքն ասէյանք:  
—Գնացէք, բերէք արդար մեղուն,  
Որ գայ, դովէ, հայ, ծառս ու ծաղիկ:

Գնացին, բերին արդար մեղուն,  
90 էրնեկ յիջաւ, հայ, ծառատրկին.  
էրնեկ յիջաւ ծառատրկին,  
Փուռ մանէման, հայ, երնեկ ծառին.  
Փուռ մանէման երնեկ ծառին,

95 Բարև երես, հայ, թագաւորին,  
Բարև երես թագաւորին,  
Հազար բարին, հայ, իր խօշ բախտին:

82—83-րդ տողերը, հավանաբար իրենց շատ հնության պատճառով, մեզ համար դժվար մեկնելի են:

Մենք էն մեղունն հետ կէհէյանք,  
Երբ մուտն յընկներ, հայ, հոն  
պառկէյանք,

Երբ մուտն յընկներ հոն պառկէյանք,  
100 Բաղցր ծաղկունքըն [հայ], ժողովէյանք,  
Բաղցր ծաղկունքն ժողովէյանք,  
Բաղցրաճաշակ, հայ, մեղր շինէյանք,  
Բաղցրաճաշակ մեղր շինէյանք,  
Եւ մոմն աստուծոյ, [հայ], փէշքեաշ  
տայանք:

—o—

105 —Թագոր, ամէ, կիշ կիտէյայ,  
Որ քոյ ծառին, հայ, դովքն ասէյանք...

Թագոր, քո ծառս, էր խնկենի,  
էր խնկենի, հայ, արմաւենի,  
Թագոր, քոյ ծառս էր նշենի,  
110 էր նոնենի, հայ, էր մորենի,  
Թագոր, քոյ ծառս էր թղենի,  
էր նոճենի, հայ, էր խնծորենի...

—o—

—Թագոր, յամէ, քիշ կիտէյայ,  
Որ քոյ ծառին, հայ, դովքն ասէյանք:

115 Թագոր, քոյ ծառըդ խիստ լուռջ էր.  
Ջուխք ու տերև, հայ, խիստ կանանջ էր:

—o—

Թագոր, նստել էր իր թախտին,  
Բարով վիշեր, հայ, հետ իր բախտին.  
Աստնվորիս ուրախութիւն,

120 Դատաստանին, հայ, մէջ գրախտին:

—o—

Թագոր, քոյ ծառս դովել պիտի,  
էն դովողին, հայ, դիլայ պիտի,  
Սելով սեղան, բեռնով գինի,  
Ստով խօրվու, հայ, դիլայ պիտի,  
125 Բերէք լարով, բերէք կիտով,  
Բերէք հօխով, հայ, դիլայ պիտի:

Ձև. № 8064, թերթ՝ 22բ—24ա,  
Ճամանակ՝ 1835 թվ.

112-րդ տողից հետո կա ծանոթություն. «Այ ծառագով, այսպէս ինչխատար ու կարա՛ ասայ, ետյ ասայ գայս» (խոսքը 113-րդ տողի և հաջորդներին մասին է):

116-րդ տողում «Ջուխք» բառը ձևազրու՛մ «Ջուխտ» ձևով էր գրված:

Ծանոթություն.— Ծաղկոց է կոչվում հարսանեկան երգերի այն շարքը, որ նվիրված է փեսայի և հարսի գովելուն: Ծաղկոցները ժողովրդական երգեր են, որոնց հնության մասին Ա. Արևիկյանը գրում է. «Ծաղկոցը հին առասպելական հավաստիքների հետ կապված ծեսերի մի գերապրուկ է, որ հասել է մինչև մեր օրերը»: Մեր գրականության մեջ, սակայն, ծաղկոցները մուտք են գործել միայն XIX դարի վերջերից՝ բանահավաքների միջոցով: Ծաղկոցի մեջ առանձին տեղ է զբաղում «Մառազուլ»-ը, որը նվիրված է եղել թագավորին բնծայվող արհեստական ծառին: Այդ ծառի պատրաստման մանրամասնությունները նկարագրել է Խլաթցի Խլաթ Բիշարյանցը 1880 թվին. «...Մեկել ազպետու քրու օր գյացին գրանյավարի ծառ շինելու, բերեցին հերկյայն փետ մի, նխեր շինեցին ու սանգ-ուանգ բելերով վարեր սյուսեցին պսակ-պսակ խնձարով զարդրին հընկրգով, փրեասով, չամչով, բզով, բաղսբալ խուսմով,

չրով, ներկյած խավկրով աղեկ սյուսեցին, ազապբաբին առավ շինած ծառն ուր ձեռ, սառան հրկնով բախյալորին փեշկե...»: Մեզ հասած ծաղկոցների մեջ ծառագովելի շատ քիչ տողեր կան: Այս տեսակետից խիստ ուշադրով է մեր Մատենադարանի № 8064 ձեռագրում գտնվող, մինչև օրս անձանոթ մնացած, այս բնդարձակ ծառագովելը: Այդ ծառագովելը բաղկացած է 126 տողից, որից 104 տողը միանգամայն նորություն է և անձանի լուրջ ուշադրության: Ձեռագրում այդ գովելն կցված է հետևյալ ծանոթությունը. «Երգող սարին Վարդան Եղուպեան յիշեցէ, ճայելա տիրացու Աղեհաճարիս Գարեթիեանն, որ գրեցի կրկին այսմ 1835 յունվարի 4, օրն ուրաք, Նալպանք Գիւղն»:

Այդ «Գովասանք»-ը, մինչև օրս հայտնի ծառագովելից ամենահինը զբի ամսվածն է և ամենահարուստը:



<sup>1</sup> Մ. Արևիկյան «Հին դուստնական ժողովրդական երգեր», 1931, 122—123:

<sup>2</sup> Տես «Էմինյան աղգ. ժողովածու» 2., «Փշրանքներ», «Քնար Հայկական», «Վանա սաղ», «Աղագրական հանդես» և այլն:

<sup>1</sup> Էմ. Աղգ. ժող. 2, 401 (386—415):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Տ. Ղազանյան—Քրիստիական սպարաառուքան և լարորատոր տեխնիկան ըստ հայկական ձեռագրերի . . . . .	3
Բ. Ն. Մելիք-Մուսյան—Աչքը և նրա տեսողական ներվը ըստ XII—XV դարերի հայ բժշկական ձեռագրերի . . . . .	29
Ռոբերտ Աթայան—Խաղերի սխառեմի ծագման ու զարգացման հարցի մասին . . . . .	37
Խ. Գալճյան—Ժեղատիկային ամբաստանող լուծույթը և նրա մի քանի հատկությունները քայքայված ձեռագրերի վերամշակման և պահպանման գործում . . . . .	53
Լ. Խաչիկյան—Զենոնի «Յաղագս բնութեան» երկի հայկական թարգմանությունը . . . . .	65
Զենոն Իմաստասեր—Յաղագս բնութեան . . . . .	81
Աս. Մնացականյան—Գ. Շիրմազանյանի «Նկարագրութիւնք ինչ-ինչ գործոց...» պիեսի մասին . . . . .	99
Գ. Շիրմազանյան—Նկարագրութիւնք ինչ-ինչ գործոց կարագետ Եղիսկոպոսի վիճակաւոր առաջնորդի Հայոց գաղթելոց ի Տայս . . . . .	105
Աս. Մնացականյան—Անտիոկ էջեր միջնադարյան հայկական պոեզիայից . . . . .	183
ա) Հակոբ Ակնեցի—Յաղագս սուրհուհունին . . . . .	185
բ) Ղազար Բաղեր Յղի—	
Ի վերայ նաղիբին . . . . .	187
«Ասիմ.—Նաղու Գլխար...» . . . . .	187
«Մարդիս աւալ քաղաքն ասեմ» . . . . .	—
գ) Անհայտ հեղինակ—«Անձինք ասեմ հազներդական» . . . . .	190
դ) «Ասանորդք, դուք խանդարիչք» . . . . .	192
ե) Հակոբ Սսեցի—Վասն պախարակելոյ օրինազանցիցն . . . . .	193
զ) Նազարեր—Տաղ ի վերայ բլրուլի . . . . .	195
է) Ժողովրդական—Տաղ կորնկի . . . . .	196
ը) Հովսեփ—Տաղ կարօտի սրտի . . . . .	197
թ) Բարունակ—Տաղ անուշ . . . . .	—
ժ) Հարություն—Ես եմ փոքրիկ երախանյ, երախանյ . . . . .	198
ժա) Օխուր Ավետիք—Տաղ սիրոյ . . . . .	199
ժբ) Մելիքսեղե —Մեր մեղքն է ասեր զխորոզն զօրաւոր . . . . .	200
ժգ) Ժողովրդական—[Հարսանեկան Մառադովք] . . . . .	201

## С о д е р ж а н и е

	Стр.
Т. Казанчян—Лабораторная техника и аппаратура в средневековой Армении по древним армянским алхимическим рукописям . . . . .	3
Б. Н. Мелик-Мусян—Глаз и зрительный нерв по манускриптам врачей армян XII—XV веков . . . . .	29
Роберт Атаян—К вопросу о происхождении и развитии системы хазов . . . . .	37
Х. Галфаян—Желатиновый укрепляющий раствор и его некоторые свойства при обработке и консервации разрушенных рукописей . . . . .	53
Л. Хачикян—Древнеармянский перевод трактата „О природе“ философа Зенона . . . . .	65
Зенон—О природе . . . . .	81
Ас. Мнацаканян—О пьесе Г. Ширмазаняна „Описание кое-каких дел“ . . . . .	99

	Стр.
<i>Г. Ширмазанян</i> — Описание кое-каких дел Карапета епископа . . . . .	105
<i>Ас. Мнацаканян</i> — Не изданные страницы из средневековой армянской поэзии	183
а) <i>Акоп Акнеци</i> — О переселении . . . . .	185
б) <i>Казар Багер Огли</i> —	
О Надир—Шахе . . . . .	187
„Я сказал: Нежная моя“ . . . . .	188
„Расскажу о первой женитбе“ . . . . .	—
в) <i>Неизвестный автор</i> — Скажу акростих . . . . .	190
г) . . . . . — Пастыри, нарушающие порядок . . . . .	192
д) <i>Акоп Ссеци</i> — Против закононарушителей . . . . .	193
е) <i>Назарет</i> — Песня о соловье . . . . .	195
ж) <i>Народная</i> — Песня о журавле . . . . .	196
з) <i>Осеп</i> — Песня жаждущего сердца . . . . .	197
и) <i>Барунак</i> — Песня сладкозвучная . . . . .	—
к) <i>Арутюн</i> — Я мальчик маленький, маленький . . . . .	198
л) <i>Оксуз Аветик</i> — Песня о любви . . . . .	199
м) <i>Мелкиседек</i> — Мошь у петуха-от нашего греха . . . . .	200
н) <i>Народная</i> — [Свадебная песня] . . . . .	201